

ՊԵՏՐՈՍ ՄՈՎՍԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ



ԱՐԵՎԱՅ ՎԱՆԸԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ԸԱՌՈՒՂԻՆՆԵՐՈՒՆ



9(47928)

72-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՐՈՍ ՄՈՎՍԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՆ

9569



ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2019

Պետրոս Մովսէս Թովմասեան

Թ 794 Նարեկայ վանքը պատմութեան քառուղիներուն/ Պ.Մ. Թովմասեան. ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ. Եր.: Հնդինակային հրատարակութիւն, 2019.- 223 էջ

Մէկ ու կէս միլիոն ցեղասպանութեան զոհերուն կը միանան, Արեւմտեան Հայաստանի հայկական հողին վրայ հիմնուած՝ մեր հազարաւոր անշունչ բայց եւ շնչաւոր հայկական վանքերն ու եկեղեցիները, բերդերն ու ամրոցները, վարժարաններն ու դպրոցները, եւ... որոնք բոլորը զոհ գացին հայ ժողովուրդին դէմ գործադրուած ցեղասպանութեան: Նարեկայ վանքն ալ եղաւ մէկը այդ հազարաւոր զոհերէն, որ տասը երկար դարեր շնջեց ու շունչ տուաւ հայ ժողովուրդին...:

Այս գիրքը կը ներկայացնէ Արեւմտեան Հայաստանի՝ Վասպուրական նահանգի նշանաւոր Նարեկայ վանքի ամփոփ կենսագրութիւնը, իր ուրախ եւ տխուր էջերով. անոր ծնունդը 10-րդ դարուն Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան օրերուն, անոր երիտասարդութիւնը խաւարամիտ միջին դարերուն, ապա անոր չարքաշ արհունաքամ կեանքը Համիդեան ջարդերուն, անոր նահատակութիւնը 1915-ի ցեղասպանութեան ժամանակ, ապա վերջապէս անոր քարոսանդ ու խոնարհուած մարմնի՝ սուրբ քարերու բզբտումը 20-րդ դարու առաջին կէսին:

Այսօր, երբ մեր ձեռքին կ'ունենանք Նարեկը չենք կրնար ջլիջել անոր ծննդավայրը՝ Նարեկայ վանքը, ան մեր պատմութեան մէջ միակ վանքն է, որ իր անունով մեզի ժառանգ ձգած է արժէքաւոր Ս. գիրք Նարեկը «Մատեան ողբերգութեան»ը, որ կը ներկայանայ «Նարեկայ վանքի անմահ մշտնջենական պտուղը»:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Ինչպէս միշտ, նախ եւ առաջ շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսքս կ'ուղղեմ Աստուծոյս՝ իր պարգեւած բարիքներուն, առիթներուն եւ շնորհքին: Առաջնորդուելով Յիսուս Քրիստոսի հետեւեալ խօսքով, «Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ, եւ ով որ կը փնտռէ կը գտնէ, եւ ով որ դուռը կը զարնէ՝ պիտի բացուի անոր», խօսք մը, որ հանդիսացաւ կեանքիս եւ գործերուս հիմքը, եւ որուն վրայ հիմնուեցայ միշտ:

Երախտագիտութեան խօսքս ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի տնօրէն ակադեմիկոս Աշոտ Մելքունեանին, որն իր աջակցութիւնը ցուցաբերեց այս գիրքի հրատարակութեան. եւ երախտագիտութեան խօսքս պատմաբան Վրէժ Վարդանեանին, որ իր խորհուրդներով շատ օգտակար եղաւ այս աշխատանքին:

Երախտագիտութեան խօսքս նաեւ կեանքիս սիրելի ընկերուհուս՝ հրաշալի տիկնոջս՝ Հրաչուհի Թովմասեանին (դոկտ. Հրաչուհի Պօղոսեան), իր մշտական քաջալերանքին:

Տարիներ տեւող յարատեւ կեդրոնացած աշխատանքէ ետք, սիրելի ընթերցող այս գիրքը կը հրամցուի քեզի...:

Պետրոս Մովսէս Թովմասեան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառաջաբան.....9

### Ա. ԳԼՈՒԽ

#### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Նարեկ Գիւղը .....	12
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 1 – Նարեկ Գիւղը.....	14
2. Նարեկ Գիւղը Եւ Ռշտունիք .....	14
3. Նարեկայ Վանքի Կառուցման Պատմաշրջանը .....	16
4. Անանիա Մոկացի (946-968) Կաթողիկոսը Եւ Նարեկայ Վանքի Կառուցումը.....	20
ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 1 - Անանիա Մոկացի (946-968թ.) Կաթողիկոսի Գահակալութեան Ժամանակակից Հայ Արքաները.....	21
5. Նարեկայ Վանքի Կառուցման Դրդապատճառները .....	23
6. Նարեկայ Վանքի Եկեղեցիները Եւ Ճարտարապետութիւնը.....	26
ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 2 – Նարեկայ Վանքի Եկեղեցիները.....	27
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 2 – Նարեկայ Վանքի Եկեղեցիներուն Յատակա- գիծը.....	28
7.Ս. Սանդուխտ Եկեղեցին.....	30
8. Ս. Աստուածածին Եկեղեցին.....	31
9. Նարեկ Անունով Ուխտավայրեր.....	33

### Բ. ԳԼՈՒԽ

#### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՒ ԺԱՄԱՆԱԿ

10. Գրիգոր Նարեկացի Եւ Իր Ընտանիքը.....	35
ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 3 - Ս. Գրիգոր Նարեկացիի (950-1003թ.) Ժամանակակից Հայ Գահակալները.....	37
11. Անանիա Նարեկացին Եւ Նարեկայ Վանքը.....	37
12. Գրիգոր Նարեկացիի Մանկութեան Ամենակարեւոր Պատմա- քաղաքական Դէպքը.....	39
ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 4 – Արաբերէնի Տարադարձութիւնը.....	42
13. Բիւզանդիոնի Արշաւանքը Բաղդադի Վրայ Եւ Հայոց Դիրքը.....	43

14. Անձեւացեաց Թագաւոր Դերենիկ Արծրունիի Գերութիւնը.....	46
15. Սողոմոն Իմաստունի Երգ Երգոցի Մեկնութիւնը.....	48
16. “Մատեան Ողբերգութեան”ի Գրութեան Ժամանակաշրջանը.....	50
17. Նարեկայ Վանքի Անմահ Մշտնջենական Պատուը “Մատեան Ողբերգութեան”.....	53
18. Գրիգոր Նարեկացի Հոգեբուծը.....	55
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 3 – Ս. Գրիգոր Նարեկացի .....	56
19. Նարեկայ Վանքը Եւ Թոնդրակեանները.....	58
20. Նարեկացիի Հրաշքը- Տապկուած Աղանիները.....	61
21. Նարեկայ Վանքը Աստուածատունկ Դրախտ .....	63
22. Ս. Գրիգոր Նարեկացիի Ճգնարան-Ուխտատեղին.....	64
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 4 – Գրիգոր Նարեկացիի Ճգնարանը Դուրսէն.....	67
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 5 - Գրիգոր Նարեկացիի Ճգնարանի Երրորդ Յարկի Յատակագիծը.....	70
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 6 - Գրիգոր Նարեկացիի Ճգնարանը.....	72
23. Գրիգոր Նարեկացիի Մատուռը Առտէր Կղզիի Մէջ.....	75
ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 7 – Գրիգոր Նարեկացիի Մատուռը Առտէր Կղզիի Մէջ.....	76
24. Ս. Գրիգոր Նարեկացիի Մահը.....	78
25. Նարեկայ Վանքի Մէջ Ամփոփուած Սուրբերու Մարմինները.....	80
ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 5 – Նարեկայ Վանքի Մէջ Ամփոփուած Սուրբերու Մարմինները Կամ Նշխարները.....	84
26. Գրիգոր Նարեկացին Եւ Հայ Ժողովուրդի Աստուածաբանութեան Էութիւնը.....	85
27. Գրիգոր Նարեկացիի Ստեղծագործութիւնները.....	87
28. Գրիգոր Նարեկացիի Հրաշագործութիւններէն.....	88

### Գ. ԳԼՈՒԽ

#### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ

#### ՊԱՏՄԱՇՐՋԱՆԻՆ

29. Նարեկայ Վանքի Դպրոցը.....92

30. Նարեկայ Վանքը Խոշոր Կալուածատեր Վանքերէն Մէկը...	96
31. Գրիգոր Նարեկացիի Աճիւնի Փոխադրութիւնը Նարեկայ Վանքէն 1021թ.....	97
32. Նարեկայ Վանքի Գործունէութեան Աշխուժացումը Եւ Հիւսիսային Իրաքի Հայկական Գաղութը.....	102

**Դ. ԳԼՈՒԽ**

**ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ**

33. Նարեկայ Վանքէն Հասած Առաջին Ձեռագիրը 1069թ.....	106
34. Աղթամարի Կաթողիկոսութեան Հիմնադրութիւնը Եւ Նարեկայ Վանքը .....	107
35. Գրիգոր Նարեկացիի Սրբացումը.....	109
36. Նարեկայ Վանքը Մոնղոլական Արշաւանքներուն.....	111
37. Նարեկայ Վանքը Կարա-Կոյունլուներու Պատմաշրջանին...	112
38. Նարեկայ Վանքը Եւ 1441թ. Հայոց Հայրապետական Աթոռի Հաստատումը Ս. Էջմիածնի Մէջ.....	115
39. Հայկական Թագաւորութեան Վերականգման Փորձ.....	117
40. Նարեկայ Վանքը Ակ-Կոյունլուներու Պատմաշրջանին.....	119
41. Հայաստանի Բաժանումը 1555թ. Եւ Նարեկայ Վանքը.....	120
42. Նարեկայ Վանքի Գործունէութիւնը ԺՁ. Եւ ԺԷ. Դարերուն...	122
43. Նարեկայ Վանքի Ժամատան Կառուցումը 1787թ.....	124

**Ե. ԳԼՈՒԽ**

**ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

44. Նարեկայ Վանքի Չանգակատան Կառուցումը 1812թ.....	127
45. “Արծուի Վասպուրականը” Եւ Նարեկայ Վանքը.....	128
46. Վարագայ Եւ Նարեկայ Վանքերու Համագործակցութիւնը..	130
47. Գարեգին Սրուանձտեանցի Այցելութիւնը Նարեկայ Վանք. 131	
48. Նարեկայ Վանքը Եւ Պետրոս Բիւլբիւլ Կաթողիկոսի Գահազրկման Հարցը.....	133

49. Նարեկացիի Դամբարանի Խաչքարի Կառուցումը 1867.....	136
50. Երեմիա Տեկանցի Այցելութիւնը Նարեկայ Վանք 1873թ.....	137
51. Վասպուրականի Մէջ Ստեղծուած Հայ Գրականութեան Նոր Դպրոցը Եւ Նարեկայ Վանքը.....	141
52. Նարեկայ Վանքի Դպրոցի Գործունէութիւնը.....	143
53. Օրմանեանի Այցելութիւնը Նարեկայ Վանք 1886 ին.....	144

**Զ. ԳԼՈՒԽ**

**ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

54. Նարեկայ Վանքը Համիդեան Ջարդերու Ժամանակ.....	146
55. Նարեկայ Վանքը Էջմիածնի Եւ Աղթամարի Միջեւ.....	149
56. Աղթամարի Վերջին Կաթողիկոս Խաչատուր Շիրոյեանի Մահը.....	151
57. Նարեկայ Վանքի Որբանոցը.....	152
58. “Լքուած Ու Մոռցուած” Վանքը 1903 թ. ....	154
59. Նարեկ Գիւղի Կռիւր 1904թ. ....	157
60. “Նարեկ”ը Կրթական Ձեռնարկ Վան քաղաքի Մէջ.....	160
61. ԱԴՕ Ի Այցելութիւնը Նարեկայ Վանք 1909թ.....	162
62. Նարեկ Գիւղն Ու Նարեկայ Վանքը Ցեղասպանութենէն Առաջ ..	163
ՑՈՒՑԱԿ ԹԻԻ 6 – Գեաւաշ գաւառի գիւղերու ցանկը.....	164
63. Նարեկայ Վանքը Մշակութային Գործիչներու Ուխտագնացութեան Վայր.....	166
64. Նարեկայ Վանքի Տոնախմբութիւնները.....	168
65. Նարեկայ Վանքը Ցեղասպանութեան Ժամանակ Վանի Հերոսամարտի Օրերուն.....	170
66. Նարեկայ Վանքը Վանի Հայկական Իշխանութեան Ժամանակ... 176	
67. Նարեկ Գիւղն ու Նարեկայ Վանքը 1916թ.....	177
68. Նարեկ Գիւղէն Ցեղասպանութենէն Փրկուածները.....	179
69. Նարեկայ վանքը Եւ Սեւրի Ու Լոզանի Դաշնագիրները.....	180
70. Քրտական Եմիշլիք Գիւղը Նարեկայ Վանքի Վայրին Մէջ....	181
ՊԱՏԿԵՐ ԹԻԻ 8 – Նարեկայ վանքի Քարերու Ճակատագիրը... 182	
ՊԱՏԿԵՐ ԹԻԻ 9 – Նարեկայ Վանքի Վայրին Կառուցուած Քրտական Գիւղը Իր Մզկիթով.....	184
71. Ցեղասպանութենէն Ետք Հայոց Առաջին Այցելութիւնը Նարեկայ Վանք.....	185

72. Նարեկայ Վանքի Ձեռագիրները.....	186
73. “Գրիգոր Նարեկացի” Պատմավեպը.....	189
74. Նարեկայ Վանքը Այսօր.....	191
ԳԾԱՅՈՒՑԱԿ ԹԻԻ 1 – Գրիգոր Նարեկացիի Ժամանակակից Հայոց Արքայները	
ԳԾԱՅՈՒՑԱԿ ԹԻԻ 2 – Նարեկայ Վանքի Եկեղեցիներու Կառուցման Ժամանակաշրջանները	
ԳԾԱՅՈՒՑԱԿ ԹԻԻ 3 – Նարեկայ Վանքը Դարերու Ընթացքին ԶԱՐՏԷՍ	– Ռշտունիք եւ Նարեկայ Վանք

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը կու գայ միանալու մեր անցեալ տարուայ մէջ հրատարակած յատուկ ուսումնասիրութեան՝ “Վարագավանքը Պատմութեան Քառուղիներուն” խորագրով գիրքին. նպատակ ունենալով հայ անհատին հրամցնել տեղեկութիւններու հաւաքածու մը՝ Արեւմտեան Հայաստանի հայկական կարեւոր կեդրոններու մասին, որոնք պատմաքաղաքական եւ մշակութային մեծ դեր ունեցած են մեր ժողովուրդի պատմութեան մէջ:

Երկար տարիներ մեծ հետաքրքրութեամբ կը փնտռէի գիրք մը, որուն մէջ գտնէի հայ ժողովուրդի կարեւոր սրբատեղիներէն՝ Նարեկայ վանքի ընդհանուր կենսագրութիւնը, իր ամբողջական պատմութեան կարեւոր էջերով. գիրք մը, որ կը ներկայացնէր Նարեկայ վանքի ունեցած կարեւորագոյն դերը մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Բայց այդպիսի գիրք ցաւօք սրտի չկարողացայ գտնել: Այդ ի մտի ունենալով, ձեռնարկեցի այս ընդարձակ աշխատանքին, եւ վերջապէս ստեղծել այդ գոյութիւն չունեցող գիրքը: Այդպէս, տարիներու տքնաջան աշխատանքէ ետք, այսօր այդ գիրքը ունինք:

Նարեկայ վանքը կը ներկայանայ Միջնադարեան Հայաստանի նշանաւոր կրօնական եւ մշակութային կեդրոններէն մէկը, որ կը գտնուէր Վանայ լիճի հարաւր, Նարեկ գիւղին մէջ: Նարեկայ վանքը Հայաստանի անուանի վանքերէն մէկը եղած է: Ան տասը երկար դարեր, ի հեճուկս դժուար եւ ծանր պայմաններուն, պահած է իր գոյութիւնը եւ աշխոյժ գործունէութիւնը:

Նարեկայ վանքը դարեր շարունակ հանդիսացաւ հայ գրչութեան կարեւոր կեդրոն մը, ուր զարգացաւ հայ գրչութեան, մանրանկարչութեան արուեստը, եւ հայ ստեղծագործ միտքն ու հոգին. ան եղաւ Հայ ինքնութիւնը պահող եւ պաշտպանող կարեւոր բերդ մը, գիտութեան եւ մշակոյթի հաստատուն փարոս:

Կարելի չէ Նարեկայ վանքի պատմութեան անդրադառնալ առանց խօսելու Նարեկ գիւղի մասին, ճիշդ ինչպէս կարելի չէ

անդրադառնալ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պատմության առանց խօսելու Աղթամար կղզիի մասին, կամ Վարագավանքի մասին առանց խօսելու Վարագայ լեռան մասին: Յայտնի պատմիչ Ուխտանեսի բնորոշմամբ Նարեկայ վանքը կոչուած է “Աստուածատունկ Դրախտ”, եւ այսպէս այդ Դրախտին մէջ ծնաւ Նարեկայ վանքի “Անմահ մշտնջենական պտուղը” Ս. Նարեկ գիրքը...:

Կարելի չէ Նարեկայ վանքի պատմութեան անդրադառնալ առանց խօսելու Ս. Գրիգոր Նարեկացիի եւ անոր Սատեան Ողբերգութեան (ՆԱՐԵԿ) ստեղծագործութեան մասին...: Նարեկը, որ դարձաւ, Սուրբ Գիրքի նման հոգեւոր եւ մտաւոր սնունդի մշտնջենական զուլալ աղբիւր. գիրք մը, որ եղաւ Հայոց մօտ երկրորդ Սուրբ Գիրք մը հազար տարիէ ի վեր: Վերջապէս ստեղծագործութիւն մը, որ կը հանդիսանայ այսօր համաշխարհային գրականութեան Արարատի նման գլուխ գործոց մը...:

Այս գիրքը կը բաղկանայ վեց “Գլուխ”-ներէ, որոնք ժամանակագրականօրէն իրարու կը յաջորդեն:

Գլուխները բաժնուած են “Բաժին”-ներու. իւրաքանչիւրը ունի իր վերնագիրը, որ խարսխուած է կարեւոր հարցի մը կամ դէպքի մը վրայ:

Բաժինները կ’ընդգրկեն “Յուցակ”-ներ, որոնք պատրաստուած են մեր կողմէ կարեւոր տեղեկութիւնները աւելի մատչելի դարձնելու նպատակով:

Մէջբերումները քաղուած են տարբեր սկզբաղբիւրներէ, յուշագրութիւններէ եւ ուսումնասիրութիւններէ, որոնց ցանկը յիշուած է գիրքի վերջաւորութեան:

Մեր հինգերորդ գիրքին մէջ եւս, ի գործ դրինք մեր երկրաչափական գիտելիքներու պաշարը շօշափած նիւթերը ներկայացնելու աւելի հետաքրքիր եւ մատչելի կերպով, պատարաստելով գունաւոր գծացուցակներ, որոնք զետեղուած են գիրքի վերջաւորութեան. եւ կ’արժեւորեն մեր ուսումնասիրութիւնը:

Այս ուսումնասիրութիւնը կը նպաստէ առաւել լաւատեղեակ լրջալու մեր պատմութեան, եւ ինչ նիւթական մեծ կորուստներ ունեցած ենք ցեղասպանութեան հետեւանքով:

Այս ուսումնասիրութիւնը, պիտի նպաստէ քննաբար լուսարանելու մեզի հետաքրքրող Արեւմտեան Հայաստանի կարեւոր պատմամշակութային կոթողներու ունեցած պատմաքաղաքական դերը մեր ժողովուրդի պատմութեան մէջ:

Վերջաւորութեան պէտք է նշել, թէ դժբախտաբար ոչինչ մնացած է սիրելի Նարեկայ վանքէն. կանգուն մնացած է Սուրբ Գրիգոր Նարեկացիի ճգնարանը-վիմափոր համալիրը. մնացած է Նարեկ գիւղը, այժմ քրտացած, ինչ որ բացայայտ վկայութիւն է պետականօրէն իրականացուած ահաւոր Ցեղասպանութեան, որ գործադրուեցաւ հայ ժողովուրդին դէմ: Այդ ցեղասպանութենէն փրկուած բազմաթիւ Նարեկայ վանքի ձեռագիրներ այսօր կը պահպանուին Հայաստանի Հանրապետութեան Ազգային Սատենադարանի եւ Ս. Էջմիածինի մէջ:

Մեզի հետաքրքրող այս վանքի անունը յիշուած է “Նարեկայ վանք” եւ “Նարեկավանք”: Մենք նախընտրեցինք գործածել “Նարեկայ վանք”ը, որ շատ աւելի գործածական է:

Կարճախօսը հեծեալ է,  
շատախօսը՝ հետխոսն  
«Գալիքն անատոյզ» է:  
Գ. Նարեկացի

## Ա. ԳԼՈՒԽ

### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

#### 1. Նարեկ Գիտը

Նարեկայ վանքի պատմության մասին գրել է առաջ անհրաժեշտ է անդրադառնալ Նարեկ գիտի պատմության:

Վասպուրականը Մեծ Հայքի 15 նահանգներին ամենաընդարձակն էր, եւ ամենաբազմազատ նահանգը: Վասպուրականը ուներ 37 գաւառ. որոնցմէ էր Ռշտունիքը՝ Ոստան գիւղաքաղաքով, Նարեկայ վանքով եւ Աղթամար կղզով:

Նարեկ գիւղ մըն էր Վանայ լիճի հարաւակողմը, լիճէն մօտաւորապէս 4 կիլոմետր հեռաւորութեան վրայ, որ սփռուած էր Եղերով լեռան ստորոտին Վանայ լիճի հարաւ-արեւմտեան կողմը. տես քարտէսը գիրքի վերջաւորութեան:

Փշավանց գետի հովիտին մէջ, Վանայ լիճէն ոչ շատ հեռու, լեռներու ստորոտին կը գտնուէր Նարեկ գիտը, որ եղած է գաւառի մեծ գիւղերէն մէկը: Ըստ Համազասպ Ոսկեանի «Վանի ծովից մի ժամաչափ դէպի հարաւ մի բլրադաշտի վրայ գտնուած է Նարեկ գիւղը, որի մէջտեղում բարձրացած է հոշակաւոր վանքի երկնասնման տաճարի բարձրաբերձ գմբէթը»<sup>1</sup>

Նարեկ գիւղի կառուցման պատմութեան մասին բաւական արժէքաւոր տեղեկութիւններ յիշած է Խաչատուր Լեւոնեանը: Ս. Գրիգոր Նարեկացիի հայրը Խոսրով Եպսկ., Նորտուզի Նար գիւղէն էր, որ կը

1. Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը, Ա. մաս, Մխիթարեան Տպրն. Վիեննա, 1940, էջ 189, 190:

գտնուիր Շատախի հարաւ արեւելքը: Ան կը հեռանայ այդ գիւղէն, որովհետեւ վայրը լեռնային էր եւ յարմար չէր հացաբոյսեր մշակելու. մէջբերենք հետեւեալը, «*Խոսրով Անձեւացին ասուելով իր կինն ու երեք զաւակները, ուրիշ մի քանի գիւղացիք բնասկիւրներու հետ դէպի հիւսիսային արեւմուտք կը գաղթէ, հաստատուելով Շատախի Փէզանդաշտ անուն գաւառակին մօտերը փոքրիկ եւ արգասանդ դաշտակի մը մէջ, եւ նոր գիւղ մը հիմնելով, ի յիշատակ իր հայրենի գիւղին, զայն կ'անուանէ Նար, որ նախկին Նարէն տարբերելու համար Նաո ալ կը կոչուի այժմ: Հոս իր կինը մեռնելուն, ալ չ'ամուսնանար, այլ եկեղեցական կարգ կ'առնէ եւ իր զրական եւ հեղինակաւորական հմտութեանց շնորհիւ հետզհետէ բարձրանալով, նոյն թեմի եպիսկոպոսը կ'ըլլայ»<sup>2</sup>*

Նարեկ անուան ծագման մասին, կան երկու հիմնական կարծիքներ:

Նարեկ անունը կազմուած է «Նար-եկ» բառերէն, որ կը նշանակէ Շատախի Նար գիւղէն եկածներու բնակավայր, «*Նարեկ, որ կը նշանակէ Նարի-եկք (Նարէն եկածներ կամ Նարեցի), որովհետեւ եկ'ցի մասնիկին իբր հումանիշ տեղերու անուններուն կցուելով նոյն տեղացի կամ երկրացի նշանակութիւն տուած ըլլալու է երբեմն իր յարակից անուններուն»<sup>3</sup>*

Երկրորդ կարծիքի համաձայն, Նարեկ անունը յառաջացած է «Նոր-եկ» բառերէն, որ առնչուած է հայ-բիւզանդական եկեղեցիներու գաղափարային պայքարի հետեւանքով հայոց գաղթի մասին Փոքր Հայքի տարածքներէն դէպի Վասպուրական: Նարեկ անունով կայ նաեւ փոքր գետակ մը, որ կը հոսի դէպի Վանայ լիճ, տես Քարտէսը, «*Դէպի Վանա լիճն էին հոսում Նարեկ, Անգրագետ (Խոշապ), Շամիրամ, Կառկառ (գարգար), Սեւ գետ (Մամերտ), Բերկրու գետ (Առեստ, Բանդի մահի), Օրորան եւ այլ գետերն ու գետակները»<sup>4</sup>*

2. Խաչատուր Լեւոնեան, Վան-Վասպուրական Աշխարհը, Հրատարակչ. Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի-թիւ 20, Պէլրոթ, 2013, էջ 79, 80:

3. Համազասպ Ոսկեան, նոյնը, էջ 210, 211:

4. Հ.Մ. Պօղոսեան, Վասպուրականի Պատմութիւնից (1850-1900), ՀՍՍՀ ԳԱ Հրատարակութիւն, Երեւան 1988, էջ 17:



## 2. Նարեկ Գիւղը Եւ Ռշտունիք

Արծրունիները հայոց պատմութեան մէջ շատ հին ժամանակներէն գոյութիւն ունեցող նախարարական կարեւոր տուներէն մէկն էին: Արծրունիներու հետ կը համագործակցէին Ռշտունիները, որոնք Հայաստանի հնագոյն նախարարական տոհմերէն էին. անոնց ժառանգական հայրենիքն էր Վասպուրականի Ռշտունիք գաւառը, եւ աւելի ուշ Տոսպ գաւառը Վան քաղաքով: Այս գաւառին մասին մէջբերենք հետեւեալը Թ. Խ. Յակոբեանէն, «*Ռշտունիք կամ Ըորշտունիք: Ռշտունիք անունը Ուրարտու անուան հայկական ձեւն է: Այս լեռնային գեղատեսիլ գաւառը տարածուում էր Վանա լճի հարաւային առափնեայ շրջաններում նրա եւ Հայկական Տարոսի ջրբաժան բարձրութիւնների միջև: Ռշտունիքի մէջ էր մտնում Աղթամար կղզին, որը գտնուում է լճի հարաւային ափի մօտ: Երկրի մի զգալի մասը պատած է սաղարթաւոր անտառներով: Ունի բերրի հող եւ նպաստաւոր կլիմայական պայմաններ գիւղատնտեսութեան, յատկապէս այգեգործութեան զարգացման*

*համար»*:<sup>5</sup> Ռշտունիք անունը Ուրարտու (Ուրաշտու) անուան մէկ ձեւն է: Այս գաւառին մէջ կը գտնուէին Նարեկ գիւղը եւ իր հոջակաւոր վանքը:

Ռշտունիներու ծագման մասին կարծիքներէն մէկն այն է, որ այս տոհմը ծագած է Ուրարտուի Ռուշաս (Ռուսա) թագաւորէն<sup>6</sup>:

Մովսէս Խորենացին խօսելով Մեծն Տիգրան արքայի մասին՝ գրած է Ռշտունեաց նախարարութեան նահապետ Բարզափրանի մասին հետեւեալը, «*Ապա Տիգրանը Ռշտունեաց նախարարութեան նահապետ Բարզափրանին սպարապետ նշանակելով հայոց եւ պարսից զօրքերին՝ ուղարկում է հռոմայեցիների զօրքերի դէմ եւ հրաման է տալիս՝ Ասորիքի ու Պաղեստինի բնակիչներին հաշտութեան բերել եւ խաղաղեցնել*»:<sup>7</sup>

Ռշտունիները երկար ժամանակ վարած են Հայաստանի հարաւային զօրաբանակի սպարապետութիւնը: Ռշտունիներու վերջին կարեւոր մեծ դէմքը եղաւ Թեոդորոս Ռշտունին 7-րդ դարուն, որ միաւորեց Հայաստանը եւ յաջող պայքար մղեց արաբներու դէմ: Տասնեակ տարիէ աւելի արաբներու դէմ պատերազմելէ ետք՝ Թեոդորոս Ռշտունին դիւանագիտական հմտութեամբ՝ յաջողեցաւ արաբներու հետ նպաստաւոր հաշտութեան պայմանագիր մը կնքել:

Արաբական տիրապետութեան յաջորդ երկու դարերուն ընթացքին՝ Ռշտունիները սկարացան եւ գերադասեցին համագործակցիլ Արծրունիներուն հետ, անոնց զիջելով իրենց հողերը: Այդպէս, երբ հիմնուեցաւ Նարեկայ վանքը՝ Նարեկ գիւղը կը գտնուէր Արծրունիներու իշխանութեան ներքեւ:

Նարեկ գիւղը կը գտնուէր Վասպուրականի Գաւառ գաւառին մէջ. Գաւառ գաւառը մէկ մասն էր պատմական Ռշտունիք գաւառէն, որուն մասին անդրադարձանք: Վասպուրականի այս

5. Թ. Խ. Յակոբեան, Հայաստանի Պատմական Աշխարհագրութիւն, ԵՊՀ, Բ. հրատարակութիւն, «Միտք», Երեւան, 1968, էջ 180, 181:

6. Վահան Վ. Բնգիլգեան, Հայաստան Սուրբ Գրքի Մէջ, Վիեննա, 1947, էջ 166:

7. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Հայաստան հրատարակչ. «Հայ Մատենագիրներ», Երեւան, 1968, Գիրք Երկրորդ, ԺԹ, էջ 151:

կարելուր գաւառին մասին մէջբերենք հետեւեալը, «Պատմական Ոստան կամ Գաւառ գաւառը ընկած էր Վանայ լճի հարաւային մասում, որի ջրերին էին խառնուում Ոստան, Փշաւանց եւ Մոխրաբերդ գետակները եւ որից տեղացիները մեծ քանակութեամբ տառեխ էին որսում: Այդ գաւառը եւ նրա կենտրոն Ոստանը համարուել են պատմական Հայաստանի Ռշտունեաց նախարարութեան կալուածքը: Գաւառում էր գտնուում Չարդարս. Նշան վանքը, որտեղ թաղուած էր Եղիշէն: Այնտեղ էր գտնուում Նարեկայ վանքը՝ համանուն գիւղով եւ Արտեր կղզին ու Աղթամարն իր հոչակաւոր տաճարով: Բնակչութեան հիմնական զբաղմունքը հացահատիկի մշակութիւնն էր եւ անասնապահութիւնը: Գաւառն ուներ 20 հայկական գիւղ: Ոստանի մօտ կար «Կարմիր հողեր» կամ Կաղճին, որից բրուտները գեղեցիկ կաւէ ամաններ էին պատրաստում: Նարեկ եւ Նորգիւղ գիւղերի բնակիչները զբաղուում էին շալագործութեամբ»<sup>8</sup> Սոյն մէջբերման մէջ կարելուր տեղեկութիւն կայ Նարեկի գիւղացիներու շալագործութեան աշխատանքի մասին:

### 3. Նարեկայ Վանքի Կառուցման Պատմաշրջանը

Արշակունեաց հարստութեան անկումէն 428թ., չորս ու կէս դար ետք 885թ., հիմնուեցաւ Բագրատունեաց հարստութիւնը, որուն հիմնադրութենէն հազիւ թէ երկու տասնեակ ետք՝ 908թ., (23 տարի) Վասպուրականը անջատուեցաւ որպէս առանձին հայկական հարստութիւն:

Արծրունիները, որոնք տէրն էին Վասպուրական նահանգին, որ հայկական խոշորագոյն եւ հարուստ նահանգն էր եւ ուներ հսկայական ներուժ, Արաբական խալիֆայութեան տիրապետութեան պատմաշրջանին կարողացան պահպանել իրենց գոյութիւնն ու ինքնիշխանութիւնը: Արծրունիները, Բագրատունիներու, Մամիկոնեաններու եւ միւս նախարարական տուներու հետ յաջողեցան Հայաստանը ուժեղ պահել եւ աւելին Աբբասեան խա-

<sup>8</sup> Հ. Մ. Պօղոսեան, նոյնը, էջ 22, 23:

լիֆայութեան դէմ ազատագրական բուռն պայքար մղելով խալիֆայութեան ստիպեցին ճանչնալ Բագրատունեաց թագաւորութեան անկախութիւնը 885թ.: Այդպիսով, հայ ժողովուրդը թօթափեց երկու դար տևող արաբական խալիֆայութեան տիրապետութեան լուծը եւ վերականգնեց իր պետական անկախութիւնը:

Քաղաքական ներքին եւ արտաքին դրդապատճառներով Արծրունիները 908թ. անջատուեցան Բագրատունեաց թագաւորութենէն եւ հիմնեցին հայկական անկախ թագաւորութիւն մը, որուն հիմնադիրն եղաւ Գագիկ Արծրունին: Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը ժամանակակից եղաւ Բագրատունեաց թագաւորութեան, եւ տեւեց մէկ դարէն աւելին (908-1021): Հայկական երկու թագաւորութիւններու գոյութիւնը միաժամանակ, որոշ չափով նման էր մեր ներկայ օրերու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու գոյութեան. միեւնոյն ազգի միացած, բայց եւ առանձին երկու պետութիւններ: Պէտք է նշել, որ Արծրունեաց թագաւորութեան հիմնադրութիւնը բացասական էջ մըն էր հայ ժողովուրդի պատմութեան մէջ, թէեւ երկու հայկական հարստութիւններու գոյութիւնը միաժամանակ յառաջացուց մրցակցութեան մթնոլորտ մը, որ որոշ չափով զարկ տուաւ հարաւային Հայաստանի զարգացման մշակութային եւ շինարարական ասպարէզներուն:

Արծրունեաց թագաւորութեան հիմնադիր՝ Գագիկ Արծրունին (908-943թ.) շինարարական կարելուր գործեր կատարեց Ոստան քաղաքի եւ Վանի միջնաբերդին մէջ. ինչպէս նաեւ Վանայ լիճի Աղթամար կղզիին մէջ, ուր 915-921 տարիներուն կառուցեց հոչակաւոր Ս. Խաչ եկեղեցին: Այդ եկեղեցին Ս. Չոիփսիմէի վանքի նման՝ խաչաձեւ գմբէթաւոր է, դուրսէն ամբողջութեամբ զարդարուած ու քանդակուած է: Արտաքին պատերէն մէկուն վրայ քանդակուած է Գագիկ Արծրունիի պատկերը: Ան Աղթամարը վերածեց նաւահանգիստ քաղաքի եւ դարձուց իր գահանիստ քաղաքը:



Արծրունիներու իշխանապետութիւնը սկիզբը, ապա նաեւ թագաւորութիւնը, որ հիմնուեցաւ 908թ. իր աշխարհագրական դիրքով հիւսիսային Հայաստանը կը կապէր Միջագետքի ու Պարսկաստանի հետ. այդ տարածքներով կ'անցնէին միջագային տարանցիկ առետրական հարաւային ճանապարհները: Այդ նպաստեց Արծրունեաց իշխանութեան եւ ապա թագաւորութեան տնտեսական զարգացման եւ վերելքին: Այսպէս, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը կարեւոր դեր ունեցաւ Հայաստանի հարաւային տարածքներուն մէջ ապրող հայութեան քաղաքական, մշակութային եւ հոգեւոր կեանքի զարգացման մէջ, եւ այդ կը բացատրէ Նարեկայ վանքի նման կարեւոր կեդրոնի մը կառուցումը իր տարածքին մէջ:

Աշոտ Երկաթէն ետք Բագրատունեաց գահին բարձրացաւ իր եղբայրը՝ Աբաս Ա. (928-953), որուն օրօք Բագրատունի եւ Արծրունի թագաւորներու միջեւ մերձեցումը աւելի խորացաւ: Այն ի յայտ եկաւ Աբաս Ա-ի թագադրութեան ժամանակ, որ տեղի ունեցաւ Վասպուրականի մէջ, երբ Գագիկ Արծրունին՝ Աբաս Ա-ին թագադրեց հայոց թագաւոր: Այս հանգամանքը կը վկայէ, որ Գագիկ Արծրունին կ'ընդունէր Բագրատունիներու գերակայութիւնը, ինչպէս որ Արշակունեաց թագաւորութեան ժամանակ Բագրատունեաց նախարարները թագադրելով Արշակունեաց հայ թագաւորները կ'ընդունէին անոնց գերակայութիւնը:

Արաբական տիրապետութեան ժամանակ, արաբ-բիզանդական ընդհարումներու հետեւանքով՝ միջագային տարանցիկ առետուրը շատ տկարացաւ, սակայն 9-րդ դարու վերջին եւ 10-րդ դարու սկիզբին կրկին աշխուժացաւ. այդ ժամանակ Հայաստանը մեծ դեր ունեցաւ այդ առետուրի զարգացման մէջ:

Վաճառականութեան զարգացման զարկ տուաւ այն, որ Հայաստանը դարձած էր չէզոք երկիր Բիզանդիոնի եւ Աբբասեան խալիֆայութեան միջեւ: Ան եղաւ Մերձատր Արեւելքի միջագային տարանցիկ առետուրի կարեւոր կեդրոններէն մէկը: Առետուրի զարգացումը նպաստեց առետրական ճանապարհներու վրայ

գտնող քաղաքներու բնակչութեան աճին: Հայաստանի վրայով կ'անցնէին հիւսիսային եւ հարաւային առետրական մայրուղիները, որոնց վրայ կը գտնուէին հետեւեալ նշանաւոր քաղաքները՝ Պոլիսը, Անին, Կարսը եւ Երզնկան՝ հիւսիսային մայրուղիի վրայ. եւ Ներք, Բերկրին, Արճեշը, Սանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Արզնը, Նիբկերտը եւ Խարբերդը՝ հարաւային մայրուղիի վրայ: Կարեւոր է նաեւ նշել, որ Հայաստանէն կ'արտահանուէին բազմաթիւ արտադրութիւններ, գործինակ, հացահատիկ, ձիեր, ջորիներ, երկաթ, պղինձ, աղ, գինի, ներկային նիւթեր եւ այլն:

Երկրի բարգաւաճման հետեւանքով, տեղի ունեցան բարեկարգումներ գրեթէ բոլոր բնագաւառներուն մէջ. բանակին մէջ տեղի ունեցած բարենորոգումներէն էին բանակի զինուած ուժերուն կարմիր գոյնի յատուկ զինուորական համազգեստ գործածելը: Բագրատունեաց թագաւորութեան բանակի թիւին մասին յիշուած է, որ Աբաս Ա. ունէր լաւ մարզուած բանակ, որուն թիւր մօտաւորապէս հարիւր հազարի կը հասներ:

Աբաս Ա-ի (928-953) օրօք, Հայաստան բարգաւաճեցաւ ապրելով յարաբերաբար արտաքին վտանգներէ ազատ եւ խաղաղ պայմաններու մէջ: Ստեղծուած խաղաղութեան շրջանը մեծապէս նպաստեց Բագրատունեաց Հայաստանի մէջ տեղի ունեցող տնտեսական եւ մշակութային վերելքին: Հայաստանի տնտեսական բարգաւաճման զգալիօրէն օգնեց օտարին հարկ չվճարելը. Հայաստան այլեւս հարկ չէր վճարեր որեւէ մէկուն. հետեւաբար երկրի տնտեսական հարստութիւնը մնաց երկրին մէջ, ու գործածուեցաւ երկրի կառուցման եւ զարգացման համար:

Երկրի բարգաւաճման մէջ կարեւոր դեր ունեցաւ նաեւ այն, որ մինչեւ 9-րդ դար հողը կը հերկուէր արոքով, իսկ այնուհետեւ սկսաւ գործածուիլ նաեւ գութանը, որուն շնորհիւ հնարաւոր դարձաւ հողը վարել աւելի խոր, ու հետեւաբար բարձրացնել բերքատուութիւնը. այս ինքնին շատ կարեւոր զարգացում էր հայ ժողովուրդի կենցաղային պատմութեան զարգացման մէջ:

Հայաստանի բարգաւաճման ցուցանիշներէն մէկն էր այս հանգրուանին մեծ ծաւալով տեղի ունեցած շինարարութիւնները: Կառուցուեցան նոր քաղաքներ, կամ նորոգուեցան հիները. տարանցիկ առևտուրին զարկ տալու համար կառուցուեցան նոր ճանապարհներ, կամուրջներ եւ ճամբորդական հանգստատներ: Աբաս Ա-ի շինարարական գործունէութեան լաւագոյն յուշարձանն է Կարս քաղաքի սրտին մէջ՝ գետի ափին իր կառուցած Ս. Առաքելոց մայր եկեղեցին, որ կանգուն է մինչեւ օրս...:

Արծրունեաց եւ Բագրատունեաց թագաւորութեանց այս համագործակցութիւնը տեղի ունեցաւ Աբաս Ա-ի թագաւորութեան այն տարիներուն երբ ժամանակաւորապէս ստեղծուած էր խաղաղութեան պատմաշրջան մը Բիւզանդիոնի եւ Արբասեան Խալիֆայութեան միջեւ: Այդպէս, Հայաստանը ապրեցաւ յարաբերաբար արտաքին վտանգներէ ազատ եւ խաղաղ պայմաններու մէջ, ինչ որ մեծապէս նպաստեց Հայաստանի մէջ տեղի ունեցող տնտեսական եւ մշակութային վերելքին: Ահա այս նպաստաւոր պայմաններուն մէջ հիմնուեցաւ մեզ հետաքրքրող Նարեկայ վանքը:

#### 4. Անանիա Մոկացի (946-968) Կաթողիկոսը Եւ Նարեկայ Վանքի Կառուցումը

Մեր պատմութեան քաղաքական ներքին սերտ համերաշխութեան կարեւոր պատմաշրջանի մը ընթացքին հիմնուած է Նարեկայ վանքը, Անանիա Մոկացի (946-968) կաթողիկոսի գահակալած տարիներուն, որ տեսած է մօտաւորապէս քառորդ դար, ան ժամանակակից էր Վասպուրականի Դերենիկ Արծրունի (943-958) եւ իր յաջորդ Աբուսահլ-Համազասպ (958-968) գահակալներուն. իսկ Բագրատունեաց գահակալներէն Աբաս Ա. (928-953) եւ Աշոտ Գ. Ողորմած (953-977). տես Ցուցակ թիւ 1:

#### ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 1

Անանիա Մոկացի (946-968 թ.) Կաթողիկոսի Գահակալութեան Ժամանակակից Հայ Արքաները

Բագրատունեաց Գահակալ	Արծրունեաց Գահակալ
Աբաս Ա. (928-953)	Դերենիկ (943-958)
Աշոտ Գ. Ողորմած (953-977)	Աբուսահլ-Համազասպ (958-968)

Բագրատունիներու եւ Արծրունիներու համագործակցութիւնը տեղի ունեցաւ նաեւ եկեղեցական գետնի վրայ: Գազիկ Արծրունիին յաջորդեց իր որդին Դերենիկ Արծրունիին, որուն իշխանութեան ժամանակ համագործակցութիւնը Արծրունեաց եւ Բագրատունեաց թագաւորութիւններուն միջեւ շարունակուեցաւ, ու այս անգամին կաթողիկոսական աթոռը տրուեցաւ Արծրունիներուն՝ ի դէմս Անանիա Մոկացիին, որ եղած էր Վարազավանքի վանահայրը, Արծրունիներու ամենասիրած սրբավայրը: Այս հարցով մէջբերենք հետեւեալը, «946 թ. կաթողիկոս ընտրուեց Անանիա Մոկացին, որը նախապէս եղել է Վարազայ վանքի վանահայրը: Բայց նա Աղթամարում չմնաց, այլ տեղափոխուեց Կարս, ուր Աբաս Բագրատունին կատուցել էր Կաթողիկէ եկեղեցին: Վարազայ վանքի առաջնորդի ընտրութիւնը կաթողիկոս եւ աթոռի տեղափոխումը Բագրատունեաց ոստան (Վանանդ) շատ խօստուն փաստ է, այն վկայում է, որ Արծրունիները այդ շրջանում ընդունում էին Բագրատունիների գերիշխանութիւնը Հայաստանում, ճանաչում Աբաս Բագրատունու գերագոյն-սիւզերենական իրաւունքները: Հակառակ դէպքում Արծրունի թագաւոր Դերենիկը (943-958) թոյլ չէր տայ, որ Վասպուրականի հոգեւոր առաջնորդը (եւ նրա հետ միասին՝ կաթողիկոսի աթոռանիստը) տեղափոխուի Կարս: Մեր կարծիքով պատահական չէ նաեւ, որ Աբասը իր հերթին ոչ թէ առաջ քաշեց իր եպիսկոպոսների որեւէ մէկի թեկնածութիւնը, այլ համաձայնուեց, որ կաթողիկոսական

գահին նստի Արծրունիների ներկայացուցիչը: Դա փոխադարձ զիջում էր»<sup>9</sup>

Անանիա Մոկացին իր կրթությունը ստացած էր Աղթամարի եւ այնուհետեւ Վարազավանքի մէջ, ապա եղած էր Վարազավանքի առաջնորդը: Անոր օրով կառուցուեցան Հոռոմոսի, Սանահինի վանքերը եւ մեզ հետաքրքրող Նարեկայ եւ բազմաթիւ այլ վանքեր, «Անանիա Նարեկացու օրով ոչ միայն Նարեկա վանքը, այլեւ Հայաստանի շատ ուրիշ վայրերում գտնուող վանքեր ապրում էին իրենց ճանաչումն ստանալու շրջանը: Այդ Անանիայի «սննդակից» Անանիա Մոկացու կաթողիկոսութեան եւ Աշոտ III-ի (Ողորմածի) թագաւորութեան տարիներին էր, երբ աննախընթաց արագութեամբ ու քանակով առաջ եկան վանքեր ու վանականութիւն»<sup>10</sup>

Ինչպէս յիշեցինք Նարեկայ վանքի կառուցման պատմահանգրուանին Հայ ժողովուրդի քաղաքական վարչութիւնը կը գտնուէր երկու մեծ տոհմերու՝ Բագրատունեաց եւ Արծրունեաց արքայական իշխանութեան ձեռքը: Երկու տոհմերու քաղաքական եւ կրօնական ղեկավարութեանց խոշորագոյն միտումն էր նաեւ մտաւորական կեանքի զարգացումը, որ կ'արտայայտուէր եկեղեցիներու ու վանքերու կառուցումով, հետեւաբար զարկ կու տար կրօնական մշակոյթի զարգացման:

Շատ հետաքրքրական է մէջբերել Երուանդ Լալայեանի յիշատակութիւնը Նարեկայ վանքի մասին, ան «Պատմական տեսութիւն» խորագրի տակ յիշած է, «Թէպէտ երկար պրպտեցի մատենագիրները եւ ձեռագրերի յիշատակարանները, սակայն Նարեկայ վանքի հիմնարկութեան եւ զարգացման վերաբերեալ ստոյգ եւ մանրամասն տեղեկութիւններ չկարողացայ գտնել»<sup>11</sup>

9. Ռ. Ի. Մաթևոսեան, Բագրատունեաց Հայաստանի Պետական Կառուցումը Ու Վարչական Կարգը, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչ., Երևան, 1990, էջ 122, 123:

10. Մ. Մկրտեան, Գրիգոր Նարեկացի, ԵՊՀ, Երևան, 1955, էջ 115:

11. Երուանդ Լալայեան, Վասպուրական (Նշանատր Վանքեր), Ա. Պրակ, Թիֆլիս, Էլեքտրատպ. օր. Ն. Աղանեան, Պոլից. 7., 1912, էջ 21:

Ընդհանուր կարծիքի համաձայն Նարեկայ վանքը կառուցուած է 946-950 թուականներուն, «Փաստօրէն, վանքի հիմնադրումը տատանում է 946-953 միջեւ: Հաշուի առնելով կանայի փաստը, որ վանքում 950թ. կատարուել է «Մեկնութիւն պատարագամատոյց»-ի ընդօրինակութիւն, ուստի վանքի հիմնադրումը կարելի է վերագրել 946-950 թուականներուն»<sup>12</sup>

Այսպէս, Նարեկայ վանքը կառուցուած է Բագրատունեաց Արաս Ա. (928-953թ.), Արծրունեաց Դերենիկ Արծրունի (943-958թ.), եւ Անանիա Մոկացի կաթողիկոսի (946-968թ.) գահակալած տարիներուն:

## 5. Նարեկայ վանքի Կառուցման Դրդապատճառները

Համաձայն պատմական տեղեկութիւններուն Նարեկայ վանքը կառուցուած է Փոքր Հայքէն Հայաստան ներգաղթող Հայ կրօնաւորներու կողմէ, որոնք բիւզանդացիներու կողմէ հալածուած էին իրենց դաւանանքի պատճառով, որովհետեւ Բիւզանդիոնը կ'ուզէր անոնց միացնել բիւզանդական եկեղեցիին հետ: Անոնք Ժ. դարուն, կուզան Հայաստան եւ կը հիմնեն քանի մը վանքեր, որոնցմէ մէկն էր Նարեկայ վանքը, որ հիմնուելով Նարեկ գիւղին մէջ կոչուեցաւ այդ անունով: Երուանդ Լալայեան քաղելով Աստղիկ պատմիչէն, վանքի հիմնադրութեան մասին յիշած է, «Ժ. դարում Բիւզանդական կայսրութեան մէջ եղած հայ կրօնաւորները հալածուելով Ռոմանոս կայսրից, որ աշխատում էր դաւանութեամբ միացնել նրանց բիւզանդական եկեղեցու հետ, փախել են Հայաստան եւ այստեղ վերանորոգել ու շինել բաւականաչափ վանքեր: Այսպէս եւ՝ «յայսմ ժամանակիս, ասում է Աստղիկը, շինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց գաւառին նոյն կարգաւորութեամբ, բազմազարդ պաշտօնապայծառ երգեցողովք եւ գրական գիտողք»<sup>13</sup> Ժ. դարուն, եկեղեցիներ ու վանքեր կառուցելու հզօր ալիքի նպատակն էր ամրապնդել Հայ Առաքելական հաւատքը ընդդէմ Բիւ-

12. Դաւիթ Քերթեմեջեան, Նարեկավանքի Ճարտարապետական Յօրինումաձքը, Յօրնում-Վարագ, թիւ 58, 2011:

զանդիոնի կրօնական քաղաքականութեան եւ Աբբասեան Խալիֆայութեան ու հարեւան մահմեդական երկիրներու կրօնական ճնշումներուն:

Կ'ենթադրուի, որ Նարեկայ վանքի կառուցումը առնչուած է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցոյ հետ, այդ պատճառով ան կը կոչուէր Դրուց (դուրս) վանք, «Աղթամարի շինութենէն անմիջապէս վերջ կը շինուի Դրուց (դուրսի) անուն վանքը: Այս վանքը վերջէն Նարեկ կ'անուանուի, որովհետեւ Ս. Գրիգոր Նարեկացին, որ յառաջ հեռաւոր Նար գիւղէն էր, իր ազգատոհմով այս վանքին մէջ կու գայ հաստատուելու, որով վանքը կը կոչուի Նարեկ»:<sup>13</sup>

Եթէ ընդունինք այս կարծիքը, որ Նարեկայ վանքի կառուցումը առնչուած է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցոյ կառուցման հետ, եւ Աղթամար կղզիին մէջ կառուցուածի դրսի վանքն էր, որ ան շինուած է անկէ անմիջապէս ետք, ապա Նարեկայ վանքը կառուցուած պէտք է ըլլայ 921թ. ետք, երբ Գագիկ Արծրունին լրացուց Աղթամարի Ս. Խաչ եկեղեցոյ կառուցումը. որ կը հակասէ ընդհանուր կարծիքին, թէ Նարեկայ վանքը կառուցուած է 946-950 թուականներուն ինչպէս անդրադարձանք:

Ամէն պարագաներուն ալ, Նարեկայ վանքը 10-րդ դարու առաջին կէսին կառուցուած է. եւ Նարեկ գիւղին մէջ հիմնուած վանքը, որ կը կոչուէր Ս. Սանդուխտ կամ Դրուց<sup>15</sup>, նոյն գիւղի անունով կոչուեցաւ Նարեկայ վանք: Ա-ին Բաժնին մէջ անդրադարձանք, թէ ինչպէս Ս. Գրիգոր Նարեկացիի հայրը, Խոսրով Անձեւացի կառուցեց Նարեկ գիւղը իր վայրին մէջ. նորակառոյց գիւղին մօտակայ վանքը կոչուեցաւ գիւղին անունով, «Քանի որ Խոսրով Անձեւացին իր նոր հիմնած գիւղն ի յիշատակ առաջնոյն Նար կ'անուանէ, ուստի զուակները վերայիշեալ Ս. Սանդխտոյ Վանուց մէջ հաստատուելով, պատշաճաբար զայն կանուանեն ՆԱՐԵԿ (պզտիկ Նար, կամ թերեւս Նար-եկ – Նարի եկը- եկաւորք) ի յիշատակ իրենց հայրենական գիւղերուն: Այս վանքի անուա-

13. Երուանդ Լալայեան, նոյնը, էջ 21:

14. Համագասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը, էջ 210, 211:

նակոյնութիւնը թերեւս նոյն իսկ Ս. Գրիգորի բանաստեղծական մտքին ծնունդ ըլլայ. ինչպէս այն անունով մկրտած է նաեւ իր հեղինակած Աղօթագիրքը, անուանելով զայն **Նարեկ ի պատիւ իր հայրենական քաղաքի կ'իշատակին**»:<sup>16</sup>

Ըստ Խաչատուր Լեւոնեանին Խոսրով Անձեւացին հիմնած է Նարեկայ վանքը. այդ պատճառով վանքը կոչուած է նաեւ ՝ իր կառուցողին անունով, «Այն ատեն նոյն սահմանին մէջ նոր վանք մը կը հիմնէ, շինելով հոյակապ ու զմբէթաւոր եկեղեցի մը յանուն Ս. Նշանի եւ Ս. Աստուածածնի, որ հին ձեռագիր յիշատակարաններուն մէջ իր հիմնողին անունով Խոսրովայ կամ Խոսրովային Ս. Նշան Վանք կոչուած է, մինչ այժմ **Ղարայ-Տէր կ'ըսուի, որ տեղացիներուն արդի բարբառովը կը նշանակէ զօրաւոր կամ հրաշաւոր եկեղեցի**»:<sup>17</sup>

Շատ տրամաբանական էր վանքի գոյութիւնը այդ վայրին մէջ, որովհետեւ Վասպուրականի Արծրունեաց հարստութիւնը զգալի կարելու դերակատարութիւն ունեցաւ Հայաստանի հարաւային տարածքներու հայութեան քաղաքական, հոգևոր եւ մշակութային կեանքի զարգացման մէջ, հետեւաբար այդ վանքի կարիքը զգացուած էր. եւ այդ արդարացաւ, ու յիշեալ վանքը դարձաւ կարելուր կեդրոն մը, մեր պատմութեան մէջ նշանաւոր Նարեկայ վանքը. ինչպէս նաեւ իր հոշակաւոր միաբան ՝ Ս. Գրիգոր Նարեկացիով...:

Համաձայն աւանդութիւններուն Վանայ լիճի մէջ ահռելի վիշապներ կան, որոնց հետ մշտական կռիւի մէջ են հրեշտակները: Ու երբ վիշապը հագար տարեկան կ'ըլլայ, հրեշտակները ջուրէն վեր կը քաշեն անոր, բարձրացնելով կը մօտեցնեն արեւին, որուն տաքութենէն վիշապը մոխիր կը դառնայ եւ փոշիացած կը թափուի գետին:

Այդ աւանդութիւններէն մէկուն համաձայն Վանայ լճի մէջ Նարեկայ վանքի ափին մեծ վիշապ մը կար, «Վանայ լճի ափին,

15. Համագասպ Ոսկեան, նոյնը, էջ 210, 211:

16. Խաչատուր Լեւոնեան, էջ 81:

Նարեկյա վանքի մօտ մի ահագին վիշապ կայ, որ երբեմն երևում է հովիւներին: Մրանք անմիջապէս փախչում են եւ թաքնուում մօտակայ այրերի ու թփերի մէջ: Վիշապն անցնելիս այնպիսի ֆշշոց է հանում, որ սար-քար դողում են նրա ձայնից, իսկ պռչի շարժուելուց էլ՝ ամպի նման փոշի է բարձրանում: Ինչ կենդանի պատահի՝ մարդ, անասուն, վիշապն ամբողջապէս կուլ է տալիս եւ յետոյ գնում փորը խփում ժայտերին, մեծ-մեծ քարերին, որ կուլ տուածը կարողանայ մարսել»:18

### 6. Նարեկյա Վանքի Եկեղեցիները եւ Ճարտարապետութիւնը

Նարեկյա վանքի միջավայրը շատ գեղեցիկ էր, հիւսիս եւ հիւսիս-արեւմտեան կողմերուն Վանայ լիճն էր, իր կապոյտ հրաշալի ջուրերով: Նարեկյա վանքը Աղթամարի կղզիէն 9 կիլոմետր հեռաւորութեան վրայ էր. իսկ Վանայ լիճէն մօտ 4 կիլոմետր, տէս Քարտէրը: Նարեկացին իր խուցէն կարող էր տեսնել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին եւ եկեղեցոյ վրայի Աստուածաշնչեան պատկերազարդերը ու փորագրութիւնները. կարելի է նկատել իր գրած Մատեան Ողբերգութեան եւ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցոյ խաբարանդակներու միջեւ եղած նոյնութիւնները:

Նարեկյա վանքի շինուած քարերուն մասին մէջբերենք Երուանդ Լալայանէն, «Եկեղեցու նկարագրութիւնը-Նարեկյա վանքը շինուած է Նարեկի ուխտատեղու քառաժայտից բերուած թիլ-քարից, պարսպապատ է եւ բաղկացած Ս. Սանդիստի եւ Ս. Աստուածածնի տաճարներից եւ ս. Գրիգոր Նարեկացու մատուռից, մի ժամատնից եւ մի զանգակատնից»:19 Աւելի ուշ ներքնապարիսպի հարաւային կողմը շինուած են առաջնորդարանը, ուսումնարանը եւ ուխտատրներու սենեակներ: Մէջբերենք եւս Մ. Մկրեանէն, «Նարեկյա վանքը շինուած է սպիտակ սրբատաշ

քարերով՝ մի բլրակի գագաթին. շուրջը գիւղացիների խրճիթներն են, որոնք աստիճանաբար իջնում են մինչեւ բլրակի ստորոտը»:20

Նարեկյա վանքը կը նկատուի Վասպուրականի սկզբունքային յուշարձաններէն, «Նարեկավանքը Վասպուրականի ճանաչողական կրօնակութեան ճարտարապետական համալիրներից է: Եթէ Աղթամարի Սբ. Խաչը եւ Ներքին Վարագավանքի համալիրը մշակութային իրայատուկ տեղեւորութիւններ են, ապա Նարեկավանքը Վասպուրականի սկզբունքային յուշարձաններից է՝ տարածքի դպրոցի ծաւալատարածական լուծումներով պայմանաւորուած իմաստասիրական աշխարհահայեացք»:21

### ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 2

Նարեկյա Վանքի Եկեղեցիները

ԵԿԵՂԵՑԻ	ԿԱՌՈՒՑՈՒԱԾ	ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ
Ս. Սանդիստ	10-րդ Դար	8 x 10.5 մ կամ 26.5' x 35'
Ս. Աստուածածին	10-րդ Դար	7 x 10.5 մ կամ 23' x 35'
Ս. Գրիգորի մատուռ	11-րդ Դար	3 x 4 մ կամ 10' x 13'

17. Խաչատուր Լեւոնեան, էջ 79, 80:

18. Արամ Ղանալսեան, Աւանդապատում, ՀՄՄՀ ԳԱ հրատարակչ., Երևան, 1969, էջ 83:


19. Երուանդ Լալայան, էջ 22:

20. Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, էջ 117:

21. Դաւիթ Քերթմենջեան, էջ 60:

ՊԱՏԿԵՐ ԹԻԻ 2

Նարեկայ վանքի եկեղեցիներուն Յատակագիծը



A. L'église Sainte-Santoukhd.  
B. L'église de la Sainte-Mère de Dieu.  
C. Narthex.  
D. Le clocher.  
E. Le mausolée de Grégoire de Nareg.  
F. L'enceinte.

- A- Սանդուխտ եկեղեցի
- B- Ս. Աստուածածին եկեղեցի
- C- Գալիթ
- D- Ջանգակատուն
- E- Դամբարան
- F- Պարիսպ

Ճարտարապետական տեսակետէ ըստ Դալիթ Քերթմանցեանի Նարեկայ վանքը հիմնադրուած էր Վասպուրականի եւ Տարօնի մէջ կառուցուած զոյգ եկեղեցիներու տիպով, «Պէտք է կարծել, որ վանքը հիմնադրուել է Վասպուրականեան զոյգ եկեղեցիների յօրինուածքով, որ հայկական ճարտարապետութեան մէջ տարածում է ստացել 9-11-րդ դարերում եւ յատկապէս բնորոշ է Տարօն-Տուրուբերանի եւ Վան-Վասպուրականի նահանգներին: Փաստօրէն, բացի այն, որ Տարօնի եւ Վասպուրականի կարեւորագոյն վանքային համալիրները (Վերին եւ Ներքին Վարագավանքեր, Մշոյ Սբ. Կարապետ, Եղերդուտի Սբ. Յովհաննէս, Աղբկա վանք եւ այլն) սկզբունքայէնօրէն ունեն տաճարների համադրման գծային կոմպոզիցիա, Նարեկավանքում կիրառուած զոյգ եկեղեցիների կոմպոզիցիայով են լուծուել այս ժամանակներում կառուցուած կամ ամբողջացած մի շարք համալիրներ, որոնցում երկու եկեղեցիները չափերով կամ կողմերի համաչափութեամբ նոյնը լինելով հանդերձ՝ յատկազգային տարածական մեկնարանութեամբ կամ եկեղեցական տիպային լուծումներով ընտրուել են միանգամայն իրարից տարբեր տիպերով: Այդպիսի յօրինուածքներ են՝ Վարագավանքի Սբ. Սոֆիան եւ Սբ. Յովհաննէսը, Ապարանից Սբ. Կարապետը, Իլու վանքի, Անգեղավանքը, Գանձակա Սբ. Աստուածածինը, Մորա Սբ. Քրիստափորը, Գուրուբաշի Սբ. Խաչը, Վերին Վարագավանքը, Մալնապատ Սբ. Գրիգորը, Վանի Ջուխտակ եկեղեցիները՝ Սբ. Պօղոսն ու Սբ. Պետրոսը, նոյնպէս Վանի քաղաքամէջի Սբ. Սահակն ու Սբ. Ստեփանոսը եւ այլն»<sup>22</sup>

Նարեկայ վանքը իր բնական զոյներով շատ համերաշխ համալիր մըն էր իր տարածքին մէջ, դեղնադարչնագոյն եւ սրճագոյն երանգներով, որ շատ ներդաշնակ էր անտառային բնութեան եւ Նարեկ գիղի հողաշէն բնակարաններու զոյներուն հետ:<sup>23</sup>

22. Դալիթ Քերթմանցեան, էջ 58:

## 7. Ս. Սանդուխտ Եկեղեցին

Նարեկայ վանքի երկու եկեղեցիներէն մէկն է Ս. Սանդուխտ եկեղեցին, որ ըստ երեսոյթին առաջինն է կառուցուած Հայ եկեղեցոյ նշանատր գործիչ՝ Անանիա Մոկացի (946-968թ.) Ամենայն հայոց կաթողիկոսի օրով ինչպէս անդրադարձանք. իր օրով կառուցուեցան Հռոմոնսի, Սանահինի, Նարեկայն բազմաթիւ այլ վանքեր: Ս. Սանդուխտ եկեղեցիի եռաչափ վերակազմուած տեսքը կարելի է տեսնել գիրքին շապիկին:

Այս եկեղեցին կոչուած է Հայոց առաջին նախամարտիրոսուհիին անունով: Ս. Սանդուխտ Ա. դարու հայութեան մէջ քրիստոնէութեան վկան է, Հայ եկեղեցոյ նախամարտիրոսուհին. եղած է Ս. Թադէոս առաքեալի աշակերտուհին: Ան Հայոց Սանատրուկ (88-110թ.) թագաւորի դուստրն էր: Սրբուհին իր հօր՝ թագաւորի հրամանով մէկէ աւելի անգամներ կը չարչարուի մերժելով Քրիստոսին ուրանալը, իր չարչարանքներու ժամանակ հրաշքներ տեղի ունեցած են...: Ի վերջոյ Ս. Սանդուխտ կը սպաննուի Սանատրուկ թագաւորի հրամանով:

Ս. Սանդուխտ եկեղեցին արտաքին 8 x 10.5 մ. չափերով եկեղեցի էր<sup>24</sup>, եկեղեցոյ ճարտարապետական կառուցուածքի մասին մեջբերենք, «Ս. Սանդուխտ եկեղեցին պատկանում է կենտրոնազմբէթ-խաչածէ եկեղեցիների տարբերակին, որտեղ զմբէթը, տեղադրուած լինելով աղօթապահի անկիւնագծերի հատման տեղում, հանդիսանում է շէնքի ծանրութեան կենտրոնը: Եռախորան է արեւելեան կողմից երկու աւանդատներով: Աւանդատները եկեղեցու իրերը պահելու օժանդակ սենեակ կամ պահարան է»<sup>25</sup> Ս. Սանդուխտ եկեղեցոյ յատկագիծի մասին տես Պատկեր թիւ 2, յատկագիծ A, արտաքին չափերու մասին տես Ցուցակ թիւ 2.

Ս. Սանդուխտ եկեղեցոյ մասին մեջբերենք հետեւեալ տեղեկութիւնները հայր Համագասպ Ոսկեանէն, «Ս. Սանդուխտի եկեղե-

*ցին արտաքուստ քառակուսի է: Իսկ ներքուստ խաչածէ եւ ունի չորս խորան, որոնց արեւմտեան երկուքը փոխարկուած են կամարակապ խորշերու շնորհիւ երկական որմնասիւներու: Խաչածէ մասին մէջ կը բոլորուին պայտածէ կամարները, որոնց վրայ կը բարձրանայ ութանկիւնի զմբէթը իր բրգածէ կաթողիկէով: Հարաւային խորանին տակ կը գտնուի-աւանդութեան համաձայն Ս. Սանդուխտի գերեզմանը»<sup>26</sup>*

Հարկաւոր է եւս մեջբերել Ս. Սանդուխտ եկեղեցոյ մասին Երուանդ Լալայեանէն, «Ս. Սանդուխտի եկեղեցին արտաքուստ քառանկիւնի է եւ միանգամայն պարզ, միայն հիւսիսային պատի մէջ ունի մի ներսանկուած: Ներքուստ եկեղեցին խաչածէ է եւ ունի չորս խորան, որոնցից երկուքը, արեւմտեանները, փոխարկուած են 2 մետր խորութեան կամարակապ խորշերի, շնորհիւ երկական որմնասիւների: Խաչածէ մասում բոլորում են պայտածէ կամարներ, որոնց վրայ բարձրանում են ութանկիւնի զմբէթը, բրգածէ կաթողիկէով:

*Հարաւային խորանում գտնուում է ս. Սանդուխտի, Սանատրուկ թագաւորի դատեր, գերեզմանը: Հիւսիսային խորանից մի դուռ է բացւում մի քառանկիւնի, հասարակ շինութեան մէջ, որ իբր գաւիթ է ծառայում սրան եւ ս. Սանդուխտի եկեղեցու արեւելեան պատին կից շինուած փոքրիկ, զմբէթազարդ մատրան, որ կառուցուած է ս. Գրիգոր Նարեկացու գերեզմանի վրայ»<sup>27</sup>*

Ս. Սանդուխտ եկեղեցին Նարեկայ վանքի համալիրի շինարարութիւններուն մէջ ամենահին կառոյցն էր. տես Գծացուցակ թիւ 2:

## 8. Ս. Աստուածածին Եկեղեցին

Նարեկայ վանքի երկրորդ եկեղեցին, որ ըստ երեսոյթին կառուցուած է Ս. Սանդուխտ եկեղեցիէն ետք Ս. Աստուածածին եկեղեցին է, որ արտաքին 7 x 10.5 մ. չափերով եկեղեցի էր,<sup>28</sup> «Ս. Սանդուխտի

23. Նոյնը, էջ 69:

24. Նոյնը, էջ 63:

25. Ա. Ն. Քիրքչեան, Ծաղկաբաղ Հայկական Յուշարձանների, Էտիթ Պրինտ, Երեւան, էջ 57, 58:

26. Համագասպ Ոսկեան, էջ 207, 208:

27. Երուանդ Լալայեան, էջ 23:

28. Դաւիթ Քերթաւենցեան, էջ 64:

եկեղեցու հարաւային պատին կից է Ս. Աստուածածին եկեղեցին, որ նոյն երկարութեան է, միայն աւելի նեղ: Մա անսիւն է, խորաններ չունի, միայն արեւմտեան կողմում ունի երկու կամարակապ խորշ, որ յառաջացել են երկու որմնասիւների շնորհիւ: Այս խորշերի եւ կոզակի որմնասիւների վրայ բոլորում են պայտածե կամարներ, որոնց վրայ բարձրանում է ութանկյունի գմբէթը, բրգաձե կաթուղիկով:

Այս եկեղեցու կոզակը կամարակապ է եւ ունի մի նեղ պատուհան: Թէ այս եւ թէ սուրբ Մանդիտի եկեղեցին ունին երեքական փորրիկ պատուհաններ, իսկ գմբէթների վրայ չորսական լուսամուտ»<sup>29</sup>

Ս. Աստուածածին եկեղեցույ յատակագիծի մասին տե՛ս Պատկեր թիւ 2, յատակագիծ B. արտաքին չափերու մասին տե՛ս Յուշակ թիւ 2.

Ս. Աստուածածին եկեղեցույ ճարտարապետական կառուցուածքի մասին մեջբերենք Համագասպ Ոսկեանէն, «Ս. Մանդուխտ կուսի եկեղեցույ հարաւային պատին կից է Ս. Աստուածածին եկեղեցին, որ անսիւն է եւ առանց խորանի. միայն արեւմտեան կողմը երկու կամարակապ խորշ ունի: Այս խորշերու եւ կոզակի որմնասիւներու վրայ կը բոլորին պայտածե կամարներ, որոնց վրայ կը հանգչի գմբէթը կ'ընդունի: Բնչպէս նախորդ եկեղեցին, նաեւ այս՝ գմբէթի վրայ ունին չորսական լուսամուտ»<sup>30</sup>

Ս. Աստուածածին եկեղեցույ ճարտարապետութեան մասին մեջբերենք եւս հետեւեալը, «Ս. Աստուածածին եկեղեցին ծածկուած է ութկող թմբուկ-վեղար գմբէթային համակարգով, որը տեղադրուած է եղել պայտածե չորս գմբէթակիր կամարներով կազմաւորուած գմբէթատակ քառակուսու յենարանի վրայ: Աւագ սեղանի երկու կողմերում աւանդատներ չկան: Դրանց փոխարէն արեւմտեան մուտքի երկու կողմերում, ինչպէս Սբ. Մանդուխտ եկեղեցում, կամարակապ խորշեր էին ամփոփուած»<sup>31</sup> Ս. Աստուածածին եկեղեցույ եռաչափ վերակազմուած տեսքը կարելի է տեսնել զիրքի շապիկին:

29. Երուանդ Լալայեան, էջ 23:

30. Համագասպ Ոսկեան, էջ 192:

31. Ա. Ն. Քիրքչեան, էջ 57, 58:

Ս. Աստուածածին եկեղեցին Նարեկայ վանքի համալիրի շինարարութիւններուն մէջ երկրորդ կառոյցն էր. տե՛ս Գծացուցակ թիւ 2:

## 9. Նարեկ Անունով Ուխտավայրերը

Նարեկացիի անուամբ միայն Վասպուրականի մէջ դարերու ընթացքին գոյութիւն ունեցած են հետեւեալ վայրերը:

Ս. Գրիգոր Նարեկացի անուանք եկեղեցին Թիմար (Գնունիք) գաւառի Ալիւր (Ալուր) գիւղի հարաւ արեւելքը<sup>32</sup>:

Նարեկ, կամ Կարմիր Աւետարան ուխտավայր Բերկրի-Աբաղա գաւառի Պատիկգեղ գիւղին մէջ<sup>33</sup>:

Նարեկ անունով ուխտավայր Մոկս գաւառի Ոզմի (Օձում) աւանին մէջ<sup>34</sup>:

Նարեկացու քար անունով ուխտավայր Կարճկան գաւառակի Խարճիթ գիւղին մօտ:<sup>35</sup>

Նարեկացու ճգնարան ուխտավայր Գաւաշ գաւառակի Վոկունիս գիւղին մօտ:<sup>36</sup>

Ս. Գրիգոր անունով բարձր ապառաժ ուխտատեղի Շատախ գաւառի Նառ (Նար) գիւղի հիւսիսը<sup>37</sup>:

Նարեկայ վանք անունով վանքեր կան եւս, «Նարեկայ վանք՝ համանուն վանքեր են Պոտայ Ս. Յովհաննէս, որ նաեւ Նարեկացու վանք կը կոչուի (Բնճիճեան, Նոր Հայաստան, էջ 174) եւ Ակնայ մօտերը՝ Արեկայ կամ Նարեկայ վանք (Բնճիճեան, Նոր Հայաստան, էջ 309)»<sup>38</sup>

32. Աւետիս Յարութիւնեան, Վան-Վասպուրականի Կրօնամշակութային Կեանքը եւ Պետականութեան Ստեղծման Փորձը (1908-1918), էջ 173. եւ Գեղամ Բաղդեան, Վան-Վասպուրական Ատլաս, Երեւան 2015, էջ 12:

33. Գեղամ Բաղդեան, Վան-Վասպուրական Ատլաս, Երեւան, 2015, էջ 15:

34. Նոյնը, էջ 23:

35. Նոյնը, էջ 26:

36. Նոյնը, էջ 27:

37. Խաչատուր Լեւոնեան, Վան-Վասպուրական Աշխարհը, էջ 81. եւ Գեղամ Բաղդեան, նոյնը, էջ 24:

38. Համագասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը, էջ 205:

Ի հարկէ աշխարհի տարբեր վայրերու մէջ սփիւռքահայերու կողմէ կառուցուած եկեղեցիներ եւ մատուոնէր կան, որոնք անուանուած են Նարեկ կամ Նարեկացի անուններով:

Մեր օրերուն, Հայաստանի Հանրապետութեան Արարատի մարզին մէջ գոյութիւն ունի Նարեկ անունով գիւղ մը: Երբ այս ուսումնասիրութեան մասին աշխատանքները բաւականին յառաջացած էին, 2018թ. Օգոստոսի 22ին այցելեցինք Նարեկ գիւղը, եւ մտնելով գիւղապետարանը մեր ծարար յագեցուցինք բաւական տեղեկութիւններով:

Այս գիւղը կը գտնուի Արարատի մարզի<sup>39</sup> Արտաշատի տարածքաշրջանին մէջ, Արտաշատ քաղաքէն 11 կմ դէպի արեւելք: Կը գտնուի Արարատեան դաշտի արեւելեան եզրին. ծովի մակարդակէն 1050 մ բարձրութեան վրայ:

Մեզի կը հետաքրքրէր, թէ ինչու գիւղը կոչուած էր Նարեկ. արդեօք Արեւմտեան Հայաստանի Նարեկ գիւղէն վերապրողներ գաղթած են եւ կառուցած այս գիւղը. եւ ստացանք պատասխանը, թէ գիւղը նորակառոյց է. ան Հայաստանի երիտասարդ գիւղերէն է, կոչուած է ի պատիւ Գրիգոր Նարեկացիին. ունի մօտաւորապէս 1400 բնակիչ:

39. Արարատի մարզ ունի 93 գիւղ:

Ի Խորոց Մրտի Խօսք՝ Առ  
Աստուած:  
Գ. Նարեկացի

## Բ. ԳԼՈՒԽ

### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ ԺԱՄԱՆԱԿ

#### 10. Գրիգոր Նարեկացին եւ Իր Ընտանիքը

Գրիգոր Նարեկացիի կեանքի մասին տեղեկութիւնները շատ քիչ են. ան իր մասին կենսագրութիւն չէ գրած. ուստի իր կեանքի մասին տեղեկութիւնները կուգան իր վկայութիւններէն. եւ իր մասին տարածուած ժողովրդական բանահիւսութիւններէն եւ աւանդական գրոյցներէն:

Գրիգոր Նարեկացիի ծննդեան եւ մահուան թուականներու մասին ենթադրութիւնները, կը կէտրոնանան հետեւեալ կերպով. ծննդեան թուականը 940-951 տարիներուն, իսկ մահուան թուականը 1003-1011 միջեւ: Մտոյց է, որ ան եղած է Վասպուրականի Ռշտունեաց գաւառի Բզունեաց տոհմէն. եւ ծնած է Վանայ լիճի հարաւոր գտնուող Նարեկ գիւղին մէջ, ըստ ոմանց Շատալիի Նար գեղին մէջ<sup>40</sup>: Մաղաքիա Արքեպս. Օրմանեան Գրիգոր Նարեկացիի ծնունդը կը նշէ 951թ. «Գրիգորի ծնունդը մերձաւորաբար կը դրուի 951 տարին»<sup>41</sup>:

Գրիգոր Նարեկացին ծնած է հոգեւորական եւ մտաւորական ընտանիքի մը յարկին մէջ: Իր ծնողքը բախդաւորուած է երեք որդիներով, Սահակ, Յովհաննէս եւ կրօնաւարձը՝ Գրիգորը:

Գրիգոր Նարեկացիի հայրն էր Խոսրով Անձեւացի, որ յայտնի եկեղեցական դէմք էր: Խոսրովի կինը՝ Գրիգորի մայրը կանուխ մահացաւ, գուցէ այդ թուականէն ետք էր, որ Խոսրով, յառաջացաւ եկեղեցական նուիրապետութեան մէջ, մինչեւ

40. Խաչատուր Լեւոնեան, Վան-Վասպուրական Աշխարհը, էջ 79, 80:

41. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա. Հատոր, Գ. Գիրք, Պէրույթ, Մեան, 1959, էջ 1180:

արքեպիսկոպոս աստիճանը: Հաւանաբար Գրիգորի մայրը մահանալէ ետք, Գրիգոր մանուկը դրկուեցաւ իր հօրեղորօր՝ Անանիա Նարեկացի վարդապետին մօտ, որ Նարեկայ վանքի վանահայրն էր:

Խոսքով Անձեւացի մտաւորական եւ գրող էր, մտքի եւ գրչի մարդ: Ան Պատարագի եւ Ժամագրոց մեկնութիւններ գրեց, երբ առաջնորդ էր, որոնք արժէքաւոր աշխատանքներ են: Ան եղաւ Վասպուրականի Անձեւացեաց գաւառի Առաջնորդը մինչեւ իր ծերութիւնը:

Անձեւացեաց գաւառը, Անձեւաի իշխանական տոհմի տիրայթն էր. կը գտնուէր Գաւառ գաւառի արեւելքը. հոն գործեց Ս. Բարդուղիմէոս առաքեալը: Այս գաւառին մասին մէջբերենք հետեւեալը, «Անձեւացիք կամ Անձաւացիք: Այս գաւառը կազմում էր մի նախարարութիւն, որտեղ իշխում էր համանուն նախարարական տունը: Գտնուում էր Արեւելեան Տիգրիսի (Բոհտան-սուի) ծայր վերնագաւառում: Անձեւացիքը լեռնային գաւառ է: Բանասերներից ոմանք նոյնիսկ նրա անունն՝ Անձաւացիք-ի ծագումը կապում են ռելիեֆի լեռնային բնոյթի հետ: Տեղացիները սովորաբար կոչում էին Քարգահ»:<sup>42</sup> Յիշեալ պատմահանգրուանին գաւառը մաս կը կազմէր Վասպուրականի Արծրունեաց հարստութեան, մինչեւ 980թ., երբ հարստութիւնը բաժնուեցաւ երեք եղբայրներու միջեւ, գաւառը թագաւորեց Գուրգէն Արծրունին: Անձեւացեաց գաւառը Ռշտունիք գաւառի հարաւ-արեւելքին էր:

Գրիգոր Նարեկացիի եղբայրներն էին Սահակ եւ Յովհաննէս: Ան կրտսերն էր: Սահակը, ընդօրինակած է իր հօր՝ Խոսրով Անձեւացիի երկասիրութիւնը: Իսկ Յովհաննէսը, Գրիգորի ուսումնակիցն ու կրօնակիցն էր Նարեկայ վանքին մէջ:<sup>43</sup> Այսպէս, երեք որդիներն ալ արժանաւոր գաւակներ էին պատուական հայկական ընտանիքին: Գրիգոր Նարեկացի 977թ. կուսակրօն քահանայ

ձեռնադրուեցաւ, երբ դեռ հազիւ 25 տարեկան էր: Ան իր ամբողջ կեանքը անցուց Նարեկայ վանքին մէջ, ուր եւ մահացաւ 53 տարեկան հասակին 1003 թուին:<sup>44</sup>

Այսպէս, Գրիգորը դաստիարակուեցաւ Նարեկայ վանքին մէջ, եկեղեցական աստիճան առաւ, ապրեցաւ, ստեղծագործեց, ու նոյն վանքին մէջ մահացաւ, եւ այդ պատճառով Գրիգոր կոչուեցաւ Նարեկացի: Ս. Գրիգոր Նարեկացիի ժամանակակից հայ գահակալները կարելի է տեսնել Գծացուցակ թիւ 1ի մէջ. ինչպէս եւ հետեւեալ ցուցակին մէջ:

### ՅՈՒՑԱԿ ԹԻՒ 3

Ս. Գրիգոր Նարեկացիի (950-1003թ.) ժամանակակից Հայ Գահակալները

Բագրատունեաց Գահակալ	Արծրունեաց Գահակալ
Աբաս Ա. (928-953)	Դերենիկ Արծրունի (943-958)
Աշոտ Գ. Ողորմած (953-977)	Աբուսահել-Համագասպ (958-968)
Սմբատ Բ. (977-989)	Աշոտ Սահակ (968-990)
Գագիկ Ա. (989-1020)	Գուրգէն Խաչիկ (968-1003)
	Մենքերիմ Արծրունի (1003-1021)

### 11. Անանիա Նարեկացին Եւ Նարեկայ Վանքը

Գրիգորի ազգականն էր նշանաւոր վարդապետ Անանիա Նարեկացին, որ եղաւ Գրիգորին եւ իր եղբայրներուն ուսուցիչը Նարեկայ վանքին մէջ:

Այսպէս Գրիգորի դաստիարակները եղան յայտնի դէմքեր, իր հայրը Խոսրով Անձեւացին եւ իր ազգականը Անանիա Նարեկացին, որոնց հոգեւորական շունչով, եւ մտաւորական ընտանեկան մթնոլորտին մէջ հասակ առաւ եւ կրթուեցաւ ապագայ հանճարը եւ սուրբ՝ Գրիգոր Նարեկացին:

44. Մաղաքիա Արքեպս. նոյնը էջ 1180. նաեւ Մեհրուժան Պապաջանեան, Վարք Արքոց, Երեւան 1998, Մոմ հրատարակչութիւն, էջ 54:

42. Թ. Խ. Յակոբեան, Հայաստանի Պատմական Աշխարհագրութիւն, ԵՊՀ, Բ. հրատարակութիւն, «Մխար» Երեւան 1968, էջ 187:

43. Նարեկ, Աղօթանատեան Ս. Գրիգոր Նարեկացու, Արդի Հայերէնի վերածնեց Թրգոմ Եպիսկոպոս, Անթիլիաս-Լիբանան 1970, էջ 5:

Անդրադարձանք Ա-ին Գլխուն մէջ, թէ ընդհանուր կարծիքը այն է, որ Նարեկայ վանքը հիմնուած է Անանիա Մոկացի կաթողիկոսի օրով. վանքի հիմնադրութեան մասնակցած է Գրիգորի հայրը Խոսրով Անձեացի եւ վանքի առաջին յիշուած վանահայրը եւ Գրիգորի մօր ազգականը՝ Անանիա Նարեկացի վարդապետը, «Նարեկ գիւղ մըն էր Վանայ ծովուն հարաւակողմը, Ռշտունեաց գաւառին մէջ. Անանիա վարդապետ, որ իր ժամանակին ամենէն զարգացած հոգևորականներէն էր եւ հօրեղբայր Նարեկացիին մօրը, Ժ. դարուն սկիզբները հոն հիմնեց վանք մը, որ ընդհուպ կրթական վատարան մը եղաւ իր շրջանակին համար»:<sup>45</sup>

Նարեկայ վանքի մէջ Անանիա Նարեկացիի հետ ապրած է նաեւ Պետրոս անունով վարդապետ մը, որ գրած է Ս. Գիրքի մեկնութիւն մը<sup>46</sup>: Նարեկայ վանքի զարգացման մէջ իր կարեւոր դերն ունեցած է Պետրոս վարդապետը, «Ընտրուելով համայնքի առաջնորդ Անանիան, Պետրոսի աջակցութեամբ, Նարեկայ վանքը շուտով դարձրեց իր ժամանակի ամենայայտնի վանական կրթարաններից մէկը»:<sup>47</sup> Պետրոս վարդապետը միշտ եղած է Անանիա Նարեկացիի կողքին. դժբախտաբար անոր երկերը պահպանուած չեն, բայց ան իր կարեւոր դերն ունի Նարեկայ վանքի դպրոցի հիմնադրութեան եւ զարգացման մէջ:

Անանիա վարդապետը այս վանքի անունով կոչուած է Նարեկացի, «Քանզի որչափ որ գիտենք, Ժ. դարէն առաջ Նարեկ անունն յիշատակուած չէ, եւ նոյն իսկ այն վանքին նախկին Առաջնորդը, Անանիա Վրդ., վերջիններու հասկացողութեամբ «Նարեկացի» կոչուած է: Ուստի, Նարեկայ Վանքը նախ քան գտասներորդ դար, Ս. Մանդիստոյ անունով ճանչցուած է: Սոյն վանքն որչափ որ ասկէ առաջ գոյութիւն ունեցած է, բայց կ'երեւի

45. Նարեկ, Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացոյ, Արդի Հայերէնի վերածեց թորգոմ Եպիսկոպոս, Անթիլիաս-Լիբանոս 1970, էջ 5:

46. Երուանդ Լալայեան, էջ 22:

47. Աննի Մահե եւ Ժան-Պիեռ Մահե, Գրիգոր Նարեկացի եւ իր Մատեան Ողբերգութեան Երկը, Երեւան, Նայիրի, 2004, էջ 72:

որ այնչափ նշանաւոր եղած չէ, մինչեւ որ այն հայ կրօնաւորներէն, որք կրօնի գաղափարային խնդիրներով հալածուելով յոյներէն, հոն եկած եւ զայն պայծառացուցած են, կազմակերպելով Կարմնջաձորոյ եւ Հռոմոց Վանուց կարգ ու կանոններով»:<sup>48</sup>

Անանիա Նարեկացի, որ եղած է այս վանքի առաջին վանահայրը, ամբաստանուեցաւ որպէս թոնդրակեան աղանդի հետեւորդ. ան գրած է «Գիր խոստովանութեան»ը՝ յայտարարելով, թէ այդ սուտ կարծիք է:<sup>49</sup> Անանիա Նարեկացի զգալի մեծ աւանդ ունի իր պատմաշրջանի բանաստեղծական մշակոյթի զարգացման մէջ:<sup>50</sup>

## 12. Գրիգոր Նարեկացիի Մանկութեան Ամենակարեւոր Պատմաքաղաքական Դէպքը

Ինչպէս անդրադարձանք Գրիգոր Նարեկացիի ծննդեան եւ մահուան թուականներուն մասին ենթադրութիւնները կը կեդրոնանան ծննդեան թուականը 940-951 տարիներուն, իսկ մահուան թուականը 1003-1011 միջեւ: Գրիգոր Նարեկացիի կեանքը անմիջականօրէն կապուած է Վասպուրականի պատմութեան հետ. իր կեանքին ընթացքին (950-1003) թուականներուն, տեղի ունեցան մէկէ աւելի կարեւոր պատմական դէպքեր, որոնց անդրադառնալը կարեւոր կը գտնենք լաւագոյնս ըմբռնելու անոր գլուխ գործոց “Նարեկ”ի ստեղծագործութեան եւ Նարեկայ վանքի զարգացման պատմական հանգրուանը:

Գրիգոր Նարեկացիի մանկութեան տարիներուն, ինչպէս եւ Նարեկայ վանքի հիմնադրութեան առաջին տարիներուն մեր պատմութեան մէջ պատմաքաղաքական ամենակարեւոր զարգացումն էր Բիւզանդական կայսրութեան գրաւումը Կարին քաղաքին 949թ., որ մեծ նշանակութիւն ունեցաւ Հայաստանի պատմութեան մէջ, որմէ ետք տեղի ունեցաւ Բիւզանդիոնի յառաջիսա-

48. Խաչատուր Լեւոնեան, էջ 81:

49. Երուանդ Լալայեան, էջ 22:

50. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, ՀՀԳԱԱ Պատմ. Ինստ., Ջանգակ, Երեւան, 2014, էջ 477:

ղացումը Հայկական Լեռնաշխարհին մեջ, որ ի վերջոյ յանգեցաւ Արծրունեաց եւ Բագրատունեաց հարստութիւններու անկման: Փոքր Ասիոյ մէջ Աբբասեան խալիֆայութիւնը ունէր սահմանային ամբողջութիւններու գօտի մը, որուն մաս կը կազմէին Հայաստանի արեւմտեան գաւառներու մէջ ամբացուած արաբական դիրքերը, որոնցմէ էին արաբ Կայսիկներու եւ Կարին քաղաքի ամիրայութիւնները իրենց գլխաւոր կեդրոններով՝ Մանազկերտ ու Կարին քաղաքներուն մէջ: Կայսիկները արաբական ցեղերէն էին, որոնք Աբբասեան Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի (786-809) իշխանութեան տարիներուն գաղթելով իրենց բնակավայրերէն հաստատուեցան Հայկական Լեռնաշխարհին մէջ:

Բաղդադի<sup>51</sup> մէջ թուրք զօրավարներու կողմէ ստեղծուած քաղաքական անկայուն եւ խառնաշփոթ վիճակէն օգտուեցան Բուայիները, որոնք Կասպից ծովի հարաւային կողմը բնակող Դելլեմներու տոհմէն էին: Անոնք 945թ. մտան Բաղդադ, եւ դուրս բշեցին թուրքերուն, ու տէր դարձան իշխանութեան: Բուայիներու (Բուվայիներու) պարագլուխ Ահմադ բըն Բուայիը պաշտօնէ հեռացուց ալ-Մուսթաֆի խալիֆային, եւ նոր խալիֆա յայտարարեց ալ-Մուտիբը (946-974): Այդպիսով, սկսաւ Բուայիներու շրջանը, որ տեւեց մօտաւորապէս մէկ դար, որուն ընթացքին Բաղդադի Աբբասեան խալիֆան օժտուած էր միայն հոգեւոր իշխանութեամբ: Բիւզանդական կայսրութիւնը ի տէս Աբբասեան խալիֆայութեան ներքին տկարացման, բաժանեալ եւ անմիասնական վիճակին, օգտուելով ստեղծուած դրութենէն, որոշեց գրաւել Կարինը, որ արաբական ամենահզօր յենակէտներէն մէկն էր Հայաստանի մէջ բիւզանդական սահմանին վրայ: Արաբները Կարին քաղաքին մէջ բնակութիւն հաստատած էին. հոն կը բնակէին մեծ թիւով ռազմիկներ իրենց ընտանիքներով, պէտք եղած

51. Աւելի ճիշդ կը նկատենք արաբերէնէն քաղելով գրել Բաղդադ, եւ ոչ թէ Պաղատա: Արաբերէն յատուկ անուններու ուղղագրութեան մասին հետեւեցանք մեր պատրաստած Արաբերէնի Տառադարձութեան ցուցակին. տե՛ս Ցուցակ թիւ 4:

ժամանակ կարողանալու համար դէմ կանգնելու որեւէ բիւզանդական յարձակման: Ռազմականօրէն շատ յստակ էր, որ քանի որո Կարինը արաբներու ձեռքն էր, կարելի չէր իրականացնել որեւէ բիւզանդական սահմաններու ընդարձակում Արեւելքի մէջ:

Հայերը եւ հարեւան Վրացիները խիստ հակառակ էին Բիւզանդիոնի կողմէ Կարնոյ գրաւման, անոնց համար արաբները լուրջ վտանգ չէին ներկայացներ, աւելին իրենց ու Բիւզանդական կայսրութեան միջեւ գոյութիւն ունեցող արաբական Կարինի ամիրայութիւնը՝ շատ ձեռնտու էր: Բայց 949թ., Բիւզանդացիները գրաւեցին քաղաքը, եւ կործանեցին արաբական ամիրայութիւնը:

Այսպէս, Կարինի գրաւումը եղաւ այն պաշտպանողական կարեւոր դիրքի խորտակումը, որմէ ետք Հայկական Լեռնաշխարհը բացուեցաւ Բիւզանդիոնի յառաջխաղացման առջեւ, որ յանգեցաւ Բագրատունեաց եւ Արծրունեաց հայկական թագաւորութիւններու անկմանը, հիմնականօրէն Բիւզանդիոնի ճնշման տակ:

Մինչեւ Կարինի գրաւումը Բիւզանդիոնի քաղաքականութիւնն էր ասպատակել Հայկական Լեռնաշխարհի արեւմտեան գաւառները առանց որեւէ նուաճումներու, որ անփոփոխ պահեց Բիւզանդիոնի եւ Խալիֆայութեան սահմանները. սակայն Կարինի գրաւումը եկաւ հիմնականօրէն շատ բան փոխելու:

Կարինի գրաւումով սկսաւ հայկական տարածքներու գրաւման երկարատեւ գործունէութիւնը Բիւզանդիոնի կողմէ: Կարինին յաջորդեց 966թ. Տարոնի գրաւումը եւ 969թ. Մանազկերտը: Կարելի է ըսել, որ Կարինի գրաւումը Բիւզանդիոնի կողմէ վերջ տուաւ Բագրատունեաց թագաւորութեան վերելքին Աբաս Ա-ի օրով: Երկրորդ կարեւոր պատմական զարգացումը այս պատմահանգրուանին, Աշոտ Գ. Բագրատունիի նոր մայրաքաղաքի ընտրութեան որոշումն էր: Կարսը յարմար չէր որպէս մայրաքաղաք, որովհետեւ կը գտնուէր թագաւորութեան ծայրամասին մէջ. նոյնպէս Դուինը՝ կը գտնուէր Բագրատունեաց թագաւորութեան հարաւ-արեւելեան սահմանագլուխը, եւ մշտապէս վտանգուած էր հարեւան մահմեդական ամիրայութիւններու

կողմ: Այսպես, Աշոտ Գ. 961թ. մեծ հանդիսութեամբ՝ Բագրատունեաց արքունիքը Կարսէն փոխադրեց Անի. վերջինս շատ արագ զարգացաւ եւ դարձաւ ոչ միայն Բագրատունեաց Հայաստանի, այլ եւ ամբողջ Առաջաւոր Ասիոյ հռչակաւոր քաղաքներէն մէկը: Հայոց Բագրատունեաց հարստութեան 961-1045թ. պատմաւրջանը՝ պատմագիտութեան մէջ՝ մայրաքաղաքին անունով կոչուած է **Անիական շրջան**:

**ՅՈՒՑԱԿ ԹԻԻ 4**  
**ԱՐԱՐԵՐԷՆԻ ՏԱՌԱԴԱՐՉՈՒԹԻԻՆԸ**

ا	u	ع	u
ب	p	ع	u, ի, ու
ج	ջ	ف	ֆ
د	դ	گ	u
ه	h	ق	կ
و	ու	ر	ռ, ր
ز	զ	ز	զ
ح	h	ح	թ
ط	տ	ط	թ
ي	ի, է, յ	ي	իւ
ك	ք	ك	դ
ل	լ	ل	լ
م	մ	م	գ
ن	ն	ن	դ

**13. Բիւզանդիոնի Արշաւանքը Բաղդադի Վրայ  
Եւ Հայոց Դիրքը**

Գրիգոր Նարեկացիի երիտասարդութեան տարիներուն անգամ մը եւս սաստկացաւ պայքարը Բիւզանդիոնի եւ Աբբասեան խալիֆայութեան միջեւ. բիւզանդական կայսրութիւնը 972թ. Բուղարիայի հետ հաշտութիւն կնքելէ ետք, վերստին ի վիճակի եղաւ իր հայեացքը ուղղելու դէպի Արեւելք: Յաջորդ տարին (973թ.) բիւզանդական բանակը Մլէհ զօրավարի գլխաւորութեամբ գրաւեց Մելիտինէն ու պաշարեց Ամիդը: Սակայն շուտով պաշարուած Ամիդ քաղաքին օգնութեան հասան Աբբասեան խալիֆայութեան եւ Եգիպտոսի միացեալ բանակները: Տեղի ունեցած ճակատամարտին բիւզանդական բանակը մեծ պարտութիւն կրեց: Բիւզանդիոնի Յովհաննէս Չմշկիկ (969-976) հայազգի կայսրը չկարողացաւ հաշտուիլ Ամիդի պարտութեան հետ, ուստի ան անձամբ 974թ. հսկայ բանակով եկաւ Արեւելք, ծրագրելով յարձակիլ Խալիֆայութեան մայրաքաղաք Բաղդադի վրայ: Դժբախտաբար կայսրը որոշած էր Բաղդադի վրայ արշաւել Հայաստանի վրայով, ինչ որ Հայոց առջեւ նոր մարտահրաւէր յառաջացուց:

Բիւզանդական հսկայ բանակի մօտեցումը Հայաստանի սահմաններուն, եւ կայսրի վճռականութիւնը, մեծ պատերազմ սկսելու Խալիֆայութեան դէմ, մտահոգեց Աշոտ Գ. Բագրատունին: Ան խորհրդակցութեան հրաւիրեց Հայոց բոլոր թագաւորները, մտածելու համար թէ ինչ միջոցով կարելի էր միասնական ուժերով, պատերազմի վտանգը հեռացնել Հայաստանի սահմաններէն: Այդ խորհրդակցութեան մասնակցեցան Կապանի Փիլիպպէ, Աղվանքի Գուրգէն Ա. եւ Կարսի Աբաս թագաւորները, ինչպէս եւ Սասունի իշխանները:

Վասպուրականի Աբուսահել-Համագասպ (958-968) մահէն ետք 968թ., իրեն յաջորդեցին իր երեք որդիները միաժամանակ թագաւորելով. Աշոտ-Սահակը՝ ամբողջ Վասպուրականը, Գուրգէն-Խաչիկը՝ Անձեւացեաց գաւառը եւ Մենքերիմ-Յովհաննէսը՝ Ռշտունիքը: Վասպուրականի երեք թագաւորներէն՝ Աշոտ-Սահակը իր

եղբայրներու նկատմամբ գերակայութիւն ունէր: Արծրունեաց երեք թագաւորներէն՝ յիշեալ խորհրդակցութեան մասնակցեցան Գուրգէն եւ Մենէքերիմ Արծրունիները. իսկ Աշոտ-Սահակ Արծրունին չմասնակցեցաւ. ան խոհեմութիւն նկատեց չմասնակցելու, չգրգռելու Բիւզանդիոնի կայսրին. իսկ միւս կողմէն՝ ան իր երկու թագաւոր եղբայրներուն դրկեց Աշոտ Գ-ի մօտ խորհրդակցութեան, Խալիֆայութեան ցոյց տալու թէ համաձայն չէր Բիւզանդիոնի արշաւանքին: Ան մտահոգուած էր, որ մօտալուտ պատերազմը հայկական բոլոր թագաւորութիւններէն աւելին կը սպառնար Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան, որովհետեւ ան աշխարհագրականօրէն ամենաւստիկն էր Խալիֆայութեան, հետեւաբար՝ սպասուելիք ռազմաբեմին:

Խորհրդակցութեան համաձայն, Աշոտ Գ. Բագրատունի իր բանակով շարժուեցաւ Հարք գաւառ, ուր եկան միանալու Վասպուրականի Արծրունեաց, Կարսի եւ Սիւնիքի Բագրատունի թագաւորները, ինչպէս եւ Սասունի իշխանները իրենց զօրքերով: Այսպէս Բիւզանդիոնի կայսրի հսկայ բանակին դիմաւորելու հաւաքուեցաւ Հայկական հսկայ բանակ մը, որուն ընդհանուր թիւը հասաւ 80 հազարի: Ու եթէ կայսրը Հայաստանի նկատմամբ որոշ թշնամական ծրագիրներ ունէր, ապա ան տեսնելով Հայոց միասնականութիւնը ու հաւաքուած հսկայ բանակը մէկ կողմէն, եւ յիշելով Ամիդի մէջ իր կրած պարտութիւնը միւս կողմէն, իրեն մղեցին որոշելու Հայոց հետ բարեկամական դաշինք կնքելու. եւ խոհեմաբար շարժուելով, առանց որեւէ բախումի հեռացաւ Հայաստանի սահմաններէն:

Յովհաննէս Չմշկիկ հայոց Աշոտ Գ. Բագրատունի թագաւորին նամակ մը գրեց, որուն մէջ յիշեց, *«Մենք ցանկացանք տաճիկների գերութիւնից ազատագրել եւ մեր Քրիստոս-Աստծոյ սուրբ Գերեզմանը»*:<sup>52</sup> Այս նամակին մէջ կարելի է գտնել խաչակրաց արշաւանքի մը գաղափարախօսութիւնը. յիշենք այստեղ, որ Խաչակիրներու Առաջին արշաւանքի մասնակիցները հասան

Միջին Արեւելք 1097թ. այսինքն Յովհաննէս Չմշկիկի արշաւանքին 123 տարի ետք: Այս արշաւանքը սկիզբին ոգեւորած պիտի ըլլար Հայաստանի հոգեւորականութիւնը, ինչպէս եւ Նարեկայ վանքի վանականներն ու ի հարկէ Գրիգոր Նարեկացին, որ այս պատմական արշաւանքին ժամանակ երիտասարդ մըն էր՝ իր կրօնական տարիքին:

Հայաստանի քաղաքական վերնախաւը՝ Բագրատունեաց եւ Արծրունեաց թագաւորներով, վստահութիւն չուէին Բիւզանդիոնի վրայ, որ շատ յստակ էր Աշոտ Գ. եւ միւս հայ թագաւորներու դիրքէն, որ անոնք համոզուած չըլլալով բիւզանդական այս արշաւանքով, մերժեցին ճամբայ տալ կայսրին Հայաստանի վրայով զայն իրագործելու: Իսկ Աշոտ Գ-ի խոստացած արշաւանքին հայկական օգնական զօրքի թիւէն յայտնի էր, որ ձեւական մասնակցութեամբ ան չուէր Հայաստանի դէմ աւելիով զրգռել Աբբասեան խալիֆայութիւնը, կամ շրջանի մահմետական իշխանութիւնները, *«Աշոտը Հայաստանի սպառազէն զօրքից շուրջ տասը հազար ռազմիկներ տուեց»*:<sup>53</sup>

Յովհաննէս Չմշկիկ Տարօնի վրայով շարժուեցաւ հարաւ ու գրաւեց քանի մը կարեւոր բերդաքաղաքներ, Մծբինը, Ամիդը եւ Եղեւիսն: Սակայն Չմշկիկի բուն նպատակը Բաղդադի գրաւումն էր, որ չիրականացաւ:

Բիւզանդիոնը՝ իր պարբերաբար կազմակերպած արշաւանքներով Աբբասեան խալիֆայութեան եւ մահմետական ամիրայութիւններուն դէմ բացասաբար կ'ազդէր հայ-արաբական յարաբերութիւններու վրայ: Այսպէս, անգամ մը եւս, հայերը մատուցանեցան դժուար կացութեան, երբ յաջորդ տարի բուլղարները վերսկսան իրենց յարձակումները Բիւզանդիոնի արեւմտեան նահանգներու վրայ: Բիւզանդիոնը 976թ., հեռացաւ Արեւելքէն, եւ հայերը կրկին անգամ մնացին մինակ մահմետական ուժերու դէմ...:

52. Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Հայաստան հրատ., Երեւան, 1973, էջ 15:

53. Մատթէոս Ուոհայեցի, նոյնը, էջ 12:

Հայոց որդեգրած քաղաքական կեցուածքը յիշեալ Բիզանդական արշաւանքին, հիմնականօրէն չէզոք դիրք էր արար-բիզանդական պայքարէն: Այդ հեռատէս դիրքորոշում մըն էր, հիմնուած Բիզանդիոնի վարած հայատեաց քաղաքականութեան: Կարելի է ընդգծել, որ թէեւ հայերը կ'ուզէին Խալիֆայութեան եւ մահմեդական ամիրայութիւններուն որպէս հակակշիռ ուժ տեսնել քրիստոնէայ Բիզանդիոնը, սակայն վերջինս ալ իր կարգին, մեծ սպառնալիք կը ներկայացնէր Հայաստանին, իրագործած ձուլման եւ ընդարձակման իր քաղաքականութեամբ, որ սկսաւ պարզուիլ յաջորդաբար Կարինի, Մանազկերտի եւ Տարօնի գրաւումներով:

Այսպէս հայոց հոգեւորականութիւնը, որոնց հերթին էին նաեւ Նարեկայ վանքի հոգեւորականները յուսախաբ եղան կայսրի անյաջող արշաւանքէն, «Կայսրը չկարողացաւ կատարել իր խոստումն ՚ի հիասթափութիւն Հայաստանի աշխարհիկ եւ հոգեւոր տէրերի, անշուշտ, նաև Գրիգոր Նարեկացու եւ նրա կարգակիցներին»<sup>54</sup> թէեւ հայ հոգեւորականութիւնը ուներ իր դժգոհութիւնները Բիզանդիոնի վարած դաւանանքային հալածական քաղաքականութեան հանդէպ հայոց քրիստոնէական հաւատքին, սակայն եթէ կայսրը իրականցնէր Քրիստոսի սուրբ Գերեզմանի ազատագրումը, այդ մեծ բերկրանք պիտի ըլլար ոչ միայն Հայոց աշխարհին, այլև ամբողջ Քրիստոնէայ աշխարհին:

#### 14. Անձեւացեաց Թագաւոր Դերենիկ Արծրունիի Գերութիւնը

Անձեւացեաց գաւառը կը գտնուէր Ռշտունիք գաւառի հարաւ արեւելեան կողմը, հետեւաբար որեւէ պատմական զարգացում Անձեւացեաց գաւառի կամ Անձեւացեաց փոքրիկ Արծրունի թագաւորութեան մէջ, կ'ունենար իր արձագանգը Նարեկայ վանքի գործունէութեան վրայ, որ կը գտնուէր Ռշտունիք գաւառին մէջ: 975թ., Վասպուրականի Անձաւացեաց

54. Վրէժ Վարդանեան, Գրիգոր Նարեկացին Եւ Հայրենի Վասպուրական Աշխարհը, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան 2010, էջ 16:

թագաւորութիւնը ենթարկուեցաւ հարեւան Ասորպատականի Ապլիաճ ամիրայի զօրքի յարձակման. ճակատամարտը տեղի ունեցաւ Անձաւացեաց գաւառի Բանակ կոչուող վայրին մէջ, ուր հայերը ունեցան զգալի կորուստներ եւ Անձաւացեաց գաւառի Դերենիկ Արծրունի արքան զերի տարուեցաւ: Մատթէոս Ուռհայեցին անդրադարձած է այս դէպքի մանրամասնութեանց, «Այդ օրերին (975 կամ 976 թ.) քաջզգն Ապլղարիայի դաւաճանութեամբ, Անձաւացեաց գաւառի Բանակ կոչուող վայրում տեղի ունեցաւ հայոց զօրքի կոտորած: Անձաւացեաց թագաւորը, որի անունը Դերենիկ էր, իր զօրքերի սպարապետութեան պաշտօնն ատնելով Ապլղարիայի՝ մի հզօր եւ քաջ մարդու ձեռքից, տուել էր Մարգիս անունով մի ազատի: Այդ բանը սաստիկ վիրաւորեց հզօր Ապլղարիային, եւ նա դիմեց այլազգիների իշխանաւորներին, իր քայլի բոլոր դրդապատճառները յայտնեց նրանց եւ ասաց. «Ես ձեր դէմ պատերազմի դուրս չեմ գայ: Դուք զիջերով վեր կացեք եկէք մեր ճամբարի վրայ: Ահա ձեզ իմ վրանի տարբերանշանը-որդան կարմիրը, եւ խիռուած է բլրի վրայ, իմ զօրքն էլ իմ հետ է»: Այլազգիների զօրքը անակնկալ յարձակուեց նրանց վրայ, երբ թագաւորն ու զօրքը մեծ խրախճանքի մէջ էին: Այլազգիների զօրքը զիջերով ընկաւ հայոց զօրքի վրայ եւ մեծ ջարդ տուեց: Մպաննուեցին բազմաթիւ մարտիկներ եւ անուանի քաջեր: Ամենից ցաւալին այն էր, որ կռիւը տեղի ունեցաւ անյարմար ժամանակ: Այլազգիները զերեցին Դերենիկ թագաւորին, բայց Ապլղարիայի վրանի վրայ չ'համարձակուեցին գնալ, որովհետեւ նա իր զինուորներով պատրաստ կանգնած էր: Դերենիկին տարան Հեր քաղաքը: Այդ օրը Վարագը եւ բոլոր վանքերը դատն ու սոսկալի անէծքներ թափեցին Ապլղարիայի գլխին: Չայրացած վանականներն ու միաբանները նրան յայտարարեցին ուրացող եւ աստծոյ եկեղեցուց դուրս շարտեցին»<sup>55</sup> Վստահաբար Մատթէոս Ուռհայեցիի յիշած «բոլոր վանքերը»-ն մեկն էր մօտակայ Նարեկայ վանքը, ուր կը գործէր Գրիգոր Նարեկացին:

55. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 20, 21:

Ապլղարիայը գոջաց իր գործած արարքին վրայ, եւ սխալ դիրքը ուղղեց ու բացառիկ հերոսութեամբ մը ան Դերենիկ թագաւորին փրկեց գերութենէն, օգտուելով անոր վրայ եղած հսկողութիան թոյլ վիճակէն, «Ապլղարիայը, խելքը գլուխը գալուց յետոյ, սկսեց ողբալ, որովհետեւ հատատացեալ եւ աստուածաւախ մարդ էր: Նա անչափ շատ էր ցաւում հայոց քաջագուն ռազմիկների թափուած արեան համար: Նա հարցուփորձ արեց, ուզեց իմանալ, թէ թագաւորը Հէր քաղաքի ո՞ր բերդում է բանտարկուած: Նրան յայտնեցին, որ Ապլիաճ ամիրան Դերենիկին կալանքից ազատել է եւ շարունակ նրան տանում է Հէր քաղաքից դուրս գտնուող դաշտը՝ գունդ խաղալու: Ապլղարիայը, լսելով այդ, շատ ուրախացաւ»:<sup>56</sup>

Այս դէպքը ցոյց կուտայ, թէ որքան կարեւոր դիրք ունէին Վասպուրականի վանքերը եւ ի մասնաւորի Վարագավանքի միաբանութիւնը այդ պատմաշրջանին, անոնք կը ներկայանային, որպէս Վասպուրականի հայութեան անպարտելի պաշտպանները:

### 15. Սողոմոն Իմաստունի Երգ Երգոցի Մեկնութիւնը

Հայոց պատմութեան պատմաքաղաքական այս պատմաշրջանին, որոնց մասին անդրադարձանք անցեալ Բաժիններուն՝ Նարեկայ վանքին մէջ իր բեղմնատը ստեղծագործութիւնները կը կատարէր Գրիգոր Նարեկացին...:

Գրիգոր Նարեկացիի կարեւոր գործերէն է Սողոմոն Իմաստունի «Երգ Երգոցի» մեկնութիւնը: Երգ Երգոցը, Աստուածաշունչի Հին Կտակարանի գրուածներէն մէկն է, կը բաղկանայ ութ երգերէ՝ գրուած Սողոմոն Իմաստունի կողմէ, որ կը հանդիսանայ հրեական միասնական թագաւորութեան վերջին թագաւորը (961-922 Ք.Ա.) կամ (965-931 Ք.Ա.), որուն օրով հրեայ ժողովուրդը կ'ապրէր իր առաջին ոսկեդարը:<sup>57</sup> Այս գործը եղած է Գրիգորի առաջին երկը, եւ իր գործերէն Մատեան Ողբերգութենէն ետք ամենէն ընդարձակ գործն է: «Նա դեռ երիտասարդ տարիքում, Անձևաց Գուրգեն Արծրունի թագաւորի յանձնարարութեամբ, գրել է

56. Նոյնը, էջ 21, 22:

Սողոմոնի «Երգ Երգոցի» մեկնութիւնը, որը հանդիսանում է Աստուածաշունչի ամենախորթին ու ամենկենդի գրուածքներից մէկը»:<sup>58</sup>

Գրիգոր Նարեկացիին Գուրգեն Արծրունի Անձևացեաց թագաւորի խնդրանքով 977թ. Երգ Երգոցի մեկնութիւնը ձեռնարկեց<sup>59</sup>: Անձևացեաց գաւառը կը գտնուէր Վանայ լիճէն հարաւ արեւելք, հարեան Մոկս գաւառին. ու թերեւս այդ պատմաշրջանին Նարեկ գիւղն ու վանքը մաս կը կազմէին Անձևացեաց փոքրիկ իշխանութեան, որուն թագաւորն էր Գուրգեն Արծրունին:

Ով էր Գուրգեն Արծրունին որուն յանձնարարութեամբ Գրիգոր Նարեկացիին կատարեց այս աշխատանքը: Արծրունի Աբուսահլ-Համագասպ թագաւորի մահէն ետք 968թ. իրեն յաջորդեցին իր երեք որդիները միաժամանակ թագաւորելով. Աշոտ-Սահակը ամբողջ Վասպուրականը, Գուրգեն-Խաչիկը Անձևացեաց գաւառը եւ Մենեքերիմ-Յովհաննէսը Ռշտունիքը: Ընդհանարապէս Արծրունի իշխանները երկանուն էին. մէկը՝ հայկական էր, իսկ միւսը՝ փաղաքշական կամ օտարական: Երեք եղբայրներու միաժամանակ թագաւորելը յստակ մեծ բացասական ցուցանիշ էր Վասպուրականի վերնախաւի քաղաքական երկպառակութեան:

Այսպէս Գրիգոր Նարեկացիի գրած վկայութիւնները ծառայած են նաեւ պարզելու Հայոց պատմութեան որոշ էջերը. ան յստակ նշած է, թէ 977 թուին Վասպուրականի մէջ կը թագաւորէր նաեւ Գուրգեն Արծրունին. «Հայոց 426 (977) թուականին, ես Գրիգոր Նարեկացի քահանաս, որդի տէր Խոսրով անձևացեաց քահանայի, Աբուսահլ-Համագասպ թագաւորի որդու Գուրգեն արքայի հրամանով մեկնեցի Երգ երգոցը»:<sup>60</sup>

57. Պետրոս Մովսէս Թովմասեան, Արարատ-Ուրարտու Աստուածաշունչի Ընդմէջէն, Զանգակ, Երեւան 2012, էջ 16, 17:

58. Մեհրուժան Պապաջանեան, Վարք Մրբոց, Երեւան 1998, Մով հրատարակչ., էջ 54:

59. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա. Հատոր, Գ. Գլխք, էջ 1180:

60. Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 290, 291:

16. "Մատենան Ողբերգութեան"ի Գրութեան Ժամանակաշրջանը

11-րդ դարու սկիզբէն Վասպուրականը սկսաւ ենթարկուիլ արտաքին նոր վտանգի մը, այդ սելջուկներու աւերիչ արշաւանքներն էին: Առաջին արշաւանքը տեղի ունեցաւ 1002թ. երբ Վասպուրականը ենթարկուեցաւ մեծ աւերումներու: Նոյն տարին (1002թ.) Ս. Գրիգոր Նարեկացի (947-1003) աւարտեց գրելը իր հռչակաւոր աղօթամատենանին "Մատենան Ողբերգութեան (Նարեկ)" գլուխ գործոցը:

Մեր տարածքաշրջանի պատմութեան բեմին վրայ յայտնադ, այս նոր բարբարոսական արշաւանքներ կազմակերպող Սելջուկներու ծագման մասին խօսելէ առաջ հարկաւոր է խօսիլ Թուրանցիներու մասին. քաղելով Հրանդ Պաստրմաճեանէն, «*Թուրանցիներու կազմակերպումի վայրը ընդարձակ շրջանն է -արշաւանքներու յախտենական շտեմարան- որ կը տարածուի կեդրոնական Ասիոյ մէջ, Մոնկոլիստանէն մինչեւ Թուրքիստան: Թուրք անունով յայտնի են այն թուրանցիները, որոնք ուղղուեցան եւ հաստատուեցան Մերձ. Արեւելք, Թաթար անունով ծանոթ են անոնք որ հաստատուեցան Ռուսիա եւ Մոնկոլ անունով կը ճանչցուին անոնք որ մնալով Չինաստանի մերձակայքը՝ զանազան առիթներով յայտնուեցան Արեւմուտքի մէջ»<sup>61</sup>:*

Արաբները իսլամական կրօնքը հասցնելով Միջին Ասիա, թրքական ցեղերու մէջ տարածեցին նոր կրօնքը: Աբբասեան խալիֆաները իրենց զօրքերուն ուժ տալու միտումով, այդ ոսպնչուող եւ քաղաքակրթականօրէն յետամնաց թրքական ցեղերէն օգտուեցան, որպէս վարձկան զօրքեր անոնց գործածեցին խեղդելու Խալիֆայութեան դէմ ապստամբող ժողովուրդներուն: Ի հետեւանք այդ բոլորին թրքական ցեղերու առջեւ բացուեցաւ ճանապարհը դէպի Մերձաւոր Արեւելքի՝ մեզի հետաքրքրող տարածքաշրջանը:

Ահա այս թուրանական ցեղերու առաջին ալիքն էին սելջուկները, կամ սելջուքները: Անոնց մեծ պապն էր Սելջուկ բըն Տակակը. վերջին բառը կը նշանակէր "նոր աղէղ". ան **Ղեզզ**, կամ

օղուզ կոչուած թրքական մեծ ցեղի մը պետն էր, որուն անունով թրքական այդ ցեղը կոչուեցաւ սելջուկներ. ան իսլամացաւ, եւ տեսաբար իր ամբողջ ցեղը իսլամացաւ: Սելջուկներու երեւակով պատմութեան բեմին վրայ՝ արիւնոտ նոր էջ մը բացուեցաւ Արեւելքի պատմութեան մէջ, որ մեծապէս ազդեց Միջագետքի, Հայաստանի եւ ամբողջ Միջին Արեւելքի ժողովուրդներու պատմութեան վրայ: Սելջուկեան արշաւանքներով զգալիօրէն փոխուեցաւ մեզի հետաքրքրող տարածքաշրջանի ցեղային կազմը՝ տեղույն հին ժողովուրդներու հաշուին, ի վնաս՝ հայերուն, յոյներուն, պարսիկներուն, արաբներուն եւ այլ տեղական ժողովուրդներուն:

Այստեղ հարկաւոր է լուսարանել, թէ ինչու սելջուկները իրագործեցին ոսպնչական կարեւոր յաղթանակներ, երբ մուտք գործեցին մեզի հետաքրքրող տարածքաշրջանը 11-րդ դարուն. մէջբերենք հետեւեալը Հրանդ Պաստրմաճեանէն, «*Անհրաժեշտ է սակայն դիտել տալ թէ այդ կռիւներուն (Սելջուկները...) եւ յաջորդներու ընթացքին թուրանցիք զգալի գերազանցութիւն մը ունէին հայոց եւ Միջին Արեւելքի միւս ժողովուրդներուն վրայ. գերազանցութիւն մը որ կը կայանար իրենց քաղաքակրթական յետամնացութեան մէջ: Արդարեւ, մեր օրերուն եթէ ժողովուրդի մը գինուորական զօրութիւնը արդիւնքն է իր տնտեսական եւ ընկերային զարգացման, այդպէս չէր Միջին Դարերուն: Կրակող զէնքի յայտնութենէն առաջ, այսինքն Նոր Դարէն առաջ, վաչկատուն ժողովուրդ մը, ինչպէս թուրքերը, մեծ գերազանցութիւն կը վայելէր, որովհետեւ անոր բանակի գրեթէ ամբողջութիւնը կրնար ձիաւորներէ բաղկանալ եւ այդպէսով մեծ արագաշարժութեան հասնիլ բաղդատած աւելի յառաջադէմ ժողովուրդներու բանակին (ինչպէս, հայերը, յոյները, Պալքաններու եւ Եւրոպայի ժողովուրդները եւ չինացիք), որոնց բնակչութեան հիմնական մասը կը բաղկանար նստակեաց երկրագործերէ»<sup>62</sup>: Այս մէջբերումը հիմնականօրէն կը լուսարանէ, ոչ թէ միայն ինչու սելջուկները յաղթական դուրս եկան, այլ եւ աւելին՝ անոնց յա-*

61. Հրանդ Պաստրմաճեան, Հայոց Պատմութիւն Ա. Հատոր, Թարգմանեց Մ. Իշխան, Բէրլին, Համագգային, 1954, էջ 200, 201:

62. Հրանդ Պաստրմաճեան, նոյնը, էջ 208, 209:

ջորդող բոլոր վաչկատուն թափառաշրջիկ ժողովուրդները: Յստակօրէն զգալի էր երկու տարբեր քաղաքակրթական մակարդակի վրայ գտնուող ժողովուրդներու պայքարը:

Ահա քաղաքակրթական երկու ծայրայեղ իրականութիւններ, սելջուկները իրենց վայրագ արշաւանքներով ասի ու սարսափ կը տարածէին Հայաստանի մէջ, իսկ հայութեան սուրբ զաւակը՝ Գրիգոր Նարեկացին Նարեկայ վանքի մէջ կը գրէր սուրբ Նարեկը, որ կը ներկայանայ Նարեկայ վանքի «Անմահ մշտնջենական պտուղը»...:

Վրէժ Վարդանեան շատ կարեւոր եզրակացութեամբ կը բացատրէ, Նարեկայ վանքին մէջ գրուած այդ «Անմահ մշտնջենական պտուղը»ի հաստունութեան պատմաշրջանի մասին, զայն առնչելով Յովհաննէս աւետարանիչի «Յայտնութիւն» երկի՝ «Սատանային Պարտութիւնը» եւ «Վերջին Դատաստանը» երկու համարներուն մէջ յիշուած՝ հազար տարին լրանալէ ետք մեծ դէպքերու մասին, երբ բոլորը պիտի մոլորին. ի վերջոյ Քրիստոսը աշխարհ պիտի գայ եւ բոլորին պիտի դատէ: Մէջբերենք հետեւեալը, «Նարաշրջանն իր խորը կնիքը թողեց Գրիգոր Նարեկացու կեանքի եւ ստեղծագործութեան վրայ: Ժամանակի յուզած համաքրիստոնէական գաղափարները առինքնում էին նաեւ նրան: Գրիգոր Նարեկացու երկնասլաց հոգին մկրտուեց իր ժամանակի կրօնական գաղափարաբանութեան աւազանում: Երկիրը թէեւ ապրում էր համեմատաբար խաղաղ ու բարգաւաճ կեանքով, սակայն, մարդկանց մտքերն այլեկոծուում էին աշխարհի կարծեցեալ վախճանի մասին Յովհաննէս Յայտնութեան մէջ արուած կանխագուշակութեան ազդեցութեամբ: Մարդկութիւնն սպասում էր ճակատագրական 1000 թուականին, երբ Քրիստոսը նորից աշխարհ էր գալու, որպէսզի հատուցի «Իւրաքանչիւրին ըստ իր գործերի»: \* Յովհ. Յայտնութիւն, Ի, 7-16 Նման աշխարհագագացողութիւնը չէր կարող իր դրոշմը չթողնել նաեւ Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան վրայ: «Սատեան ողբերգու-

*թեան պոռնում եւս համայն մարդկութեան անունից դիմում է Աստեան, աղերսում փրկել բոլորին անեղ դատաստանից»<sup>63</sup>*

Կը յիշեմ 1999թ., Դեկտեմբերի վերջին օրերուն, երբ այդ ժամանակ կ'ապրէի ԱՄՆի Գալիֆորնիա նահանգ՝ Լոս Անջելըս քաղաքին մէջ. այդ օրերուն, երբ կը մտենար 2000թ., մարդիկ խոսնեւորում եկեղեցիներ կը յաճախէին, ուսուցիչ-սնունդ կ'ամբարեին իրենց տուներուն մէջ, մտահոգուելով, թէ աշխարհի վերջին օրերն են...: Վստահաբար նման ապրումներ եղած են առաջին հազարամեակին, Ս. Գրիգոր Նարեկացիի օրերուն...:

### 17. Նարեկայ Վանքի Անմահ Մշտնջենական Պտուղը «Սատեան Ողբերգութեան»

Գրիգոր Նարեկացի իր գրած աղօթամատեանը տխրողապէս «Սատեան Ողբերգութեան»: Ան մատեան գրելը լրացուց 1002թ. երբ մտաւորապէս 55 տարեկան էր. այսինքն այն տարիքին, որ այլեւ երիտասարդ չէր, այլ կեանքի փորձառութեամբ հարուստ կատարեալ անձ:

Մատեանը կը բաղկանայ 95 զլուխներէ, եւ ընդհանուր 366 ստորաբաժանումներէ. այդպէս ան տարուայ իւրաքանչիւր օրուայ համար գրուած խորհրդատու աղօթք եւ աղաչանք ունի: Երբ ան կը գրէր Սատեան Ողբերգութիւնը Նարեկայ վանքի առաջնորդն էր իր եղբայրը՝ Յովհաննէսը:

Մէջբերենք Սատեան Ողբերգութենէն հետեւեալ տողերը, գրաբարէն թարգմանուած արեւելահայերէնի, որոնք շատ մօտիկ են սրտիս:

*«Յիշի՛ր ինձ, օրհնեալ, քո ողորմութեամբ*

*եւ ո՛չ ըստ իրաւունքի,*

*Ներողութեամբ քո եւ ո՛չ պատժելով,*

*Երկայնասնորութեամբ եւ ոչ թէ:*

<sup>63</sup> Վրէժ Վարդանեան, Գրիգոր Նարեկացի եւ Հայրենի Վասպուրական Աշխարհը, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան 2010, էջ 20:

հաւաստի համոզուածութեամբ:  
Եթէ կամենաս կշռել ծանրութիւնն իմ մտքերի,  
Արա՛ քաղցրութեամբ քո մարդասերի  
Էւ ո՛չ արդարութեամբ:  
Քանզի ըստ առաջին պայմանի՝  
շա՛տ են թեթեւ նրանք.

Իսկ ըստ վերջինի՝ սաստիկ ծանրակիր»<sup>64</sup>:

Նոյն տողերը թարգմանուած արեւմտահայերէնի

«Քու ողորմութեամբդ յիշէ՛ զիս. օրհնուած, էւ ո՛չ թէ արդարու-  
թեա՛ մբդ, ներողութեամբդ էւ ո՛չ թէ հաստուցողութեամբդ, երկայնա-  
մտութեա՛ մբդ էւ ո՛չ թէ անաչառ քննութեամբդ: Եթէ կշռես մեղքիս ծան-  
րութիւնը, քաղցրութեա՛նդ դէմ դիր զայն, էւ ո՛չ թէ արդարութեանը,  
վասնզի առաջինին հանդէպ շատ թեթեւ պիտի գայ ան, իսկ վերջինին  
հանդէպ՝ շա՛տ ծանր»<sup>65</sup>:

Մատենանոց Ողբերգութեան ստեղծագործութիւնը հայ ժողովուրդին սիրելի դառնալով անուանուած է «Նարեկ», Նարեկ գիւղի անունով, ուր ապրեցաւ էւ ստեղծագործեց Ս. Գրիգոր Նարեկացին:

Նարեկը եղաւ ժողովրդային սուրբ գիրք, «Մէկ հազարամեակից աւելի Գրիգորի ստեղծագործութիւնն ուղեկցել է իր ժողովրդի հաւատացեալներին իրենց կեանքի բոլոր հանգամանքներում: Նարեկը, Աւետարանի հետ հաւասար, դրում էր ծիսական խորանի վրայ Աւետարանի կողքին, այն ընթերցում էին հիւանդների սնարին, էւ թողնում նրանց մօտ՝ ապաքինման ակնկալիքով, ամբողջական հատուածներ ընդգրկում էին ժամերգութեան մէջ...»<sup>66</sup>:

Մեր պատմութեան մէջ Նարեկը աւարտ աղօթագիրք էր. երբ, որեւէ աշխարհիկ դէմք մը, իշխանական ընտանիքէ կամ այլ՝ կը հեռանար աշխարհիկ կեանքէն ապաստան խնդրելով եկեղեցականի սքեմի տակ. ան որպէս ապաշխարանք յանձն կ'առնէր ամբողջութեամբ արտագրել

Նարեկը: Վրէժ Վարդանեան իր գրած գիրքի Մուտքի-ն մեջ արտաբեր կը բնութագրէ, «Նրա տառապանքի, ողբերի մէջ առկայ է գաղտնիացր. նրա «Մատենան ողբերգութեան» պոետը դարձրեց Հայոց Եզր Կտակարանը»<sup>67</sup>:

Գրիգոր Նարեկացիի «Մատենան ողբերգութեան»ի մասին իրենց արտի խօսքը ըսած են, մեր բազմաթիւ մեծ դէմքերը, որոնցմէ մեջբերենք Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի խօսքը. «Լեզուն չի, որ խօսում է, բերանը չի, որ պատմում է, կրակուած սիրտն է, որ այրում է երկիրը բռնած, տանջուած հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»<sup>68</sup>:

Մատենան Ողբերգութեան-ը կը նկատուի հայկական էւ համաշխարհային գրականութեան գլուխ-գործոցներէն մէկը. մինչև օրս թարգմանուած է 30է աւելի լեզուներով: Գրական գլուխ գործոց մը, որ կը համեմատուի օտարներու կողմէ Հումբերսի, Դանթէի, Շեքսպիրի ու Գիոթէի գործերուն հետ:

Այսօր, երբ ձեռքի մէջ կ'ունենանք Նարեկը չենք կրնար ջիջել անոր ճննդավայրը Նարեկայ վանքը: Երբ Վարագավանքի մէջ լոյս տեսաւ «Արծի Վասպուրական» պարբերականը, Խրիմեան Հայրիկ այն կոչեց «Հայրենասիրական պտուղ»: անոր նման մենք Նարեկը պիտի կոչենք «Նարեկայ վանքի անմահ մշտնջենական պտուղը»:

## 18. Գրիգոր Նարեկացի Հոգեբուծը

Նարեկայ վանքը շնորհիւ Գրիգոր Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան» իր մասնակցութիւնը ունեցաւ մեր պատմութեան մէջ, որպէս հոգեբուծութեան կեդրոն: Այսօր Նարեկայ վանքը չունինք, բայց ունինք Նարեկը, որ կը շարունակէ իր հոգեբուծական առաքելութիւնը:

Գրիգոր Նարեկացին ինքնավստահօրէն իր գրած «Մատենան Ողբերգութեան»ը (Նարեկը) կ'անուանէ կենաց փրկութեան դեղ, «Նարեկացին իր Աղօթամատենանն անուանում է կենաց փրկութեան

64. Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենան Ողբերգութեան, ԺՁ. Բ. գրաբարէն թարգմանեց Մկրտիչ Խերանեան, Երևան, Մուղնի, 2003:

65. Նարեկ Աղօթամատենան Ս. Գրիգոր Նարեկացու, ԺՁ. Բ., Արդի հայերէնի վերածեց Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան, Անթիլիաս-Լիբանան, 1999:

66. Աննի Մահե էւ Ժան-Պիեռ Մահե, նոյնը, էջ 10, 11:

67. Վրէժ Վարդանեան, Գրիգոր Նարեկացին էւ Հայրենի Վասպուրական Աշխարհը, էջ 4:

68. Ա. Գ. Առաքելեան, Հայ Ժողովրդի Մուտքը Մշակոյթի Զարգացման Պատմութիւն, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 319:

դեղ. «Մկգրնատորոն արտօսարածին եւ ողբաձայն այս նուագերգութեան, որ կենաց փրկութեան այս դեղը ճարահնարեց, թող ինքն էլ բժշկուած լինի՝ յանուն Քո, Հզօր...» (ԼԸ 4): Որտե՞ղ կարելի է հանդիպիլ նման յստակ եւ հանճարեղ բնորոշման: Ո՞վ կարող է իր ստեղծագործութեանն այսպիսի մեծանշանակ եւ համընդհանրական դեր վերսպահել Նարեկը կենաց փրկութեան դեղ է եւ դրանով ամէն ինչ ասուած է:<sup>69</sup>

### ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 3



Ս. Գրիգոր Նարեկացի

69. Աշոտ Պետրոսեան, Նարեկը՝ Ընդհանրական Բժշկարան, Էդիթ պրինտ, Երեւան, 2017, էջ 193:

Նարեկի բժշկական ուժի եւ հրաշագործութեան մասին հաւատքը մինչեւ մեր օրերը կը շարունակուի գոյութիւն ունենայ հայ ժողովուրդին մէջ: Նարեկի հոգեբուժական գորութեան մասին, մշտնադէպ հետեւեալը, «Նարեկը երկրորդ Աստուածաշունչն է՝ Նարեկացին մեկնում է Նարեկը, որ օգնում է աւելի հասկանալի ձեւով ընկալելու Աստուածաշունչը: Տասներորդ դարում մենք ունեցանք Նարեկացի, ով կարողացաւ հասկանալի դարձնել Աստուածաշունչը բոլոր դասերին ու խաւերին: «Մատենաբ» ճանապարհի ուղենիշ է բոլորի համար՝ մոլորուածների եւ հիւանդների, յանցաւորների եւ մեղանշաձների, անյոյսների ու կոտորուածների: Խորհրդային տարիներին Նարեկը մատուցուեց որպէս գեղարուեստական գործ՝ պոէմ: Մի քանի գլուխներ, որտեղ պարզ նշում էր քրիստոնէական դասնաբանութիւնը, հանուեցին: Հաստատակուած Նարեկը արժեզրկուում է, թելտո այնքան զօրեղ է եւ ունի մեծութիւն: Գրքի ստաջաբանում հեղինակը նշում է, որ այն գրուել է վանականների խնդրանքով եւ նպատակն է՝ մեղքերի խոստովանութիւնը, սպաշխարանքը, անտեսանելի ցաւերի ու վերքերի բժշկութիւնը: Նարեկն աղօթագիրք է: Բուժման էութիւնը զոջումն ու խոստովանութիւնն է, որից յետոյ հիւանդը ապաքինում է:<sup>70</sup>

Նարեկի բժշկական գորութեան մասին Մաղաքիա Արքեպս. Օրմանեան յիշած է, «Ազգին մէջ գրեթէ Սուրբ Գիրքին համահաւասար պատիւ ընձայուած է այդ գիրքին, եւ սքանչելագործ յատուկ գորութիւններ կը վերագրուի անոր մէն մի գլուխներուն»:<sup>71</sup>

Նարեկը, որպէս սուրբ գիրք պահուեցաւ բարձին տակ, շատերուն մօտ մինչեւ մեր օրերը այդ սովորութիւնը կը շարունակուի, որպէս զօրաւոր հոգեկան միխթարութեան եւ մարմնի առողջութեան պահպանման եւ հրաշքներ գործող կեանքի մնայուն ու անբաժան ընկեր...: Այդ պատճառով նայնիսկ Նարեկը ժառանգելու համար վեճեր եղած են. որպէս աւանդութիւն մեզ հասած է «Ոսկեկշիռ Նարեկ»ի պատմութիւնը, որ ըստ աւանդութեան գտնուում էր Եդես-

70. Արմէն Ներսիսեան, Գրիգոր Նարեկացի Հոգեբուժը, Ապարեգ, Հինգշաբթի 1 Օգոստոս 2013:

իոյ արեւմտեան կողմերը, կը մեջբերենք Արամ Ղանալանեանէն, «Ասում են, թէ այստեղ է գտնուում Նարեկը, որը համանուն վանքի ակերումից յետոյ, այդ աւերակների մօտ բնակւող մի ընտանիք պահել է: Ժամանակ անց, ընտանիքի ժառանգորդներ քոյրն ու եղբայրը չեն կարողացել համաձայնութեան գալ՝ թէ ո՞ւմ է հասնում Նարեկը: Քոյրը նրա քաշով մէկ ոսկի է տալիս եղբորը եւ տիրանում Նարեկին: Դրա համար էլ այն կոչւում է Ոսկեկշիռ Նարեկ»:72

### 19. Նարեկայ Վանքը Եւ Թոնդրակեանները

9-րդ դարուն Հայաստանի մէջ սկսաւ կրօնական շարժում մը, որ մեծ մասամբ ազդուած էր Պավլիկեան շարժման գաղափարախօսութենէն, ոմանք Թոնդրակեաններուն կը նկատեն Պավլիկեաններու յաջորդները: Շարժումը սկսաւ Սմբատ Զարեհաւանցի անունով հայ մը Մանազկերտի մօտ գտնուող Թոնդրակ գիւղին մէջ, ուր հիմնեց համայնք մը, եւ շարժումը՝ այդ գիւղին անունով կոչուեցաւ Թոնդրակեան:

Թոնդրակեանները կը մերժէին եկեղեցական ծեսերը, խաչի պաշտամունքը, հոգեւորականութիւնը եւ եկեղեցին: Անոնք կը քարոզէին վերադարձ առաջին դարու առաքելական ժամանակներուն, հաւատք առանց արարողութիւններու ու ծեսերու. կը մերժէին հոգեւորականներու ձեռնադրումը, հաղորդութիւնը, աղօթքը, մկրտութիւնը, եկեղեցական պսակը եւ այլ արարողութիւնները:

Թոնդրակեաններու գաղափարախօսութեան մասին՝ կարելոր տեղեկութիւններ կան Գրիգոր Նարեկացիի գրած նամակին մէջ ուղղուած Մոկաց Կճավա վանքի վանահօր, որուն մէջ կը զգուշացնէ, «Վանքում հաստատուել են թոնդրակեան աղանդաւորներ՝ Մուշեղ վարդապետը եւ ուրիշներ, որոնք ուրացել են ու խափանել «բազում ինչ աստուածային եւ առաքելական» կար-

71. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա. հատոր, Գ. Գիրք, էջ 1181:

72. Արամ Ղանալանեան, Աւանդապատում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչ., Երեւան, 1969, էջ 395:

զեր, մերժում են ձեռնադրութիւնը, հաղորդութիւնը, մկրտութիւնն ու պսակը եւ չեն ընդունում տերունական կիրակին, ծննդապատութիւնը որպէս առ Աստուած պաղատանքի արտայայտութիւն՝ Նրանք անարգում են խաչը, քարոզում մարդապաշտութիւն, Քրիստոսին Աստուած չեն համարում, այլ սոսկ մարդ, մերժում են քահանայական դասը»:<sup>73</sup>

Գրիգոր Նարեկացիի ժամանակ գիւղացի ժողովուրդի սլաքաբարը աւատատիրութեան եւ եկեղեցւոյ դէմ բաւական սաստկացած էր: Հայ Եկեղեցին շատերուն մեղադրեց թոնդրակեաններու հետ համագործակցութեան, անոնցմէ էին Անանիա Նարեկացին եւ Գրիգոր Նարեկացին, ինչպէս եւ Խոսրով Անձեւացին՝ Գրիգորի հայրը. մէկ խօսքով Նարեկայ վանքի հիմնադիրը եւ կարելոր դէմքերը:

Սակայն պէտք է յիշել, որ այդ երեքի դէմ մեղադրանքները իրաւացի չէին. Նարեկայ վանքի հիմնադիրը նկատուող Անանիա Նարեկացին թոնդրակեաններու դէմ գրած է «Գիր խոստովանութեան» եւ «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց» երկերը: Կ'ըսուի թէ, ան այդ երկերը գրած է կաթողիկոս Անանիա Ա. Մոկացիի (946-968) պատուէրով:<sup>74</sup> Իսկ Գրիգոր Նարեկացիի դիրքորոշումը թոնդրակեաններէն շատ յստակ է իր նամակէն ուղղուած Կճավա վանքի վանահայրին ինչպէս անդրադարձանք:

Պէտք է ըսել, թէ յիշեալ երեք դէմքերն ալ ունէին իրենց մեկնութիւնները քրիստոնէական հաւատքի մասին, որոնք այդ պատմաշրջանին Հայաստանի մէջ տիրող Հայ Եկեղեցւոյ վերնախաւի կողմէ կը նկատուէին անհնազանդութեան քայլեր: Վրէժ Վարդանեան այդ բոլորը ի նկատի ունենալով՝ իր Գրիգոր Նարեկացին Եւ Հայրենի Վասպուրական Աշխարհը խորագրով գործին մէջ կը գրէ Գրիգոր Նարեկացիի հօր՝ Խոսրով Անձեւացիի մասին, «Բայց Անձեւացուն հերձամտութեան մէջ մեղադրելը հիմ-

73. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, ՀՀԳԱԱ Պատմ. Ինստ., Զանգակ, Երեւան, 2014, էջ 79:

74. Յովիկ Ներսիսեան, Հայագիտական Ուսումնասիրութիւններ, Երեւան, 2011, էջ 321:

նաւորուած չէ: Ընդհակառակը, *հա շայոց եկեղեցու եւ նրա դաւանանքի ջատագովն էր, աղանդաւորների անհաշտ հակառակորդը*»:<sup>75</sup>

Նարեկացիի հաւատքի մասին Արշալոյս Ղազինեան «Նարեկացու աղանդաւորութեան առեղծուածը» խորագրի տակ կը գրէ, «Նարեկացու համար եկեղեցին Քրիստոսի մարտիր մարմինն էր, Քրիստոսը՝ նրա գլուխը: Նրանք պաշտելի էին հաւասարապէս: Բայց ինչպէս Անանիա Նարեկացուն, այնպէս էլ Գրիգոր Նարեկացուն մտահոգում էր այն, որ հաւատը դարձել էր ծես, անհաղորդ արարողութիւն եւ ոչ թէ սրտի զգացմունք էր, յոյզ ու խռն: Անհրաժեշտ էր անձնականացնել կրօնական զգացմունքը, խորացնել մեղքի գիտակցման, սպաշարութեան»<sup>76</sup> եւ զոջման հոգեւորամաղորդութիւնը: Սա ներքին մարդու բարոյական ինքնակատարելագործման նոյն պահանջն էր, որ Անանիա Նարեկացուց փոխանցուեց Գրիգոր Նարեկացուն: Անհատի եւ աստծու միջեւ հաղորդակցման անմիջական, անձնական կապի այս պահանջը, Նարեկացու հակառակորդները, ի հարկէ, կարող էին աղերսել աղանդաւորութեան հետ»:<sup>77</sup>

Նարեկայ վանքը, որպէս կրօնական կարեւոր կեդրոն իր երեք մեծ դէմքերով՝ անոնց Աստուածաբանական բացառիկ ուսումնասիրութիւններու հետեւանքով՝ շայոց եկեղեցույ կողմէ ենթարկուած է խիստ կասկածանքի նկատուելով թոնդրակեաններու գաղափարախօսութեան համակիր կամ կողմնակից վանք մը, ինչ որ սակայն ճշամրիտ չէր, եւ ինչպէս անդրադարձանք Անանիա Նարեկացին, Խոսրով Անձեւացին եւ Գրիգոր Նարեկացին իրենց նամակներով շատ յստակ բացատրած են իրենց դիրքորոշումը թոնդրակեաններու նկատմամբ:

75. Վրէժ Վարդանեան, Գրիգոր Նարեկացին Եւ շայրենի Վասպուրական Աշխարհը, էջ 12:

76. Ապաշարութիւն- Ապաշխարութիւն, զոջում:

77. Արշալոյս Ղազինեան, Գրիգոր Նարեկացի (Բանաստեղծական Արուեստը), Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 28:

## 20. Նարեկացիի Հրաշքը՝ Տապկուած Աղանդները

Գրիգոր Նարեկացին իր կեանքի մեծ մասը անցուցած է Նարեկայ վանքին մէջ, դժբախտաբար իր կեանքի մասին շատ քիչ տեղեկութիւններ հասած են մեզի. որպէս ասանդութիւններ մեծ թիւով հրաշագործութիւններ ժողովուրդին կողմէ պատմուած է դարեր շարունակ, որոնց մասին պիտի անդրադառնանք այս Գլուխի վերջաւորութեան: Նարեկացիի կողմէ կատարուած բազմաթիւ հրաշքներն՝ ամենաշատ տարածուածը այս հրաշագործութիւնն է, որ կապ ունի իր հակառակորդներուն կողմէ իր դէմ մղուած պայքարին հետ:

Գրիգոր Նարեկացին հաւատքի մէջ պահանջկոտ էր, եւ հաւատքի հարցերով շատ խստութեամբ կը վարուէր բոլորի հետ անխտիր. հետեւաբար ան ենթարկուեցաւ մերժման եւ պայքարի: Հետզհետէ իր դէմ մղուած պայքարը սաստկանալով, եպիսկոպոսներ, վարդապետներ եւ աշխարհիկ դէմքեր, իշխաններ ու աւագներ կ'որոշէն պատուիրակներ դրկել անոր դատական ատեան կանչելու:

Յայսմաւորքի մէջ յիշուած է, թէ Գրիգոր Նարեկացին կը հետեւէր հերձուածքներու, հետեւաբար հրաւիրակներ կը դրկուին Նարեկայ վանք անոր դատելու եւ աքսորելու համար, «Այս դէպքի շուրջը մնացել են միայն ժողովրդական ծագում ունեցող լեզենդներ, որոնցից մէկը անցել է «Յասմաւորքի» կենսագրականի մէջ: Ըստ այդ լեզենդի, երբ կազմուած դատարանի կողմից երկու պատուիրակներ են գալիս Նարեկացուն տանելու՝ նա նրանց ընդունում է առանց թշնամանքի եւ հրաւիրում է հացի ու առաջներն է դնում երկու խորոված աղանի: Պատուիրակները սակայն նկատում են, որ օրը ուրբաթ է (պատ է) եւ իրենք չեն կարող աղանիները ճաշակել. այն ժամանակ Նարեկացին ներողութիւն է խնդրում իր մոռացութեան համար եւ ասում է իր հիւրերին, որ հրաման տան աղանիներին թոչելու: Նրանք այդ չեն կարողանում անել, այն ժամանակ Նարեկացին է հրամայում, եւ աղանիները թեւ առնելով թոչում են: Եկուորները հրաշքը տեսնելով սարսափած եւ ամօթահար եղած հեռանում են, եւ այդպիսով դատը չի կայանում»:<sup>78</sup> Այսպէս, վերջ կը գտնէ սուրբին դէմ

78. Մ. Մկրտեան, Գրիգոր Նարեկացի, ԵՊՀ, Երեւան 1955, էջ 122, 123:

արծարծուած ամբաստանութիւնը, եւ որպէս ժառանգութիւն սերունդներուն կը մնայ այդ գեղեցիկ հրաշագործութեան պատմութիւնը:

Մաղաքիա արքեպս. Օրմանեան կը մերժէ այն կարծիքը, որ Գրիգոր Նարեկացիին քաղկեդոնական կամ յունադաւան էր. ու յիշեալ պատմութեան մասին կը յիշէ, թէ հրաւիրակները կը հասնին Նարեկայ վանք, ուր Նարեկացի անոնց առջեւ «Տապկուած Աղանիններ»ուն հրաշքը կը գործէ. *«Գր պատմուի միանգամայն, թէ Նարեկացին տանելու եկող հրաւիրակները, Ուրբաթ օր մը կը հասնին Նարեկ, եւ Նարեկացին անոնց տապկած աղանի կը հանէ ուտելու, եւ երբ եկողներ Ուրբաթ ըլլալը կը յիշեցնեն, Նարեկացին տապկած աղանիներուն կը հրամայէ մեկնիլ, որոնք յանկարծ կը կենդանանան, կը փետրաւորուին, կը թեւաւորուին, եւ թռչելով կը մեկնին»* (ՅԱՅ. 394): *Ամբաստանութեան չափ անխմաստ է հրաշքն ալ, որ կ'ենթադրէ Նարեկացիին վրայ յետսամիտ ցուցամոլութիւն մը, պահոց օրով ուտիք կերակուր հանելու, որ հրաշագործութեան առիթ պատրաստէ, մինչ ճգնազգեաց կրօնաւորը բոլոր կեանքին մէջ թերեւս տապկած աղանի չէր ճաշակած»*:<sup>79</sup> Մեր կարծիքով Գրիգոր Նարեկացիին դիտումնաւոր իր հիւրերուն տապկուած աղանիներ կը հրամանէ, որպէսզի կարողանայ իր իմաստալի հրաշքը գործել...:

Գրիգոր Նարեկացիի մասին կը պատմուին ուրիշ հրաշքներ. Մ. Մկրեան այդ կը բացատրէ, որ ան իր կենդանութեան օրով իսկ հոջակուած ու սիրուած էր ժողովուրդին կողմէ, ու հետեւաբար ժողովուրդը շատ շեշտուած կերպով արտայայտած է իր սիրած անձնաւորութեան հակառակորդներու նկատմամբ իր հեզմանքն ու հակակրօնքը, որ շատ յստակ է տապկուած աղանիներու հրաշքի պատմութեան մէջ:<sup>80</sup>

<sup>79</sup> Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա. հատոր, Գ. Գիրք, Պէրոպ Տպ. Մեւան 1959, էջ 1183:

<sup>80</sup> Մ. Մկրեան, նոյնը, էջ 122, 123:

## 21. Նարեկայ Վանքը Աստուածատունկ Դրախտ

Միջին դարերու մեր պատմութեան մէջ Ուխտանէս<sup>81</sup> կը ներկայանայ 10-րդ դարու հայ պատմիչ եւ եկեղեցական գործիչ: Ուխտանէս իր կրթութիւնը ստացած ըլլալով Նարեկայ վանքի մէջ ժամանակակից եղած է Գրիգոր Նարեկացիին, թէեւ ան տարիքով մօտաւորապէս 15 տարի աւելի երէց էր: Անոնք վանքին մէջ աշակերտած են վանքի հիմնադիր եւ վանահայր Անանիա Նարեկացիին: Շատ հաւանական է, որ Ուխտանէս ազդուած էր Գրիգոր Նարեկացիի աստուածաբանական գիտութեամբ, եւ մասամբ անոր կը պարտի իր հմտութիւնը աստուածաբանութեան մէջ:

Ուխտանէս հեղինակն է երեք մասերէ բաղկացած «Պատմութիւն Հայոց» լայնածաւալ գործին, որմէ պահպանուած եւ մեզի հասած է միայն առաջին եւ երկրորդ մասերը: Առաջին մասով գրուած է Հայաստանի հին պատմութիւնը սկիզբէն մինչեւ քրիստոնէական առաջին ժամանակաշրջանը, որ հիմնուած է պատմահայր Մովսէս Խորենացիի գրած պատմութեան վրայ: Երկրորդ մասը յատկացուած է 7-րդ դարու սկիզբին տեղի ունեցած վրացական եւ հայկական եկեղեցիներու բաժանման պատմութեանը, ուր պաշտպանած է Հայ եկեղեցոյ դաւանանքը ընդդէմ 10-րդ դարու քաղկեդոնականութեան աշխուժացման: Իսկ երրորդ մասը, ընդմիջտ կորսուած է. *«X դ. պատմագրական երկասիրութիւնների շարքում ուրոյն ու պատուաւոր տեղ ունի Ուխտանէս Եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» երկասիրութիւնը: Ուխտանէսը ծնուել է մօտ X դ. առաջին կէսին: Կրթութիւնը ստացել է Նարեկայ վանքի ուսումնագիտական կենտրոնում: Հմտացել է աստուածաբանութեան մէջ, աշակերտել Անանիա Նարեկացուն: Զբաղեցրել է եկեղեցական բարձր պաշտօններ, վարել Սեբաստիայի եւ Ուտիայի հայոց թեմակալ առաջնորդի պաշտօնները:*

*«Պատմութիւն»-ը գրելու յանձնարարութիւնը ստացել է 980թ. իր ուսուցիչ Անանիա Նարեկացուց: Ուխտանէսի երկասիրութեան*

<sup>81</sup> Կարծիքներ կան, որ Ուխտանէս ծնած է 935 թ. իսկ իր մահուան թուականը անյայտ կը մնայ:

ճիշտ է և լրիւ խորագիրը չի պահպանուել, իսկ «Պատմութիւն Հայոց» եզրը պայմանական է՝ տրուած հրատարակիչների և ուսումնասիրողների կողմից»<sup>82</sup>

Ուխտանէս իր ուսուցիչ Անանիա Նարեկացիի թելադրանքով է քաջալերանքով գրած է իր «Պատմութիւն Հայոց»ը. ան իր աշխատութիւնը կը սկսի «Պատասխան Անանիայի Նամակին և Նրա Խնդրածը Կատարելու Խոստում»-ով. ուր ան գրած է, «Արդ՝ այս գրածներս քո մէջ կատարեալ ենք տեսնում և աստուածային շնորհով պայծառացած ու Սուրբ Հոգու գիտութեան ձիրքերով լցուած, հոգեւոր երգի գեղգեղանքով բոլորից բարձր և Աստու բոլոր պատուիրաններին հասած ու անկի հաստատուած քան շատերը, ո՞վ աստուածագարդ ու փսեմ իմ տէր, տէ՛ր ու տիեզերական վարդապէ՛տ, իբրև մի բազմապտուղ ծառ՝ բարձր ու վայելուչ, Նարեկ անուանուած ուխտի աստուածատունկ դրախտի մէջ, որ սաղարթաւորուել է վարսաւորուել ևս առաքինի վարքով և ապա ծաղկել էս Տիրոջ տանը և Աստոյ գաւթում և բերել էս արդար պտուղ մէկի փոխարէն հարիւր, մէկի դիմաց վաթսուն, մէկին՝ երեսուն, և բազում ճգնութեամբ ու առաքինութեամբ գերազանց դարձած շատերի մէջ»<sup>83</sup> Իր նամակին մէջ Ուխտանէս Նարեկայ վանքը կ'անուանէ «Աստուածատունկ դրախտ»:

Այսպէս Նարեկայ վանքը իր մասնակցութիւնը բերած է նաեւ Հայոց Պատմութիւնը ուսումնասիրելու առաքելութեան մէջ: Գրիգոր Նարեկացիի նման, Ուխտանէս պատմիչն ու հոգեւորականը կը նկատուի Նարեկայ վանքի կարեւոր դէմքերէն և բերքերէն մէկը:

## 22. Ս. Գրիգոր Նարեկացիի ճգնարան-Ուխտատեղին

Տարիներու ընթացքին Նարեկացիի ճգնարանը այցելած են հայ մեծերէն շատերը, անոնցմէ են Հայր Ներսէս Մարգսեանը, Խրիմեան

82 Հայոց Պատմութիւն, հատոր II Գիրք Երկրորդ, Զանգակ, Երեւան, 2014, էջ 440:

83. Ուխտանէս Եպիսկոպոս, Հայոց Պատմութիւն, Հայոց Մատենագիրներ, Հայաստան հրատարակչ., Երեւան, 2006, էջ 25:

Հայրիկը, Գարեգին Սրուանձտեանցը, Գեորգ Շերենցը, Երուանդ Լալաեանը, Հայկ Աճեմեանը, Բաֆֆին, Խանասարի Վարդանը և ուրիշներ:

Հայաստանի Հանրապետութեան Հայկական Ճարտարապետութիւնն Ուսումնասիրող Հիմնադրամէն խումբ մը, հոկտեմբեր 2010թ., և օգոստոս 2011թ., այցելած են Նարեկացիի ճգնարանը և առաջին անգամ ըլլալով կատարուած է մասնագիտական ուսումնասիրութիւններ. այդ առիթով, խումբէն՝ Աշոտ Յակոբեանը շատ կարեւոր յօդուած մը գրած է ճգնարանի մասին: Այդ յօդուածէն կը մէջբերենք հետեւալը Նարեկացիի ճգնարանի վայրի մասին, «Վիմալիոր համալիրը, որտեղ երկար տարիներ ճգնել է Սր. Գրիգոր Նարեկացին, յետագայում կոչուել է իր անունով՝ Նարեկացու ճգնարան: Այն գտնուում է Վանայ լճի հարաւային ափին՝ Ռշտունեաց լեռնաշղթայի հիւսիսային լանջերի արեւելահայեաց լեռնաձիւղի ժայռերի մէջ՝ Նարեկ (այժմ՝ Եմիշլիկ) գիւղից 2,6 կմ հիւսիս-արեւմուտք, իսկ փայլաներ (այժմ՝ Բաղլամա) գիւղից՝ 1,2 կմ հիւսիս-արեւմուտք: Հնավայրը գտնուում է հիւսիսից հարաւ ձգուող, կրային նստուածքաւոր ծակոտկէն, բնական խոռոչներով ուղղահայեաց ժայռի կենտրոնում՝ ծովի մակերեսային մօտ 2100 մ բարձրութեան վրայ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ 38° 18' 24.13" N, 42° 54' 03.27" E»<sup>84</sup>

Մեր պրպտումները մեզ առաջնորդեցին Ս. Գրիգոր Նարեկացիի ճգնարան-ուխտատեղին այցելող երկու դէմքերու յուշերուն, որոնք այցելած են այդ սուրբ վայրը, Խաչատուր Լեւոնեանը 1903թ., և Երուանդ Լալայեանը 1912թ: Անոնք, շատ հետաքրքիր և մանրակրկիտօրէն նկարագրած են այդ ուխտատեղին: Հետեւաբար յարմար տեսանք մէջ ընդ մէջ մէջբերենք իրենց գրածները:

Խաչատուր Լեւոնեանը այսպէս կը նկարագրէ ճամբան Նարեկայ վանքէն դէպի Ս. Գրիգոր Նարեկացիի ճգնարան-ուխտատեղին, «Նարեկայ Վանքէն ելնելով՝ իբր 15 րոպէ վերջ կը հասնինք Փակիսներ հայարնակ գիւղը, որ երբեմն վանքին ախոռներն ըլլալով, այնպէս

84 Աշոտ Յակոբեան, Սուրբ Գրիգոր Նարեկացու ճգնարանը, ՎԱՐՁՔ թիւ 5, 2012, էջ 21:

կոչուած է այժմ, գիւղի վերածուելով իրր 60 տուն բնակիչով: Սոյն գիւղին հիւսիսային արեւմտեան սահմանէն ճամբայ իյնալով, քիչ ետքը կը հասնինք բարձրկէկ քարաբլուրի մը ստորոտը: Ահա այս քարաբլուրին արեւելեան սեպ ուղղորդ կողքէն պէտք է վեր բարձրանալ իրարու օգնութեամբ, ձեռներն ու ոտները կառչեցնելով այն յատկապէս փոքուած փոսիկներուն մէջ, որ ամէն մարդու գործ չէ, որովհետեւ փոքրիկ շփոթութիւն մը, կամ զլիտ պտոյտ մը բաւական է էլնողը վար գահավիժելու թաւազոր, անոր մեծ պատասն ականջները թողնելու պայմանաւ: Քիչ ետքն ինքզինքնիս քարայրի մը դրան մօտ կը գտնենք»<sup>85</sup>

1911թ. Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերութեան կողմէ Վասպուրական դրկուեցաւ՝ նշանաւոր ազգագրագէտ, հնագէտ, Երուանդ Լալայեանը, որ կը նկատուի հայ գիտական ազգագրութեան հիմնադիրը: Ան Վասպուրական այցելելով 1912թ., 28 վանքերու եւ եկեղեցիներու մասին լայնածաւալ ուսումնասիրութիւններ կատարեց, որոնցմէ մէկն էր Նարեկայ վանքը:

Երուանդ Լալայեան հետեւեալ տողերով՝ կը նկարագրէ ճգնարանի վայրը եւ ճգնարանէն տեսնող ընդհանուր տեսարանը, «Նարեկայ վանքից դէպի արեւմտահիւսիս, մօտ 2 կիլոմետր հեռու, մի լեռան ուղղահայեաց լանջին կրային նստոյցքից յառաջացած մի ընդարձակ ժայռի մէջ կան բաւականաչափ բնական եւ արհեստական քարայրներ, որոնց մէջ կան բազմազան եւ հրաշագեղ շիթաբարեր, եւ որոնց կազմած խոռոչների մէջ բուն են դրել բազմաթիւ թռչուններ: «Այս քարայրներից մինի մէջ ճգնել է ս. Գրիգոր Նարեկացին եւ ասել իւր «ի խորոց սրտի» խօսքերը: Այս քարայրը գտնուում է ժայռի ամենաբարձր կէտում, որի առջեւ բացուում է մի սրանչելի տեսարան. -կապուտակ լճի մէջ ցցում են Առտեր եւ Աղթամար կղզիները, փոքր ինչ արեւելահիւսիս բարձրանում է Արտոս լեւոտը, ուղիղ հանդէպը տարածուում է Վան քաղաքը, իսկ փոքր ինչ արեւելահարաւ Վարագայ լեւոտը իւր Աստղկան բերդ եւ



ՊԱՏԿԵՐ ԹԻԻ 4

Գրիգոր Նարեկացիի ճգնարանը Դուրսէն

Գալիլիա գագաթներովը, որոնք ամէն առաւօտ փողփողում են արշալուսի երփներանգ լուսով»<sup>87</sup>

Ճգնարանը կը բաղկանայ երեք յարկանի քարայրներէ, Խաչատուր Լեւոնեանը կը յիշէ, «Այս այրերն եռայարկ են, բայց ամենէն վարինը քայքայուած եւ աննշան ըլլալով, երկրորդ յարկէն կը սկսինք մեր զննութիւնը, անցնելով կամարաձեւ դռնէ մը, կ'առաջնորդուինք քարափոր այրի մը մէջ, որ նախասենեակն ըլլալ կը թուի: Անկից կ'անցնինք մէկ ուրիշ այր՝ որ լայնկէկ պատուհան մ'ունի դէպի արեւելք բացուած»<sup>88</sup>

Երուանդ Լալայեան անդրադառնալով յիշեալ երեք յարկանի քարայրներու՝ ըսած է. «Այս քարայրները դասաւորուած են միմեանց վերեւ, կազմելով երեք յարկ: Ստորին յարկը միանգա-

85. Խաչատուր Լեւոնեան, Վան-Վասպուրական Աշխարհը, Հրատարակչ. Գարայիս Լ. Նազարեան Հիմնադրամի-թիւ 20, Պէրուք, 2013, էջ 86:

87. Երուանդ Լալայեան, էջ 25, 26:

88. Խաչատուր Լեւոնեան, էջ 86:

մայն մատչելի է, մեջին յարկը բարձրանալու համար պետք է անցնել չափազանց նեղ կածաններով, իսկ երրորդ յարկը բարձրանալու համար անհրաժեշտ է կօշիկները հանել եւ մեծ զգուշութեամբ մագլցել քարէ արդէն մաշուած սանդուղի վրայով: Մակայն եւ այնպէս՝ շատ քչերին է յաջողում բարձրանալ երրորդ յարկը: Ստորին յարկի քարայրներն առանձնապէս ուշագրաւ չեն: Երկրորդ յարկը բարձրանալիս՝ պատահում ենք նախ մի սրահի, որ մօտ 3 մետր երկարութիւն, 2 մետրաչափ քառակուսի քարայրի մէջ: Մրա արեւմտեան կողմում գտնուում է մի կամարակապ փորուածք, որ 1.5 մետր բարձրութիւն, նոյն քան լայնութիւն ու մի մետր խորութիւն ունի»:<sup>89</sup>

Յիշեալ քարայրները ունին ջրամբար մը, որուն մասին Խաչատուր Լեւոնեան յիշած է, «Այս այրերն եռայարկ են, բայց ամենէն վարինը քայքայուած եւ աննշան ըլլալով, երկրորդ յարկէն կը սկսինք մեր գննութիւնը, անցնելով կամարաձեւ դռնէ մը, կ'առաջնորդուինք քարափոր այրի մը մէջ, որ նախասենեակն ըլլալ կը թուի: Անկից կ'անցնինք մէկ ուրիշ այր՝ որ լայնիկէ պատուհան մ'ունի դէպի արեւելք բացուած: Այս այրին մէջ իբր երկու կանգուն լայնութեամբ եւ նոյնչափ խորութեամբ փոս մը կայ փորուած, որ նախապէս իբրեւ ջրամբար ծառայած ըլլալու է, մինչ այժմ իբր նուիրական կը համարուի ուխտաւորներէն, որք կը հաւատան թէ ո՛վ որ եօթն անգամ վերէն վար հոն ցատկելու եւ ելնելու ըլլայ, ամէն հիւանդութենէ, մանաւանդ ջերմախտէ ազատ կը մնայ, ամուլ կիներն ալ ծնանելու ոյժ կը ստանան: (Եղիցի ըստ հաւատոց նոցա)»:<sup>90</sup>

Նոյն ջրամբարի մասին Երուանդ Լալայեան յիշած է, «Երկրորդ յարկը բարձրանալիս՝ պատահում ենք նախ մի սրահի, որ մօտ 3 մետր երկարութիւն, 2 մետրաչափ քառակուսի քարայրի մէջ: Մրա արեւմտեան կողմում գտնուում է մի կամարակապ փորուածք, որ 1.5 մետր բարձրութիւն, նոյն քան լայնութիւն ու մի

89. Երուանդ Լալայեան, էջ 26:  
90. Խաչատուր Լեւոնեան, էջ 87:

մետր խորութիւն ունի: Մի քիչ հեռու, կէս մետրաչափ բարձրութեան մի բեմաձեւ տեղ կայ, որի մէջ երկու մետր խորութեան մի փոս կայ, երեւի իբր ջրամբար շինուած. այժմ ջերմ ունեցողները գալիս են այստեղ ուխտ եւ եօթն անգամ ցատկում սրա մէջ, յուսալով բժշկութիւն գտնել»:<sup>91</sup>

Այս ջրամբարի վիճակի մասին 2011թ. Աշոտ Յակոբեան գրած է, «Ներկայումս այդ ջրվէժից մնացել է ցամաքած հունը, որի ջրերը ջրանցքով տարուել են քրդարնակ դարձած Փայխներ գիւղի այգիները ոռոգելու»:<sup>92</sup>

Քարայրներու երրորդ յարկը ամենակարեւորն էր, ուր կը գտնուէր եկեղեցիի խուցը եւ Նարեկացիի աղօթատեղին. պատկեր թիւ 5-ով, կարելի է տեսնել Գրիգոր Նարեկացիի ճգնարանի Երրորդ Յարկի Յատակագիծը, որ ունի չորս մասեր, Հնգանկյան սենեակը, Քառանկյան սենեակը, Եկեղեցին եւ Նարեկացիի ճգնարանը:

Քարայրներու երրորդ յարկի մասին Աշոտ Յակոբեան յիշած է, թէ ան ամենաբարձրն է վիմափոր համալիրին մէջ, եւ հիմնականօրէն ունեցած է պաշտամունքային նշանակութիւն:<sup>93</sup>

Քարայրներու երրորդ եւ վերջին յարկի մասին Խաչատուր Լեւոնեան յիշած է, «Այս նուիրական փոսին մօտերէն վեր կը բարձրանանք քարափոր եօթն աստիճաններու վրայէն ու կը հասնինք երրորդ յարկը, որ դարձեալ բաղկացած է երեք մէջէ մէջ այրերէ, որոնցմէ միայն մէջէն կ'առաջնորդուինք ուրիշ խցանման փոքրիկ այր մը, որ հազիւ մէկ կամ երկու մարդ կրնայ պարունակել, արեւելեան կողմէն ունենալով խիստ փոքրիկ լուսամուտ մը, նաեւ պատին կոթնած սեղանի վէմ քար մը, որուն պատերն ու առաստաղները մուխէն սեւցած ըլլալով՝ աւելի ոյժ կու տան հոն տիրալ մութիւն եւ մելամաղձային տխրութեան»:<sup>94</sup>

Անդրադառնալով երրորդ յարկի քարայրներու մասին Ե. Լալայեան գրած է, «Այս միջին յարկից հինգ աստիճանի մի քարէ սանդուղի կարելի է բարձրանալ վերին, երրորդ յարկի առաջին սրահը, որ

91. Երուանդ Լալայեան, էջ 26:  
92. Աշոտ Յակոբեան, էջ 22:  
93. Նոյնը, էջ 28:  
94. Խաչատուր Լեւոնեան, էջ 87:

3 մետր երկարություն, 2 մետր լայնություն և 1.5 մետր բարձրություն ունի: Այս սրահը դեպի արևելք մի մեծ և մի փոքր բացուածք ունի, յատակի վրայ կան երկու քառանկյունի ծակ, որ բացում են միջին յարկի երկրորդ սրահի մէջ: Մի անկիւնում կայ թոնրաձեւ մի փորուածք, իսկ պատերի մէջ խորշեր: Հիւսիսային պատի մէջ փորուած մի դուռ բացում է մի ուրիշ քարայրի մէջ, որ երկու մետր երկարություն ունի, 1.5 մետր լայնություն և երեք մետր բարձրություն, կամարաձեւ ձեղունով: Արևելեան կողմը կայ կիսաբոլոր մի կոզակ, մի մետր բարձրութեան բեմով»<sup>95</sup>

Եւ ի վերջոյ Ե. Լալայեան կը նկարագրէ Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթատեղին, «Այս գլխաւոր այրի հիւսիսային պատի մէջ բացուած դռնից կարելի է մտնել մի փոքրիկ այր, որ հազիւ 1.5 մետր երկարութիւն և մի մետր լայնութիւն ունենայ, սրա արևելեան կողմը գտնուում է մի վեմքար, իսկ յատակի վրայ փոսիկներ: Աւանդաբար պատմուում է, թէ սա է ս. Գրիգոր Նարեկացու աղօթատեղին, և այդ փոսիկները յառաջացած են նրա անթիւ ծնրադրութիւններից»<sup>96</sup>

Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթատեղիի մասին, որուն յատակագիծը կարելի է տեսնել Պատկեր թիւ 5-ի (Ժ) խուցը, և նկարը Պատկեր թիւ 6: Մէջբերենք ևս հետեւեալ շատ մանրամասն տեղեկութիւններ Աշոտ Յակոբեանէն (Օգոստոս 2011թ. իրավիճակը), «Եկեղեցու սրահի հիւսիսային պատի արևելեան եզրին գտնուող դուռը բացում է փոքրիկ մատուռ-աղօթատեղիի մէջ, որը, ըստ աւանդութեան, Սր. Գրիգոր Նարեկացու ճգնարանն է (Ժ): Երկար տարիներ այստեղ է ճգնել և ստեղծել իր սքանչելի «Մատեան ողբերգութեան» պոեմը:


Մատուռի՝ 1,09 x 1,07 մ չափերով, 1,86 մ բարձրութեամբ փոքրիկ աղօթասրահն արևելքում աւարտուում է յատակից 0,14 մ բարձրութեամբ բեմով, 1,47 x 1,32 մ չափերով ուղղանկյուն խորանով: Աղօթասրահն ու խորանն ունեն հարթ առաստաղ: Խորանն արևելք-արևմուտք երկայնական առանցքով աղօթա-սրահից շեղուած է և ունի հիւսիս-արևելք-հարաւ-արևմուտք կողմնորոշում:

<sup>95</sup> Երուանդ Լալայեան, էջ 26:

<sup>96</sup> Նոյնը, էջ 27:

## ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 5

Գրիգոր Նարեկացիի ճգնարանի Երրորդ Յարկի Յատակագիծը



0 1 2 3 4 5 մ

<sup>97</sup> Աշոտ Յակոբեան, էջ 28:

ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 6  
Գրիգոր Նարեկացիի ճգնարանը



98

Աղօթասրահի արեւմտեան պատի մէջ գտնուում է փոքր խորշ, իսկ յատակին եղել են փոքր փոսեր, որոնք, ըստ ասանդութեան, Նարեկացու ծնկերի եւ արմունկների հետքերն են՝ առաջացած անթիւ ծնրադրութիւններից: Խորանի հիւսիսային պատի մէջ զետեղուած է կամարակապ խորշ, իսկ հարաւային պատի մէջ

98. Աշոտ Յակոբեան, էջ 30:

գտնող լուսամուտը բացուում է եկեղեցու հիւսիսային խորշի մէջ, որի շնորհիւ ճգնարանի խորանը լուսավորուում է եկեղեցու խորանից: Ճգնարանի խորանի արեւելեան պատին կից կայ վիմակերտ սեղան, որից պահպանուել է վերարը, իսկ վերին հատուածը քանդուած է հաւանաբար գանձախուզութեան հետեւանքով»:<sup>99</sup>

Կը թուի, թէ Ս. Գրիգոր Նարեկացիի ճգնարան Ուխտատեղիի վայրը հին ժամանակներուն բնակեցուած եղած է, հոն կը գտնուի բերդ մը, որ կը կոչուի Արտրի բերդ, «Նարեկայ աղօթատեղու հարաւ-արեւելեան կողմում, բրակի գագաթին կան մի հինաւուրց ամրոցի հիմնապատեր, որ այժմ կոչուում են Արտրի բերդ»:<sup>100</sup>

Նոյն հարցին անդրադառնալով Խաչատուր Լեւոնեան կը նշէ, թէ այդ վայրը եղած է խալդէական բնակավայր մը, «Վերոյիշեալ քարայրներուն կրօնական հանգամանքները նկարագրելէն վերջ, անցնինք անոնց բնական եւ հնաբանական հանգամանաց: Գալով անոր մէջ փորուած քարայրներուն հնաբանական հանգամանքներուն, կը կարծուի որ խալդէական գործեր ըլլան անոնք, որք յար եւ նման են այն խալդէական քարայրներուն, որք կը գտնուին Վանայ դարաւոր ապառաժին (բերդ) եւ Զրնգրմ Մադարայի եւ Թուփրաք Գալէի վրայ եւ այլուր: Ասոնք ժամանակին ծառայած ըլլալու են անոնց իբրեւ մեհեան կամ դղեակ: Արդէն այն քարայրներէն միտյն մէջ մէկ երկու տեղ քարափոր աւազաններ կամ կռապաշտական զոհարաններ կը տեսնուին, ուսկից առուակաձեւ փոքրիկ բացուածքներ դէպ ի դուրս կ'երկննան»:<sup>101</sup>

Ուրեմն ըստ Խաչատուր Լեւոնեանի քարայրներու վայրը խալդէական այսինքն՝ ուրարտական վայր մըն էր: Ինչպէս յայտնի է Ուրարտուն կոչուած է նաեւ Խալդէան թագաւորութիւն, քանզի հին ժամանակներուն սովորութիւն կար ժողովուրդները կամ պետութիւն-

99. Աշոտ Յակոբեան, էջ 30, 31, 32:

100. Երուանդ Լալայեան, էջ 26:

101. Խաչատուր Լեւոնեան, էջ 90:

ները կոչել իրենց պաշտած հիմնական աստուծոյ անունով, ինչպէս ասորեստանցիներու պարագային Աշուր աստուածը, եւ Ուրարտուի պարագային մեծագոյն Խալդի աստուածը:

Արամ Ղանալանեան, իր «Աւանդապատում» լայնածաւալ աշխատութեան մէջ, անդրադառնալով Ս. Գրիգոր Նարեկացիի Աղօթատեղիի մասին, կ'անդրադառնայ նաեւ սուրբին հետ առնչուած քարերու մասին, եւ Նարեկացու Քարերը խորագրին տակ գրած է հետեւեալը-

*Նարեկացու Քարերը*

*Գտնուում են Վասպուրականի Խարզիթ գիւղի մօտ*

*Ա.*

*Պատմեն գարբոյն Գրիգորէ Նարեկացոյ հովուութիւն արարեալ ի գիւղս յայս մինչեւ էր կրօնաւորեալ: Եւ յաւուր միում թշնամեաց ոմանց ի վերայ յարձակեալ՝ հարկանել զնա: Յորոց խոյս տուեալ նորա ի կապան կոյս արտարոյ գեղջն՝ զա եւ թագչի ընդ կողիւք վիմի միոյ որ է առ ճանապարհաւ ծովափին. եւ վէմն սքանչելեօք զոգաւորեալ ընդունի զնա: Եւ թշնամեացն անցեալ առ նովաւ շտեսանեն զնա եւ զերծանի ի նոցանէ: Բսկ վէմն այն կայ այնպէս մինչեւ ցայսօր զոգաւոր ըստ ձևոյ թիկանց մարդոյ եւ բազկաց, եւ ծառ մի առընթեր:*

*Բ.*

*Գտնուում են Նարեկայ վանքի մօտակայքում*

*Գրիգոր Նարեկացին հանգստանալու համար նստել է այս քարերին եւ հրաշքներ գործել: Տեղացիք դրանց միջոցով գուշակութիւն են անում:*

*Գ.*

*Գտնուում են Նարեկ գիւղում*

*Այստեղ մի բարձր ու մեծ ժայռի վրայ գտնուում է Նարեկացու աղօթատեղին: Սրա յատակի քարերը տեղ-տեղ*

*մարդու ոտքի մեծութեամբ փոս են ընկած: Ասում են, թէ դրանք Նարեկացու ոտքերի տեղերն են:<sup>102</sup>*

**23. Գրիգոր Նարեկացիի Մատուռը Առտէր Կղզիի Մէջ**

Վանայ լիճը ունի չորս կղզի Լիմը եւ Կտոցը՝ լիճի արեւելեան ափերուն մօտ, եւ Աղթամարն ու Առտէրը հարաւային ափերուն մօտ:

Նարեկայ վանքի առջեւ Վանայ լիճի մէջ Աղթամարի կղզիէն հիւսիս-արեւմուտք Առտէր կղզիի մէջ հիմնուած է վանք մը, որուն մասին Երուանդ Լալայեան յիշած է, «Առտէր կղզու վրայ երբեմն եղել է վանք, սակայն այժմ մնում են միայն երկու աւեր եկեղեցիներ, որոնցից մինի վրայ կարդացում է հետեւեալ արձանագրութիւնը:

*“Ի թուին ՉԽԱ (=1292) ի հայրապետութեան Տեառն Ստեփանոսի որ մականունն հա..... բարեխօս է առ Աստուած վասն փրկութեան...”*

*Կղզին այժմ միանգամայն անմարդաբնակ է եւ պատկանում է Աղթամարին»<sup>103</sup>*

Այս չորս կղզիներէն ամենափոքրն էր Առտէր կղզին, ուր համաձայն աւանդութեան, կը գտնուէր Ս. Գրիգոր Նարեկացիի մատուռը, «Վանայ լիճն ունէր չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Կտոց եւ Առտէր, վերջինս, չնայած անմարդաբնակ էր, սակայն տարածութեան տեսակետից ամենափոքրն էր: Աւանդութեան համաձայն նրա վրայ գտնուող մատուռի մէջ ապրել է Գրիգոր Նարեկացին եւ այնտեղ հնչել է նրա սքանչելի ձայնը: Առտէր կղզին մինչեւ 1772 թ. ունեցել է իր մենաստանը, որը նոյն թուականին կողոպտուեց քրդական հրոսակների կողմից եւ կղզին դարձաւ անմարդաբնակ»<sup>104</sup>

Առտէր կղզիի հետ առնչուած է Գրիգոր Նարեկացիի տեսիլքի պատմութիւնը, ըստ որում Նարեկացին ունեցած է տեսիլք մը, երբ տեսած էր Առտէր կղզիին մէջ Տիրամայրը եւ փոքրիկն Քրիստոսը իր գիրկին:

102. Արամ Ղանալանեան, Աւանդապատում, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչ., Երևան, 1969, էջ 71:

103. Երուանդ Լալայեան, էջ 27:

104. Հ. Մ. Պօղոսեան, Վասպուրականի Պատմութիւնից (1850-1900), էջ 41, 42. քաղուած «Արձագանք», 1882, N 20:

Այս տեսիլքի մասին Գրիգոր Նարեկացին ակնարկած է «Մատենան Ողբերգութեան» ստեղծագործութեան մէջ, «Ըստ ազգային աւանդութեան մը, արժանի եղաւ տեսնելու Մանկացեալ Աստուածը բազմաձև՝ ամենօրինեալ Աստուածածնի գրկին մէջ, Վանայ ծովուն Առտեր կղզիին մէջ, որ Նարեկի վանքին ղիմացն էր: Այս մասին քողարկեալ ակնարկութիւն կայ իր Աղօթագրքին զրուխներէն մէկին մէջ»:<sup>105</sup> «Մատենան Ողբերգութեան» ԺԲ եւ ԻԷ զրուխներուն մէջ կարելի է գտնել ակնարկութիւններ այդ տեսիլքի մասին:

### ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 7

Գրիգոր Նարեկացիի Մատուռ Առտեր Կղզիի Մէջ



106

Գրիգոր Նարեկացիի տեսիլքին հետ առնչուած է Առտեր կղզիի անուան ծագումը: Համազասպ Ոսկեան իր հոչակաւոր Վասպուրական-Վանի Վանքերը աշխատութեան մէջ, Առտերի Ս. Աստուածածին Վանքը խորագրի ներքեւ կը յիշէ, «Բզնունեաց ծո-

105. Շնորհ Արքեպիսկոպոս Գալուստեան, Հայագի Սուրբեր, 3-րդ հրատարկութիւն, Գանձասար Աստուածարանական Կենտրոն, Երեւան 1997, էջ 115:

106. Մամուլ Կարապետեանի նկարներէն:

վի չորրորդ կղզին է Արտեր կամ Առտեր, որ կ'իյնայ Նարեկ գիւղի ղիմացը եւ Աղթամարէն մղոն մը հեռու է: Արտեր կոչուած է՝ որովհետեւ այստեղ Աղթամար (որուն իրաւաստութեան ենթակայ է) «արտեր» ունեցած է: Բայց հայկական բարեպաշտիկ աւանդութիւնը կղզիիս անունը յուզիչ դէպքի մը կը կապէ: Գրիգոր Նարեկացին Ս. Կոստի եւ անոր քաղցրիկ Մանուկին՝ Յիսուսի սիրով բորբոքած՝ իր ճգնարանին լերան ժայռին վրայ ծնրադիր ջերմեռանդօրէն կ'աղօթէ եւ ահա անոյշ ձայն մը իր ակննջներուն կը հանդիպի: Աչքերը դէպի ծով կ'ուղղէ եւ այս կղզեակին վրայ կը տեսնէ Տիրամայրը՝ գրկին մէջ Յիսուս Մանուկը: Աղու ձայնը զինքը կը հրաւիրէ՝ «Գրիգոր, եկ առ Տէր, որում ցանկանալով ցանկանայիր»: Նարեկացին ինքն իրմէ կ'ելլէ եւ ծովին ու ջրին վրայէն իբրեւ թէ ցամաքի վրայէ կը սուրայ կղզին եւ հոն իր յարգանքն ու սէրը կ'արտայայտէ Տիրամօր եւ անոր Ողորդյն: Ահա այդ օրէն ի վեր կղզին կը կոչուի Առ-Տէր, եւ ի յիշատակ անմոռաց հոն կը կանգնուին մենաստան ու եկեղեցի եւ կը նուիրուի Ս. Աստուածածնի»:<sup>107</sup>

Գրիգոր Նարեկացիի մասին հայ ժողովուրդը ստեղծած է բազմաթիւ աւանդութիւններ, որոնք պահպանուած են եւ հասած են մեզ բանաւոր եւ գրաւոր ձեւերով. այդ աւանդութիւններէն մէկուն համաձայն կը պատմուի, որ Նարեկացին կ'երթայ Ռշտունիք եւ եօթ տարի կ'առանձնանայ ու կը ճգնի, «ճգնում իր քենու իմա՝ մօր հօրեղբօր Անանիա Նարեկացու) վանքի հանդէպ գտնուող մի այրում: Այստեղ նրան երեւում է Մարիամը՝ ասելով «Ես եմ մայրն Յիսուսի»: Նարեկացին կասկածում է: Միւս օրն առաւօտեան նա նորից է երեւում՝ «ունենալով ի գիրկն զմանկացեալն Աստուած»: Այդ տեսիլից ներշնչուած՝ Նարեկացին ծնկաչոք ասում է, «Աչքն ծով...» երգը»:<sup>108</sup>

Նարեկացիի յիշեալ տեսիլքի մասին, յիշուած է նաեւ, թէ ան իր ուրախութենէն կ'անցնի լիճը եւ կը հասնի կղզին, «Գրիգոր

107. Համազասպ Ոսկեան, էջ 133, 134:

108. Հրաչեայ Թամրազեան, էջ 164:

Նարեկացին մեծ ցանկութիւն է ունենում տեսնելու Տիրամօրը՝ մանուկ Յիսուսը գրկին: Եւ մի անգամ աղօթատեղի դիմացը գտնուող այս փոքրիկ կղզուց նրան երևում է իր փափաքածը: Յափշտակուած տեսիլով՝ Նարեկացին անցնում է ծովը, չորում Տիրամօր առաջ... որը ձայնում է նրան. Ա՛ն գտեր քո, գոր խնդրէիր... Այստեղից էլ կղզու անունը մնում է Առտէր»:<sup>109</sup>

Մէկ այլ ուրիշ աւանդապատման մէջ, Վանի բարբառով յիշուած է, թէ Նարեկացին իր փափաքին հասնելէ ետք, կ'ըսէ առ տէր հոգիս, ինչպէս եւ կը յիշուի, թէ կղզին կոչուեցաւ Առտէր, «Գրիգոր Նարեկացին ուր աղօթատեղաց մէջ կիշէր-ցերեկ կուլէր, կ'աղօթէր, էնկանտար (այնքան), որ քարեր մաշան ուր ծնկներաց տակ: Ինոր խնդիրքն էն էր՝ մէյ խաս ուր աչքով տեսնէր մայր Աստուածածին Յիսուսը կիրկ: Շատ տարի կիշէր-ցերեկ իլաց աղաղակեց, ձեռք զարկաց կետնի քարերաց վերէն, կժերով արտասունք թափեց... Մէյ կիշէր էլ նա-կյախտան (յանկարծ) տեսաւ, որ Վանայ ծովու երկնուց լոսմ՝ կաթաւ (լոյս իջաւ), պարակ քամիմ փչեց, մայր Ասպածածին երեսաց տիմացի կղզու վերէն, ուր կըրկանոց (գրկանոց) կիրկ: Նարեկացին, երբ տեսաւ, ասաց. Ա՛ն տէր խոկիս, առ մկա (այժմ), քանի որ ես իմ փափաքին խասա: Տէսիք վերցաւ, էտա կղզու անուն մնաց Առտէր»:<sup>110</sup>

#### 24. Ս. Գրիգոր Նարեկացիի Մահը

Ս. Գրիգոր Նարեկացիի մահուան թուականի մասին հիմնականօրէն կան երկու կարծիքներ. առաջինը ըստ աւանդութեան 1003թ. է, «Ընդունուած աւանդոյթով, որ գալիս է Գրիգոր Խլաթաւցիու վարքից, նրա մահուան տարին է համարուել 1003 թուականը, երբ նա աւարտեց իր «Մատենանք»:<sup>111</sup> Երկրորդ կարծիքը, որ յառաջացած է յետագային մահուան տարին կը յիշուի աւելի ուշ 1010-

109. Արամ Ղանալանեան, Աւանդապատում, էջ 84:

110. Նոյնը, էջ 84:

111. Մատենագիրք Հայոց ԺԲ. Հատոր, Ժ. դար Գրիգոր Նարեկացի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Երեւան 2011, էջ 18. տես Մատենադարան, ձեռ. N 7379, էջ 354ա:

1011 թուականներուն. սակայն գերիշխող է առաջինը՝ 1003թ. «Նարեկացիի մահը կը դրուի յիսուն տարեկան եղած ասին 1003թ.: Մարմինը թաղուեցաւ նոյն իսկ Նարեկայ վանքին մէջ, որուն անունը Ս. Սանդուխտ է, բայց անկէ ետքը Ս. Գրիգոր ալ սկսաւ կոչուիլ»:<sup>112</sup>

Գրիգոր Նարեկացին թաղուեցաւ Նարեկայ վանքին մէջ, թէեւ աւելի ուշ իր մարմինը փոխադրուեցաւ, որուն մանրամասն պիտի անդրադարձանք: Իր գերեզմանի մասին մէջբերենք Համագասպ Ռսկեանէն, «Ս. Սանդուխտի հիւսիսային խւորանէն կը բացուի դուռ մը դէպի քառակուսի եւ հասարակ շինութիւն մը (որ իբրեւ գաւիթ կը ծառայէ եկեղեցոյ) եւ անոր արեւելեան պատին կից շինուած փոքրիկ եւ գմբեթազարդ մատուռ մը, ուր է Գրիգոր Նարեկացիի գերեզմանը: Կ'աւանդուի թէ Սենեքէյիմ թագաւորին հետ գաղթող կրօնաւորները Գ. Նարեկացիի մարմինը կամ ոսկրները ասկէ հանած եւ իրենց հետ տանելով Արաւելայ գիւղի վանքի մէջ թաղած ըլլան (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 309)»:<sup>113</sup>

Ըստ Խաչատուր Լեւոնեանի, Ս. Գրիգոր Նարեկացիի գլուխը թաղուած է Նար գիւղին մէջ: Ա-ին Գլխուն մէջ անդրադարձաւ Նար գիւղի մասին, որ կը գտնուէր Շատախի հարաւ-արեւելքի Խաւիշտանց կոչուող տարածքին մէջ. «Յիշեալ Նար գիւղի գերեզմանոցին մէջ Խոսրովի տապանաքարին մօտերը քառակուսի եւ քայքայուած քարաշար մ'ալ կը ցուցուի այժմ, որ «Ս. Գրիգոր Նարեկացու գերեզման» կը կոչուի, զի ըստ աւանդութեան հոն թաղուած է Սրբոյն գլուխն իբրեւ նուիրական պարգև մը իր գիւղակիցներուն, եւ ուխտատեղի է դարձեալ: Այն գիւղն ալ հետզհետէ արուելու վրայ է՝ գիւղացւոց գործի բերմամբ այլուր փոխադրուելովը, այնպէս որ այժմ 4-5 տուն մնացած է, թէեւ հազիւ 15 ընտանիքներ կը գտնուի վանքէն դէպի հարաւ ու փոքրիկ ձորակով մը անկէ բաժնուած»:<sup>114</sup>

112. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգապատում Ա. Հատոր, Գ. Գիրք, էջ 1181:

113. Համագասպ Ռսկեան, էջ 208, 209:

114. Խաչատուր Լեւոնեան, էջ 81:

Մեր ուսումնասիրության ընթացքին հանդիպեցանք նաև հետևեալ կարեւոր տեղեկութեան, նախ մէջբերենք՝ ապա փորձենք մեկնաբանել, «Գրիգոր Նարեկացու վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել հայրը՝ Խոսրով Անձեւացին, ինչպէս եւ Անանիա Նարեկացին: Այդ անուննի գրագէտներն ու գործիչները՝ առանձին-առանձին մեղադրուել են որպէս եկեղեցական կարգերը քննադատողներ եւ նրանք բարեփոխութիւններ մտցնողներ: Ըստ երեւոյթին համապատասխան գաղափարներով էր տոգորուած նաև Նարեկայ վանքի ճգնակենցաղ միաբանութիւնը եւ այս միջավայրում ծնունդ առած Գրիգոր Նարեկացու «Մատենանոց տղերգութեան» երկը: Այն աւարտուել է 1003 թուականին, որից յետոյ, շատ չանցած, նոյն թուականին էլ վաղաժամ մեռել է հեղինակը, թաղուելով Նարեկայ վանքում: Եղած գրատր վկայութիւնները հիմք են տալիս ենթադրելու, որ Գրիգոր Նարեկացին հալածուել է հենց այդ երկի պատճառով»:<sup>115</sup> Ընդունուած կարծիքը այն է, որ ան մահացած է նոյն տարին, երբ աւարտած է իր գրած հոշակատր Ս. Նարեկը: Այս մէջբերման մէջ յիշուած է, որ Գրիգոր Նարեկացին հալածուած է այդ երկի պատճառով. ինչ որ կասկածներ կը յառաջացնէ, թէ գուցէ իր երիտասարդ հասակին այս կեանքէն հեռանալը հետեւանք էր իր դէմ գործադրուած հալածանքներուն...:

## 25. Նարեկայ Վանքի Մէջ Անփոփուած Սուրբերու Մարմինները

Նարեկայ վանքի մէջ, ինչպէս մեր միւս բոլոր վանքերը, դարերու ընթացքին անփոփած են մէկէ աւելին սուրբերու մարմինները:

Ըստ աւանդութեան Նարեկայ վանքի մէջ անփոփուած է նաև Ս. Սանդուխտի մարմինը. «Անանդաբար պատմում է, թէ ս. Սանդուխտի անուան նուիրուած եկեղեցու հարաւային խորանում եղած գերեզմանում անփոփուած են ս. Սանդուխտի նշխարները, սակայն գրա-

115. Հայ Ժողովրդի Պատմութիւն, III ՀՀ ՄՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Երևան, 1976, էջ 357:

տր վկայութիւններ պակասում են»:<sup>116</sup> Անանդաբար կ'ըսուի, թէ Անանիա Նարեկացիի գերեզմանը կը գտնուէր Նարեկայ վանքի մասնատան հարաւ-արեւելեան կողմը. «Թէ ս. Սանդուխտի եւ թէ Յովհաննէս եւ Անանիա Նարեկացիների տապանաքարերը հասարակ քարեր են, առանց տապանագրի, նոյն վիճակին է եղել նաև ս. Գրիգոր Նարեկացու գերեզմանը...»:<sup>117</sup>

Հայ գիրերու ստեղծագործ Սուրբ երրորդութենէն (Սահակ, Մեսրոպ եւ Վռամշապուհ) Ս. Սահակի մահուան թուականը կը սահմանուի (436-440) թուականներուն, եւ իր մարմինը թաղուած է Տարօն գաւառի Աշտիշատ անունի մէջ:<sup>118</sup> Ըստ ոմանց Նարեկայ վանքի մէջ անփոփուած է նաև Ս. Սահակի մարմինը, «(Մկրեան Նարեկայ վանքի մէջ կը դնէ նմանապէս Ս. Սահակի գերեզմանը – Սուրհանդակ, 1900թ. 446)»:<sup>119</sup> Համաձայն այս կարծիքին՝ յստակ չէ, թէ ինչու հարիւրաւոր տարիներ ետք Ս. Սահակի մարմինը Տարօնէն փոխադրուած է Նարեկայ վանք:

Նարեկայ վանքի մէջ թաղուած են նաև նշխարներ Ս. Գրիգոր Նարեկացիի հօր՝ Խոսրով Անձեւացի եպիսկոպոսէն., «Խոսրով Եպիսկ. վախճանելով, նախ կը թաղուի իր հիմնած Նար անուն գեղին գերեզմանոցին մէջ, որուն հսկայ եւ կապտագոյն խաչարձանն որ կիսով չափ հողին մէջ թաղուած կը կենայ ցարդ, կը ցուցուի հոն իբրև «Նարեկացու հօր գերեզման»: Բայց կ'երեւի որ վերջէն իր նշխարները «թերեւս ըստ մասին» յիշեալ Ղարայ Տէր Վանուց տաճարը կը փոխադրուին, որովհետև անոր ձախակողման պատին տակ խոշոր, անտաշ եւ անզիր տապանաքար մը կը ցուցուի ցարդ «Խոսրով Եպիսկ.ի գերեզման» անուամբ»:<sup>120</sup>

Մէջբերենք եւս այս տողերը Գարեգին Մրուանձտեանցէն՝ իր շարադրած գեղեցիկ հայերէնով, ուր կը թուէ Նարեկայ վանքի մէջ

116. Երուանդ Լալայեան, էջ 21:

117. Նոյնը, էջ 24:

118. Ռ. Մաթեոսեան, Հայոց Եկեղեցու Սրբերը եւ Սրբակենցաղ Անձինք, Ս. Էջմիածին 1999, էջ 83, 84:

119. Համագասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը, Ա. մաս, էջ 208, 209:

120. Խաչատուր Լեւոնեան, էջ 81:

գտնուող բոլոր սուրբերու աճիւնները, «Այս հոյակապ տաճարին մէջ կը պահուին իբրև անգին գանձ ոսկերք սրբազանից, Անանիա Նարեկացին՝ քեռին եւ վարժապետ Ս. Գրիգորին. Յովհաննէս՝ «Նարեկայ մեծափառ եւ բարձրապատի ուխտի վանական... հարազատ, միաշունչ, միակրօն, համապատիւ, զուգահաւան, եղբայր Ս. Գրիգորին. եւ ինքն Սուրբ Գրիգոր ի դարանի յօրինեալ որմի, հետկոյս խորանի, Սանդիստոյ սրբուհոյն կուսի: Սանդուխտ եւ Գրիգոր, կոյս, կուսին հովանի, Շաւարշանա Շուշանին գեղոյն շքաղիր. գոհար ծովային, վարդ բոսորային, ծաղկեալ Ռշտունին, երկուքն՝ երկու պտուղ խունկ աստուածաբոյր՝ վեր մէկ կրակի Քրիստոսի սիրոյն. մէջ մէկ բուրվառի Հայաստանեաց եկեղեցոյն, վեր մէկ սեղանի, մէջ մէկ խորանի...»:<sup>121</sup>

Նարեկայ վանքի մէջ թաղուած սուրբերու մասին Խաչատուր Լեւոնեան կը գրէ 1903թ. իր այցելութենէն ետք, «Անանիա վարդապետի գերեզմանը կը գտնուի Նարեկայ Վանուց դարպասի ձախակողմեան դասին մէջ եւ վրայի կանթեղն անմարեյի է միշտ, թէեւ տապանաքարը սովորաբար բոլորովին աննշան եւ անգիր է: Այս դարպասի բեմին ներքեւ այրածէ միջոցի մը մէջ կը գտնուին նաեւ Ս. Գրիգորի մեծ եղբարց՝ Յովհաննէսի եւ Սահակայ գերեզմանները, նոյնպէս անյիշատակ եւ պարզ: Այս վանքին մէջ է նոյնպէս «Մեկնիչ Գրոց» անուանուած Պետրոս Վրդ.ի գերեզմանը, որ Անանիա Նարեկացու գլխատը օգնականն եղած էր: Հոս թաղուած է նաեւ Յակոբ Վրդ. Ովսաննացին, զոր յիշատակած է Թովմա Վրդ. Մեծփեցին իբրև իրեն ժամանակակից նշանաւոր եկեղեցական դէմք մը, որ նախ՝ Ռշտունի Ապագ Վանուց Ս. Վարդանի եւ ապա Անձղնանապատայ կամ Յանձնապատայ (այժմ Կարմրակ) միաբանն եղած է: Թէև այս վերջին երկու վարդապետաց գերեզմաններն անյայտ են այժմ»:<sup>122</sup>

Հայ եկեղեցականները միշտ զոհ կ'երթային քիւրտ աւազակապետերուն, անոնցմէ մէկն էր Յակոբ Ովսաննաց վարդապետը, որ իր

նահատակութենէն ետք թաղուած է Նարեկայ վանքին մէջ, «Եւ սրանից յետոյ, երկու տարի անց (1427թ.) նոյն բուրդը՝ մարաց ազգից, Բարեշից գնաց Ռշտունեաց երկիրը, եւ երջանիկ ու տօնասէր աղօթարար Յակոբ Ովսաննաց վարդապետին, Անձնապատի ուխտից, նահատակեց. նրան թաղեցին Նարեկավանքի Գրիգորի գերեզմանի մօտ»:<sup>123</sup>

Նարեկայ վանքի մէջ թաղուած է նաեւ Ս. Գրիգոր Նարեկացիի եղբայրը Յովհաննէս, որ իր գործակիցն էր<sup>124</sup>: Յովհաննէսը ընտրուած էր Նարեկայ վանքի առաջնորդ վանքի հիմնադիր Անանիա Նարեկացիի մահէն ետք:<sup>125</sup>

Եւ վերջապէս, այս շատ հետաքրքիր տողերն ալ մէջբերենք Համագասպ Ոսկեանէն, ուր կը յիշուի թէ վանքի ժամատան մէջ թաղուած են նաեւ Ս. Թովմասի եւ Ս. Յակոբի նշխարներէն, «Այս ժամատան մէջ թաղուած են՝ Գր. Նարեկացիի եղբայրը՝ Յովհաննէս եւ Անանիա Նարեկացի (Բնձիճեան ուշադիր կ'ընէ որ Վարդան Աշխարհագրի քանի մը օրինակներու համեմատ Նարեկայ մէջ են Ս. Թովմասի նշխարները եւ Ս. Յակոբի ճկոյթը (Ստորագրութիւն, էջ 172) -դժբախտաբար անգիր ու հասարակ տապանաքարերով ծածկուած: Ժամատան վրայ գրուած է՝ «Թվ. ՌՄԼԶ (1787) Տէր Բարսեղ վարդապետ, որ շինեաց զդարպասս» (Արեւելք, 1903թ. 5412)»:<sup>126</sup>

Այսպէս Նարեկայ վանքին մէջ ամփոփուած են նուազագոյնը տասէ աւելի սուրբերու մարմիններ կամ նշխարներ, անոնց անունները կարելի է տեսնել Յուցակ թիւ 4ի մէջ:

123. Թովմա Մեծփեցի, Պատմագրական Երկեր, ԵՊՀ, Երեւան, 2003, էջ 20:

124. Երուանդ Լալայեան, էջ 22:

125. Ռ. Մաթեոսեան, էջ 164:

126. Համագասպ Ոսկեան, էջ 208, 209:

121. Գարեգին Սրուանձտեանց, Երկեր, 1 հատոր, ՀՄՄՀ ԳԱ-Հնագիտութեան եւ Ազգագրութեան Բնասիտուտ, Երեւան, 1978, էջ 377:

122. Խաչատուր Լեւոնեան, էջ 82:

ՅՈՒՑԱԿ ԹԻԻ 5

Նարեկայ վանքի Մէջ Ամփոփուած Սուրբերու Մարմինները Կամ Նշխարները

Ս. Սանդուխտ	Հայոց առաջին նախամարտիրոսուհին
Անանիա Նարեկացի	Նարեկայ վանքի հիմնադիրը
Ս. Սահակ	Ամենայն Հայոց կաթողիկոս
Յովհաննէս Նարեկացի	Գրիգոր Նարեկացիի եղբայրը
Սահակ Նարեկացի	Գրիգոր Նարեկացիի եղբայրը
Ս. Գրիգոր Նարեկացի	
Յակոբ Ովսանանց	Անձնապատի ուխտէն
Խոսրով Անձեւացի	Գրիգոր Նարեկացիի հայրը
Պետրոս Վարդապետ	Անանիա Նարեկացիի օգնականը
Ս. Թովմաս	Առաքեալ
Ս. Յակոբ	Առաքեալ

Խաչատուր Լեւոնեան իր անհամաձայնութիւնը կը յայտնէ սուրբերու մարմինները իրենց գերեզմաններէն փոխադրելու սովորութեան, «Այս սուրբերն ողջ եղած ատեն շատ անգամ գանազան վիճակներ ունենալէ զկնի, մահէն վերջն ալ իրենց ոսկորտին ազատ չեն ըլլար չարչարանքէն, լուծուելով անոնց գերեզմանի անշարժ կնիքն եւ կապտուելով նշխարապաշտներու խղճամիտ անխղճութեամբ, առանց խորհելու թէ այդ կերպով աւելի վիրատորած կ'ըլլան այն սուրբերը, քան թէ պատուած, որովհետեւ եկեղեցական օրինօք գերեզմանները չեն կրնար քակուիլ, ինչպէս թաղման ատեն Աւետարանով տեսոնագրուելով այն հողակոյտը քահանային միջոցաւ. «Եղիցի կնիքս անշարժ...» կ'ըսուի»<sup>127</sup>

127. Խաչատուր Լեւոնեան, էջ 83:

26. Գրիգոր Նարեկացին Եւ Հայ Ժողովուրդի

Աստուածաբանութեալ Էութիւնը

Ընդհանրապէս Գրիգոր Նարեկացիի ստեղծագործութեան մէջ տիրապետողը՝ քրիստոնէական աստուածաբանութիւնն է, հոն շատ դժուար է գտնել ազգայինը, հայրենասիրութիւնը:

Իր գլուխ գործոցը նկատուող Մատեան Ողբերգութեան՝ Նարեկի մէջ միայն մէկ տեղ ան յիշած է Արարատ լեռը, «Նարեկի մէջ միայն մի տեղ/Բան Թ/ Ս. Գրիգորը Արարատ լեռը նշում է իբրեւ մեղքերի չափման հակակշիռ մեծութիւն»:<sup>128</sup> Մէջբերենք Նարեկէն հետեւեալը.

«Ու նծարներից մէկի մէջ դնես

լեռն Արարատեան՝

Դարձեալ չի կարող հաւասարուել

նա իմ մեղքերի հետ»:<sup>129</sup>

Հայ ժողովուրդի աստուածաբանութեալ էութեան մասին բացատրութիւնները կուգան շատ հինէն, նախաքրիստոնէական շրջանէն. երբ Հայաստանը յիշուած է, որպէս Սրբազան Լեռնաշխարհը եւ Օրինաց երկիրը:

Գրիգոր Նարեկացին կը ցոլացնէ ազգասիրութեան եւ հայրենասիրութեան մեծ պատգամատուր մը: Ան Հայաստանն ու հայ ազգը կը նկատէր Աստուածաբանութեալ ժողովուրդ, հիմնուելով՝ մեծ ջրհեղեղի եւ Նոյ նահապետի պատմութեան վրայ:

Գրիգոր Նարեկացին՝ իր «Յարութեան տաղի» տեսիլքին մէջ քրիստոնէական ամբողջ աստուածաբանութիւնը խորհդանշող սայլի ճանապարհը դէպի Երուսաղէմ սկսած կը տեսնէ Մեծ Մասիսէն. «Մայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց... եւ ճոնչալով զայր մտաներ յԵրուսաղէմ»:<sup>130</sup> Այս տաղը նուիրուած է Քրիստոսի

128. Աշոտ Պետրոսեան, Պատմութիւն Սպարանից Ս. Խաչին, Էդիթ պրինտ, Երեւան-2006, էջ 5:

129. Ս. Գրիգոր Նարեկացի, Մատեան Ողբերգութեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003. Բան թ., էջ 49:

130. Արտակ Մովսիսեան, Սրբազան Լեռնաշխարհը, ԵՊՀ, Երեւան 2004, էջ 54, Գ. Նարեկացի, 1981, էջ 59-65:

յարութեան, սակայն հոն կարելի է տեսնել նաեւ ազգայինը, «Ընդունելով, որ տաղը նուիրուած է Քրիստոսի յարութեանը եւ, առհասարակ, յարութեան գաղափարի փառաբանութեանը, Գ. Աբգարեանն այն միտքն է յայտնում, որ Նարեկացին այդ գաղափարը կապել է նաեւ հայ ժողովրդի եւ հայրենի երկրի յարութեան գաղափարի հետ: ...Արարական լծից հայ ժողովրդի ազատագրուելու, նրա պետական անկախութեան վերականգնման եւ հայոց եկեղեցու հեղինակութեան բարձրացման փաստի մէջ Նարեկացին, անշուշտ, կարող էր տեսնել Քրիստոսի՝ իբրեւ միշտ կենդանի աստծու յարութեան խորհուրդը»:<sup>131</sup>

Գրիգոր Նարեկացին կը գրէ՝ 983թ. Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով՝ Խիզան գաւառի Ապարանք գիւղի Մբ. Խաչ վանքի հիմնադրման եւ կառուցման պատմութիւնը, երբ Ս. Կարապետ եկեղեցւոյ հարեւանութեամբ կառուցուեցան Ստեփանոս Նախավկայի եւ Ս. Աստուածածնի եկեղեցիները: Այդ բոլորը տեղի ունեցաւ ժողովրդական մեծ տօնակատարութեամբ, որուն ի կողքին հոգեւորականութեան եւ ժողովուրդին, ներկայ եղան Արծրունի երեք թագաւոր եղբայրները՝ Աշոտ-Սահակը, Գուրգէն-Խաչիկը եւ Սենեքերիմ-Յովհաննէսը:

Ապարանքի Մուրբ Խաչին նուիրուած իր պատմութեամբ Գրիգոր Նարեկացին կը ներկայանայ պատմողը մեր ազգային արժէքներուն, «Նարեկացու որեւէ այլ հանրածանօթ ստեղծագործութեան մէջ յիշատակումներ չկան մեր ազգային աշխարհագրական կամ պատմամշակութային իրողութեանց վերաբերեալ: Մա, ի հարկէ, չի խանգարել հայութեանն զգալու եւ ըմբռնելու Նարեկացուն իբրեւ իր մեծագոյն մտածողի ու բանաստեղծի եւ նրան դեռեւս կենդանութեան օրօք վերաբերել է ինչպէս սուրբի եւ նրա քերթութեան մէջ տեսել հենց հայի տառապապաշտ ոգին:

Եւ ահա, Ապարանքի Մուրբ Խաչի պատմութեամբ Գրիգոր Նարեկացին բացայայտում է ընթերցողին իբրեւ մեր ազգային

131. Արշալոյս Ղազինեան, Գրիգոր Նարեկացի (Բանաստեղծական Արուեստը), Անթիլիաս-Լիբանան, 1995. էջ 127:

հոգեւոր-մշակութային արժէքների ոչ միայն գիտակ կամ գնահատող, այլեւ խանդավառ երգիչ»:<sup>132</sup>

Այսպէս, Գրիգոր Նարեկացիի ստեղծագործութեան յիշեալ երեք առիթներով կարելի է շատ յստակ տեսնել իր ազգային-հայրենասիրական մտածողութիւնը:

## 27. Գրիգոր Նարեկացիի Ստեղծագործութիւնները

Այս Գլխու վերջաւորութեան, որ ամբողջութեամբ յատկացուած է Նարեկայ վանքը Գրիգոր Նարեկացիի ժամանակին, ուր ան իր ամբողջ կեանքը անցնելով բեղուն գործունէութիւն ունեցաւ, մեզի ձգելով մեծ թիւով ստեղծագործութիւններ: Անոնք են «Մեկնութիւն Երգոց երգոյն Մողոմոնի», որուն մասին անդրադարձանք 15րդ բաժինին մէջ. Մատեան Ողբերգութեան, որուն մասին անդրադարձանք 17րդ բաժինին մէջ, եւ չորս ներբողներ (նուիրուած Ս. Խաչին, Աստուածածնին, Առաքեալներուն եւ Յակոբ Մծբնայ եպիսկոպոսին), Ապարանից խաչի պատմութիւնը, Գանձերը եւ երկու տասնեակէ աւելի տաղերը:

Գրիգոր Նարեկացիի ստեղծագործութիւնները զարկ տուին հայ մշակոյթի բարոյափիլիսոփայութեան: Իր շնորհիւ բանաստեղծութիւնը արձանագրեց մեծ վերելք, եւ «դարձաւ գեղարուեստական խօսքի առաջատար տեսակը»<sup>133</sup>: Գրիգոր Նարեկացին ստեղծեց բարձրորակ երգարուեստ, «Նա առաջինն էր, որ ստեղծեց բարձրորակ երգարուեստ՝ օգտագործելով ժողովրդական բանահիւսութեան հարուստ հնարաւորութիւնները»:<sup>134</sup>

Գրիգոր Նարեկացիի ոճի մասին ուշագրաւ է Գարեգին Սրուանձտեանցի կարծիքը, «Առանձնապէս ուշագրաւ են Սրվանձտեանցի դիտողութիւնները Գրիգոր Նարեկացու ոճի եւ տաղերի մասին: Համեմատելով Նարեկացու տաղերն իր հայրենի գաւառի ժողովրդական երգերի հետ, Սրվանձտեանցը յանգում է այն եզրակացութեան, թէ «Նարեկացւոյն ոճն ոչ թէ իր յատկական

132. Աշոտ Պետրոսեան, Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին, էջ 5:

133. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, ՀՀԳԱԱ Պատմ. Ինստ., Զանգակ Երևան, 2014, էջ 475:

134. Հայոց Պատմութիւն-Հիմնահարցեր, Երևան, Զանգակ, 2000թ., էջ 293:

անձնական, այլ հայրենի գաւաթի տեղական ժողովրդեան ընդ-  
հանուր ոճն է»:<sup>135</sup>

Գրիգոր Նարեկացին գիտակից պատմող է իր ժամանակա-  
կից պատմական զարգացումներուն, որոնց մասին անդրադար-  
ձանք 13րդ եւ 14րդ բաժիններուն մէջ:

Եւ վերջապէս Գրիգոր Նարեկացիի հայ ժողովուրդին ձգած  
իր ստեղծագործութիւնները արժէքաւոր մեծ գրական ժառանգու-  
թիւն են, որ զգալի ազդեցութիւն ունեցած է հայ գրականութեան  
վրայ, եւ կը շարունակէ, ու պիտի շարունակէ ունենալ: Իր ձգած  
ժառանգութեան մէջ զլուխ գործոցը կը հանդիսանայ Մատեան  
Ողբերգութեանը, ուր ան «կ'արտայայտէ Աստուծոյ, մարդու,  
կեանքի, բնութեան եւ հայրենեքի նկատմամբ ունեցած իր փիլի-  
սոփայական ըմբռնումները՝ կատարելով նաեւ խոր ընդհանրա-  
ցումներ: Ան իր նոր ու համարձակ գաղափարները արտայայտած  
է բանաստեղծական բարձր արուեստով մը եւ հայ բանաստեղծա-  
կան լեզուի ամբողջ հարստութեամբ»:<sup>136</sup>

Իր առաջին գործը «Երգ երգոցի» մեկնութիւնը ան գրած է իր  
երիտասարդութեան՝ 977թ., իսկ իր վերջին գործը «Մատեան  
Ողբերգութեան» գրած է 1002թ., այսպէս իր գրական ստեղծագոր-  
ծական կեանքը շատ կարճ եղած է հազիւ թէ քառորդ դար: Ան  
վախճանեցաւ 1003թ. երբ կը գտնուէր իր ստեղծագործութեան  
վերելքին մէջ:

## 28. Գրիգոր Նարեկացիի Հրաշագործութիւններէն

Գ. Գլուխ անձնելէ առաջ, հարկաւոր է շատ հակիրճ անդրա-  
դառնալ Ս. Գրիգոր Նարեկացիի հրաշագործութիւններուն, որոնց  
մասին կան բազմաթիւ յիշատակութիւններ հայ ժողովուրդի  
բանահիւսութեան մէջ:

135. Էմմա Կոստանդեան, Գարեգին Սրվանձտեանց (Կեանքը եւ գործունեութիւնը),  
էջ 64:

136. Է. Լ. Դանիէլեան, Հայոց Պատմութիւն, Երևան, Անկիւնաքար, 2000, էջ 179:

Համաձայն այդ աւանդութիւններուն Գրիգոր Նարեկացին  
կրօնաւոր դառնալէ առաջ հովիւութիւն ըրած է Վանայ լիճի  
ափին գտնուող Խարզիթ գիւղին մէջ: Գիւղի հովիւի մահէն ետք,  
ան կամաւոր կը կատարէ մեռած հովիւի պարտականութիւնները  
եւ ստացած վարձը կու տայ մեռած հովիւի կնոջը, որ եօթ որբերու  
մայր էր:<sup>137</sup>

Վանքի առուն փորող մշակները չէին կարող ջարդել եւ  
ճանապարհէն հեռացնել վեմ քարը. վարդապետ մը կը խնդրէ  
սուրբի օգնութիւնը. Նարեկացին կ'աղօթէ, Աստուծոյ կ'աղերսէ, եւ  
այդ քարը երկու մասի կը կիսուի. մշակները, որոնք ծաղրանքով  
կը հետեւէին, զարմացան եւ ինկան Նարեկացիի ոտքերուն...:<sup>138</sup>

Աստուծոյ օգնութեամբ Մուշ քաղաքին մէջ, նորապսակ  
երիտասարդը կը կենդանացնէ, մէջբերեք հետեւեալը, «Եւ  
Գրիգոր էլ եւ գնաց ի Մուրբ Կարապետն երկիր պագանել սուրբ  
գերեզմանի նորա: Եւ կատարեալ գուխտն իւր եւ եկեալ ի քաղաքն  
Մուշ: Եւ յանցանելն ետես մեռեալ մի զի տանէին եւ ետես ձեր մի  
զի զմօրունն փետեր ի վերա եւ պատաւ մի զծամերն ի դուրս տայր  
եւ հարսն մի քօղն ի վերա զլիսայն յետեւն երթայր եւ այլ ժողովուրդ  
եւ յոյժ լային: Եւ Գրիգոր հարցանէր զպատճառ լայոյն եւ նորա  
ասէն. Այս մարդս տէր էր հօրն եւ մօրն, եւ նոր էր պսակած եւթն  
աւուր եւ մեռաւ: Եւ տեսեալ սրբոյն զդառն արտասուք նոցա,  
գնաց զհետ զնոսա մինչ ի հանգստարանն եւ անդ արտասուօք  
յիշելով զանունն Աստուծոյ եւ խաչակնքեալ ի վերա մեռելոյն,  
առժամայն կենդանացաւ մեռեալն եւ ամենեքեան տեսեալ անկան  
յոտս նորա փառաւորելով զԱստուած»:<sup>139</sup>

Աղքատ պառաւի քարի տակ մնացած թխսական հաւը սատ-  
կած է. պառաւը լալագին, հաւը փէշը առած կը դիմէ  
Նարեկացիին. որ աղօթելով եւ երեք անգամ Աստուծոյ անունը

137. Արամ Ղանալանեան, Աւանդապատում, էջ 310:

138. Նոյնը, էջ 311, 312:

139. Արամ Ղանալանեան, էջ 309, 310:

տալով ու խաչակնքելով կ'օգնե պատահին: Պատաւը կ'ուրախանայ, կ'առնէ ողջնցած հարը եւ կ'երթայ:<sup>140</sup>

Օր մը քաղցած հոտաղներու հաւաքած չոր քակորները<sup>141</sup> աղօթելով եւ խաչակնքելով թարմ լաւաշ դարձուց, այդպէս կերակրեց քաղցած հոտաղներուն:<sup>142</sup>

Օտարա մարդկանց համար գաւազանի հարուածով ջուր բխեցուց չոր քարածայռէն, «*Եւ զկաց ի ձորամէջ տեղ մի քարածեռ: Յայնժամ յիշեաց սուրբն զանունն Աստուծոյ, եւ գաւազանն եհար՝ ի քարածեռ տեղին ջուր բխեցոյց. եւ էլից ամանն եւ երեք վարդապետացն: Եւ նորա առեալ խմեցին: Եւ աղօթիւք սրբոյն ոչ պակասեցաւ ջուրն ի ամանոյն»:<sup>143</sup>*

Աւանդաբար մեզի հասած է նաեւ ան վայրին անունը, որ Նարեկացիի հրաշքով կոչուած է “Աջոյ Արտ”: Այդ առնչուած է աղքատ զիւղացիի գութանի վրայ գործող մեռած գումէշի յարութեան պատմութեան հետ, «*Եւ մշակն եկաւ մօտ վարդապետին, եւ ասաց, թէ՛ գումէշն մեռաւ առ գութանի: Սուրբ Գրիգոր Նարեկացին առեալ զվարդապետսն զնաց ի գութան՝ տեսանել թէ՛ զինչ եղեւ: Եւ ետես զի զգումէշն մորթեալ էին ի մէջ արտին: Յայնժամ սուրբի Գրիգոր առեալ հող խաչակնքեաց յիշելով զանունն աստուծոյ, եւ ցանեաց ի վերայ գումշին: Յայնժամ զենեալ գումէշն յարեաւ ի մէջ արտին: Երկու գեղի մարդիկ եկին, որ զմիսն եւ զկաշին տանին: Եւ տեսին զգումէշն կենդանի, զի վարէր ի գութանին: Ամենեքեան եկին աջ առին ի սուրբ վարդապետէն, եւ զարտի անուն Աջոյ արտ անուանեցին»:<sup>144</sup>*

Հայաստանի մէջ տարածուած է “Գիհի” ծառը, որ Նոճիներու<sup>145</sup> ընտանիքին պատկանող մշտադալար թուփ է, 3-12 մետր բարձրութեամբ, փշատերեւ, որուն կարմիր հատիկներով պտուղը կը գործածուի իբրեւ խունկ. շուքի մէջ չորցուած ու փոշիացած տե-

140. Նոյնը, էջ 306, 307:

141. Անասունի չորցած աղբ, թրիք:

142. Արամ Ղանալանեան, էջ 310, 311:

143. Նոյնը, էջ 311:

144. Նոյնը, էջ 50, 51:

145. Կոնաքերներու ընտանիքէն սլացիկ ծառ:

րեւները կ'օգտագործուին բժշկութեան մէջ՝ որովայնի եւ երիկամներու ցաւերուն դէմ: Աւանդութեամբ մեզի հասած Գրիգոր Նարեկացիի հրաշքներուն մէջ յիշուած է նաեւ Գիհի ծառը, «*Նարեկացին հոտաղ է լինում մի զեւեցու մօտ: Մի անգամ տան պատաւը բարկանալով՝ անթորոցը (թոնիրը խառնելու երկպաթէ ձողը) նետում է նրա կտուկը Նարեկացին վերցնում է անթորոցը, տնկում զետնի մէջ եւ իկոր անյայտանում: Անթորոցը ծաղկում եւ դառնում է գիհի ծառ»:<sup>146</sup>*

Մէկ այլ հրաշագործութեան մէջ Նարեկացիի բարակ ճիւղատը կը դառնայ օգտաշատ Գիհի ծառ, «*Նարեկացին բարակ ճիւղատով եօթ տարի սրածեցրել է տիրոջ եզները՝ առանց նրանց մէկ հատիկ վատ խօսք ասելու ու ձեռնելու: Զեւիկ գիւղի մէջտեղ բուսած կանաչ ու փարթաւ գիհի ծառը, որ շուք է անում չորս կողմը, հոտաղ Նարեկացու ճիւղտուն է, որ նա ժամանակին տնկել է այրտեք»:<sup>147</sup>*

Կը բաւարարուինք Նարեկացիի հրաշագործութիւններէն այսբանը յիշելով. հետաքրքրուողները կարող են աւելիին ծանօթանալ Արամ Ղանալանեանի “Աւանդապատում” լայնածուստ աշխատութենէն:

Այսպէս, տասնեակներով հրաշագործութիւններու մասին յիշատակութիւններ կան. այդ բոլորի ընթացքին, շատ պարզ կը տեսնենք, որ Գրիգոր Նարեկացիի գլխաւոր մտահոգութիւնն էր հասարակ ժողովուրդի կենցաղային կարիքները եւ յոյզերը: Ան միշտ իր աղօթքներով, Աստուծոյ հետ խօսելով, աղերսանքով գործած է այդ հրաշքները աղքատ ժողովուրդը օգնելու համար. եւ այդ պատճառով ան սիրուած է իր ժողովուրդի կողմէ: Իր հրաշագործութիւնները պատմուած են ժողովուրդին կողմէ եւ տարածուած են գրեթէ Հայաստանի ամբողջ վայրերը: Իր ժողովուրդականութեամբ կարելի է բացատրել, որ հայ ժողովուրդի բազմաթիւ ընտանիքներու մօտ, անկախ անոնց մտային եւ կրթական մակարդակէն սուրբին զիրքը Նարեկը եղած է տան անբաժանելի կարեւոր մասնիկը. ինչպէս եւ սուրբին գերեզմանը Նարեկայ վանքին մէջ, դարեր շարունակ եղած է շատ սիրելի ուխտատեղի մը...:

146. Արամ Ղանալանեան, էջ 115:

147. Նոյնը, էջ 116:

Ողբամ՝ եւ չարտասուեմ,  
խորհեմ՝ եւ չհառաչեմ,  
ամպեմ ու չանձրեմեմ,  
ընթանամ՝ եւ չհասնեմ:  
Գ. Նարեկացի

## Գ. ԳԼՈՒԽ

### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՇՐՁԱՆԻՆ

#### 29. Նարեկայ Վանքի Դպրոցը

Նարեկայ վանքի դպրոցը հիմնուեցաւ 10րդ դարուն Անանիա Նարեկացիի ջանքերով, որ այդ ժամանակ ամենէն զարգացած հայ հոգեւորականներէն էր: Նարեկայ վանքի դպրոցը շատ աշխոյժ եւ խանդավառ կ'ըլլար՝ երբ հոն կը դասախօսէին Անանիա Նարեկացին եւ իր հոչակաւոր աշակերտ՝ Գրիգոր Նարեկացին: Նարեկայ վանքին մէջ հաւաքուած էին յունական գիտութիւններու նշանաւոր մատենագիրներ, գիտնականներ, բանաստեղծներ եւ վարդապետներ. հիմնադիր Անանիա Նարեկացին վանքին մէջ ստեղծեց մատենադարան մը, այնտեղ հաւաքելով արժէքաւոր սկզբնաղբիւրներ եւ բնագիրներ. որոնց մէջ էր նաեւ Մեսրոպ Մաշտոցի կողմէ գրուած Աւետարանը: Այսպէս Նարեկայ վանքի դպրոցը ունէր ստեղծագործական աշխատանքի համար բոլոր յարմարութիւնները, գիտուն անձիք եւ մատենադարան:

Նարեկայ վանքի վարդապետարանը Անիի վարդապետարանէն աւելի հին է. 11-րդ դարու հայ պատմիչ Ստեփանոս Տարօնցիի վկայութեամբ Նարեկայ վանքը՝ իր ժամանակ հոչակուած էր, «Այդ վարդապետարանի մասին արժէքաւոր տեղեկութիւն է հաղորդում Ասողիկը. «...Այսպէս եւ յայսմ ժամանակիս շինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց գաւառին նոյն կարգաւորութեամբ, բազմազարդ պաշտօնապայծառ երգեցողօք եւ

գրական գիտողօք»: Այս վկայութիւնից պարզուում է, որ Նարեկի ուսումնա-գիտական կենտրոնում «բազմամարդ» են եղել «պաշտօնապայծառ երգեցողներն» ու «գրական գիտողները»<sup>148</sup>

Նարեկայ վանքի աշակերտներէն յայտնի են՝ Խոսրով Անձեւացիի երեք որդիները՝ Սահակը, Յովհաննէսը եւ Գրիգորը, որոնց մայրը Անանիա Նարեկացիի եղբոր աղջիկն էր, այսինքն անոնք մօր կողմէ Անանիա Նարեկացիի եղբոր թոռներն էին: Այսպէս Նարեկեան դպրոցը մեր պատմութեան այլ դպրոցներու մէջ ունի զգալի բացառիկութիւն մը, որուն մասին Հրաչեայ Թամրազեան զրած է, «Հայ մշակոյթի պատմութեան մէջ Նարեկեան դպրոցը իւրայատուկ է նաեւ նրանով, որ իր հիմքում ունի գրական մի ընտանիքի կեանքի ու գործունէութեան պատմութիւնը: Յիշենք՝ այս ընտանիքի մէջ են մտնում Անանիա Նարեկացին՝ դպրոցի հիմնադիրն ու ուսուցչապետը, եւ Խոսրով Անձեւացին իր երեք որդիներով՝ Սահակ, Յովհաննէս եւ Գրիգոր, որոնցից վերջին երկուսի կեանքի ու գործունէութեան պատմութիւնը կապուած է Նարեկեան դպրոցի հետ: Անանիայից յետոյ Յովհաննէս Նարեկացին է ստանձնում վանքի առաջնորդութիւնը: Խոսրովն ու իր որդիները Անանիա Նարեկացու հետ նաեւ բարեկամական կապեր ունէին. Խոսրովի կինը Անանիայի հորեղբոր դուստրն էր»<sup>149</sup>

Արծրունեաց հարստութեան մայրամուտին, Սենեքերիմ Արծրունիի օրով Նարեկայ վանքը Արծրունեաց հարստութեան եւ Վասպուրականի հոչակաւոր վանքերէն մէկն էր. Սամուէլ Անեցի պատմիչը իր յիշած վանքերու երկար շարքին մէջ երրորդ տեղին յիշած է Նարեկայ վանքը, «Սամուէլ Անեցու հաղորդմամբ Սենեքերիմ Արծրունի թագաւորի օրօք Վասպուրականի թագաւորութիւնում կային 900 վանքեր, որոնցից 115-ը նշանաւոր էին յատկապէս հոչակուած էին Վարազայ, Աղթամարի, Նարեկայ,

148. Հայ Ժողովրդի Պատմութիւն, III ՀՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Երեւան 1976, էջ 317:

149. Հրաչեայ Թամրազեան, Նարեկեան դպրոցը, Հայաստան հրատարակչ., Երեւան 1999, էջ 7:

Կտուց եւ Առտէր կղզիների, Իլու գիւղի, Ռշտունեաց Ս. Յակոբ, ...»:<sup>150</sup>

Նարեկայ վանքը իր գործունեութեամբ 10-13-րդ դարերուն կը յիշուի Տաթևի վանքէն եւ Աղթամարի Ս. Խաչէն ետք, «10-13-րդ դարերի առաջադիմութիւնը տնտեսական կեանքին հաւասար վերաբերում է նաեւ մշակոյթին՝ դպրոցներին, գիտութեանը, մատենագրութեանը, արուեստին, գրականութեանը: Մշակոյթի յայտնի կենտրոններ էին դարձել Տաթևը, Աղթամարը, Նարեկավանքը, Հաղպատը, Մանահինը: Մշակոյթի մեծ կենտրոններ են դառնում երկրի խոշոր ու մարդաշատ քաղաքները, հատկապէս՝ Անին»:<sup>151</sup> Այդ կը նշանակէ, որ այդ դարերուն Նարեկայ վանքը հայ մշակոյթի յայտնի կեդրոն էր Արեւմտեան Հայաստանի մէջ, ուր այսօր, ի հետեւանք Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան, իր համալիրէն ոչինչ մնացած է...:

10-րդ դարուն հայ գրականութիւնը արձանագրեց հսկայ վերելք մը, մեծ նուաճումներէն կարելի է յիշել Սասունցի Դաւիթ կամ Սասնայ Ծոեր դիւցազներգութիւնը, որ կը մարմնաւորէ տասնեակ դարերու ընթացքին հայ ժողովուրդի ազատատենչ պայքարի ոգին: Բանաստեղծական գրականութեան մէջ հսկայ նուաճում էին Գրիգոր Նարեկացիի ինքնատիպ ստեղծագործութիւնները, որոնք կարելոր մասն էին Նարեկայ վանքի դպրոցի բանաստեղծական արուեստի երեք փուլերուն, իր երեք նշանաւոր ներկայացուցիչներու՝ Խոսրով Անձեւացի, Անանիա Նարեկացի եւ Գրիգոր Նարեկացի: Այս դարու նուաճումներէն էին պատմագրութեան մեծ վերելքը իր դէմքերով Յովհաննէս Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Տաթևցի (Ստողիկ) եւ Ուխտանէս վերջինս Նարեկայ վանքի դպրոցի կարեւոր դէմքերէն: Եկեղեցական նուաճումներէն էին Խոսրով Անձեւացիի պատարագի մեկնութեան ընդօրինակութիւնները, որոնք կատարուեցան Սահակ եւ Գրիգոր Նարեկացիներու գրիչով:

Նարեկայ վանքի դպրոցը յատուկ դէր ունեցած է երաժշտական մշակոյթի զարգացման մէջ, «Յատուկ տեղ է գրաւում Բագրատունեաց թագաւորութեան երաժշտական մշակոյթը: Ըստ մատենագրական տուեալների (Արիստակէս Լաստիվերտցի, Մատթէոս Ուռնայեցի)՝ Անինում ծաղկել է ինչպէս ժողովրդա-պրոֆեսիոնալ՝ գուսանական երաժշտութիւնը, այնպէս էլ՝ հոգեւոր երգարուեստը: Այդ շրջանի բարձրագոյն տիպի դպրոցներում (Անի, Մանահին, Նարեկավանք) մեծ տեղ է հատկացուել երգ-երաժշտութեան դաստիարակմանը, քննարկուել են երաժշտութեան տեսութեան եւ գեղագիտութեան հարցեր, աշխատանքներ են տարուել երաժշտաձիսական մատեանների համալրման եւ խմբագրման ուղղութեամբ»:<sup>152</sup>

Նարեկի վանքի դպրոցը գոյատեւեց մինչեւ 1021 թուականի Վասպուրականի խոշոր արտագաղթը, երբ Արծրունեաց հարստութիւնը արձանագրեց իր անկումը: Ճիշդ է դպրոցի կեանքը կարճատեւ եղաւ՝ մէկ դարէ պակաս, սակայն ան եղաւ, «Միտիկ աստուածաբանութեան եւ նրա մէջ ներթափանցած նորալատոնականութեան խոշոր մի կենտրոն, որը նախատիպ հանդիսացաւ եւ կանխորոշեց հայ միջնադարեան բարձրագոյն դպրոցների ձևաւորման եւ զարգացման յետագայ ընթացքը»:<sup>153</sup>

Պէտք է նշել, Նարեկայ վանքի եւ միւս բոլոր վանական դպրոցներու բեղմնաւոր գործունեութեան՝ ուժ տուաւ Բիւզանդիոնի Ռոմանոս Ա. Լակապէնոս կայսրի օրով սկսած հալածանքները Հայ եկեղեցայ հոգեւորականութեան դէմ, ի հետեւանք որուն անոնցմէ շատերը ներգաղթեցին Հայաստան. շատ ճիշդ է ըսուած, ամէն չարիք ունի բարիք...:

151. Թ. Խ. Յակոբեան, Անի Մայրաքաղաք, ԵՊՀ, Երևան, 1988, էջ 128:

152. Հայոց Պատմութիւն, հատոր II Գիրք Երկրորդ, Զանգակ, Երևան 2014, էջ 517:

153. Մատենագիրք Հայոց ՄԲ. Հատոր, Ժ. դար Գրիգոր Նարեկացի, Մեծի Տանն Կիլիկիայ Կաթողիկոսութիւն, Երևան 2011, էջ 11:

150. Կրէժ Վարդանեան, Գրիգոր Նարեկացի եւ Հայրենի Վասպուրական Աշխարհը, էջ 44, քաղուած Սամուէլ Անեցի, էջ 104:

### 30. Նարեկայ Վանքը Խոշոր Կալուածատէր

#### Վանքերէն Մէկը

Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը շատ կարևոր դեր ունեցաւ Հայաստանի հարաւային տարածքներուն մէջ բնակող հայ ժողովուրդի քաղաքական, մշակութային եւ հոգեւորական կեանքի զարգացման գործին: Արծրունեաց թագաւորութիւնը զգալի տնտեսական, քաղաքական եւ մշակութային նուաճում արձանագրեց: Գագիկ Արծրունի հսկայ շինարարական գործունէութիւն կատարեց, իր Աղթամար՝ մայրաքաղաքին մէջ, կառուցեց թագաւորական պալատը, Սուրբ Խաչ եկեղեցին եւ այլ շինութիւններ: Այդ բոլորի շարունակութեան՝ վերելքի պատմաշրջանին է, որ նմանապէս Արծրունի թագաւորներու հովանաւորութեամբ զարգացաւ Նարեկայ վանքը, ուր ստեղծագործեց Գրիգոր Նարեկացին եւ ծնաւ իր հանճարը:

Ինչպէս յիշեցինք Առաջին գլխուն մէջ Նարեկայ վանքը հիմնադրուեցաւ Արծրունեաց հարստութեան պատմաշրջանի առաջին կէտին, ընդհանուր կարծիքի համաձայն Նարեկայ վանքը կառուցուած է 946-950 թուականներուն. ան շարունակեց իր գործունէութիւնը մեծ եռանդով Արծրունեաց հարստութեան երկրորդ եւ վերջին պատմաշրջանին:

Նարեկայ վանքը եղած է մեծ հողատարածքներ ունեցող վանքերէն մէկը: 9-11րդ դարերուն զարգացաւ աւատատիրական հողատիրութիւնը, զարգացաւ նաեւ վանական եւ եկեղեցական հողատիրութիւնը. այդ բոլորին նպաստեց այն իրականութիւնը, որ հոգեւորական դասը ապահարկ էր, «*Հոգեւորականների դասն ապահարկ էր եւ ընդգրկուած էր ազնուական դասի մէջ: Վանքերի ու եկեղեցիների կալուածքներն ընդարձակուում էին թագաւորների ու իշխանների կատարած հողային նուիրատուութիւնների ու գնումների շնորհիւ: Վասպուրականի Գագիկ Արծրունի թագաւորի կինը՝ Մլքէ թագուհին, կառուցել տալով Վարազայ Ս. Սստուածածին եկեղեցին, նրան նուիրաբերում է նաեւ ընդարձակ կալուածներ: Մեծ հողատարածքներ ունէին նաեւ Հաղբատի, Սանահնի, Գան-*

*ձասարի, Օծունի, Աղթամարի, Նարեկայ եւ Մոկաց Ապարանք գիւղերի վանքերը եւ այլն: Նուիրաբերուած գիւղերի հողերի նկատմամբ եկեղեցին ունէր բացարձակ սեփականատիրական իրաւունք, իսկ վանքահայատակ գիւղերի բնակչութեան նկատմամբ միայն հարկահատարման արտօնութիւններ: Վանքապատկան հողերը մշակում էին վանքապատկան շինականները»<sup>154</sup>*

Վանքերու նշանաւոր հայ վարդապետներէն ոմանք կը նկատուէին նաեւ հասարակական գործիչներ, որոնց հետ սերտ համագործակցութիւն կ'ունենային իշխանական տուները, անոնց խորհուրդներէն կ'օգտուէին ընդհանուր ազգը յուզող հարցերուն մէջ:

Յարաբերութիւնները Եկեղեցւոյ եւ Արծրունեաց թագաւորներու միջեւ շատ սերտ էին. Եկեղեցին կը սատարէր Արծրունեաց թագաւորներուն, եւ վերջինս ալ կը հովանաւորէր Եկեղեցին: Այս դրական իրավիճակը մեծ մասամբ նպաստեց Հայ եկեղեցւոյ բարգաւաճման. անոր վանքերու եւ եկեղեցիներու նիւթական հարստութեան, ու հետեւաբար զգալիօրէն զարգացան մշակութային եւ հոգեւորական կեանքը իրենց բոլոր ոլորտներով, ինչպէս եւ գիտութիւնն ու արուեստը, որոնց մենաշնորհը կը գտնուէր վանքերու հոգեւորականութեան ձեռքը: Այսպէս, կարելի է ըսել, թէ հարաւային Հայաստանը Արծրունիներու իշխանութեան ներքեւ արձանագրեց ոսկեդար մը:

### 31. Գրիգոր Նարեկացիի Աճիւնի Փոխադրութիւնը Նարեկայ Վանքէն 1021թ.

Գրիգոր Նարեկացիի կեանքի պատմաշրջանին (951-1003) Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը ապրեցաւ զգալի տկար քաղաքական շրջան մը. 958թ. Դերենիկ Արծրունիին յա-

154. Հայոց Պատմութիւն, Հատոր II, Գիրք Երկրորդ, ՀՀԳԱԱ Պատմ. Ինստ., Զանգակ Երևան, 2014, էջ 83, 84:

ցորոց իր եղբայրը Աբուսահլ<sup>155</sup>–Համագասպ (958-968): Վերջինիս մահեն նոր 968թ., զինք յաջորդեցին իր երեք որդիները միաժամանակ թագաւորելով. Աշոտ-Սահակը ամբողջ Վասպուրականը, Գուրգեն-Խաչիկը Անձեւացեաց գաւառը եւ Սենեքերիմ-Յովհաննէսը Ռշտունիքը. տէս Գծացուցակ թիւ 1: Ընդհանրապէս Արծրունի իշխանները երկանուն էին. մէկը՝ հայկական էր, իսկ միւսը՝ փաղաքշական կամ օտարական: Աբուսահլ–Համագասպին յաջորդող երեք թագաւոր գաւակներու մէջ. Աշոտ-Սահակը իր եղբայրներու նկատմամբ ուներ գերակայութիւն: Երեք եղբայրներուն միաժամանակ թագաւորելը մեծ բացասական ցուցանիշ էր թագաւորութեան հզօրութեան:

Բիւզանդիոնը սաստկացուց իր նուաճողական քաղաքականութիւնը 11-րդ դարու սկիզբին Հայկական լեռնաշխարհի ուղղութեամբ, նպատակ ունենալով անհամերաշխութիւնը եւ իրարու հանդէպ թշնամութիւնը սաստկացնել հայկական թագաւորութիւններու միջեւ. ան մահմեդական իշխանութիւններէն գրաւած Խլաթ, Մանազկերտ, Բերկրի, Արճեշ եւ Արծկէ քաղաքները, որոնց բնակչութեան մեծամասնութիւնը հայեր էին, տուաւ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան. այդ քայլով ան Արծրունիներուն աւելի կապեց իր քաղաքականութեան:

11-րդ դարու սկիզբէն Վասպուրականը սկսաւ ենթարկուիլ արտաքին նոր վտանգի մը, այդ սելջուկներու աւերիչ արշաւանքներն էին: Առաջին արշաւանքը տեղի ունեցաւ 1002թ. եւ Վասպուրականը ենթարկուեցաւ մեծ աւերումներու: Յիշեցնենք, Բ. գլխու 16-րդ բաժինին մէջ անդրադարձանք սելջուկներու ծագման մասին, եւ անոնց կապը թուրանցիներուն եւ թուրքերուն հետ: Նոյն տարին (1002թ.), երբ տեղի ունեցաւ սելջուկներու առաջին արշաւանքը, Ս. Գրիգոր Նարեկացի գրեց իր աղօթամատենանր «Մատենան Ողբերգութեան» (Նարեկ) գլուխ գործոցը:

155. Աբուսահլ անունը արաբական անուն է, եւ առնչուած է դիւրին բառին: Հայաստանը որպէս Աբբասեան խալիֆայութեան ենթակայ երկիր, ենթարկուեցաւ արաբական մշակոյթի ազդեցութեան:

Ի հետեւանք սելջուկներու աւերիչ արշաւանքներուն ԺԱ. դարու սկիզբին, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը դժուար վիճակի մէջ էր: Սելջուկները իրենց արշաւանքներով մահ ու սարսափ սփռեցին ամէն կողմ. հայ ժողովուրդը ստիպուած կը հեռանար երկրէն, կամ կ'ամփոփուէր անառիկ լեռնային շրջաններու մէջ: Արծրունեաց թագաւորութիւնը ի զօրու չէր առանձին դիմագրաւել սելջուկներու արշաւանքներուն:

Բիւզանդիոնը օգտուելով այս առիթէն յաւելեալ ճնշումներու ենթարկեց Արծրունեաց Սենեքերիմ թագաւորին, Վասպուրականը գրաւելու միտումով. Բիւզանդիոնը պղտոր ջուրի մէջ ձուկ կ'որսար...: Վասպուրականի գրաւումը անհրաժեշտ էր Բիւզանդիոնի պայքարին Աբբասեան Խալիֆայութեան հետ. «Վասպուրականի թագաւորութիւնում գիւղատնտեսութիւնը, արհեստագործութիւնը, ինչպէս նաեւ առեւտուրը բաւական զարգացած են եղել, քաղաքները առաջադիմել եւ վերելք են ապրել: XI դարի առաջին քառորդում այդ թագաւորութիւնը ունեցել է աւելի քան 4000 գիւղ, 8 քաղաք, 72 բերդ-ամրոց եւ 115 վանք: Տնտեսական եւ կուլտուրական տեսակէտից զարգացած այդ նահանգը իր վրայ էր գրաւել Բիւզանդական կայսրութեան ուշադրութիւնը, մանաւանդ, որ Վասպուրականին տիրողը կարենոր ստրատեգիական դիրք էր ձեռք բերում Միջագետքի վրայ իշխելու համար»:<sup>156</sup>

Այսպէս, Արծրունեաց թագաւորութիւնը ի վիճակի չէր կրուելու մէկէ աւելի ճակատներու վրայ. սելջուկներու արշաւանքները մէկ կողմէն, բիւզանդացիներու նուաճողական ձգտումները միւս կողմէն, բիւզանդացիներու նուաճողական մեղական ամիրայութիւններու ոչ բարեկամական դիրքը. այս բոլորը արտաքին աշխարհը կը դարձնէին անտանելի ու խեղդամահ կ'ընէին Արծրունեաց թագաւորութիւնը: Իսկ միակ արտաքին օգնութիւնը, որ հաւանական էր, Բագրատունեաց մայր թա-

156. Հ. Գ. Շամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան եւ Ս. Պ. Պողոսեան, Հայ ժողովրդի Պատմութիւն, էջ 455:

գաւորութիւնն էր՝ (Անիի թագաւորութիւնը), որ սակայն այս հանգրուանին ռազմականօրէն տկարացած էր:

Ի վերջոյ, Մենէքերիմ Արծրունին յուսայատած, տեղի տուաւ Բիւզանդիոնի ճնշման եւ համաձայնեցաւ Վասպուրականը յանձնելու Բուզանդիոնին. ու փոխարէնը ստանալ Մեքաստիա քաղաքը իր շրջակայ գաւառներով: Մեր պատմիչները Արծրունեաց թագաւորութեան անկման մասին քանի մը տարիով տարբեր թուականներ կը նշեն. ըստ Մատթէոս Ուռհայեցիի անկումը տեղի ունեցած է 1016 թուականին, իսկ ըստ Սամուէլ Անեցիի 1021թ.:

Համաձայն պատմական աղբիւրներու՝ Մենէքերիմ Արծրունին իր ամբողջ գերդաստանով, Վասպուրականի բոլոր իշխանները, զօրքը եւ մեծ թիւով բնակչութիւն, մօտաւորապէս 80 հազար մարդ (14 հազար տղամարդիկ, բացի կանայք եւ երեխաներ), հեռացան Վասպուրականէն ու հաստատուեցան Մեքաստիոյ նահանգին մէջ: Գաղթողներու թիւը թէև բաւական խոշոր էր, բայց այդ բաղդատելով Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան ընդհանուր թիւին հետ, որ մօտաւորապէս մէկ միլիոնի<sup>157</sup> կը հասներ, փոքր թիւ էր:

Անկասկած այս մեծ գաղթը տեղի չունեցաւ սիրայօժարութեամբ. կարելի է ըսել, որ այդ կամովին աքսոր մըն էր, յիշեալ պատճառներու հետեւանքով: Մենէքերիմ Արծրունիի հոգիի խոր ցաւի կարեւոր արտայայտութիւնն էր, իր կտակը որդիներուն. ան խնդրեց, որ իր մահէն ետք, իր անկենդան մարմինը տեղափոխեն ու թաղեն հայրենի Վասպուրականի մէջ: Ու երբ մահացաւ աքսորի մէջ 1025 թուին հիւանդութեան հետեւանքով, որդիները իր մարմինը փոխադրեցին Վասպուրական, ու թաղեցին Վարազայ վանքին մէջ:

Ինչպէս յիշեցինք Գրիգոր Նարեկացիի վախճանեցաւ 1003թ., եւ մարմինը թաղուեցաւ իր սիրած Նարեկայ վանքին մէջ: Եր վախճանումէն 18 տարի ետք քաղաքական եւ պատմական զարգացումներու հետեւանքով մասունք մը անոր աճիւնէն փոխադրուեցաւ Փոքր Հայք, «Տասնեակ տարիներ ետքը, 1021-ին,

երբ Արծրունեաց Մենէքերիմի հետ Վասպուրականի ժողովուրդէն կարեւոր մաս մը գաղթեց Փոքր-Հայք, չկրնաւ լով բաժնուիլ Սուրբին գերեզմանէն, անոնք իրենց հետ բերին մասունք մը անոր աճիւններէն, հոն Ակնայ քարքարոտներու շտապ Արակայ (Նարեկայ) նորաշէն վանքի մը մէջ հանգչեցնելու համար գայն:

Երկո՛ւքն ալ, ո՛չ Նարեկ եւ ո՛չ ալ Արակ, աւ չ չկան հիմա, աւա՛յ, ջնջուած է իր գերեզմանը, բայց չէ կորսուած իր յիշատակը, վասնզի կը մնան դեռ իր ցեղին սիրտն ու հաւատքը...»<sup>158</sup>

Սուրբը մահացած էր 1003թ. այսինքն Մենէքերիմ Արծրունիի գաղթէն 18 տարի առաջ, եւ իր յիշատակը շատ վեճ էր, որպէս սուրբ ընդունուած էր շատերու կողմէ. Նարեկայ վանքի գաղթող վանականներուն մէջ կային Գրիգոր Նարեկացիին, որպէս սուրբ նկատուող վանականներ, անոնք իրենց հետ առին իրենց սիրելի Սուրբին նշխարներէն, եւ տարին իրենց նոր գաղթած վայրը...: Այդ վայրը շուտով դարձաւ ուխտատեղի եւ անունը աղաւաղուելով կոչուեցաւ «Արեկա» կամ «Արակա» վանք:<sup>159</sup> Ս. Գրիգոր Նարեկացիի մասունքներու փոխադրութեան մասին Մաղաքիա Արքեպս. Օրմանեան յիշած է, «Իսկ մէկտեղ ելլող եկեղեցականներէն եւ ժողովրդականներէն մաս մը այստեղ այնտեղ ալ մնացին, եւ այդ խումբէն կ'ըսուին Ակնի եւ Արաբկիրի հայաբնակութիւններն ալ, եւ Ակնայ Նարեկ վանքն ալ, ուր Ս. Գրիգոր Նարեկացիի ոսկորներէն մասունքներ ալ դրուեցան»:<sup>160</sup>

Խաչատուր Լեւոնեան բողոքելով յիշած է, թէ իր սուրբ ոսկորներուն հանգիստը վրդովուեցաւ, «Նախ կը թաղուի Նարեկայ Վանուց մէջ, քիչ վերջն իր զուխը կը փոխադրուի վերոյիշեալ Նար գիւղը, յետոյ, 1021-ի գաղթին հետ, ըստ աւանդութեան, Նարեկայ Վանուց մի քանի կրօնաւորներուն միջոցաւ իր նշխարներէն մաս մ'ալ դէպ Ակնայ կողմերը կը տարուի եւ հոն Ուխտ

158. Նարեկ, Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացոյ, Արդի Հայերէնի վերածնց թորգոմ Եպիսկոպոս, Անթիլիաս-Լիբանան 1970, էջ 24, 25:

159. Շնորհ Արքեպիսկոպոս Գալուստեան, Հայագրի Սուրբեր, 3-րդ հրատարակութիւն, Գանձասար Աստուածարանական Կենտրոն, Երեւան 1997, էջ 115:

160. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, Ազգայապատմ, Ա. հատոր, Գ. Գիրք, էջ 1198:

157. Վ. Մ. Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը, էջ 144:

Նարեկայ կամ Արակայ անուամբ վանք մը հիմնուելով անոր մէջ կ'ամփոփուի, այսպէս բաժան բաժան ըլլալով անոր սուրբ ոսկրոտին եւ իր գերեզմանական հանգիստը վրդովուելով»<sup>161</sup>

Մենքերիմ Արծրունիի հետ գաղթած վասպուրականցիները ոչ միայն Ս. Գրիգոր Նարեկացիի ոսկորներէն մասունքներ տարին Սեբաստիա, այլ անոնք Վարագայ Ս. Խաչի մասունքը, որպէս սրբութիւն սրբոց իրենց հետ տարին Սեբաստիա<sup>162</sup>: Այս հարցի մասին մանրամասն անդրադարձանք մեր Վարագավանքը Պատմութեան Քառուղիներուն գիրքին մէջ<sup>163</sup>

Ինչպէս գաղթողները Ակն քաղաքի մօտ Արակայ (Նարեկայ) նորաշէն վանքին մէջ հանգչեցուցին Ս. Գրիգոր Նարեկացիի մասունքները, նմանապէս Սեբաստիոյ մէջ անհրաժեշտ էր Վարագայ Ս. Խաչը սպահով եւ վայել վայրի մը մէջ պահել. հոն կառուցեցաւ Սեբաստիոյ Ս. Նշանի վանքը, որուն մէջ պահուեցաւ Վարագայ Սուրբ Նշանը. եւ սակայն Սենքերիմ Արծրունիի մահէն ետք Քրիստոսի Խաչափայտի մասունքը 1025-ին նորէն տարուեցաւ Վասպուրական, եւ պահուեցաւ Ներքին Վարագի եկեղեցիին մէջ<sup>164</sup>

### 32. Նարեկայ Վանքի Գործունէութեան Աշխուժացումը Եւ Հիւսիսային Իրաքի Հայկական Գաղութիւնը

Նարեկայ վանքի գործունէութեան վերելքը կը զուգադիպի հիւսիսային Իրաքի հայկական գաղութի զարգացման, որ կը գտնուէր Աբբասեան խալիֆայութեան հիւսիսային տարածքներու՝ հին Ասորեստանի մէջ, Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան հարաւի հարեւանութեամբ:

161. Խաչատուր Լեւոնեան, Վան-Վասպուրական Աշխարհը, էջ 82, 83:  
162. Մաղաքիա Արքեպոս. Օրմանեան, Ազգապատում, Ա. հատոր, Բ. Գիրք, էջ 740: Կարօ Պետրոսեան, Հայաստանեայց Եկեղեցոյ Տօներ եւ Ազգային Աւանդութիւններ, էջ 279:  
163. Պետրոս Մ. Թովմասեան, Վարագավանքը Պատմութեան Քառուղիներուն, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան 2018, էջ 52, 53:  
164. Նոյնը, էջ 54:

Աբբասեան Ալ-Կադրը (991-1031) խալիֆայի եւ Գագիկ Ա. Բագրատունիի (989-1020) միջեւ զարգացան բարեկամական սերտ յարաբերութիւններ: Այս յարաբերութիւններուն ետեւը քաղաքական փոխադարձ շահերու գոյութեան դրդապատճառներէն զատ, կարելի է տեսնել նաեւ խալիֆայի լաւ տպաւորութիւնը հայոց մասին:

Գագիկ Ա.՝ իր կողմէ աշխատեցաւ լաւ յարաբերութիւններ ունենալ Բաղդադի խալիֆայի հետ, եւ յաջողեցաւ այդ ջանքին մէջ: Արաբ յայտնի պատմաբաններէն Ադիբ ալ-Սայյիդ<sup>165</sup> կը յիշէ, «Գագիկ Ա. ուզեց պահել լաւ յարաբերութիւնները Բաղդադի խալիֆային հետ, ուստի պատուիրակներ ղրկեց խալիֆային մօտ, բարեկամական կապերը պահելու միտումով: Խալիֆան իրեն պատուազգեստ ղրկեց եւ պարգեւեց "Շահնշահ Էրմըն" տիտղոսը»<sup>166</sup>: Ըստ Մարուան ալ-Մուտուարի<sup>167</sup> բարեկամութեան առաջարկը եկաւ Ալ-Կադրը խալիֆային կողմէ, «Երբ արաբ Ալ-Կադրը խալիֆան լսեց այս թագաւորի (Գագիկ Ա.) բարեկարգչական եւ իր երկրի ապահովութիւնը հոգալու գործերը, իրեն կոչեց "Շահնշահ Էրմըն" տիտղոսով»<sup>168</sup>:

Գագիկ Ա-ի լաւ յարաբերութիւններու մասին Աբբասեան խալիֆայութեան հետ կը վկայէ նաեւ՝ Անի քաղաքին մէջ գտնուած արձանը, «Արաբական զգեստ էին կրում նաեւ Անիի թագաւորները: Օրինակ, Գագիկ 1-ի արձանը, որ գտնուել է Անիում, գլխին ունի սպիտակ չալմա, հագին արաբական երկարաւուն խալաթ՝ մէջքին փաթաթան կապած: Արաբական զգեստը հագնում էին միայն արքաները եւ ինչպէս նշուեց, արդիւնք էր այս

165. Ադիբ ալ-Սայյիդ - Մուրիացի արաբ պատմաբան մասնագիտացած արաբ-հայկական (7-14րդ) դարերու պատմական յարաբերութիւններու մէջ:  
166. Ադիբ ալ-Սայյիդ, Էրմինեա ֆի ալ-Թարիխ ալ-Արաբի (Հայաստան Արաբ Պատմութեան Մէջ), Բէրլին 1972, էջ 187:  
167. Մարուան ալ-Մուտուար - Մուրիացի արաբ յայտնի փաստափան-դատար, հեղինակն է լայնածաւալ արաբերէն լեզուով աշխատութեան մը՝ Հայերը Պատմութեան Ընդմէջէն խորագրով:  
168. Մարուան ալ-Մուտուար, Ալ-Արմն Աբր ալ-Թարիխ, (Հայերը Պատմութեան Ընդմէջէն), Դար ալ-Հանաթ, Բէրլին, 1982, էջ 218:

իրազմութեան, որ Բագրատունի կամ Արծրունի թագաւորները ճանաչուած էին արաբների կողմից, նրանցից էին թագ ստացել»<sup>169</sup> Գագիկ Ա-ի արաբական զգեստը՝ ցուցանիշ էր արաբական մշակոյթի մեծ ազդեցութեանը այդ պատմաշրջանին:

Շատ հաւանական է, որ Ալ-Կադրը խալիֆայի եւ Գագիկ Ա-ի բարեկամական սերտ յարաբերութիւններու յետեւ կանգնած էր այն իրականութիւնը, որ Ալ-Կադրը հայասեր դարձած էր ի շնորհիւ իր հայ կնոջ, որմէ ծնած իր որդին եղաւ յաջորդ խալիֆան եւ կոչուեցաւ Ալ-Կարմ (1031-1075)<sup>170</sup>: Այս առնչութեամբ մեջբերենք հետեւեալը, «Եթէ այքէ անցնենք Աբբասեան խալիֆաներու անունները, որոնք հայ մայրերէ ծնած են, պիտի գտնենք, որ կան նուագագոյնը երկու խալիֆաներ, որոնց մայրերը հայեր են՝ ըստ արաբ պատմաբաններու: Անոնք են ալ-Կարմ բի-էմր Ալլահ, որ ալ-Կադրը բի-Ալլահ խալիֆայի որդին էր, որուն իշխանութիւնը տեւեց քառասուններէք տարի: Եւ երկրորդը ալ-Մուկթադի բի-Ալլահ խալիֆան»<sup>171</sup>:

Գագիկ Ա. քաջալերեց վաճառականութիւնը, որու հետեւանքով քաղաքները զարգացան ու դարձան կարեւոր վաճառականական կեդրոններ: Հայաստանի վրայով կ'անցնէին վաճառականական կարաւանները, որոնք Արաբեայէն, Պարսկաստանէն, Հնդկաստանէն եւ հեռաւոր Չինաստանէն եկած ապրանքները կը տեղափոխէին Արեւմուտք: Ի հետեւանք այդ վաճառականութեան, Հայաստան հարստացաւ. Ժագ Դը Մորզան կը բացատրէ, «Գագիկ Ա. օգտուելով խաղաղութեան դարագլուխէ մը եւ նոյնինքն իր թագաւորութեան փոքրութեամբ զրկուած կարեւոր ուժէ, իր հպատակներու գործունէութիւնը կ'նուղէ դէպի վաճառականութիւն: Հայաստանը միջնորդ կը լինի Արեւելքի եւ Միջերկրականի երկիրներու միջեւ: Հարստութիւնը կուգայ եւ կը վարձատրէ այս իշխանին ճիգերը, որովհետեւ կայսրու-

թեան նահանգներու եւ արաբական երկիրներու միջեւ ապրանքներու փոխանակութիւնը Հայերուն կուտայ ահագին շահ»<sup>172</sup>:

Պատմական այս հանգրուանին Իրաքի հիւսիսային շրջաններու մէջ գոյութիւն ունեցած է հայկական գաղութ մը, որուն ներկայութեան հետեւանքով կարիքը զգացուեցաւ հիմնել առանձին հայկական եկեղեցական թեմ: Այս հարցի մասին մեջբերենք Յակոբ Աթիկեանէն, «Շ. Դարու վերջերը Իրաքի հիւսիսային շրջանները այնքան հայ բնակչութիւն կեդրոնացած էր, որ անհրաժեշտ եղած է առանձին թեմ ստեղծել: Այդ թեմը ենթարկուած էր Աղթամարի կաթողիկոսութեան: Թեմի սահմանը կը հասնէր մինչեւ Մուսուլ»<sup>173</sup>:

Ի հարկէ, Իրաքի հիւսիսային շրջաններուն մէջ հայութեան բազմանալը այս պատմահանգրուանին մեծ մասամբ արդիւնք էր Հայաստանի եւ Աբբասեան խալիֆայութեան միջեւ տիրող լաւ յարաբերութիւններուն եւ զարգացած վաճառականական կապերուն: Յիշեալ մեջբերման մէջ յիշուած է, որ այդ թեմը ենթարկուած էր Աղթամարի կաթողիկոսութեան, ինչ որ պատմականօրէն ճիշդ չէ, որովհետեւ Աղթամարի հայկական կաթողիկոսական աթոռը հիմնուեցաւ շատ աւելի ուշ, 1113թ.:

Մեր կարծիքով Նարեկայ վանքի եւ հարաւային Հայաստանի մէջ հիմնուած եւ գործող վանքերը իրենց գործունէութեամբ աշխուժացան իրենց հարաւի հարեան՝ հիւսիսային Իրաքի հայկական գաղութի գոյութեամբ եւ զարգացմամբ:

Իրաքի մէջ հայկական գաղութ մը գոյութիւն ունեցած է Աբբասեան խալիֆայութեան հիմնադրութենէն 750թ. մինչեւ խալիֆայութեան անկումը 1258թ.: Աշխարհագրականօրէն Նարեկայ վանքը հարաւային Հայաստանի մէջ ամենամօտիկ կարեւոր վանքն էր Իրաքի հայկական գաղութին:

169. Վ. Մ. Վարդանեան, Վասպուրականի Արծրունեաց Թագաւորութիւնը, էջ 158:

170. Պետրոս Մ. Թովմասեան, Աբբասեան Խալիֆայութեան Վերջին Պատմաշրջանը եւ Հայութիւնը, ՀՀ ԳԱԱ, Երեւան 2016, էջ 25:

171. Ադիբ ալ-Սայիդ, նոյնը էջ 270:

172. Ժագ Դը Մորզան, Հայ Ժողովուրդի Պատմութիւն, Հայրենիք, Պաթերն, 1947, էջ 193:

173. Յակոբ Աթիկեան, Համառօտ Պատմութիւն Հայ Գաղթաւայրերու, Անթիլիաս-Լիբանան, 1985, էջ 69, 70:

«Ու նծարներից մեկի մեջ դնեմ  
լեռն Արարատեան՝  
Դարձեալ չի կարող  
հաւասարուել  
նա իմ մեղքերի հետ:»  
Գ. Նարեկացի

## Դ. ԳԼՈՒԽ

### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

#### 33. Նարեկայ Վանքեն Հասած Առաջին Ձեռագիրը 1069թ.

Նարեկայ վանքին մեզի հասած է առաջին ձեռագիրը 1069թ.,  
*«Նարեկավանքից մեզ հասած առաջին ձեռագիրը 1069-ին գրուած մի Աւետարան է, որը Յովհաննէս գրիչն արտագրել է Անանիայից Գրիգոր Նարեկացուն անցած մի հին ձեռագրից, որը, ինչպէս նշուած է հեղինակի յիշատակարանում, գրել է Մեսրոպ Մաշտոցը: Չնայած հետագայում էլ շարունակուում էր ձեռագրերի ընդօրինակումը, սակայն Նարեկավանքի դպրոցը այլևս չի հասնում X-XI դդ. իր մակարդակին»:*<sup>174</sup>

Նարեկայ վանքին մեջ գրուած այս ձեռագիրը, ծնունդն էր մեր պատմութեան շատ ալեկոծուած պատմաշրջանի մը: Բագրատունեաց եւ Արծրունեաց հարստութիւնները դարձած էին անցեալ. տարածքաշրջանը կ'ենթարկուէր սելջուկներու աւերիչ արշաւանքներուն...:

Հայաստանի վրայ սելջուկ թուրքերու արշաւանքները կը շարունակուէին. այդ արշաւանքները կարելի է բաժնել երկու մասի: Արշաւանքներ, որոնք տեղի ունեցան 1016-1063 թուականներուն, որոնք յատկանշական էին իրենց աւերով եւ բարգաւաճ քաղաքներու ամայացմամբ. եւ 1064-1092 թուականներու արշաւանքները, երբ թրքական ցեղերը վերջնականապէս նուաճեցին եւ բնակութիւն հաստատեցին իրենց գրաւած հողատարածքներուն մէջ: Այս երկրորդ մասի արշաւանքները շատ աւելի ցաւալի դարձան հայ ժողովուր-

դին, իր պատմական սեփական հողերուն վրայ գոյատեւելու եւ գարգանալու համար, ահա այս պատմաշրջանին էր, որ գրուած է այդ ձեռագիր Աւետարանը:

Սելջուկներու ղեկավար Տուղրիլ բէկի յաջորդ՝ Ալի-Ասլան (1063-1072) 1064թ., գրաւեց Բագրատունիներու հին մայրաքաղաքը Անին եւ կողոպտելէ ետք աւերակներու վերածեց. ապա 1071թ. իրագործեց սելջուկներու պատմական մեծ յաղթանակը բիւզանդացիներու վրայ Մանազկերտի ճակատամարտով, որ դարձաւ Հայկական Լեռնաշխարհի եւ Փոքր Ասիոյ ժողովուրդներու համար բացասական ճակատագրական անկիւնադարձ մը:

Այսպիսով, 1069թ. ձեռագիրը կու գար փաստելու, որ ի հեճուկս քաղաքական բացասական վիճակին, սելջուկներու արշաւանքներուն եւ անոնց հաստատմանը Հայաստանի մէջ, Նարեկայ վանքը կը շարունակէր իր գործունէութիւնը...:

#### 34. Աղթամարի Կաթողիկոսութեան Հիմնադրութիւնը Եւ Նարեկայ Վանքը

Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան անկումէն ետք 1021թ., Վանայ լիճէն արեւելք եւ հարաւ՝ տարածքներուն մէջ իշխեց Խեղենիկ Արծրունին, իր վարչական կեդրոնները դարձնելով Ամյուկ անառիկ ամրոցը Թիմար գաւառին մէջ, եւ Աղթամարի կղզին: Վասպուրականի այս փոքրիկ Խեղենիկեան Արծրունիներու իշխանութիւնը իր ինքնութիւնը պահեց ենթարկուելով սելջուկներուն. ու երբ անոնք տկարացան Թոռնիկի որդի Արղմսեհը, օգտուեցաւ առիթէն եւ անկախացաւ:

Ամրացնելու համար իր իշխանութիւնը Արղմսեհ 1113թ., իր որդիին՝ Դաւիթ եպիսկոպոսին կաթողիկոս օժել տուաւ Արծրունեաց թագաւորութեան հիմնադիր Գագիկ Արծրունիի (915-921) տարիներուն կառուցած Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ: Աղթամարի այթո-

174. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 8, էջ 203, Երեւան, 1982:

ոին առաջին կաթողիկոսը արդարացուց այս քայլը, «պատճառաբանելով թէ, պթոռ է սա թագաւորացն Արծրունեաց...»<sup>175</sup>

Կիլիկիոյ մէջ կաթողիկոս ընտրուեցաւ Գրիգոր Պահլավունին, որ իր երիտասարդ տարիքին էր...: Աղթամարի մէջ նոր զարգացման դրդապատճառներու մասին մէջբերենք հետեւեալը, «Գրիգոր Գ. կաթողիկոսի ընտրութեան դէմ բողոքում է Աղթամարի Դաւիթ եպիսկոպոսը, որ իրեն էր համարում արժանի կաթողիկոսութեան, պատճառաբանելով նորընտիր կաթողիկոսի երիտասարդութիւնը եւ Աթոռի Հայաստանից դուրս լինելը:

Դաւիթ հինգ եպիսկոպոսների բողոքացած մի ժողով է գումարում, որը պատճառաբանելով, թէ Վասպուրականի Չորսականքը ժամանակին եղել է կաթողիկոսանիստ, թէ Աղթամարում է գտնուում Ս. Գրիգոր Լուսաւորչի պատարագի սեղանը, գաւազանը եւ այլ սրբութիւններ, օրինաւոր է համարում Դաւիթի ցանկութիւնը եւ նրան ձեռնադրում կաթողիկոս Բուն Հայաստանի համար»<sup>176</sup>

Այս նոր զարգացումներուն ի պատասխան, Կիլիկիոյ կաթողիկոս՝ Գրիգոր Պահլավունին՝ հրաւիրեց յատուկ ժողովի, որուն մասնակցեցան մօտաւորապէս 2500 հոգեւորականներ, որոնք նգովեցին Դաւիթ եպիսկոպոս Թոռնիկեանի այդ անջատողական քայլը. սակայն Աղթամարի մէջ հիմնուած նոր կաթողիկոսութիւնը մնաց եւ շարունակեց իր գոյութիւնը մօտաւորապէս ութ դար մինչեւ 1895թ.:

Աբդլմսեհ Արծրունին Աղթամարի կաթողիկոսական աթոռը հիմնելէ զատ, զօրացուց իր իշխանութիւնը եւ կատարեց շինարարական կարեւոր աշխատանքներ: Իր մահէն յետոյ (1121թ.) մինչեւ 13-րդ դարու սկիզբը իշխեցին իր ժառանգները՝ Ստեփանոս-Ալուզը եւ Խեղենեկ Բ-ը:

Ի հարկէ Աղթամարի կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը Աղթամար կղզիին մէջ, որ աշխարհագրականօրէն շատ մօտիկ էր Նարեկայ վանքին ունեցաւ իր զգալի ազդեցութիւնը վանքի յետագայ զարգացման վրայ: Նարեկայ վանքը իր գոյութեան ընթացքին մեծ մասով ենթարկուեցաւ Աղթամարի Աթոռին, թէեւ եղան պատմաշրջաններ, երբ ան ենթարկուեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Աղթամարի կաթողիկոսութիւնը նպաստեց հարաւային Հայաստանի եկեղեցական կեանքի զարգացման եւ դարձաւ կարեւոր գործօն մը հարաւային Հայաստանի ներքին ինքնավարութեան պահպանման: Կարելի է ըսել, որ ան դրական դեր ունեցաւ մեր պատմութեան մէջ իր հիմնադրութենէն մինչեւ իր գոյութեան վերջին դարը (19-րդ), երբ ի հետեւանք Օսմանեան հայաջինջ քաղաքականութեան բացասական դեր ունեցաւ, եւ ի վերջոյ 1895թ. մարեցաւ, որովհետեւ այլեւս անհնար դարձաւ իր գոյութեան պահպանումը:

### 35. Գրիգոր Նարեկացիի Սրբացումը

Մեր պատմութեան մէջ, մեծ առնչութիւն կայ Վասպուրական ապրող եւ ստեղծագործող Գրիգոր Նարեկացիի, եւ մէկ ու կէս դար ետք հեռաւոր Կիլիկիոյ մէջ ստեղծագործող Ներսէս Լամբրոնացիի միջեւ:

Ներսէս Լամբրոնացին՝ մեծ դեր կատարեց Գրիգոր Նարեկացիի սրբացման եւ անոր ստեղծագործութիւններու զարգացման եւ տարածման, եւ անոնց մոռացութենէ վրկման մէջ: Ան հեղինակած է Գրիգոր Նարեկացիի ձեռագիրի մէջ զետեղուած Վարքը, որ կը սրբացնէ անոր, արժեւորելով իր բոլոր ստեղծագործութիւնները:

Այսպէս, Ս. Գրիգոր Նարեկացիի առաջին վարքագիրը կը հանդիսանայ Ներսէս Լամբրոնացին (1153-1198)՝ Կիլիկեան Հայաստանի յայտնի մատենագիր, փիլիսոփայ, պետական եւ եկեղեցական գործիչ, որ պաշտօնավարած է Լեւոն Բ. թագաւորի արքունիքին մէջ, որպէս աստենադպիր, պալատական խորհրդա-

175. Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Գ զիրք, էջ 1351:

176. Եզնիկ Քնկ. Պետրոսեան, Հայ Եկեղեցու Պատմութիւն Մաս Ա. , Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1990թ. էջ 86

տու, թարգմանիչ եւ մասնակցած է պետութեան արտաքին գործերուն. ան յայտնի է իր հաստատ մերժողական կեցուածքով այն բոլոր առաջարկներուն, որոնք նպատակ ունէին Հայոց եկեղեցւոյ միացումը յունական կամ լատինական եկեղեցիներուն: Ան յիշած է, որ Գ. Նարեկացին մահացած է երիտասարդ հասակին, եւ իր մարմինը ամփոփուած է Նարեկայ վանքին մէջ, Ս. Սանդուխտ եկեղեցւոյ մօտ:

Ներսէս Լամբրոնացիի պատուերով, ընդօրինակաւուած է Գրիգոր Նարեկացիի «Մատենանոց գործերուն» հնագոյն ձեռագիրը (1173թ.) Գրիգոր Մլիճեցիի (Սկեւոացի) կողմէ, որ կը ներկայանար Կիլիկեան Հայաստանի մանրանկարչութեան դպրոցի հսկայ դէմքը: Այս բացառիկ ձեռագիր է, որ կը ներկայանայ հայ միջնադարեան գրչարուեստի եւ մանրանկարչութեան գլուխ-գործոցներէն մէկը: Յիշեալ մագաղաթէ ձեռագիրը կը գտնուի Հ.Հ. Ազգային Մատենադարանին մէջ (Ձեռագիր № 1568): Ներսէս Լամբրոնացիի հոգեւոր քաջագործութիւնը առնչուած է Գրիգոր Նարեկացիի հետ, «Ներսէս Լամբրոնացու հոգեւոր սխրանքի խորհուրդը սրանում է. նա կորստից փրկեց եւ սերունդներին հասցրեց հայոց միջնադարի թերեւս ամենաթանկ գանձը՝ Գրիգոր Նարեկացու «Մատենանոց գործերուն» երկը, Գրիգոր Նարեկացու՝ իր իսկ հեղինակած վարքով եւ նշուած մեկնութեամբ սրբացնելով նրան ու սկիզբ դնելով նարեկացիագիտութեանը»:<sup>177</sup>

Այս գլուխ գործոց ձեռագրին մէջ, մեծ վարպետութեամբ խաչքարերու զարդաքանդակներով զրուած են գլխատառերը. ինչպէս եւ ձեռագիրը հարուստ է Գրիգոր Նարեկացիի դիմանկարներով, որոնք կը ներկայացնեն անոր միատիկ անձնաւորութեան կարեւոր տարբեր կողմերը, որպէս փիլիսոփայ, բանաստեղծ, աղօթող եւ ճգնաւոր:

177. Մատենագիրք Հայոց ԺԲ. Հատոր, Ժ. դար Գրիգոր Նարեկացի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Երեւան, 2011, էջ 19:

### 36. Նարեկայ Վանքը Մոնղոլական Արշաւանքներուն

ԺԲ. եւ ԺԳ. դարերուն, խիստ լռութիւնը տիրական է Նարեկայ վանքի գործունէութեան պատմութեան վրայ:

ԺԳ. դարը եղաւ համաշխարհային նոր գերուժի յայտնութեան շրջան, հեռաւոր արեւելքին մէջ մոնղոլական միացեալ պետութեան մը հիմնադրութիւնը: Մոնղոլները կը բնակէին Սիբիրի եւ Չինաստանի միջեւ գտնուող տարածքներուն մէջ: 1206թ., անոնք համախմբուեցան իրենց ցեղապետներէն Թեմուչինի ղեկավարութեան ներքեւ, որուն կոչեցին Չինգիզխան. այսինքն Մեծ Խան:

Միացեալ մոնղոլական պետութիւնը սկսաւ իր նուաճողական արշաւանքները դէպի արեւմուտք, ու յաջողեցաւ նուաճել 1219-1220 թուականներուն ամբողջ Միջին Ասիան եւ Պարսկաստանի հիւսիսային մասը: Չինգիզխան 1220թ. գրաւեց Խուարզմիներու մայրաքաղաքը եւ վերջ տուաւ անոնց պետութեանը: Խուարզմի թագաժառանգ Ջալալեդդինը հեռացաւ երկրէն դէպի Հնդկաստան. ան 1225թ., վերադարձաւ Պարսկաստան եւ նոր բանակ կազմեց պատերազմելու մոնղոլներու դէմ, որոնք որոշեցին վերջնականապէս ջախջախել Ջալալեդդինին:

Շուտով մոնղոլական ուժերը յարձակեցան Հայաստանի վրայ, «Մոնղոլական զօրքերը, որոնք յետապնդում էին Ջալալեդդինին, 1231-1232թ. ասպատակեցին Հայաստանի շատ շրջաններ: Նրանք կողոպտուի եւ աւերածութեան ենթարկեցին Վասպուրականի, Ամիդի, Արզնի եւ Մայաֆարկիների շրջանները, կողոպտեցին Վարազայ վանքը, գրաւեցին Բերկրի ու Արճեշ քաղաքները, սրի քաշեցին նրանց բնակչութեանը եւ շարժուեցին դէպի Հայաստանի հիւսիս-արեւելեան շրջանները»:<sup>178</sup> Շատ հաւանական է, որ Նարեկայ վանքն ալ ենթարկուեցաւ կողոպտուի եւ աւերածութեան, թէեւ այդ ուղղութեամբ որեւէ յիշատակութեան չհանդիպեցանք մեր պրպատումներուն մէջ, բայց տրամաբանութեամբ այդ շատ հաւանական է, մանաւանդ, որ այդ

178. Հ. Գ. Ժամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Ա. Պ. Պօղոսեան, Հայ Ժողովրդի Պատմութիւն, նոյնը, էջ 582:

դարևն Նարեկայ վանքի պատմության մասին խիստ լռությամբ կայ:

Մոնղոլները, որոնք ԺԳ դարուն ներխուժեցին Միջին Արևելքը եւ Իսլամացած Աշխարհը, իսլամացած չէին. ապա անոնք վստահաբար պիտի չդիմէին Իսլամության բարախող սիրտը՝ Բաղդադի Խալիֆայութիւնը կործանելու, այլ հակառակը պիտի փորձէին զայն առնել իրենց հսկողութեան ներքեւ եւ օգտուիլ Խալիֆայութեան կրօնական աթոռի հեղինակութենէն, ու անոր ներկայացուցած բարոյական ուժէն, ինչպէս ըրին թուրք սելջուկները, եւ աւելի ուշ թուրք օսմանցիները:

Շատ աւելի ուշ, մոնղոլները Ղազան խանի (1295-1304) օրով ընդունեցին մահմեդական կրօնը. հետեւաբար փոխուեցաւ իրենց յարաբերական հանդուրժողական քաղաքականութիւնը հայոց եւ ընդհանրապէս քրիստոնէաններու նկատմամբ:

Նարեկայ վանքը ինչպէս եւ ամբողջ Վասպուրականը եղած է մոնղոլական պետութեան գերիշխանութեան ներքեւ 1231-1411 թուականներուն. տես Գծացուցակ թիւ 3:

### 37. Նարեկայ Վանքը Կարա-Կոյունլուներու Պատմաշրջանին

Լանկթեմուր վերահաստատեց Չինգիզխանի հիմնած մոնղոլական կայսրութիւնը, գրաւելով Աֆղանստանը, Իրանը, Հայաստանն ու Միջագետքը: Ան իր գործադրած չարիքներով գերազանցեց իր հեռաւոր ազգական Չինգիզխանին. Թումա Թավրիզեցի պատմիչը անոր անունը թարգմանեց «դա մուր», «Որտեղ հասնում է՝ մրի նման սեւացնում է, ոմանց կողոպտելով, ոմանց տանջելով, ոմանց սպաննելով, ոմանց գերելով, հորը որդուց եւ որդուն հորից բաժանելով»:<sup>179</sup>

Լանկթեմուրի ստեղծած հսկայ կայսրութիւնը իր մահէն ետք շատ արագ քայքայուեցաւ: Ան իր գրաւած երկիրներու կա-

ռավարումը յանձնած էր իր որդիներուն եւ թոռներուն, որոնք իր մահէն ետք 1405-1409 կատաղի պայքար սկսան իշխանութեան համար, հիմնականօրէն իր որդի Շահռուխի եւ իր թոռնիկ Խալիլի միջեւ:

Այդ նոր իրավիճակէն օգտուեցան թուրքմէն թափառաշրջիկ Կարա-Կոյունլիները (սեւ խոյաւոր), եւ Աղ-Կոյունլիները (ճերմակ խոյաւոր) ցեղախումբերը, որոնք 14-րդ դարու վերջերը գրաւած էին Հայաստանի մեծ մասը. «*Դեռեւս XIV դ. վերջերին կարա-կյունլիները հաստատուեցին Վանայ լճի շրջակայքում Վասպուրականում, Տուրուբերանում եւ այլուր. իսկ Աղ-Կոյունլիները՝ Մոկսի ու Աղձնիքի նահանգներում եւ Ծովքի արեւելեան գաւառներում: 1378թ. Կարա-կյունլիների ցեղապետներ Ղարա-Մահմադը եւ սրա որդի Ղարա-Յուսուֆը հիմնեցին իրենց իշխանութիւնը Տարօնի, Մասունի եւ Քաջբերունքի շրջանում, իսկ աղ-կոյունլուները Օսմանի գլխաւորութեամբ՝ Հայաստանի հարաւային մասերում, կենտրոն դարձնելով Դիարբեքի կամ Ամիդ քաղաքը»:<sup>180</sup>*

Ղարա-Յուսուֆ յաջողեցաւ Կարա-կոյունլուներու եւ Քիւրտիստանի ու Հայաստանի քիւրտ ամիրաներու ուժերը միացնել եւ կազմակերպել հսկայ բանակ մը, եւ սկսաւ նուաճել Երզնկայի եւ Վանայ լիճի շրջանները: Ղարա-Յուսուֆի այս արշաւանքներու ընթացքին այրուեցան եւ աւերութիւններու ենթարկուեցան բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ. Վարազավանքը, որպէս կարեւոր հայկական կեդրոն ենթարկուեցաւ նոյն ճակատագրին: Ղարա-Յուսուֆ 1411թ. գրաւեց Բաղդադը, կործանեց Ջելալիդյաններու պետութիւնը. եւ հիմնեց ընդարձակ պետութիւն, որ կ'ընդգրկէր Իրաքը, Ասորպատականը, Քիւրտստանն ու Հայաստանի մեծագոյն մասը:

Նարեկայ վանքը ինչպէս եւ ամբողջ Վասպուրականը եղած է Կարա-Կոյունլուներու պետութեան գրաւած տարածքներուն մէջ 1411-1471 թուականներուն. տես Գծացուցակ թիւ 3:

179. Գ. Ե. Կիրակոսեան, Հայաստանը Լանկ-Թումուրի Եւ Թուրքմէն Յեղերի Արշաւանքների Շրջանում, ՀՀ ԳԱԱ, Գիտութիւն, Երևան 1997, էջ 71:

180. Հ. Գ. Մամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Ս. Պ. Պողոսեան, Հայ ժողովրդի Պատմութիւն, էջ 596:

Անհրաժեշտ է այստեղ յիշել, որ Կարա-Կոյունլուներու իշխանության պատմաշրջանը (1411-1471 թուականներ), բաղդատմամբ յրեն նախորդած Հուլաղեաններու Պետության պատմաշրջանին (1231-1411 թուականներ) առաջին բարեկեցիկ եղած է հայ ժողովուրդի համար եւ հետեւաբար 15-րդ դարին աշխուժութիւն կը նկատուի Նարեկայ վանքի գործունէութեան մէջ. ուր կը սկսուին գրուիլ Աւետարաններ, «Այսպիսի անուանի անձեր ազգին տուող վանք մը դարերով լռութեան կը մատնուի: Ով գիտէ ինչպիսի ուժեղ հարուածի տակ: Բայց 1415ին կը գրուի Աւետարան մը՝ «յաստուածաբնակ գեաղս, ուր հանգուցեալ է աստուածընկալ նշխարքս սրբոյն Գրիգորի, որ կոչի Նարեկացի ընդ հովանեաւ սուրբ տաճարացս Լուսոյ մար Աստուածածնի... եւ Մանդիտոյ կուսի»:<sup>181</sup>

Երկու տարի յետոյ, 1417ին, Քարոզագիրք մը կը գրուի՝ «Գրեցաւ ի վանս Նարեկայ ընդ հովանեաւ սրբոյն Վարդանայ զօրավարին»:<sup>182</sup>

Աւետարաններու գրութիւնները կը շարունակուին Նարեկայ վանքի մէջ յաջորդ տարիներուն. 1419ին կը գրուի ուրիշ Աւետարան մը, ապա յաջորդ տարին Իգիտ կրօնաւոր կը գրէ ուրիշ Աւետարան մը, «Օիրուն ծաղկողի դպրոցին պատկանող մանրանկարիչների մէջ ամենից ինքնատիպն ու շնորհալին, թերեւս, Մատենադարանի N 4826 ձեռագիրի մանրանկարների հեղինակն է (այդ հեղինակից Մաշտոցի անուան Մատենադարանում ուրիշ աշխատանք յայտնի չէ): Յիշեալ աւետարանը (մեր ցանկում՝ XXI) ընդօրինակուել է 1420 թ. Նարեկ գիւղում:

«Գրեցաւ սա ի գեաղս, որ կոչի Նարեկ, ձեռամբ սուտանուն կրօնաւորի Իգիտի, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցացս՝ Յարութեանս, Աստուածածնիս, Առաքելոյս եւ սուրբ Գրիգորիս, եւ առ գերեզմանի տիեզերալուր Գրիգոր վարդապետի Նարեկացոյ, ի թուականութեանս Հայոց ՊԿԹ (1420)...»:<sup>183</sup>

181. Համագասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի Վանքերը, Ա. մաս, էջ 196. քաղուած Բարխուդարեան, Աղուանից երկիր եւ դրացիներ, Թիֆլիս 1893, էջ 247:

182. Համագասպ Ոսկեան, էջ 197:

183. Յ. Յակոբեան, Վասպուրականի Մանրանկարչութիւնը, Գիրք Բ., ՀՄՄՀ ԳԱ հրատարակչ. Երեւան 1982, Մատենադարանի N 4826 ձեռագիր:

Ապա՝ կրկին լռութիւն կը տիրէ մէկ դարէ առաջի Նարեկայ վանքի գործունէութեան մասին:

Եթէ Նարեկայ վանքի պատմութիւնը լռութեան մէջ էր, ապա այդ վանքի պատմական եւ յանրամարտական պտուղը կը շարունակէր իր գործունէութիւնը. այսպէս Գրիգոր Օերենց (վկայաւոր, Բզնունեցի) (1349-1425թ.), յայտնի մատենագիր, մանկավարժ, բանաստեղծ, երաժիշտ եւ հասարակական գործիչ, որուն խմբագրած Հայամալուրքը<sup>184</sup>, զգալիօրէն կը տարբերի նախորդ խմբագրութիւններէն: Գրիգոր Օերենց այսպէս կը բնութագրէ Գրիգոր Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան»ը.

«Մա միջնորդի ոչ կարօտի,

Եւ ոչ այլոց բանեխօսի.

Մա գաստուծոյ ոտիցն ունի,

Եւ համարձակ գնա խօսի...»:

Այսինքն, Մատենան անմիջական կապ է Աստծու հետ, որով շրջանցում են բոլոր միջնորդները (հոգեւորական գործիչներ) եւ բարեխօսները (երկնային սրբեր)»:<sup>185</sup>

Կարա-Կոյունլուներու գերիշխանութեան տարիներուն, տեղի ունեցած են պատմական մեծ արժէք ունեցող երկու դէպքեր. առաջինը 1441թ., Հայոց Հայրապետական Աթոռի հաստատումը Ս. Էջմիածնի մէջ, եւ երկրորդը 1465թ., Հայկական թագաւորութեան վերականգման փորձը Վասպուրականի Աղթամար կղզին մէջ. ինչպէս պիտի անդրադառնանք յաջորդ երկու բաժիններուն մէջ:

### 38. Նարեկայ Վանքը Եւ 1441թ. Հայոց Հայրապետական Աթոռի Հաստատումը Ս. Էջմիածնի Մէջ

Կիլիկիոյ մէջ հիմնուած Հայկական թագաւորութեան անկումէն ետք 1375թ., եւ անոր յաջորդ տասնեակ տարիներուն բազմա-

184. Հայամալուրք (Յայամալուրք), այս անունը ծագած է գրաբարեան «Յայամ աւուր»՝ «այս օրը» կը խօսի սուրբերու պատմութեան, կեանքի, վարքի եւ նահատակութեան մասին:

185. Հայ ժողովրդի Պատմութիւն, III հատոր, Երեւան 1976, էջ 358:

հազար հայութեան հեռացումը Կիլիկիայէն աւելի տկարացուցին եւ Հայ ժողովուրդի մեծամասնութենէն մեկուսացուցին Կիլիկիոյ մէջ հաստատուած Մայր Աթոռը: Այդ բոլորը պատճառ եղան, որ 1440թ. Հայ եկեղեցւոյ կարեւոր դէմքերը մտածեն Մայր Աթոռը Կիլիկիայէն տեղափոխեն Հայաստան. սակայն անոնք հանդիպեցան Կիլիկիոյ Գրիգոր կաթողիկոսի մերժման:

Դէպքերը զարգացան եւ 1441թ. Ազգային-հոգեւորական ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, ապա փոխադրուեցաւ Ս. Էջմիածին: Պատուիրակներու թիւը համաձայն թովմա Մեծոփեցիին, 300էն աւելի էր, որոնց մէջ կային նաեւ աշխարհիկ դէմքեր: Ժողովականները որոշեցին այլեւս չճանչնալ Միսի կաթողիկոսը, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, եւ նոր կաթողիկոս ընտրեցին Կիրակոս Վիրապեցիին:

Պատմական այս զարգացումի նպատակներէն մէկն էր Հայ ժողովուրդին հեռու պահել Արեւմտեան երկիրներու եւ Հռոմի պապական ոտնձգութիւններէն, նաեւ Հայաստանը տիրացած Արեւելեան մահմեդական իշխանութիւններուն հաստատել, թէ հայ ժողովուրդը կ'ուզէ պահպանել իր ինքնութիւնը առանց օտարներու եւ կամ քրիստոնէական պետութիւններու միջամըտութեան: Ու վերջապէս դարեր ետք, Կաթողիկոսական Մայր Աթոռը վերահաստատուեցաւ հայոց նուիրական հողին վրայ՝ Արարատեան դաշտի մէջ:

Քաղաքական խորք ունեցող այս շարժման մէջ Աղթամարի կաթողիկոսական աթոռը եւ տասնեակներով վանքեր եւ միաբանութիւններ, երկրորդեցին Մայր Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնի մէջ:

Թովմա Մեծոփեցիին կը թուէ ժողովին մասնակցողներէն 31 անուններ, նաեւ, անոնք որոնք ուխտերէն կամ վանքերէն եկած էին: Այդ անուններուն մէջ Վարազավանքէն յիշուած են «Չաքարիէ վարդապետ Վարազայ մայրաքաղաք վանորէիցն»<sup>186</sup>.

186. Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, Երեւան, 1999, աշխատ. Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 219:

կը յիշէ նաեւ 20 այլ անուններ, որոնք նամակներ կամ համաձայնութեան թուղթեր ուղարկած են, կը յիշէ Վարազավանքէն «տէր Յովհաննէս մեծահանդէս ուխտին Վարազայ»<sup>187</sup> Յիշեալ կղերականներու անուններու մէջ չհանդիպեցանք Նարեկայ վանքէն ռեւէ անունի, սակայն մեր կարծիքով այդ չէր նշանակէր որ Նարեկայ վանքը չէ մասնակցած կամ թէ համաձայն չէր...:

### 39. Հայկական Թագաւորութեան Վերականգման Փորձ

Ս. Էջմիածնի մէջ 1441թ., Հայոց Հայրապետական Աթոռի հաստատումէն քառորդ դար ետք տեղի ունեցաւ պատմական կարեւոր զարգացում մը, բայց այս անգամին Աղթամարի կղզիին մէջ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Կիրակոս Վիրապեցիի վախճանումէն ետք 1448թ. Աղթամարի Զաքարիա Գ. (1434-1464) կը յիշատակուի, որպէս Էջմիածնի Հայոց կաթողիկոս:

Զաքարիա Գ. մեծ հեղինակութիւն կը վայելէր. իր հեղինակութիւնը աւելի կը հզօրանայ հայոց եւ օտարներու մօտ, երբ ան ոտքի կը հանէ Վասպուրականի հայութեան՝ զէնքի ուժով դիմադրելու քրտական Ռոժակի ցեղախումբին, որ փորձեց յարձակում գործել գրաւելու Աղթամար կղզին եւ Ս. Խաչ եկեղեցիին, կողոպտելու նպատակով:

Զաքարիա Գ-ի նպատակն էր՝ միացնել Էջմիածնի եւ Աղթամարի Աթոռները: Այդ իրագործելու համար, ան բանակցութիւններ վարեց Թուրքմէն Կարա-Կոյունլուներու Ջահանշահ սուլթանի հետ. եւ յաջողեցաւ ստանալ սուլթանի համաձայնութիւնը, Էջմիածնի Գրիգոր Ժ. հայրապետը գահընկէց եղաւ եւ 1460թ. Զաքարիա Գ. բազմեցաւ Էջմիածնի Մայր Աթոռին. «Կաթողիկոսական զոյգ աթոռների Ս. Էջմիածնի եւ Աղթամարի միութեանը միջոցով նա ձգտում էր հայ ժողովրդի քաղաքական միասնութեանը եւ այն միտքն էր զարգացնում, թէ Վասպուրականը հայոց ոչ միայն

187. Թովմա Մեծոփեցի, նոյնը, էջ 221:

հոգևոր, այլև քաղաքական խղճերի իրագործման կենտրոնն է, քանզի միայն այստեղ էին պահպանուել հայոց հինատուրց թագաւորների շատախղները յանձինս իր տոհմակիցների: Պատահական չէ, որ Ջաքարիան իրեն անուանում էր Գագիկ մեծ թագաւորի (իմա Գագիկ Արծրունու) արմատից եւ ցեղից»<sup>188</sup>

Ջաքարիա Գ. 1463-1464 թուականներուն բանակցութիւններ վարեց Ջահանշահ սուլթանի հետ, ու յաջողեցաւ անոր համոզել իր եղբորորդի Սմբատ Արծրունի-Սեֆեդիւնեանը, օժելու Վասպուրականի հայոց թագաւոր: Բանակցութիւններու ժամանակ Ջաքարիա Գ. անակնկալ մահացաւ, բայց իր յաջորդը Ստեփանոս Դ. կաթողիկոսը իրականացուց այդ երազը. եւ Սմբատը 1465թ. Աղթամարի Ա. Խաչ եկեղեցոյ մէջ, մեծ հանդիսաւորութեամբ օծուեցաւ Հայոց թագաւոր, «Ստեփանոս Դ-ը 1465թ., Ջհանշահի համաձայնութեամբ թագաւոր օժեց Սմբատին: Ջհանշահը գիտէր, որ Սմբատի «թագաւորութիւնը» գուրկ է իրական բովանդակութիւնից եւ որեւէ ձեռով չի ստուերի Հայաստանում իր իշխանութիւնը»<sup>189</sup>

Այսպիսով, Սմբատ Արծրունի (1465-1471), եղաւ Հայոց վերջին թագաւորը: Փոքրիկ թագաւորութիւնը կ'ընդգրկէր Աղթամարի կղզին եւ դիմացի առափնեայ տարածքները:

Նորաստեղծ Աղթամարի Արծրունեաց թագաւորութիւնը կարճատեւ կեանք ունեցաւ. ան հոգեբանական եւ ազգային ինքնազգիտակցութեան արժէք ունեցող քաղաքական շարժում մըն էր, փորձ մըն էր վերականգնելու Հայոց թագաւորութիւնը, մէկ դարէն աւելի Կիլիկիոյ հայկական թագաւորութեան կորուստէն ետք:

Մեր ուսումնասիրութեան ընթացքին չհանդիպեցանք տեղեկութիւններու, թէ ինչ արձագանգ ունեցաւ Նարեկայ վանքին աշխարհագրականօրէն շատ մօտիկ Աղթամար կղզիին մէջ տեղի ունեցող այս պատմական զարգացումը Նարեկայ վանքի միաբանութեան վրայ. բայց կարելի է ենթադրել, որ վանականները գոհունա-

կութեամբ եւ ուրախութեամբ կը հետեւէին այդ պատմական քաղաքական զարգացումին...:

Անհրաժեշտ է այստեղ յիշել, որ հայ ժողովուրդի այս քաղաքական փորձը տեղի կ'ունենար Բիւզանդական կայսրութեան անկումէն միայն՝ մէկ տասնեակ տարի ետք. Օսմանցի թուրքերը 1453թ. գրաւած էին Կ. Պոլիսը եւ վերջ տուած երկարակեաց Բիւզանդական կայսրութեան:

#### 40. Նարեկայ Վանքը Ակ-Կոյունլուներու Պատմաշրջանին

Ինչպէս անդրադարձանք՝ Լանկթիմուրի ստեղծած հսկայ կայսրութիւնը իր մահէն ետք շատ արագ քայքայուեցաւ. 1405-1409 կատաղի պայքար մը սկսաւ իշխանութեան համար, իր որդի՝ Շահռուիսի եւ իր թոռնիկ՝ Խալիլի միջեւ: Այդ նոր իրավիճակէն օգտուեցան թուրքմէն թափառաշրջիկ Կարա-Կոյունլիները (սեւ խոյաւոր) եւ Ակ-Կոյունլիները (ձերմակ խոյաւոր) ցեղախումբերը:

Կարա-Կոյունլիներէն ետք Հայաստանը իշխեցին Ակ-Կոյունլուները կաւ Աղ-Կոյունլիները. Նարեկայ վանքը գտնուած է թուրքմէն Ակ-Կոյունլուներու պետութեան գրաւած տարածքներուն մէջ 1471-1508. տես Գծացուցակ թիւ 3:

Աղթամարի Ջաքարիա Դ. կաթողիկոսի օրով, որ Սմբատ թագաւորի որդին էր, Աղթամար կղզին կը գտնուէր քիւրտ ցեղապետ Ռուստամի իշխանութեան տակ: Վասպուրականը եւ հարեւան տարածքները եղած էին կռուախնձոր քրտական ցեղերու եւ թուրքմէն ակ-կոյունլուներու միջեւ. հետեւաբար շատ ծանր էր նաեւ հայ հոգեւորականներու վիճակն ու գործունէութիւնը, «Ստեղծուած դժիւսէմ իրավիճակում, բնականաբար, բացառուում էր նաեւ լիարժէք մտաւոր կեանքը: Գրիչները, ձեռագրեր ստացողներն ստիպուած էին կառչել ամէն մի յոյսից ու հնարաւորութիւնից՝ դրանք փրկելու եւ իսկական տէրերուն հասցնելու համար: 1494 թ. Սիմէոն վարդապետն իր ստացած ձեռագրի յիշատակարանում նշում է, որ Ջաքարիա Դ. վարդապետի օրոք, երբ «զՈստանա երկիրս աւերեցին», ձեռագիրն իրեն յանձնող Յակոբ վարդապետն Աղթամարից տեղափոխում է

188. Հայոց Պատմութիւն-Հիմնահարցեր, խմբ. Հր. Ռ. Միմոնեան, ԵՊՀ, Երեւան, 2000, էջ 78:

189. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 105:

Վան, բայց այլակրոն հրոսակներից խոյս տալով՝ հեռանում է Վանից, ձեռագիրը պահ տալով մի քահանայի, որը մի կերպ փախցնում է Աղթամարի վանք, իսկ Յակոբ վարդապետը նահատակում է Վանից Նարեկ գիւղ տանող ճանապարհին»<sup>190</sup>

Կրօնքի եւ հաւատքի ատելությունը քիւրտերու եւ թուրքմեններու կողմէ հայոց դէմ՝ իր ծայրայեղութեան կը հասնէր մանաւանդ անգլէն եւ անմեղ հայ կղերականներու հանդէպ, որոնք գոհ կ'երթային այդ ատելութեան. վանականներու, վարդապետներու եւ քահանաներու շրջագայութիւնը խիստ վտանգաւոր էր, եւ յիշեալ Յակոբ վարդապետի նահատակութիւնը Նարեկ գիւղին մօտ, մէկն էր բազմաթիւ նման արիւնոտ դէպքերու:

Այսպէս, Ակ-Կոյունլիներու (ճերմակ խոյաւոր) ցեղախումբերու իշխանութիւնը Հայաստանի վրայ տեւեց մօտ 37 տարի, իսկ Կարա-Կոյունլուներու (սեւ խոյաւոր) ցեղախումբերու իշխանութիւնը մօտ 60 տարի, որ աւելի մեղմ անցաւ, եւ որուն ընթացքին տեղի ունեցան մեր անդրադարձած երկու կարեւոր պատմական զարգացումները հայ ժողովուրդի պատմութեան մէջ, առաջինը 1441թ., Հայոց Հայրապետական Աթոռի հաստատումը Ս. Էջմիածնի մէջ, եւ երկրորդը՝ 1465թ., Հայկական թագաւորութեան վերականգման փորձը Վասպուրականի Աղթամար կղզիին մէջ:

#### 41. Հայաստանի Բաժանումը 1555թ.

##### Եւ Նարեկայ Վանքը

1453թ. Օսմանցիները գրաւեցին Կ. Պոլիսը, ու վերջ տուին Բիւզանդական երկարակեաց կայսրութեան. այդ պատմական յաղթանակէն ետք Օսմանեան պետութիւնը ընդարձակուեցաւ ու եղաւ կայսրութիւն: Միւս կողմէն 1508թ. Պարսկաստանի մէջ Սեֆեւեանները կործանեցին Ակ-Կոյունլուներու պետութիւնը եւ ստեղծեցին Սեֆեւեան կայսրութիւնը:

Շուտով պայքարը սկսաւ երկու նոր հզօր կայսրութիւններու՝ թուրք-Օսմանեան եւ պարսիկ-Սեֆեւեաններու միջեւ. Հայաստանը իր ռազմավարական կարեւոր դիրքով եղաւ այդ պայքարի կարեւոր ռազմաբեմը: Երկու ուժերն ալ կ'ուզէին իրենց սահմաններէն ներս ունենալ Հայաստանը, Միջագետքն ու ամբողջ Անդրկովկասը: Երկարատեւ պատերազմը տեւեց երկու տասնեակ տարիներէ աւելի (1532-1555). գերուժերը անխնայ աւերեցին հակառակ կողմի իշխանութեան տակ գտնուող տարածքները: Հայաստանի լայնածաւալ շրջանները ենթարկուեցան կողոպուտի. թրքական զօրքերը աւերեցին եւ կողոպտեցին Շիրակը, Արարատեան դաշտը, Սիւնիքն ու Նախիջեւանը. իսկ պարսկական զօրքերը՝ Բարձր Հայքը եւ Վասպուրականը:

Պատերազմը շարունակուեցաւ մինչեւ 1555թ. Մայիսի 29-ին, երբ երկու կայսրութիւններու միջեւ կնքուեցաւ համաձայնութիւն, ըստ որուն Հայաստանը առաջին անգամ ըլլալով նոր պատմութեան մէջ՝ բաժանուեցաւ Թուրքիայ եւ Պարսկաստանի միջեւ: Այդ երկու պետութիւններու Հայաստանով անցնող սահմանագիծը եղաւ՝ Հայկական պարը. Բարձր Հայքը, Տուրուբերանը, Աղձնիքը, Ծովքը եւ Վասպուրականի մեծ մասը մնացին Օսմանեան կայսրութեան. իսկ Շիրակը, Արարատեան դաշտը, Սիւնիքը եւ Վասպուրականի արեւելեան գաւառները անցան Սեֆեւեան Պարսկաստանին:

Այսպէս, մեզ հետաքրքրող Նարեկ գիւղը Նարեկայ վանքով այս թուականէն սկսեալ գտնուեցան Օսմանեան կայսրութեան մէջ, տես Գծացուցակ թիւ 3:

Պատմական այս կարեւոր զարգացումներուն խիստ հակիրճ անդրադառնալը շատ կարեւոր է, գաղափար ունենալու, թէ ինչ դժուարութեամբ Նարեկայ վանքը կը շարունակէր իր գործունէութիւնը որպէս Հայաստանի մշակութային կարեւոր օջախներէն մէկը:

190. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Գաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 120, քաղուած ԺԵ դարու հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, 3, էջ 209-210:

## 42. Նարեկայ Վանքի Գործունեությունը

### ԺԶ. Եւ ԺԷ. Դարերուն

16րդ եւ 17րդ դարերուն Նարեկայ վանքի գործունեությունը Օսմանեան տիրապետութեան սկզբին՝ շատ տկար եղած է, այդ արձագանգն էր այդ երկու դարերու ռազմաքաղաքական վիճակին: Այդ ժամանակ, Նարեկայ վանքի գործունեութեան մասին մեջբերենք հետեւեալը՝ Համազասպ Ռսկեանէն, «Դարձեալ կը տիրէ լռութիւն, բայց 1574ին կը գրուի Աւետարան մը: Իսկ 1587ին Նարեկի մէջ կը կազմուի Աւետարան մը. եւ ապա մինչեւ ԺԸ. դար լռութիւն կը տիրէ, երբ 1700ին Թումայ Վանի մէջ գրուած Աւետարան մը կը նուիրէ Նարեկայ. եւ քանի մը տարի յետոյ՝ 1705ին ուրիշ Աւետարան մը»:<sup>191</sup>

Հակառակ ստորագրուած համաձայնութեան, երկու կայսրությունները կը սպասէին պատշաճ առիթին վերսկսելու պատերազմը: Օսմանեան սուլթան Մուրադ Գ. (1547-1595), օգտուելով Սեֆեւեան Պարսկաստանի մէջ ծագած գահակալական ներքին իրարանցումներէն, 1578թ. սկսաւ ռազմական գործողությունները Պարսկաստանի դէմ: Պատերազմող երկու կողմերն ալ անխնայ աւերեցին հակառակ կողմի տիրապետութեան տակ գտնուող տարածքները:

Պատերազմը շարունակուեցաւ, մինչեւ որ Պարսկաստանի Շահ Աբաս Ա. ծանր պարտութեան մատնեց Օսմանեան սուլթանին 1605թ. եւ ստիպեց անոր ճանչնալ կէս դար առաջ 1555թ. համաձայնութիւնը:

Պատերազմի գործած աւերումներուն եկաւ միանալու 1648թ.,՝ Մեծ Երկրաշարժը...:

Հայաստանի մէջ բազմաթիւ անգամներ երկրաշարժներ տեղի ունեցած են: Մարսափելի երկրաշարժ տեղի ունեցաւ 1648թ. աւագ ուրբաթ՝ օրը, «Եօթ տարուց յետոյ, 1648-ին, նորից սարսափելի երկրաշարժ էր տեղի ունենում, այս անգամ Վանի մէջ եւ նրա շրջակայքում: Ապրիլ ամսի երկուսն էր, աւագ ուրբաթ գիշե-

րից լոյս աւագ շաբաթ, առաւօտին մօտ, երբ պիտի սկսուէր ժամերգութիւնը...»:<sup>192</sup>

Աւերիչ երկրաշարժը տեւեց ութ օր, մեջբերենք Առաքել Դավրիժեցիէն, «Բազմաթիւ տներ, ապարանքներ, շինուածքներ փլուեցին եւ իրենց տակ թողին բազմաթիւ մարդկանց ու անասունների: Մեռածներն այնքան շատ էին, որ բարձած սայլով տանում էին քաղաքից դուրս: Թաղելիս չէին կարողանում գերեզման փորել, այլ գետինը ճեղքելով մեծ վիհ էին անում եւ մեռելներից ութին, տասին փաթաթում էին կտաւով, դնում վիհը եւ հողով ծածկում:

Ութ օր երկիրը երկրաշարժի մէջ էր այնպես, որ չէին կարողանում տներում բնակուել, այլ բացօթեայ վայրում վրանով էին մնում, որովհետեւ այդ ութ օրը երկիրն անդադար շարժման մէջ մնաց, ինչպէս նաւը ջրի երեսին: Դրանից յետոյ մի քիչ հանդարտուեց, բայց չորս օրը, հինգ օրը, տասն օրը մէկ շարժում էր: Այդպէս մնաց մինչեւ յունիս ամիսը լրացաւ, ապա աստծու ողորմութեամբ կայունացաւ, հանդարտուեց»:<sup>193</sup>

Մեծ երկրաշարժի տարուայ մասին յիշուած են տարբեր թուականներ. մեջբերենք Վրէժ Վարդանեանէն, «Առաքել Դավրիժեցին այդ երկրաշարժը տեղի ունեցած է համարում 1648թ. ապրիլի 2-ից մինչ յունիսի վերջը: 1646թ. արտագրուած մէկ այլ ձեռագրում տեղ գտած յիշատակարանում նշուած է 1646 թուականը: Երկրաշարժի գործած աւերների մասին վկայություններ են թողել նաեւ ուրիշ յիշատակագիրներ: «Ի սաստիկ շարժման է երկրի, բազում եկեղեցիք ի հիմանէ կործանեցան, եւ բազում մարդիկ եւ անասունք ի տան տակ մնալով մեռան՝ ի քաղաքս [եւ] ի գեղս երկրիս մեր Վասպուրականի...», գրում է 1647թ. Վարագավանքում Աւետարան ընդօրինակած Մահակ գրիչը»:<sup>194</sup>

<sup>192</sup> Ա.Լ.Օ, Երկերի Ժողովածու, Գ. Հատոր, Հայաստան, հրատարակ., Երևան, 1969, էջ 302, 303:

<sup>193</sup> Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Մովսէսական Գրող, Երևան 1988, էջ 382:

<sup>194</sup> Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կայսրական Պատմություն, էջ 162, քաղուած Ցուցակ Ձեռագրաց Վասպուրականի, սուրենակ 269-270:

Ինչ որ յաջողեցան բարբարոս թշնամիները ընել դարերով, քանի մը օրուան մէջ ըրաւ սարսափելի երկրաշարժը. բայց անգամ մը եւս շինարար հայ ժողովուրդը վաստեց իր սէրը հանդէպ իր հայրենի օճախին ու դարաւոր սրբութիւններուն, եւ իր ուժերով անցաւ վերակառուցման աշխատանքին:

Առաքել Դավրիժեցիին յիշած է մէկ տասնեակէ աւելի վանքերու անուններ, որոնց մէջ յիշուած չէ Նարեկայ վանքը, «Վանայ երկրի բոլոր վանքերը փլուեցին, անկուեցին Վերին Վարազը եւ Ներքին Վարազը, սուրբ հայր Թողիկի եկեղեցին, Մալնապատի վանքի մեծ եկեղեցին, Շուշանց վանքը, Ղուռուբաշի վանքը, Խեկուց վանքը, Էրեմերա վանքը, Սրիսու վանքը, Բերդակա վանքը, Կենդանանից վանքը, Կոնկի վանքը, Անգուսների վանքը, Արջակա վանքը, Ալերի վանքը»:<sup>195</sup>

Մեր պրտպտումներուն մէջ չհանդիպեցանք որեւէ տեղեկութեան, թէ ինչ վնասներ հասցուցած էր երկրաշարժը Նարեկայ վանքին, բայց հիմնուելով երկրաշարժի ուժգնութեան եւ հասցուցած վնասներուն Նարեկայ վանքէն ոչ շատ հեռու Վարազավանքի եկեղեցիներուն<sup>196</sup>. կ'ենթադրենք, որ Նարեկայ վանքն ալ ենթարկուած ըլլալու է զգալի վնասներու:

### 43. Նարեկայ Վանքի Ժամատան Կառուցումը 1787թ.

Նարեկայ վանքը ԺԷ. եւ ԺԸ. դարերուն ապրեցաւ զգալի վերելք: Դարու սկիզբին՝ 1707թ. Մինաս վարդապետ Ղափանեցիին հիմնովին նորոգեց վանքը, թերեւս պատճառը 1648թ. մեծ երկրաշարժի հասցուցած վնասներն էին:

Այդ դարերուն Արեւմտեան Հայաստանի վանքերէն մաս մը հարստացան իրենց կալուածներով ի շնորհիւ հարուստ հայ վաճառականներու նուիրատուութիւններուն, ի փրկութիւն իրենց հոգիներուն: Այսպէս, վանքերու կալուածներու ընդարձակման հիմնական աղբիւրը ինչպէս միշտ անձնական նուիրատու-

թիւններն էին: Ըստ Համագասպ Ոսկեանի Նարեկայ վանքը շատ հարուստ վանք էր, «Նարեկայ վանքը առաջին հարուստ վանքն է Ռշտունեաց գաւառում: Աղթամարից յետոյ նա միայն ունի այնքան հարստութիւն կալուած, որքան չունեն մի տասնեակ վանքերը նոյն շրջանում»:<sup>197</sup>

Նիւթական նուիրատուութիւններէն գատ, վանքերն ու եկեղեցիները կը ստանային այլ նուէրներ. օրինակի համար Վանայ լիճը հարուստ էր հոշակաւոր տառելի ձուկով: Ապրիլ եւ Մայիս ամիսներուն տառելիը անթիւ քանակութեամբ լիճէն կը շարժուէր դէպի գետերն ու գետակները: Տառելի ձուկը ձրի կը տրուէր վանքերուն:<sup>198</sup>

Արեւմտեան Հայաստանի հայ աւատատէրերը թոյլ էին բաղդատմամբ Արեւելեան Հայաստանի աւատատէրերուն: Արեւմտեան Հայաստանի մէջ հարուստ կալուածներ ունէին հայ հոգեւորականները. իտշոր կալուածատէր էին Վարազայ, Նարեկայ, Մշոյ Սուրբ Կարապետի վանքերը: Այդ հարստութեան պատճառով Օսմանեան պետութիւնը յիշեալ վանքերէն զանազան տեսակի ծանր հարկեր կը գանցեր, «XVII-XVIII դարերում իտշոր կալուածատէր վանքերի թոյին էին պատկանում Վարազայ, Նարեկայ, Մշո սուրբ Կարապետի եւ ուրիշ վանքեր: Վանքերը եւ եկեղեցիները, չնայած հանդիսանում էին այդ հողերի սեփականատէրերը, բայց, որպէս նուաճուած ժողովրդին պատկանող կրօնական հաստատութիւններ, ստիպուած էին զանազան հարկեր վճարել սուլթանին»:<sup>199</sup> Օսմանեան կայսրութեան վճարուած հարկերէն գտտ Հայոց Պոլսոյ Պատրիարքարանը վանքերէն եւ եկեղեցիներէն տարեկան հարկեր կը ստանար, որ կը կոչուէր Մուգաթա:

1787թ. վանահայր Բարսեղ վարդապետի ջանքերով Նարեկայ վանքի զոյգ եկեղեցիներու՝ Ս. Մանդուխտ եւ

195. Առաքել Դավրիժեցի, էջ 383:

196. Պետրոս Թովմասեան, Վարազավանքը Պատմութեան Քառուղիներուն, էջ 74, 75, 76:

197. Համագասպ Ոսկեան, էջ 215, 216:

198. Հ. Մ. Պօղոսեան, էջ 40:

199. Հ. Գ. Ժամկոչեան, Ա. Գ. Աբրահամեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Ս. Պ. Պօղոսեան, Հայ Ժողովրդի Պատմութիւն, էջ 629:

Ս. Ասատուածաձինի ու մատուռին առջև սուելցաւ դարպաս ժամատունը. տես գծացուցակ Թիւ 2: Նարեկայ վանքի Ժամատան կառուցման մասին մեջբերենք հետեւեալը Համագասպ Ոսկեանէն, «Ձոյզ եկեղեցիներու առջև շինուած է ընդարձակ ժամատունը, որ քառանկիւնի հասարակ շէնք մըն է հաւասարաչափ (11 մետր) յայնութեամբ ու երկարութեամբ: Ունի վեց փոքրիկ լուսամուտ: Ձեղունը կամարակապ է»:<sup>200</sup>

Այսպէս, եկեղեցիներուն կից դէպի արեւելք կառուցուեցաւ ուղղանկիւն, քառամոյթ, ընդարձակ գաւիթը, ուր թաղուած էին Գրիգոր Նարեկացիի եղբայրը՝ Յովհաննէս Վարդապետը եւ փիլիսոփայ Անանիա Նարեկացին:

Միշտ ուսանիմ եւ երբեք  
ի գիտութիւն ճշմարտութեան  
ոչ հասանեմ  
Գ. Նարեկացի

## Ե. ԳԼՈՒԽ

### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ

#### 44. Նարեկայ Վանքի Զանգակատան Կառուցումը 1812թ.

Նարեկայ վանքի վերելքը շարունակուեցաւ. նախ կառուցուեցաւ Ժամատունը 1787ին ինչպէս անդրադարձանք, ապա Զանգակատունը 1812ին, «1812 թուին Աղթամարի Յարութիւն կաթողիկոսը կառուցել է եկեղեցու գմբէթը, վանեցի մեծատուն Յակոբ աղա Ղարասէֆերեանի ձեռնտութեամբ»:<sup>201</sup>

Ըստ Երուանդ Լալայեանի Զանգակատունը շինուած է Ժամատան առջև, եւ ոչ թէ վրան, «Ժամատան առջև սրբատաշ քարից վերջին ժամանակներս շինուած է զանգակատուն, որ այժմ կիսաւեր դրութեան մէջ է գտնուում»:<sup>202</sup>

Զանգակատունը վերջին ժամանակներու գործ է, եւ շինուած է սրբատաշ քարերով: Զանգակատան դրան ճակատին արձանագրուած է՝

«Չքնաղ գումբէթս քաղցրագունդ  
Կերտեալ նորոգ հաստատուն,  
Եւ դէտ նորին Յարութիւն  
Մտօք բարի եւ արթուն  
Բնիկ յերկրէն Տարօնուն  
Ծառայ սրբոյ Ամլորդուն  
Թվ. ՌՄԿԱ (1812)»:<sup>203</sup>

200. Համագասպ Ոսկեան, էջ 208, 209:

201. Երուանդ Լալայեան, էջ 22:

202. Նոյնը, էջ 24:

203. Համագասպ Ոսկեան, էջ 209. տե՛ս նաեւ Երուանդ Լալայեան, էջ 24, 25:

Նարեկայ վանքի համալիրի մասին Ա. Ն. Քիրքչեան յիշած է. «Վանքային համալիրը բաղկացած է կողք-կողքի կառուցուած Մր. Սանդուխտ եւ Մր. Աստուածածին եկեղեցիներով: Համալիրի մաս էին կազմում նաեւ նշուած եկեղեցիների արեւմտեան կողմից կցակառուցուած գաւիթը, Գրիգոր Նարեկացու դամբարանը՝ Մր. Սանդուխտ եկեղեցու արեւելեան պատին կցուած գաւթի արեւմտեան դրան առջեւ կառուցուած 1812թ. զանգակատունը, պարսպապատերի մէջ համաստեղուած առաջնորդարանը, ուսումնարանը եւ այլ շէնքեր»:<sup>204</sup>

Այսպէս, քառորդ դարի ընթացքին կառուցուած Ժամատունը եւ ապա Զանգակատունը տես Գծացուցակ թիւ 2, շատ յստակ ցուցանիշներ էին, թէ Նարեկայ վանքը զօրացած իր նիւթական հարստութեամբ, կրօնական եւ մշակութային գործունէութեամբ վերստին սկսած էր ապրիլ զարթօնք մը, որ արձագանգն էր հայ ժողովուրդի 19-րդ դարու զարթօնքին:

#### 45. “Արծուի Վասպուրականը” եւ Նարեկայ Վանքը

Մկրտիչ Խրիմեան Վարագավանքի մէջ 1858թ. սկսաւ հրատարակել “Արծուի Վասպուրականը” Արեւմտեան Հայաստանի առաջին պարբերականը, որ հիմնականօրէն հրատարակուեցաւ Օսմանեան կայսրութեան ծանր լուծի տակ տանջող արեւմտահայ ժողովուրդին շահերը պաշտպանելու նպատակով:

“Արծուի Վասպուրականը” պարբերաբերթը Մկրտիչ Խրիմեանի խմբագրութեամբ նախ լոյս տեսաւ Կ. Պոլսոյ մէջ 1855-1856 թուականներուն<sup>205</sup>. Իսկ 1858-1864 թուականներուն Վարագավանքին մէջ: Վարագավանքի մէջ թերթի հրատարակութիւնը ընդհատուեցաւ 1860թ. սկիզբէն մինչեւ այդ տարուայ վերջը, որովհետեւ Մ. Խրիմեանը Վանի հոգեւոր առաջնորդ Իգնատիոս Թոքմաջեանի, Գ. Սրուանձտեանցի, Հ. Մեհիկեանի եւ Նարեկայ վանքի վանահայր՝ Յովսէփ վարդապետի հետ անցաւ Արեւելեան Հայաստան Վարագավանքի նոր առաքելութեան

համար հանգանակութիւն հաւաքելու: Մ. Խրիմեանը իր ուղեկիցներուն հետ հասաւ Մ. Էջմիածին եւ ամենայն հայոց կաթողիկոս Մատթէոս Չուխաջեանէն ստացաւ կոնդակ մը, Անդրկովկասի հայկական բնակավայրերուն մէջ Վարագավանքի դպրոցին եւ տպարանին հանգանակութիւն հաւաքելու համար:

Վասպուրականի առաջին տպագրուած թերթը “Արծուի Վասպուրականը”, կը տպագրուէր քանի մը հարիւր տպաքանակով: Պարբերական թերթի օրինակները Վասպուրականէն կը տարուէր Արեւելեան Հայաստան, ապա Թիֆլիս եւ Ռուսաստանի հայաբնակ քաղաքները:<sup>206</sup> Թերթը յօդուածներ կը ստանար Կ. Պոլսէն, Շամախէն, Ալեքսանդրապոլէն եւ այլ հայաբնակ վայրերէ:

Հակառակ այն իրականութեան, որ Արծուի Վասպուրականը ընդամենը լոյս տեսաւ միայն ութ տարի, բայց պէտք է ըսել, որ Վարագավանքի մէջ հաստատուած Խրիմեանն ու իր աշակերտները իրենց ազգային գործունէութեամբ եւ «Արծուի Վասպուրականը» պարբերաթերթին մէջ հրատարակուած հայրենասիրական յօդուածներով այդ տարիներու ընթացքին շատ մեծ դեր ունեցան Վասպուրականի հայութեան ազգային գիտակցութեան եւ զարթօնքին մէջ. ինչպէս եւ ընդհանրապէս ամբողջ հայութեան ազատագրական շարժումներու գաղափարախօսականները պատրաստելու գործին մէջ:

Նարեկայ վանքը, որ Վասպուրականի կարեւոր վանքերէն մէկն էր, չէր կրնար անտարբեր մնալ Խրիմեան հայրիկի ազգաշէն մեծ աշխատանքին նկատմամբ, այդ իսկ պատճառով տակաւին “Արծուի Վասպուրականը” պարբերաթերթի ծննդեան առաջին տարին իսկ Նարեկայ վանքի վանահայրը Յովսէփ վարդապետը՝ ընկերակցեցաւ Խրիմեան հայրիկին իր առաքելութեան ընթացքին՝ Արեւելեան Հայաստանի եւ Անդրկովկասի հայկական բնակավայրերուն մէջ, Վարագավանքի դպրոցին եւ տպարանին՝ հանգանակութիւն հաւաքելու համար, ինչպէս նախապէս անդրադարձանք:

204. Ա. Ն. Քիրքչեան, Ծաղկաբաղ Հայկական Յուշարձանների, նոյնը, էջ 57, 58:

205. Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հատոր 3, Լոյս, Երեւան, 1967, էջ 356:

206. Հ. Մ. Պօղոսեան, էջ 116:

#### 46. Վարագայ Եւ Նարեկայ Վանքերու Համագործակցութիւնը

Խրիմեան հայրիկի Եւ Նարեկայ վանքի վանահայր Յովսէփ վարդապետի միջեւ սերտ համագործակցութիւն տեղի ունեցած է. ինչպէս անդրադարձանք՝ Յովսէփ վարդապետը ընկերացաւ Խրիմեան հայրիկին հանգանակութիւն հաւաքելու ճամբորդութեան մէջ, որովհետեւ Նարեկայ վանքի վանահայրը՝ Խրիմեանի նման բարենորոգումներու ճամբով կ'աշխատէր զարկ տալ հայութեան զարթօնքին:

Նարեկայ վանքի վանահայր Յովսէփ վարդապետը ի հետեանք՝ իր հայրենաշէն Եւ ազգաշէն գործունէութեան, Խրիմեան հայրիկի նման ենթարկուեցաւ մեծահարուստներու թշնամութեան. Խրիմեան նամակով մը կը քաջալերէր անոր, «Որ իսկապէս Խրիմեանի բարեփոխումներն առաջացրել են Վասպուրականի ունեւորների թշնամութիւնը, հաւաստում է ինքը՝ վանահայրը: Նարեկայ վանքի վանահայր Յովսէփ վարդապետին ուղղուած մի նամակում, սրտապնդելով նրան մի քանի թշնամիների առկայութիւնից, Խրիմեանը նշում է. «Ապա իւեղճ Խրիմեան ինչ ընէ, երբ որ ամբողջ քաղաքի մը հզօր իշխանները հանդերձ եկեղեցականներով իր դէմ կը մարտնչեն»:<sup>207</sup>

Վարագավանքի մէջ Խրիմեան 1857թ., հիմնեց ժառանգաւորաց գիշերօթիկ վարժարանը: Ժառանգաւորացին մէջ առաջին անգամ հայ աշակերտը ունեցած է գրասեղան, քարտէս, նկարներ Եւ այլն: Դպրոցին մէջ վերացուեցաւ մարմնական պատիժը. ինչպէս Եւ ուսումը աշխարհաբարով էր: Ժառանգաւորացէն ներս առաջին անգամ ընդհանուր Վասպուրական նահանգին մէջ դասաւանդուեցաւ հայրենագիտութիւն առարկան, նպատակ ունենալով ուսումնասիրել հայրենիքի բնութիւնը, ինչպէս նաեւ պատմական յուշարձաններն ու բանաւիտութիւնը:

Այս դպրոցի սաներէն շատերը յետագային դարձան մշակութային գործիչներ Եւ ազգային դէմքեր: Գարեգին Սրուանձտեանցը դարձաւ Ժառանգաւորացի առաջին սաներէն մէկը:

Ժառանգաւորաց վարժարանի յաջող փորձառութիւնը մղեց Խրիմեանին շրջակայ վանքերուն մէջ նման վարժարաններ հիմնելու, նպատակ ունենալով այդպիսով ուժ տալ կրթական աշխատանքներուն:

Խրիմեան՝ Վարագավանքի միաբաններէն Մատթէոս հայր սուրբին ուղարկեց շրջակայ վանքերու վարժարաններու ներկայ կացութիւնը ուսումնասիրելու Եւ ստուգելու, տեղեկանալու համար այդ գոյութիւն ունեցող վարժարաններու կարիքներուն, գործածուած դասագիրքերուն Եւ այլն: Ան նոյնիսկ կը խոստանայ այդ վարժարաններու ուսուցիչներուն գործը գնահատել՝ իրենց վարձատրութիւնը աւելցնելու, անոնց ոգեւորելու համար: Այդ վանքերէն էր առաջին հերթին Նարեկայ վանքը, «Մատթէոս վարդապետի հետ Խրիմեանը Նարեկայ Եւ Աղթամարայ վանքերի վարժապետներին ուղարկում է դասագրքեր, որ «Երկար ժամանակ դիմանալով նախքին կողմանէ ինայոդոթիւն ըլլայ»:<sup>208</sup>

#### 47. Գարեգին Սրուանձտեանցի Այցելութիւնը Նարեկայ Վանք

19-րդ դարու յայտնի բանասէր, բանահաւաք Եւ ազգագրագետ Գարեգին Սրուանձտեանց ծնած է 1840թ. Նոյեմբերի 17-ին Վանի Այգեստան թաղամասին մէջ, մկրտութեան անունն էր Օհաննէս: 1857թ. աշակերտ կ'ընդունուի Խրիմեան հայրիկի Վարագավանքի Ժառանգաւորաց դպրոցը: Կարդալով Եղիշէի Վարդանանցի պատմութիւնը, կ'ոգևորուի Եւ ինքզինք կը կոչէ՝ Գարեգին Սրուանձտեանց, որ Վարդան Մամիկոնեանի հերոս զինուորներէն մէկուն անունն էր:<sup>209</sup>

Հայ ժողովուրդի ազգային ինքնագիտակցութեան զարթօնքի օրերուն, հայ մտաւորականութեան մէջ աշխուժացաւ հետաքրքրու-

207. Էմմա Կոստանդեան, Սկրոիչ Խրիմեան, Հասարակական-քաղաքական գործունէութիւնը, ՀՀԳԱԱ-Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, 2008, էջ 60:

208. Էմմա Կոստանդեան, նոյնը, էջ 63:

209. Գարեգին Սրուանձտեանց, Երկեր, 1 հատոր, ՀՍՄՀ ԳԱ-Հնագիտութեան Եւ Ազգագրութեան Ինստիտուտ, Երեւան, 1978, էջ 8:

թիւնը դարերու ընթացքին հայութեան կերտած հոգեւոր ու նիւթական գանձերու նկատմամբ: Գարեգին Սրուանցտեանց՝ 1860-1861 թուականներուն կը շրջի Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր գոտիները, բանասիրական եւ ազգագրական նիւթերը հաւաքելու եւ ուսումնասիրելու. կ'ուսումնասիրէ խաչքարերն ու կոթողները: Ան կ'այցելէ Նարեկայ վանքը եւ կը գրէ իր տեսածին մասին:

Նարեկ գիւղի եւ Նարեկայ վանքի մասին իր գրածներէն ուշագրաւ է հետեւեալը. կը մէջբերենք իր գրածը քաղցրահամ հայերէնով, «*Շամու մը չափ հեռի Նոր գիւղէն յաջ կողմն շեղելով կը բարձրանանք բլրադաշտիկի մը գոգը, եւ ահա սխրալի տեսարանով մը կը բացուի Նարեկ գիւղը մեր աչաց առջեւ, որտ մէկ կուշտը բարձիկի նման դիրքի վրայ շքեղ փնտրութեամբ իրեն կը կապէ նայողին բիրերն ու սիրտը երկնանման տաճարն Նարեկայ վանից: Ոչ եւս կրնայ մարդ նայիլ գիւղին, դեղացոյն, գեղեցկութեանց բնութեան եւ բնակչաց աշխատութեամբ գեղեղ բարութեան: Աստեղատանց կամարէն հիանալի կ'երեւի գմբէթն Նարեկայ ու գանգակատունն. եւ ձայն գանգակահար կոչնակին անլսելի կ'ընէ գեղի հօտադներուն եւ մացառաց բոլբոլիին ձայները, որ քաղցրախառն ներդաշնակութեամբ կ'ըլնուն այդ դրախտին բլուրը եւ արձագանգը կուտան կ'առնուն շրջակայ լեռանց եւ երկնից կամարաց հետ:*

*Հո՛ղը սուրբ, ջուրը սուրբ, քարը սուրբ, խոտը սուրբ, ծառը սուրբ, օդը սուրբ, արեւը սուրբ, ամենայն ինչ սուրբ է տեղոյս ամէնուն դպեր սուրբ Նարեկացոյն ձեռքը, ոտքը, շունչը, ձայնը, հառաչանքն, օրհնենքը...: Ափսո՛ս, սակայն, մարդն՝ որ կը բնակի այս տեղիը՝ ինչո՞ւ չեմ կրնար ըսել սուրբ...»<sup>210</sup>*

Գարեգին Սրուանցտեանցը եղաւ Խրիմեան հայրիկի աջ բազուկը. իր ջանքերով եւ խմբագրութեամբ Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի վանքին մէջ, որ Արեւմտեան Հայաստանի հարուստ եւ լաւ պահպանուած վանքերէն մէկն էր, սկսաւ հրատարակուիլ «Արծուի Վասպուրական»ի նման «Արծուի Տարօնայ» թերթը 1863ի Ապրիլին, որ տեւեց մինչեւ 1865ի Յուլիսը:

#### 48. Նարեկայ Վանքը Եւ Պետրոս Բիւլբիւլ Կաթողիկոսի

##### Գահազրկման Հարցը

19-րդ դարու երկրորդ կէսին, Աղթամարի կաթողիկոս Պետրոս Բիւլբիւլի<sup>211</sup> (1858-1864) օրով՝ սաստկացաւ Կաթողիկոսական աթոռին հասնելու ներքին մրցակցութիւնը. դէպքերու զարգացումը ի յայտ բերաւ, որ Նարեկայ վանքը, որ ամենամօտիկ կարեւոր վանքն էր Աղթամարի կաթողիկոսութեան, պիտի դառնար Պետրոս Բիւլբիւլ կաթողիկոսի գահազրկման շարժման հիմնական կեդրոնը:

Պետրոս Բիւլբիւլ իր կարճատեւ գահակալութեան տարիներուն լաւ համբաւ ստեղծեց իր գործունէութեամբ, որպէս անփառասէր հոգեւորական եւ օրէնքի ու բարենորոգումներու հաստատող, եւ պաշտպան. աշխատեցաւ 1863թ., Հայոց Ազգային սահմանադրութիւնը գործադրելու Աղթամարի կաթողիկոսութեան ենթակայ թեմերուն մէջ:

Խաչատուր Եպիսկոպոս Շիրոյեանը հայադաւանութիւն ընդունած, ազգութեամբ ասորի էր, որուն Եպիսկոպոս էր ձեռնադրած Պետրոս կաթողիկոսը, եւ անոր վստահած կաթողիկոսական բոլոր գործերը, ինչպէս եւ գանձանակը: Խաչատուր Եպիսկոպոսը վատ համբաւ ուներ՝ իր նիւթապաշտութեամբ եւ ժողովուրդին կեղեքումով: Ան լաւ կապեր հաստատած էր Վանի վարձակալ իշխաններու եւ քիւրտ բեկերու հետ, որոնց ոյժին վրայ յենուելով պայքարի մէջ մտաւ Պետրոս Բիւլբիւլ կաթողիկոսը հեռաձենլու:

Պետրոս Բիւլբիւլ կաթողիկոսի հակառակորդները, որոնց գլխուն Խաչատուր Շիրոյեանն էր, Նարեկայ վանքին մէջ ժողով կը գումարէն 1864թ. սեպտեմբերի 10-ին: Ժողովին ներկայ կ'ըլլան նաեւ քիւրտ եւ թուրք վերնախաւի ներկայացուցիչներ. կ'որոշէն Պետրոս Բիւլբիւլին հեռացնել Աղթամարի կաթողիկոսի պաշտօնէն, «1864թ. սեպտեմբերի 10-ին նրանք ժողով են գումարում

210. Նոյնը, նոյնը, էջ 377:

211. Բիւլբիւլ կը նշանակէ տխրակ. այդպէս կոչուած է իր քաղցրահեշիւն ձայնին համար:

Կարեկալ վանքում: Ժողովին ներկայ էին նաև Պետրոսի երբեմնի համակիրներից Ղազար եւ Յակոբ վարդապետները, որոնք նրա գահակալական ժամանակ մեծապէս սատարել էին նրան, սակայն այժմ յարում էին նրա հակառակորդներին: Ժողովականները որոշում են գահընկեց անել Պետրոս կաթողիկոսին եւ կաթողիկոս են ընտրում Խաչատուր Շիրոյեանին: Այնուհետեւ նրանք միասին մեկնում են Աղթամար եւ վանքի տաճարում սեպտեմբերի 25-ին կատարում կաթողիկոսական օծումը»:<sup>212</sup>

Բռնի գահընկեց եղած կաթողիկոս Պետրոս Բիւլբիւ կաթողիկոսի իր վատառողջ վիճակին, տեղեկանալով, որ Խաչատուր Շիրոյեան ձեռնադրուած է կաթողիկոս՝ առանց Ազգային վարչութեան եւ Բարձր Դրան կարգադրութեան, կ'որոշէ երթալ Վան եւ բողոքել, սակայն իր ընդդիմադիրները կ'արգիլեն իրեն եւ իր նստավարը անարեկուած աւազի վրայ կը ձգէ անոր հիւանդ վիճակի մէջ, «Երկու օր աւազի վրայ ընկած մնալով՝ Պետրոս Բիւլբիւյը, իր մտերիմների բուն թախանձանքից յետոյ մեկնում է Փշավանք գիւղ՝ իր եղբորորդու մօտ, որտեղ պատրաստութիւն է տեսնում յաջորդ առաւօտ Վան մեկնելու եւ Ազգային վարչութեանը բողոքելու կատարուածի մասին: Սակայն 1864 թ. սեպտեմբերի 28-ի գիշերը նա սպաննում է տան երդիկից՝ երկու քրտերի արձակած գնդակներով»:<sup>213</sup>

Պետրոս Բիւլբիւ կաթողիկոսի սպանութիւնը կարգադրուած էր Խաչատուր Շիրոյեանի կողմէ. մէջբերենք հետեւեալը Երեմիա Տեւկանցէն, «Խաչատուր Շիրոյեան (1864-1895) Աղթամարի անօրինական կաթողիկոսը, որը իր նախորդի՝ Պետրոս Պիւլպիւլեանի (1858-1864) կենդանութեան ժամանակ զրաւեց նրա աթոռը եւ դարձաւ կաթողիկոս, շատ չանցած քուրդ վերնախաւի միջոցով սպաննել տալով իր նախորդին: Կոստանդնուպոլսի պատրիարքարանից մի շարք յանձնաժողովներ ստուգեցին նրա գործը, եւ այդ հարցը մի քանի անգամ քննարկուեց

Ազգային ժողովում, սակայն կաշառքի ուժով տարիների ձգձգումից յետոյ նա «արդարացաւ», վերադարձաւ Աղթամար եւ շուրջ 30 տարի նստեց կաթողիկոսական աթոռին: Մահից տարիներ ստաք նրա շիրիմը պատրաստ էր եւ շիրմաքարի վրայ չէր մոտացել գովեստի խօսքեր ասել հայ ժողովրդի դահիճի՝ Աբղուլ Համիդի հասցէին»:<sup>214</sup>

Պետրոս Բիւլբիւ կաթողիկոսէն դժգոհ էին հայ ժողովուրդը հարստահարող քիւրտ մեծամեծները, «Ըստ Ե. Տեւկանցի, Պիւլպիւ կաթողիկոսը իր «խրոխտ եւ անվեհեր բնութեամբ եւ իշխանութեամբ սարսափ ձգած էր բոլոր բռնակալ եւ հարստահարիչ քրտաց վրայ, որ ասէ Պիւլպիւլին չէին կարող խլրտել եւ հարստահարել զժողովուրդն»:<sup>215</sup> Խաչատուր Շիրոյեանին երկրորդին քիւրտ ու թուրք երեւելիներ. անանցմէ էին, Գաւաշի մուլիի Չերքեզ Մահմեդը, մոլլա Ավսամատ Ղադին, Խան Մահմուդի եղբայր Դարիշ բեյը, Քելեշ աղայի որդի Օսմանը:<sup>216</sup> Բնականաբար այդ քիւրտ մեծամեծներուն գործածելով Խաչատուր Շիրոյեան՝ կարգադրեց անոր սպաննութիւնը:

Այս զարգացումներէն կարելի է եզրակացնել, որ Աղթամարի կաթողիկոսութենէն ետք Նարեկայ վանքը իր գործունէութեամբ երկրորդ կարեւոր կեդրոնը կը հանդիսանար, որ եղաւ Խաչատուր Շիրոյեանի շարժման կեդրոնը ուղղուած Աղթամարի կաթողիկոս Պետրոս Բիւլբիւի դէմ: Անշուշտ մենք նկատի չենք առնել Վարազազականքը, ուր այդ տարիներուն անկախ համարձակ կը գործէր Խրիմեան Հայրիկը:

212. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 234:

213. Նոյնը, էջ 235:

214. Երեմիա Տեւկանց, Ճանապարհորդութիւն Բարձր Հայք Եւ Վասպուրական (1872-1873թթ.), ՀԳԱ հրատարակչ., Երեւան 1991, էջ 316:

215. Հ. Մ. Պողոսեան, էջ 166:

216. Նոյնը, էջ 168:

#### 49. Նարեկացիի Դամբարանի Խաչքարի

Կառուցումը 1867թ.

Նարեկայ վանքը բախտաւորուեցաւ գործունեայ վանահայրով մը՝ Յովսէփ Բաբունի, որ 1866թ. շատ հետաքրքրութեան տեղեկութիւններ պարունակող տեղեկագիր մը գրեց Ամենայն հայոց կաթողիկոսին. տեղեկագիր մը, որ հարուստ էր Աղթամարի կաթողիկոսութեան 19-րդ դարու առաջին կէսի պատմութեամբ: Տարիներ ետք, այդ տեղեկագիրը հրատարակուեցաւ Կ. Պոլսոյ մէջ հետեւեալ խորագրով, «Տեղեկագիր աղետալի անցից եւ անկարգութեանց տանն Աղթամարայ, գրեալ Յովսէփ վարդապետի վանահօր Նարեկայ վանից, Կ. Պոլիս, 1873»:

Այս տեղեկագիրին շնորհիւ կարելոր տեղեկութիւններ հասած են մեզի Աղթամարի կաթողիկոսներէն, Խաչատուր Մոկացի (1844-1851), Գաբրիէլ Շիրոյեան (1851-1857) եւ Պետրոս Բիւլբիլ (1858-1864), գործունէութեանց մասին: Այս տեղեկագիրին մէջ պահպանուած են նաեւ Պետրոս Բիւլբիլ կաթողիկոսի բռնի գահընկեցման եւ սպաննութեան մասին կարելոր տեղեկութիւններ:

Նարեկայ վանքի վանահայր Յովսէփ Բաբունիի կարելոր գործերէն էր՝ 1867թ. Գրիգոր Նարեկացիի մատուո-դամբարանի վրայ մարմարեայ խաչքարի կանգնեցումը, որուն վրան քանդակուած էր Աստուածածինը՝ մանուկ Յիսուսը գրկին, անոնց առջեւ ծնրադիր՝ Գրիգոր Նարեկացին. քանդակը կը խորհրդանշէր Առտէր կղզիի հետ առնչուած Գրիգոր Նարեկացիի տեսիլքի պատմութիւնը, ըստ որուն Նարեկացին ունեցած է տեսիլք մը, երբ տեսած էր Առտէր կղզիին մէջ Տիրամայրը եւ փոքրիկն Քրիստոսը. անդրադարձանք այդ տեսիլքին մասին 23րդ բաժինին մէջ:

Այդ խաչքարի վրայ եղած գրութեան մասին Համագասպ Ոսկեան յիշած է, «Նարեկացիին գերեզմանին վրայ 1867ին կանգնուած է մարմարեայ խաչքար մը եւ տապանաքարին վրայ դրոշմուած՝

«Քերովբէն Նարեկայ հրեշտակ ի մարմնի,  
Մքանչելի հոետոր սուրբ Նարեկացի,  
Որոյ կենդանի հրաշագործ կմաղբ  
Կայ աստ ամփոփեալ ի սոյն տապանի:  
Ի ներկայ տարուոյս վանահայր կարգի  
Նարեկայ վանուց Յովսէփ բաբունի:  
Տապանաքարիս պատուէ զայս շիրիմ  
Ի փառս պարծանաց սրբոյ Գրիգորի.  
Յամի Տեառն 1867 Մարտ 3»:<sup>217</sup>

Գրիգոր Նարեկացիի մատուո-դամբարանի վրայ մարմարեայ խաչքարի կանգնեցման մասին տես Գծացուցակ թիւ 2:

#### 50. Երեմիա Տեկանցի Այցելութիւնը Նարեկայ Վանք 1873թ.

Խրիմեան Հայրիկ, երբ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքն էր, յանձնարարեց Երեմիա Տեկանցին<sup>218</sup>, որ հոգւոր պաշտօններ վարած էր Վարազավանքի մէջ, ապա եղած էր Վանի, Բաղէշի, Մուշի, Չմշկածագի, Արաբկիրի եւ Խարբերդի հոգւոր առաջնորդը. ճամբորդել Էրզրում, Կարս, Վասպուրական եւ գրել իր տպաւորութիւնները, տեղեկացնելով սոցիալական, տնտեսական եւ քաղաքական վիճակը այդ տարածքներու հայութեան:

Երեմիա Տեկանց 1872-1873թ., կը շրջի երեք տարածքներուն մէջ (Էրզրում, Կարս եւ Վասպուրական) եւ գրեց մանրամասնօրէն այդ տարածքներուն մէջ ապրող հայութեան մասին: Մեզի կը հետաքրքրէ՝ իր գրած մանրամասն տեղեկութիւնները Նարեկայ վանքի մասին, որոնք կը նկարագրեն ամէն ինչ 41 տարի ցեղասպանութենէն առաջ: Այդ պատճառով կը մէջբերենք իր գրածը Նարեկայ վանքի մասին, ուր այն գտնուած է 1873ի Յուլիսի 28ին. նկատելի է իր գրած հայերէնը...:

<sup>217</sup> Համագասպ Ոսկեան, էջ 207, 208:

<sup>218</sup> Երեմիա Տեկանց, Վան քաղաքի յայտնի Տեկանց կամ Տէր Մարգիսեան գերդաստանի մտաւորականներէն:

Նախ Տեկանց մանարամասն կը բացատրէ վանքի աշխարհագրական դիրքը, «Այս վանք Ռշտունեաց գաւառի մէջ բոլոր վանքերէն հնաշէն, երեւելի եւ ի հնումն հոշակաւոր մենաստան եւ ուսումնարան Հայաստանի: Նարեկայ վանք Վան քաղաքէն 8 ժամ հեռի դէպ ի արեւմտեան հարաւ, Եղերով լեւան հիւսիսային ստորոտ, ընդարձակ դաշտահովտի մը մէջ, մի բլրակի վերայ ունի իւր վսեմ եւ վայելուչ դիրք, վանքի ճիշտ արեւելեան կողմ է Ոստան եւ Արդոսոտ լեռ, արեւմտեան կողմն է Փախներ գիւղ եւ Նարեկացոյն աղօթատեղին, հիւսիսակողմ է Աղթամարայ վանք ծովն եւ Ախալանք, հարաւակողմն է Եղերովա լեռներու գօտին, այն է՝ Կորդվաց լերինք»:<sup>219</sup>

Ապա Տեկանց կը խօսի Նարեկ գիւղի եւ գիւղացիներու մասին, «Վանքի պարսպի շրջապատ կայ Նարեկայ գիւղ, որտ մէջ 70 տուն հայ ընտանիք կրնակին, այս գեղ վանքի վսեմութեան, պայծառութեան եւ առանձնակեցութեան ամենամեծ տգեղութիւն տուած է, գիւղացիք իւրեանց խոռովասէր եւ յափշտակող բարիք միշտ վանքի հարստութեան եւ յառաջդիմութեան վնասակար դիրք ունին, վանքի կալուածներ կը յափշտակեն, արտորէից մէջ իւրեանց խաշինք եւ անասունք կը կերակրեն, արածել կուտան»:<sup>220</sup>

Տեկանց «ոտք»ի<sup>221</sup> չափերով չափած է Նարեկայ վանքի բոլոր շինարարութիւնները, ու մանրամասն գրած է, «Վանքի դրսի պարսպի շրջապատ 318 քայլ է, առաջին բակի մէջ կայ մի դպրոց եւ երկու յարկերով 16 սենեակ: Այս բակի մէջ է վանքի զանգակատուն, դարպաս սուրբ Սանդիստո, սուրբ Աստուածածնի տաճարներ եւ Նարեկացոյ գերեզմանի մատուոտ:

Դարպասի բարձրութիւն 27, երկարութիւն 43, լայնութիւն 40 ոտք է, չորս քառակուսի սիւնեաց վերայ սրբատաշ մոխրագոյն քարամբ շինուած է, 7 լուսամուտ ունի, մի սեղան, ասոր աջա-

219. Երեմիա Տեկանց, Ճանապարհորդութիւն Բարձր Հայք Եւ Վասպուրական (1872-1873թթ.), ՀԳԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, 1991, էջ 292:

220. Նոյնը, էջ 292:

221. Ոտք -երկարութեան չափ հաւասար է 32-33 սանտիմետրի:

կողմն է սուրբ Սանդիստո տաճարի դուռ, իսկ ահեակ կողմն է սուրբ Աստուածածնի տաճարի դուռ, այս դրան առաջ է Անանիա եպիսկոպոսի Նարեկացոյն բեռու գերեզման»:<sup>222</sup>

Նարեկայ վանքի Ս. Սանդուխտի եկեղեցոյ մասին յիշած է, «Սուրբ Սանդիստոյ տաճարի երկարութիւն 25 եւ լայնութիւն 28 ոտք է եւ բարձրութիւն 57 ոտք է, հասակեն մինչեւ գմբէթ: Գեղեցիկ եւ բարձր կաթողիկէ մի կայ այս տաճարի վերայ: Այս տաճարի սեղանի աջակողմ է սուրբ Նարեկացոյն մատրան դուռ, որտ մէջ մտնալով եւ երկու փոքր դռնակ եւս անցնելով, սուրբ Սանդիստոյ տաճարի ետեւ շինուած մատրան մէջ մտնալով Նարեկացոյն գերեզման կհամբուրեն եւ նորա աղօթքներէն մի երկու աղօթք մըմնջելով ի աստծոյ մեղաց թողութիւն եւ երկնից արքայութիւն կը խնդրեն, հրեշտակակրօն սուրբ վարդապետի գերեզման արեւելքէն դէպի արեւմուտք դրուած չէ, այլ հիւսիսէն դէպի հարաւ, որտ պատճառն չգիտցուիր: Մատրան դիրք քառակուսի լինելով երկարութիւն եւ լայնութիւն հաւասար 11 ոտք է»:<sup>223</sup>

Նարեկայ վանքի երկրորդ եկեղեցոյ Ս. Աստուածածնի մասին յիշած է, «Սուրբ Աստուածածնի տաճարի բարձրութիւն յտտակէն մինչեւ գմբէթ 57, երկարութիւն 24, լայնութիւն 21: Սանդիստո կուսի տաճարի գմբէթի նման գեղեցիկ գմբէթ մի ունի այս տաճար: Շարունակ ժամասացութիւն դարպասի մէջ կը կատարուի եւ երբեմն տաճարոց եւ գերեզմանի մատրան մէջ պատարագ կը մատչի»:<sup>224</sup>

Տեկանց միւս շինարարութիւններու մասին յիշած է, «Դարպասի դրան վերայ կայ մի գեղեցիկաշէն եւ բարձրադիր զանգակատուն, որտ ներսէն չափելով երկարութիւն 14 եւ լայնութիւն 15 ոտք է, իսկ բարձրութիւն 82 ոտք է, յատակէն մինչեւ գմբէթի ծայր, Աղթամարայ Յարութիւն կաթողիկոս շիներ է զանգակատունս, հայոց թուին ՌՄԿԱ (=1231):

222. Երեմիա Տեկանց, էջ 292:

223. Նոյնը, էջ 292:

224. Նոյնը, էջ 292:

Վանքի ներսի բակի մէջ 17 սենեակ կայ, որո մէջն է վանահօր  
ստաջնորդարան, 1 տնտեսատուն եւ 1 մատան: Պարսպի հիսիսային  
դրսի կողմն է վանքի կաշատեղ<sup>225</sup>, որո կից է երկու մարագներ:  
Հարաւային պարսպին մերձ է 1 ձիթահան, 1 փարախ, գոմ, վանքի  
արեւելք մի ասպարէզ<sup>226</sup> հեռի 1 ջրաղաց կայ, որ ասի պարտս ունի,  
ջրաղացի հիւսիսային կողմն նորաշէն ջրաղաց մի կայ, գոր Նարեկոյ  
տարւոյն գարնան շինած է Յովսէփ վարդապետ Ամբակումա ջրա-  
ղաց:

Վանքի այժմեան վանահայրն է Յովսէփ վարդապետ, որ  
վանքի դպրոց եւ սենեակներ շինեց եւ բաւական կանոնաւորեց:  
Քանի տարի առաջ վանքի ժառանգաւորաց դպրոց բաւական յառա-  
ջադիմութեան մէջ էր: Այժմ ամառան միջոցին 28 տղայք հասարակ  
ընթերցմունք եւ քերականութեան դաս կառնուն: 20 տղայ Նարեկայ  
գիւղէն են, 8 հոգի մերձակայ գաւառներէն:<sup>227</sup>

Երեմիա Տեւկանց յիշած է նաեւ Նարեկ գիւղի տուներու թիւի  
մասին, «1873 թ. Վասպուրական այցելած Երեմիա Տեր-Սարգսեանցը  
ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում Աղթամարի կաթողիկոսու-  
թեան թեմերի մասին:

Երեմիա Տեւկանց նկարագրում է նաեւ Աղթամարի կաթողի-  
կոսութեան թեմերը, իրենց հայկական գիւղերով, նաեւ վերջիննե-  
րիս տների քանակն ու հայերի վիճակը: Նշում են հետեւեալ  
թեմերն իրենց գիւղերով:

Ա- Ռշտունիքի ութ հայկական գիւղերը՝ Փշավանք (25 տուն),  
Բատականց (30), Բախվանց (15), Քարադաշտ (10), Բողանիս (10),  
Հարբերդ (20), Նոր Գիւղ (50), Մոխրաբերդ՝ (40), Նարեկ (40)»:<sup>228</sup>

Իր տեղեկագիրին մէջ Երեմիա Տեւկանց խօսելով Նարեկայ  
վանքի մասին կը յիշէ, թէ այդ ժամանակ (1873թ.), վանքը կը պատ-  
կանէր՝ Ս. Էջմիածնի թեմին եւ ուներ 40 տուն հայ բնակչութիւն,

225. Կաշատեղ- Նկատի ունի այն սենեակը կամ վայրը, որտեղ կը պահէին վանքի եւ  
ուխտատրներու մորթած անասուններու կաշիները:

226. Ասպարէզ - Տարածութեան չափ, մօտաւորապէս 230 մէթր:

227. Երեմիա Տեւկանց, էջ 293, 294:

228. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 245, 246:

«Իսկ Նարեկայ վանք, որ սուրբ Էջմիածնայ թեմ է այժմ, նորա գիւղո-  
րայք Ռշտունեաց մէջ են, Ա. Նարեկ 40 տուն: Բ. Փախներ 30 տուն:  
Գ. Վերին Մորին 8 տուն»:<sup>229</sup>

Թէեւ Նարեկայ վանքը 1873թ., կը պատկանէր Ս. Էջմիածնին,  
սակայն ան Աղթամարի կաթողիկոսութեան իւրաքանչիւր տարի կը  
վճարէր, «Աղթամարի կաթողիկոսութեան հոգեւոր իրաւասութեան  
տակ էին գտնուում Հայոց ձոր, Գալաշ, Կարճկան, Շատախ,  
Նորդոզ, Մոկս, Խիզան, Կառկա գաւառները:

Աղթամարի Վանքը տարեկան Մոկսի Փութկու ու Գէորգ  
վանքից ստանում էր 200 ոսկի, Նարեկայ վանքից՝ 100 չափ ցորեն<sup>230</sup>,  
Մոխրաբերդի Կարմրակ, Նորգիւղի ու Գէորգ եւ այլ վանքերից՝ 20-  
ական չափ ցորեն:

Ե. Տեւկանցի 1873թ. կազմած վիճակագրութեան համաձայն  
Աղթամարայ վանքը ինը գաւառների մէջ ուներ 4782 տուն բնակիչ»:<sup>231</sup>

## 51. Վասպուրականի Մէջ Ստեղծուած Հայ Գրականութեան Նոր Դպրոցը Եւ Նարեկայ Վանքը

Խրիմեան Հայրիկը իր գրական եւ քարոզչական գոր-  
ծունեութեամբ, ազգի եւ հայրենիքի գաղափարները կապեց հայ  
գիւղացիի խոնարհ խաւերու հետ: Ան պատրաստեց հոգեւոր եւ  
աշխարհիկ գործիչ-ուսուցիչներու սերունդ մը, որոնք բարձրա-  
ցուցին ազգային ինքնաճանաչումը, եւ զարգացուցին յեղափոխա-  
կան գաղափարախօսութիւնը:

1870-ական թուականներուն Վասպուրականի մէջ զարգա-  
ցաւ հայ գրականութեան նոր դպրոց մը, որ կոչուեցաւ Վանի կամ  
Վարազի դպրոց: Գրականութեան այս դպրոցի ստեղծման մէջ,  
մեծ դեր ունեցած է Վանայ լիճը. որ ըստ Լէօի ազդած է նաեւ  
Նարեկայ վանքի մէջ ապրող եւ ստեղծագործող Գրիգոր  
Նարեկացիին վրայ: Այդ գրական դպրոցի մասին մեջբերենք

229. Երեմիա Տեւկանց, 222:

230. Զափ- Բեռի միատր, կ'ըսուէր մէկ չափ ցորեն, մէկ չափ գարի: Արեւմտեան  
Հայաստանի տարբեր վայրերու մէջ չափը տարբեր է եղած:

231. Հ. Ս. Պօղոսեան, էջ 42:

Առե՛ն, «Մի տաղանդաւոր ժողովորդ էր (Վանայ լճի) այս ափի թնակչութիւնը եւ կատարեց նա այդ մեծ պատմական գործը վարպետօրէն: Տաղանդաւոր էր նա թէ՛ իր արհեստներով եւ թէ՛ գրական հիւստողութեան թափով եւ այդ պատճառով էր, որ այնքան շատ տուեց բանաւոր վէպեր, երգեր, գրոյցներ:

... Լիճը բանաստեղծութիւն է սովորեցնում իր եզերքի թնակչութեանը, որ ամէն դէպքում ճակատագրի սահմանած բոլոր դիրքերում մնաց բանաստեղծ-մտածող, նոյնիսկ վանքի մոսայի խուցի մէջ էլ կարողացաւ Գրիգոր Նարեկացու մեծութիւնը պարփակել:

... Եւ ահա, անցեալ դարի յիսնական թուականներից Վանն իջնում է գրական հրապարակ, որ մի կարճ միջոցով թողնում է խոր հետքեր, մի ամբողջ նոր ուղղութիւն է հաստատում: Ծագում է Վանի, կամ աւելի ճիշտ, Վարագի դպրոցը, որի հիմնադիրն ու ոգին է Խրիմեան Հայրիկը: Դպրոց է դա ոչ միայն իր նեղ մասնագիտական մտքով: Այդ դպրոցը գրականութիւն էլ էր կրում: Նրա կռած-կոփածն է Վանի գրականութեան թագն ու պարծանքը՝ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցը: Դպրոցի շունչ ու հոգի ներշնչողը հիմնադիրն էր՝ Խրիմեանը, որ օժտուած գրական փայլուն տաղանդով, խօսքով ու գրով յուզելու մեծ ձիրք էր ստացել, կրակոտ հայրենասէր, ժողովրդի մարդ, ժողովրդական մարդ, որին տուած էր բազմութիւններ դիւրելու շնորհքը»:<sup>232</sup>

Հայ գրականութեան այս դպրոցը կամ գրական հոսանքը հաստատեց կարեւոր ճշմարտութիւնը, որ Հայ գրականութեան հիմքն ու յենարանը կը ներկայանայ Հայկական լեռնաշխարհի սիրտը, ուր պատմութեան սկիզբէն կազմակերպուած է Հայ ժողովուրդը եւ ստեղծած է իր հոգեւոր եւ նիւթական մշակոյթը...:

## 52. Նարեկայ Վանքի Դպրոցի Գործունէութիւնը

Աղթամարի թեմերուն պատկանող հայութիւնը կը շարունակէր դժգոհիլ եւ բողոքել Աղթամարի Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսի գահակալութենէն, ինչպէս անդրադարձանք ան սպաննել տուաւ իր նախորդ Պետրոս Բիւլբիլ կաթողիկոսին 1864թ., եւ զարթեց կաթողիկոսական աթոռը: Ան իր գործունէութեամբ ցոյց տուաւ անտարբերութիւն կրթական-դաստիարակչական համակարգի գործունէութեան, որուն վիճակը շատ խղճալի էր: Բայց պատկերը այդպէս սեւ չէր Նարեկայ վանքի պարագային, ուր «1880թ. մայիսի 30-ին Նարեկավանքի վանահայր Յովսէփ վարդապետը նշում էր, որ վանքում ունեն դպրոց, որը գործում էր «վաղուց հետէ»:<sup>233</sup>

Կ. Պոլսոյ Հայոց Ազգային ժողովը 1884թ.՝ իր նիստերուն մէջ կը քննէ Աղթամարի Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսի ազգավնաս գործերը: Կը քննուի նաեւ Աղթամարի կաթողիկոսութեան ընդհանուր վիճակը, որուն մասին կը լուսաբանուի, «Նիստին նշուեց, որ Աղթամարի թեմերուն ընդգրկուած են աւելի քան 400 հայկական գիւղ ու գիւղաքաղաք, 66 վանք եւ բազմաթիւ եկեղեցիներ՝ «ընդարձակ եւ պտղաբեր անդաստանօք եւ եկամտօք», սակայն վանքերում տարիներով պատարագ չի մատուցում: Որոշ վանքեր նոյնիսկ դարձել են «անասնոց որջ եւ ... չարագործաց ապաստանարան»: Թեմերում դպրոցներ չեն բացուել, գոնէ օրինակ վերցնէին Նարեկայ վանքի հնօրեայ եւ գործող դպրոցից»:<sup>234</sup> Կ. Պոլսոյ Հայոց Ազգային ժողովի ատենագրութեան այս մէջբերման մէջ շատ յստակ շեշտուած է, թէ Նարեկայ վանքը իր գործունէութեամբ բարի նախանձի եւ յաջող օրինակի աղբիւր էր, որմէ բոլոր վանքերը կարող էին օգտուիլ, բայց դժբախտաբար շատերը չօգտուեցան...:

232. Լ.Էօ, Երկերի ժողովածու, Թ. հատոր, Երեւան, 1989, էջ 369-382:

233. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 252, Ատենագրութիւն Ազգային ժողովի, 1880-1882, էջ 214:

234. Վրէժ Վարդանեան, նոյնը, էջ 255, Ատենագրութիւն Ազգային ժողովի, 1886 թ. յունիսի 20, Բ. նիստ, էջ 7:

Միջին դարերուն, երբ աշխարհիկ դպրոցները գոյութիւն չունէին, մեր վանքերը կը ներկայանային որպէս հայ մշակոյթի պահպանման եւ զարգացման կեդրոններ. սակայն պատկերը շատ տխուր ու մտայ էր 19-րդ դարուն, երբ հայկական վանքերէն շատերը կորսնցուցած էին իրենց այդ կարեւոր դերակատարութիւնը ու շատ հետագայ իրենց ազգային եւ մարդկային առաքելութիւններէն. այդ վանքերու միաբանութիւնները կը զբաղուէին հայ ժողովուրդէն հոգեւոր հարկեր հաւաքելով եւ հարստանալով: Այդպէս էր պատկերը Աղթամարի կաթողիկոսութեան պատկանող 466 գիւղերուն, գիւղաքաղաքներուն եւ վանքերուն. բայց իրավիճակը այլ էր Նարեկայ վանքի պարագային, որ շնորհիւ իր խոհեմ վանահայրերու կը շարունակէր իր կրթական առաքելութիւնը եւ հաստատուն կը պահէր իր դպրոցի գոյութիւնը, ոչ նման միւս վայրերուն, որոնք կը գտնուէին Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսի անմիջական հսկողութեան ներքեւ: Երբեմնի կարեւոր մշակոյթի հնոց Նարեկայ վանքը, որ Վասպուրականի մէջ իր գործունէութեամբ կը նմանցուէր Սիւնեաց աշխարհի Տաթևին, այժմ թէև շատ աւելի խեղճացած, սակայն կը շարունակէր իր գործունէութիւնը:

Անդրադարձանք, թէ Նարեկայ վանքը 1873թ. կը պատկանէր Ս. Էջմիածնին. շատ յստակ է, թէ այդ էր պատճառը, որ ան յաջողեցաւ հաստատ եւ կայուն պահել իր կրթական գործունէութիւնը Աղթամարի Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսի գահակալութեան ոչ բարենպաստ տարիներուն:

### 53. Օրմանեանի Այցելութիւնը Նարեկայ Վանք 1886 ին

Տարիներէ ի վեր Աղթամարի կաթողիկոսութեան գործունէութիւնը շատ մտահոգիչ էր Կ. Պոլսոյ Պատրիարքարանին եւ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Աթոռին: Մտահոգիչ հարցերը աւելի սաստկացան Աղթամարի Խաչատուր Շիրոյեանի գահակալութեան առաջին օրէն: Այսպէս, 1886թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Մակար Ա. Թեղուտցի (1885-1891) եւ Ազգային ժողովը քննելով Աղթամարի Աթոռի տխուր վիճակը կը յանձնարարէ նոր ձեռնադրուած կայսկոպոս՝ Մաղաքիա Օրմանեանին երթալ Վասպուրական եւ տեղւոյն վրայ

քննել իրավիճակը: Օրմանեան այցելած է Վան, ապա եւ Աղթամար, ու մանրամասն քննած իրավիճակը, «40 օր Օրմանեանը մնացել էր Վանում եւ այդ ընթացքում յաջողուեց հիմքից վերացնել, բնաջնջել դեռեւս 60-ականներից Վանում մոլեգնող պողոսեան-ապողոսեան պայքարը: Պօղոս Մելիքեանի խնդիրը յաջողութեամբ լուծելուց յետոյ Օրմանեանն ուղեւորում է Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի եւ իր վարդապետների վեճը հարթելու նպատակով: Երկու օր մնում է այնտեղ, քննութիւններ կատարում եւ իր կարծիքը ուղարկում պատրիարքարան: Դրանից յետոյ հերթականութեամբ այցելում է Նարեկավանք, Կասպուտկոդ, Կարճկան, մտնում է Բաղէշ, շրջում մօտակայ վանքերն ու եկեղեցիները, Խլայթի ճանապարհով գնում է Թեղուտի վանքը...»:<sup>235</sup>

Օրմանեանի հանդիպումները Վանի եւ Աղթամարի մէջ ժամանակատրապէս հանդարտեցուցին իրավիճակը, «Օգոստոսի 5-ին Օրմանեանը Վանից մեկնում է Աղթամար, նախ քննութեան առնում Խաչատուր կաթողիկոսի ոսկիների՝ վերը նշուած գործութեան խնդիրը, որից յետոյ մեկնում է Նարեկայ եւ Սորբա վանքեր, ապա՝ Բաղէշ, իսկ օգոստոսի 13-ին հասնում է Կարին: Մ. Օրմանեանի այցելութիւնից յետոյ Վանում եւ Աղթամարում որոշ չտիով կրթերը հանդարտուեցին»:<sup>236</sup>

Նկատելի է, որ Օրմանեանի այցելած վանքերու շարքին առաջին տեղին կը յիշուի Նարեկայ վանքը, ինչ որ կը յուշէ մեզի, թէ այդ ժամանակ ան իր դիրքով եւ գործունէութեամբ կարեւոր բարձունքի վրայ էր:

Ամենայնդէպս պետք է նշել, որ Աղթամարի կաթողիկոսութեան հետ առնչուած հարցերը վերջնականապէս չլուծուեցան մէկէ աւելի պատճառներով, որուն յետին կանգնած էին Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսը իր համակիրներով, Վանի առաջնորդարանն ու մեծամեծները, ինչպէս եւ թուրք ու քիւրտ ազդեցիկ անձիք:

<sup>235</sup> Էմինա Կոստանդեան, Դրուագներ Մաղաքիա Արքեպիս. Օրմանեանի Կեանքից եւ Գործունէութիւնից, Ակատեմիա, Պատմութեան Ինստիտուտ, Երևան, 2015, էջ 184:

<sup>236</sup> Կրեժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 261:

«Թո՛ղ որ հոչակուած հասնի  
 ազգերին,  
 Ժողովուրդներին քարոզուի ի լուր,  
 Տպուի դռներին բանականութեան  
 Եւ զգայութեան սեւերի վրայ  
 դրոշմուի ամուր:  
 Ու թէպէտ որպէս մի  
 մահկանացու՝ պիտի վախճանուեմ:  
 Բայց այս մատեանի  
 յարակայութեամբ կը մնամ անմահ:  
 Գ. Նարեկացի

## Զ. ԳԼՈՒԽ

### ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԸ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

#### 54. Նարեկայ Վանքը Համիդեան Ջարդերու Ժամանակ

1894թ. Վանի թուրք նոր կուսակալը դիմեց Վանի հայութեան դէմ շատ խիստ քայլերու, ամէն տեղ կը յայտարարէր, որ եթէ որեւէ տան մէջ հայ հայրուկ գտնուի, ապա այդ տունը կը հրդեհուի, եւ տան տղամարդիկ 3 տարի եւ աւելի ժամանակով կը բանտարկուին, եւ տան ունեցուածքը կը գրաւուի Օսմանեան պետութեան կողմէ:<sup>237</sup>

Դէպքերը զարգացան ոչ ի նպաստ հայութեան. 1895 թուականը Օսմանեան կայսրութեան լուծին տակ ապրող հայութեան համար եղաւ շատ դժբախտ տարի մը: Մայիս ամսուն երեք գերպետութիւնները՝ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա եւ Ռուսաստան պահանջեցին Օսմանեան կայսրութենէն գործադրութիւն՝ 1878թ. Բերլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածին, որուն համաձայն Օսմանեան կայսրութեան Հայկական նահանգներուն մէջ բա-

237. Հ. Մ. Պօղոսեան, էջ 256:

րենորոգումներ պիտի կատարուէին: Հոկտեմբերի 3-ին, գերպետութիւնները ներկայացուցին վերջնական ծրագիրը, որուն համաձայն պէտք էր անմիջապէս գործադրուէր խոստացուած բարենորոգումները. բայց սուլթան Աբդուլ Համիդը բարենորոգումներու փոխարէն սկսաւ ջարդեր կազմակերպել, որոնք սկսան 1895թ. Սեպտեմբերի 30-ին, Պոլսոյ մէջ եւ քանի մը օրէն կոտորածը անցաւ Մեւ ծովի ափերը եւ ապա Օսմանեան կայսրութեան Արեւելեան նահանգները (Հայկական նահանգները), ուր 1895-1896 թուականներուն ջարդուեցան մօտաւորապէս 300,000 հայեր:

Վանը՝ որպէս հայաշատ կարեւոր կեդրոն ենթարկուեցաւ Համիդեան ջարդերուն, որոնք սկսան քաղաքին մէջ 1896թ., Յունիսի սկիզբին: Վան քաղաքի հայութիւնը դիմեց ինքնապաշտպանութեան եւ ամբողջ մէկ շաբաթ հերոսաբար դիմադրեց թրքական կանոնաւոր բանակի յարձակումներուն:

Վասպուրականի գիւղերու հայ բնակչութենէն շատերը փրկուեցան պատսպարուելով Վանայ լիճի Աղթամար, Լիմ եւ Կտուց կղզիներուն մէջ: Կարեւոր է մէջբերել հետեւեալ տեղեկութիւնները մեզի հասած Կաթողիկոսարանի դիւանի թուղթերէն, ուր ամփոփուած են Համիդեան ջարդերուն Վասպուրականի հայութեան մարդկային վնասները, «Ամփոփելով *հաւարուած նիւթերը, զեկուցագրի հեղինակը գալիս է այն եզրակացութեան, որ Վասպուրականի գաւառներում աւերուեցին, կողոպտուեցին 125 գիւղեր, սպաննուեցին 5336 հոգի (որոնցից 33 հոգւոր անձինք), վիրաւորուեցին՝ 141, առեւանգուեցին եւ բռնաբարուեցին՝ 301, անյայտ կորան՝ 154 եւ կրօնաւորիս Լեղան 6176 հոգի: Ջարդարարները վառեցին 8 եկեղեցի եւ 20 վանք»:<sup>238</sup> Կողոպտուած ու հրկիզուած յիշեալ կարեւոր վանքերէն ու եկեղեցիներէն էին, Նարեկայ վանք, Վարազավանք, Կարմրաւորի, Ս. Խաչի, Ս. Գրիգոր Լուսաւորչի, Մեծոփայլ, Անգղի, Ս. Աստուածածնայ,*

238. Հ. Մ. Պօղոսեան, էջ 282. քաղելով Մատենադարան, Կաթ. դիւան, թղթ. 236 ա, վա. 226, թ. 9:

Մայիսյան վանքերը:<sup>239</sup> Միայն Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին չեն բարկուեցաւ կողոպուտի, որովհետեւ, «Քրդերը չհամարձակուեցին կողոպուտել այս վանքը, քանի որ "ուխտի կու գային այնտեղ եւ հուէրներ կը բերէին":<sup>240</sup>

Վայրենաբար կողոպտուեցան ու հրկիզուեցան Վասպուրականի գրեթէ բոլոր նշանաւոր վանքերը, «Անգթաբար կողոպտուեց Նարեկայ վանքը, խորտակուեց մեծ բանաստեղծ Գ. Նարեկացու գերեզմանի վրայ եղած քարը»:<sup>241</sup> Նարեկայ վանքը թալանուեցաւ Գաւաշի յոնապետ քիւրդ Գուլի խանի կողմէ, «Կողոպտուեցան եւ մեծաւ մասամբ այրեցան Նարեկի, Վարագի, Կարմրատրի, Ս. Խաչի, Ս. Գրիգոր Լուսաւորչի, Մեծուփայլ, Անգղի, Ս. Աստուածածնայ, Մայիսակ վանուց եւ այլն, մեծ ու փոքր վանորայք, եւ վանահայրք ու միաբանական անդամք ալ մեծաւ մասամբ սպաննուեցան»:<sup>242</sup>

Բարբարոսաբար վարուեցան Նարեկայ վանքի վանահայրի մարմինին հետ, «Նարեկի վանահայր եւ հանգուցեալ կաթողիկոսի եղբորորդի Տ. Եղիշէ վարդապետի գլուխն կտրուելով, շուներու առաջ կը ձգուի, որք գայն կը տանին մինչ Վրկիկնէս քիւրդ գիւղն: ... Ս. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ»:<sup>243</sup>

Եղիշէ վարդապետի նահատակութեան մասին մեջբերենք Երուանդ Լալայեանէն, «1896 թուի Տաճկահայոց կոտորածների ժամանակ Գաւաշի բռնապետ քիւրդ Գուլի-խան բէկը յարձակուել է Նարեկի վանքի վրայ, սպաննել վանահայր Եղիշէ վարդա-

239. Մերգեյ Վարդանեան, Հայաստանի Մայրաքաղաքները, էջ 29. քաղելով Մուրճ, 1904, թիւ 8, էջ 32, տես՝ Հ. Ղազարեան, նշւ. աշխ., էջ 314:

240. Ա. դարբինեան, Հայ Ազատագրական Շարժման Օրերէն Յուշեր 1890-էն 1940, էջ 164-165:

241. Հ. Ս. Պօղոսեան, էջ 282. քաղելով Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236 ա, վա. 226, թ. 8:

242. Մերգեյ Վարդանեան, նոյնը էջ 29. քաղելով Մուրճ, 1904, թիւ 8, էջ 32, տես՝ Հ. Ղազարեան, նշւ. աշխ., էջ 314:

243. Նոյնը, էջ 314:

պետին իւր տասներկու մարդկանց հետ, թալանել վանքը, ինչպէս եւ՝ գիւղը՝ կոտորելով 130 հոգի»:<sup>244</sup>

Օսմանեան կայսրութեան նպատակն էր ազատուիլ հայ բնակչութենէն, այդ նպատակով ան կազմակերպեց Համիդեան ջարդերը. ու չքաւականացաւ այդ ջարդերու կազմակերպութեամբ, այլ աշխատեցաւ որքան կարելի էր մեծ թիւով հայութիւն իսլամացնել: Համիդեան ջարդերուն բազմաթիւ գիւղերու հայ բնակչութեան ստիպեցին ընդունիլ մահմեդականութիւնը, այդ գիւղերէն մէկն էր Նարեկը, սակայն որու բնակիչները երկար չհանդուրժեցին այդ ճնշման, «1895թ. վերջերին եւ 1896թ. սկզբներին Վանի նահանգի Զախող, Օողտու, Տապ, Խրոտենց, Միջկանց, Մուլք-Գիճի, Արգինց եւ Հախտ գիւղերի բնակիչներին սպառնալիքի տակ ստիպեցին ընդունել մահմեդական կրօնը: Նոյն բանը շատ չանցած արուեց նաեւ Փայխներ, Նարեկ, Վերին Մարին, Շադոսեն, Վարենց, Փիշավկանք, Պատկանաց, Դելոգ, Մմբոն, Ուղուց, Բիկանց եւ այլ գիւղերի բնակիչների նկատմամբ»:<sup>245</sup> Այսօր, Թուրքիոյ մէջ միլիոնաւոր իսլամացած կամ ծպտեալ հայերէն՝ մաս կը կազմեն Համիդեան ջարդերու տարիներուն բռնի իսլամացած հայերը:

## 55. Նարեկայ Վանքը Էջմիածնի եւ Աղթամարի Միջեւ

Նարեկայ վանքը իր 10 դարեր տեւող պատմութեան ընթացքին. հիմնադրութեան օրէն՝ 10-րդ դարուն ենթարկուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսական աթոռին: Սակայն երբ հիմնուեցաւ Աղթամարի Կաթողիկոսական աթոռը աշխարհագրականօրէն Նարեկայ վանքին շատ մօտիկ Աղթամար կղզիին մէջ, ինչպէս անդրադարձանք 34-րդ բաժինին մէջ, 1113թ. բնակաւնաբար այդ նորաստեղծ եւ մօտիկ Կաթողիկոսական աթոռը պիտի ունենար՝ իր մեծ ազդեցութիւնը Նարեկայ վանքի գործունէութեան վրայ:

244. Երուանդ Լալայեան, Վասպուրական (Նշանաւոր Վանքեր), էջ 22:

245. Հ. Ս. Պօղոսեան, էջ 261:

Ու կրթ. Հայոց Հայրապետական Աթոռը հաստատուեցաւ Ս. Էջմիածնի մէջ 1441թ., ինչպէս անդրադարձանք 38-րդ բաժինին մէջ, եղան ժամանակաշրջաններ, երբ Նարեկայ վանքը ենթարկուեցաւ Ս. Էջմիածնին եւ ոչ թէ Աղթամարի կաթողիկոսութեան:

Այդ թուականէն ետք Նարեկայ վանքը ընդհանրապէս ենթարկուեցաւ Աղթամարին եւ ոչ թէ Էջմիածնինին. այդ իրավիճակին մէջ զգալի էին երկրի քաղաքական զարգացումները եւ Նարեկայ վանքի աշխարհագրականօրէն մօտիկութիւնը Աղթամարին: Սակայն եղան պատմաշրջաններ, երբ Նարեկայ վանքը ենթարկուեցաւ Ս. Էջմիածնինին. այդպէս էր վիճակը 19-րդ դարուն, եւ այդ էր պատճառը, որ ան յաջողեցաւ հաստատ եւ կայուն պահել իր կրթական գործունէութիւնը եւ շարունակել իր կրթական առաքելութիւնը պահելով իր դպրոցի գոյութիւնը, ոչ նման միւս վայրերուն, որոնք կը գտնուէին Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսի անմիջական հսկողութեան ներքեւ:

Աղթամարի Խաչատուր Շիրոյեան կաթողիկոսի գահակալութեան ոչ բարենպաստ տարիներուն, Աղթամարի կաթողիկոսութեան ենթարկուող 466 գիւղերուն եւ գիւղաքաղաքներուն եկեղեցիներն ու վանքերը շատ հեռացած էին իրենց ազգային եւ մարդկային առաքելութիւններէն, եւ դարձած էին ժողովուրդէն հարկեր հաւաքելու եւ հարստանալու հաստատութիւններ: Իր տեղեկագիրին մէջ Երեմիա Տեւկանց խօսելով Նարեկայ վանքի մասին կը յիշէ, թէ այդ ժամանակ (1873թ.), վանքը կը պատկանէր Ս. Էջմիածնի թեմին եւ ուներ 40 տուն հայ բնակչութիւն: Թէեւ Նարեկայ վանքը 1873թ., կը պատկանէր Ս. Էջմիածնին, սակայն ան Աղթամարի կաթողիկոսութեան իւրաքանչիւր տարի կը վճարէր 100 չափ ցորեն:

Խաչատուր կաթողիկոսը շատ լաւ յարաբերութիւններու մէջ էր Օսմանեան իշխանութեանց հետ. ան համագործակցելով այդ իշխանութեանց հետ կարողացաւ մնալ Աղթամարի կաթողիկոսական գահին 1864էն՝ մինչեւ իր մահը 1896թ.: Ճնշումներ բանեցնելով յաջողեցաւ Նարեկայ վանքն ալ ենթարկել Աղթամարի կաթո-

ղիկոսութեան. եւ այդպէս վանքի բարեբաստիկ վիճակը երկար չտևեց, եւ ան թեւակոխեց գործունէութեան տկար շրջան մը, դառնալով լոկ գիւղական եկեղեցի:

#### 56. Աղթամարի Վերջին Կաթողիկոս Խաչատուր Շիրոյեանի Մահը

Բազմաթիւ հայ գիւղացիներէն բողոքի նամակներ դրկուած են Պոլսոյ Պատրիարքարանին՝ Խաչատուր Շիրոյեանի կատարած հարստահարութիւններու մասին. ան իր պաշտօնավարութեան ընթացքին շատ անվայել եւ տմարդի վարուեցաւ իր հօտին հետ:

Այդ բազմաթիւ հայ գիւղացիներէն էր նաեւ մեզ հետաքրքրող Նարեկ գիւղի բնակիչներէն մէկը, որ 1895թ. Յուլիսի 23-ին, Աղթամարի կաթողիկոսի չարագործութիւններու մասին բողոքի նամակ մը գրած է Մկրտիչ Խրիմեանին, որ այդ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսն էր, «*Խաչատուր կաթողիկոսն իմ ազգրակս բռնութեամբ տիրեց, եւ եկայ ձեզ մօտ Պօլիս, դուք ինձ տարաք Յարութիւն պատրիարքի մօտ եւ ասացիք՝ դու գնա, պատրիարքը թուղթ ուղարկեց Խաչատուր կաթողիկոսին, այդ նամակի պատճառով եւս գնացի երկիր, իսկոյն զանգատուեց իշխանութեանը եւ ինձ բռնութեամբ բանտ դրեց մինչեւ մի եւ կէս տարի, յետոյ իմ բարեկամներս հաւաքեցին երեսուն ոսկի, ջարմա տալով տաճկաց՝ հազիւ հազ ազատեցին»<sup>246</sup>*

Խաչատուր կաթողիկոսը նաեւ վնաս հասցուց մեզի հետաքրքրող Նարեկայ վանքին. անոր ջանքերով Նարեկայ վանքը, որ կ'ենթարկուէր Ս. Էջմիածնին ստիպուեցաւ ենթարկուիլ Աղթամարի կաթողիկոսութեան, եւ այդպէս թեւակոխեց գործունէութեան տկար շրջան մը, դառնալով լոկ գիւղական եկեղեցի:<sup>247</sup>

246. Հ. Մ. Պօղոսեան, էջ 175, քաղուած Մատենադարան, արխիւ Խրիմեան կաթողիկոսի, թղթ. 103, վառ. 80:

247. Երուանդ Լալայեան, էջ 22:

Խաչատուր կաթողիկոսը շատ լաւ յարաբերութիւններու մէջ էր Օսմանեան իշխանութեանց հետ. ան համագործակցելով այդ իշխանութեանց հետ, կարողացաւ մնալ Աղթամարի կաթողիկոսական գահին 1864էն՝ մինչեւ իր մահը 1896թ.: Որովհետեւ լաւ ծառայած էր կարմիր սուլթան Համիդ Բ-ին, անորմէ ստացած էր երկու շքանշաններ: Ան իր եսապաշտութիւնը լաւագոյն կերպով արտայայտեց, երբ իր մահէն երեք տարի առաջ պատրաստել տուաւ իր շիրմաքարը, «Մահից առաջ 1893 թ. Խաչատուր Շիրոյեանը արդէն պատրաստել էր իր շիրմիւր, որի եւ Ախաւանքի վեհարանի վրայ գրուած վիմագիր արձանագրութեան մէջ քծնանքի խօսքեր էր գրել սուլթան Համիդի մասին»:<sup>248</sup>

Խաչատուր Շիրոյեան վատահոշակ կաթողիկոսի մահով 1896թ. վերջ տրուեցաւ Վասպուրականի մէջ 1113թ. հիմնուած Աղթամարի կաթողիկոսական աթոռին. եւ մինչեւ 1915թ., Աղթամարի կաթողիկոսութեան նշանակուեցան կաթողիկոսի տեղապահներ:

### 57. Նարեկայ Վանքի Որբանոցը

Համիդեան ջարդերուն ի հետեանք Արեւմտեան Հայաստանի մէջ մեծ թիւով որբեր կային. Վանի մէջ անոնց թիւը կը հասնէր 6000-ի: Անոնց հոգատարութեան համար Վասպուրականի մէջ բացուեցան թիւով 4 որբանոցներ, որոնցմէ մէկը Նարեկայ վանքի մէջ էր: Այդ որբանոցները պատասպարեցին միայն մօտ 500 որբ. մնացածները ձգուեցան իրենց ճակատագիրին:<sup>249</sup>

Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Շիրոյեանի մահէն ետք 1896թ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը Վանի առաջնորդական տեղապահ Արսէն վարդապետ Մարգարեանը նշանակեց կաթողիկոսական տեղապահ. վերջինս յաջողակ կերպով կառավարեց Աղթամարի կաթողիկոսութեան թեմերը. Նարեկայ վանքի որբանոցի կառուցումը տեղի ունեցաւ իր

ջանքերով, «Արսէնը գործունեայ էր եւ կարողացաւ պահպանել Աղթամարի վանքի կալուածները՝ դրանց աւելացնելով նորերը: Նրա արգասաւոր գործունէութեամբ, գրուած է ժամանակակիցը, Աղթամարի աթոռը «Կաթողիկոսի օրէն աւելի բարեկարգ վիճակի մը տիրացուցած է» Արսէնը կառուցել տուեց մի քանի շէնքեր, Ախաւանքի եկեղեցին, հիմնեց նոր դպրոցներ, Վանում՝ որբանոց, Աղթամարի ժառանգաւորաց վարժարանը, Նարեկ գիւղում՝ որբանոց եւ ժողովրդական վարժարան»:<sup>250</sup>

Նարեկայ վանքի մէջ հիմնուած որբանոցը կը հաստատէ, թէ ան այդ հանգրուանին տակաւին կը ներկայանար, որպէս Վասպուրականի կարելոր հոգւոր եւ մշակութային կեդրոններէն. Նարեկայ վանքի վանահայր Աթանանցի Յովհաննէս վարդապետը կը կառավարէր վանքի մէջ հիմնուած կանոնաւոր որբանոցը. «Աթանանցի Յովհաննէս վարդապետ. յիշուում է Նարեկայ վանքի որբանոցի առնչութեամբ. «Նարեկայ վանքը նոյնպէս քանի մը տարի պիտի ունենար իր կանոնաւոր որբանոցը՝ շնորհիւ Աթանանցի բարեկրօն Յովհաննէս վարդապետին...»:<sup>251</sup>

Նարեկայ վանքի որբանոցի մասին Ե. Լալայեան յիշած է, թէ ան շատ կարճ կեանք ունեցաւ, «Յաջորդ տարին այստեղ բացուել է Ջանշեանի որբանոցը, որ միայն մի քանի տարի է գոյութիւն ունեցել»:<sup>252</sup>

Այսպէս Համիդեան ջարդերուն Նարեկայ վանքը ենթարկուեցաւ կոտորածի ու կողոպուտի. սակայն շինարար եւ ստեղծագործ հայութիւնը այդ բոլորէն ետք կրկին կեանք պարգեւեց այդ վանքի գործունէութեան, որ շարունակուեցաւ մինչեւ իր վերջնական նահատակութիւնը ցեղասպանութեան ժամանակ 1915թ.:

250. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կաթողիկոսութեան Պատմութիւն, էջ 268, քաղուած Բիւզանդիոն, 1900 թ., թիւ 1204:

251. Սամուէլ Կարապետեան, Հայաստանի Պատմութիւն, Ա. հատոր (Հայոց Ձոր), Հայկական Ճարտարապետութիւնն Ուսումնասիրող Հիմնադրամ, Երեւան 2015, էջ 37, քաղուած Երամեան Հ., նշվ. աշխ., էջ 456:

252. Երուստի Լալայեան, էջ 22:

248. Հ. Մ. Պողոսեան, էջ 175, քաղուած Բիւզանդիոն, 1900, N 1204:

249. Նոյնը, էջ 282. քաղելով Լումա, գիրք Ա., 1899, էջ 202:

Կ. Պոլյայ «Ազատամարտ» թերթը խօսելով Վասպուրականի վանքերու դպրոցներու մասին, գրած է, «1890-ական թուականներին Վասպուրականում գործող 70-ից ավելի վանքեր մնացին կրթութեան համար անարդիւնաւետ վիճակում: Միայն մի քանի վանքեր՝ Վարագավանքը, Կարմրաւորը, Աղթամարի ս. Խաչը, Նարեկը, Բարդուղիմէոսը, Լիմն ու Կտուցի անապատները, վերածուցին որբանոցների: Մակայն դրանք փակուեցին 1902թ. նոյեմբերի դադարեցման պատճառով»:<sup>253</sup> Անհրաժեշտ է յիշել այստեղ, որ համաձայն Յեղասպանութենէն վերապրած Նարեկ գիւղի բնակիչներու յիշատակութիւններուն, անոնք աշակերտած են Վանքի դպրոցը 1910թ., որ ունէր եօթ դասարանով դպրոց, ուր աղջիկներն ու տղաները առանձին էին, ինչպէս պիտի անդրադառնանք յաջորդ էջերուն մէջ:

Պետք է նշել, թէ 1896թ. ետք Նարեկայ վանքը այլևս երբեք չդարձաւ իր անցեալի բարձունքին, այլ բռնեց տկարացման ճամբան. եւ 1903թ. երբ գայն այցելեց Խաչատուր Լեւոնեանը իր յուշերուն մէջ գայն բնութագրեց «լքուած ու մոռցուած» վանք:

#### 58. «Լքուած Ու Մոռցուած» Վանքը 1903թ.

Բաւական լայն տեղեկութիւններ ձեռք բերինք Նարեկայ վանքի մասին՝ շնորհիւ բազմախմուտ Վասպուրականի հողին ու ջուրին լաւ ծանօթ մտաւորական Խաչատուր Լեւոնեանէն, որ 1903թ. Ս. Գրիգոր Նարեկացիի մահուան 900 ամեակին առիթով՝ Յուլիս ամսուն այցելած է Նարեկայ վանքը եւ թուղթին յանձնած շատ կարեւոր ուսումնասիրութիւն մը. այս առիթով գրած է, «Այս տարի Ս. Գրիգոր Նարեկացոյ մահուան իննհարիւր ամեակն ըլլալով, պէտք էր որ այն առթիւ հանդիսաւոր արտայայտութիւն մը տեղի ունենար Հայ. Եկեղեցոյ կողմէն, ի պատիւ իր շատ սիրած Սուրբին խնկելի յիշատակին, բայց ցարդ որեւէ նշան մը

երեւցած չէ այս մասին: Ուստի ես, իբրեւ նոյն համայնքին մէկ խոնարհ անդամը, կը փութամ իմ կողմէն ընել այս արտայայտութիւնը, գրելով սոյն յօդուածն եւ նուիրելով անոր վախճանումին իննհարիւրամեակի սուրբ յիշատակին, - յօդուած՝ որ կը բաղկանայ կրօնապատմական եւ տեղագրական խառն նօթերէ»:<sup>254</sup>

Այս այցելութեան ընթացքին Խաչատուր Լեւոնեան դուրս ելլելով Գրիգոր Նարեկացիի աղօթատեղիէն վար կը նայի դէպի Նարեկայ վանք. եւ իր տեսածը գրի առած է, «Արդ, պահիկ մ'ալ դուրս ելնելով այն նեղկուկ ու խաւարային խուցէն, սա մօտակայ բարձրաբարերն բացավայրին վրայ նստինք...»:

Վա՛րը, ընդարձակ դաշտին վրայ ալ կ'երեւի Նարեկայ Վանքն իր քառեակ գմբէթներով, որ կարծես թէ թխտող հաւու մը պէս իր շուրջն առած է գիւղին տուները, փոքրիկ ծիտերու նման, շրջապատուած նաեւ կանաչագեղ պուրակներով եւ ձեւաւոր արտերով, որք մարդկային կարկինով չափուած եւ շինականի գառնիկ քրտինքով ուռճացած՝ ի ցոյց կը դնեն ինքզինքնին, ոմանք նոր հերկուած, ոմանք կանաչցած եւ ոմանք հունձքի ոսկեգօծ գոյնով գունաւորուած, եւ ասոնց եզերքներուն վրայ ցան ու ցիր կ'արածուին դուարներն ու ոչխարներն, որոնց բառաչներն ու մայրոցները, հովուական սրինգին անուշակ ձայնին եւ գովիկ զեփիւտին դիւթիչ շուրջին հետ խառնուելով, կը ցնցեն մարդուս միտքն ու հոգին մուսայական ցունցով մի: Տեղ տեղ արծաթեայ երիզներու պէս դէս ու դէն տարածուած են ջինջ առուակներն ու վճիտ վտակներն ոլորապտոյտ խայտանքով եւ կանաչ պուրակին ծոցը խորասուզուելով: Արդէն մէկ կողմէն ալ Վանայ կապուտակ եւ ծիծաղկոտ ծովակը, կարծես հմայուած սոյն բնական հանդիսաւորութենէն, խնծիղի ու ծիծաղի ծայրեր կը ձեւացնէ իր պսպղուն երեսին վրայ»:<sup>255</sup>

Նարեկայ վանքի մասին Խաչատուր Լեւոնեան գրած է՝ իր բառերով «լքուած ու մոռցուած» վանքի մասին, «Ահա այս հի-

253. Աւետիս Յարութիւնեան, Վան-Վասպուրականի Կրօնամշակութային Կեանքը Եւ Պետականութեան Ստեղծման Փորձը (1908-1918), էջ 17. քաղուած Ազատամարտ, Կ. Պոլիս, 1910, յուլիսի 29/օգոստոսի 11, թիւ 346:

254. Խաչատուր Լեւոնեան, էջ 79:

255. Նոյնը, էջ 86, 87:

նաուրց վանքը, որ ժ. դարու հաստատութիւն է, ցարդ կանգուն կը մնայ իր քարուկիր եկեղեցիով եւ մի քանի յարակից շէնքերով, թէն հիմա գրեթէ շարքաացեալ (աշխատանքէ, գործէ դադրած) վիճակ մունի. որովհետեւ մօտակայ Դարենց անուն գիւղէն հայ մը ստանձնած ըլլալով վանուց պահպանութիւնը, ամառներն հոն կու գայ ընտանիքով եւ կը մշակէ անոր արգաւանդ հողերէն մաս մը, ի հաշիւ իր կոկորդին: Այս վանքն իր առողջարար օդին եւ սողիւրին հետ օժտուած է նաեւ ընդարձակ արօտավայրերով՝ հարիւրաւոր դուար ու ոչխարներու բուսական, նաեւ ծառաստանով մը. որուն մէջ հազարի չափ հասուն կաղամախի ու բարախ ծառեր կան, որք եթէ Վան բերուելու ըլլան, 200 լիրայէն աւելի գումար մը կը բռնեն, բայց երկօրեայ հետադարձութեամբ եւ անկոխ ճամբաներու դժուարութեամբ անկարելի ըլլալով այս, հետզհետէ փճանալու վրայ են, հասնող հասնողի ըլլալով, մինչ եթէ Աղթամար հետամուտ ըլլար սոյն իսպառ լքուած ու մոռցուած վանքի մասին, զայն օրինաւոր ձեռներու յանձնելով (քանի իր թեմն է), մեր է՛ն հասութեաբեր վանքը պիտի դառնար այն, նպաստելով շրջակայ գիւղացւոց՝ մտաւորական եւ բարոյական տեսակէտով: Այս վանքին տօնն ըլլալով Վերափոխման, մօտակայ գիւղերէն բուսական ուխտաւորներ կը խոնուին հոն, որոց թողուցած արդիւնքը նորէն վերոյիշեալ ինքնակոչ վանահօր կոկորդարածիւր կ'ըլլայ»:<sup>256</sup>

Խաչատուր Լեւոնեան նոյն յօդուածին մէջ ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔԻՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ խորագրին տակ գրած է 1903թ. «Նարեկայ հոշակաւոր Վանքն ի վաղուց անտի կորուսանելով իր դպրեվանուց հանգամանքները, այժմ գիւղի մը վերածուած է, բաղկանալով իբր 20 տուն հայերէ, որք քիչ բացառութեամբ անուս եւ անտաշ մարդիկ են, ու շատ ալ ծակ աչք. այնպէս որ աչքերնին միշտ նոյն վանքին հասոյթներուն տնկած՝ զանոնք իբր իրենց ժառանգական իրաւունքը կը սեպեն, եւ սպասելով որ վանքին կողմէ հոգացուին իրենց եկեղեցական ու դպրոցական պէտքերը,

256. Նոյնը, էջ 79, 80:

բնաւ հակամէտ չեն իրենց ծախքով վարժարան մ'ունենալու: Վանքին քառագմբէթ, քարուկիր եւ հոյակապ տաճարը նոյն գիւղացւոց եկեղեցին դառնալով, կը գտնուի գիւղին կեդրոնը բարձրկէկ դիրքի մը վրայ, եւ իր շուրջն ունենալով ամբողջ գիւղացիներուն խրճթաձէ տուները, կարծես իբրեւ դէտ կը հսկէ ամենուն վրայ: Եկեղեցին, որ մի քանի մէջէ մէջ մասերէ բաղկացած է, կը կոչուի յանուն Սրբոյն Գաբրիէլի, Ս. Աստուածածնայ, Ս. Մանդիտոյ Կուսի եւ Ս. Գրիգորի: Ներքին մէկ մատուածէ շէնքին մէջ կը գտնուի Նարեկացիի գերեզմանը մշտապատ կանթեղով մը, ուր ծնկաչոք դիմելով ուխտաւորները կ'ընեն իրենց խնդրուածքները: Վերջէն շինուած մարմարիոնէ գեղեցիկ տապանաքարը, որ սեւցած է մուխերու ներքեւ, կը կրէ հետեւեալ արձանագրութիւնը.-

«Քերովբէն Նարեկայ հրեշտակ ի մարմնի  
Մքանչելի հոռտոր սուրբ Նարեկացի  
Որոյ կենդանի հրաշագործ կմախք  
Կան ամփոփեալ ի սոյն տապանի,  
Ի ներկայ տարուոյս վանահայր կարգի  
Նարեկեան Վանուց Յովսէփ բարունի  
Տապանաքարիս պատուէ զայս շիրիմ  
Ի փառս պարծանաց Սրբոյն Գրիգորի»:

Յամի Տեառն 1867 – Մարտ 3<sup>257</sup>

Այսպիսի շատ տխուր վիճակի մատնուած էր մեր սիրելի Նարեկայ վանքը, տակաւին իր նահատակութենէն 12 տարի առաջ՝ 1903թ.....:

### 59. Նարեկ Գիւղի Կոնիւը 1904թ.

Արեւմտեան Հայաստանի բազմաթիւ գիւղերու նման Նարեկ գիւղը իր հոշակաւոր վանքով՝ հերոսական մասնակցութիւնը ունեցած է հայ ժողովուրդի արդար դիմադրութեան՝ թուրք Օսմանեան բռնակալութեան հարստահարութիւններուն ու ոտնձգութիւններուն...:

257. Խաչատուր Լեւոնեան, էջ 83:

1904թ. Մարտի վերջին սկսաւ ինչ որ մեր պատմութեան մէջ յայտնի է Մասունի Բ. Ապստամբութիւնը, որ շատ աւելի ճիշդ էր գայն կոչել «Մասունի Բ. Ինքնապաշտպանութիւն»ը: Մասունի մօտաւորապէս 1200 մարտիկներու դիմադրութեան ղեկավարներն էին, յայտնի ֆետայիներ՝ հիւսիսային ճակատի վրայ՝ Հրայր Դժոխքը, Անդրանիկը՝ արեւելեան եւ Շատախի անցքերը, Գեորգ Զաւուշը՝ Իշխանձորի եւ Տալուորիկի ճակատը:

Քանի մը շաբաթ ընդհարումներէ ետք, հիմնականօրէն ռազմամթերքի սպառման հետեւանքով ֆետայիները Մասունի ժողովուրդին առաջնորդելով տարբեր ուղղութիւններով, բաւական զոհեր տալով, կը ձեռքեն թրքական կանոնաւոր բանակի եւ քիւրտ խուժանի պաշարման օղակները:

Անդրանիկը իր մաս մը ընկերներով, ձեռքելով թշնամիի շղթան, անցաւ Ախլաթ, նաւ առնելով ապաստանեցաւ Աղթամար կղզին, որտեղ 1904թ. Օգոստոսին կոխի բռնուեցաւ թրքական բանակին հետ. ի վերջոյ հեռացաւ կղզիէն, հասաւ Վան ու այնտեղէն անցաւ Պարսկաստան ու ապա Կովկաս:

Թրքական բանակը Անդրանիկին հետքը կորսնցնելով, կասկածեցաւ, որ Անդրանիկ եւ իր ընկերները ապաստանած են մօտակայ Նարեկ գիւղը, ուստի կը յարձակին Նարեկի վրայ, «Բայց թուրք շատ սխալուեց, նրա ման եկած Նարեկ չկար, նա հեռացել էր արդէն: Բայց Անդրանիկի փոխարէն թուրք պատահեց տեղական յեղափոխականներին: Անդրանիկին վանքից ուղարկելուց յետոյ մի քանի զինուած մարդ եկել են Նարեկ գիւղ, թուրքական զլխատը ուժ գնացել էր դէպի Վանայ ծովի արեւելեան ափեր՝ Անդրանիկի հետեւից ման գալու, բայց ի գուր, նա արդէն անցած էր դէպի Երեւանի կողմեր, իսկ մի թափոր ասկար ուղարկեցին Նարեկ գիւղ՝ խուզարկելու թուրք կառավարութեան կողմից, որին զլխատը տւում էր մի քուրդ բեկ՝ հայոց դահիճ քուրդ Արդուլ Համիդը, որ բնիկ Գավաշի Վարանդանց գիւղացի էր: Իննսունվեց թուին Գաւաշի հայ ժողովրդի դահիճն էր:

Մի առաւօտ, երբ ժողովուրդ հանգիստ իր աշխատանքին էր գնում, Արդուլ Համիդ Նարեկ գիւղ պաշարում է: Յանկարծ ժողովուրդ տեսաւ, որ գիւղ պաշարուած է քրդերի եւ ասկարների կողմից: Աղթամարի վանքի կռուից յետոյ Համիդ ուզեց վրէժ Նարեկից հանի: Բայց Համիդ չարաչար սխալուեց: Նարեկ իննսունվեց թուի Նարեկ չէր, դարձեր էր նախկին Ռշտունիք: Նարեկ պաշարուած էր չորս կողմից, բայց Նարեկի մէջ կար մի քանի զինուած դրսից եկած փախստական հայ, ֆիտայիք, որից երկուս մեր ոգմեցիքն ին, մէկ՝ Բոզո անունով, որ Տիգրան ին ստում:

Բոզո էլ Նարեկի զինուած տղաների հետ կռիւ սկսելուց առաջ նրանց ուղարկում է Ս. Գրիգոր Նարեկացու վանք՝ գիւղի եկեղեցին: Նարեկացու վանք գիւղի մէջ է, իսկ գիւղի տեղ ոչ շատ դաշտ է, սարին մօտիկ: Բնակիչներ բոլոր մաքուր հայ են: Գաւաշի մէջ Նարեկ իր դիրքով բոլոր գիւղերից յարմար է»<sup>258</sup>

Կռիւը սկսելուն պէս գիւղացիներէն ոմանք կը հեռանան գիւղէն բարձրանալով մօտակայ Փախներ սարը. իսկ մաս մըն ալ կը մնան գիւղը եւ կ'օգնեն կռուողներուն: Կռուի ընթացքին Բոզոն կը սպաննէ Արդուլ Համիդին, որուն մահով կռիւը կը վերջանայ եւ թշնամին կը հեռանայ Նարեկ գիւղէն: Նարեկ գիւղի կռիւը տեղի ունեցած է 1904թ., սեպտեմբերի 25-ին:

Նարեկայ վանքի եւ հայ ֆիտայիներու համագործակցութեան մասին, Ռուբէն Տէր-Մինասեան գրած է, թէ ՀՅԴ կողմէ Կովկասէն Վան ուղարկուած դաշնակցական Իշխանը ստանձնել էր Գաւաշ գաւառի հայութեան ինքնապաշտպանութեան կազմակերպումը. Իշխանի գործունէութեան մասին ան յիշած է, «Իշխանի ուժգին գործունէութիւնը չէր կրնար աննկատ մնալ կառավարութենէն: Ան կը տեսնէ, որ ստեղծուած է երկրորդ կեդրոն՝ Լեռնապարբ: Զօրքերը, ռոստիկանները եւ լրտեսները կը սկսին հետապնդել Իշխանը, բայց

258. Յուշագրական Ժառանգութիւն, Հայկական ճարտարապետութեան Ուսումնասիրող Հիմնադրամ, Գիրք ԺԴ. Երեւան 2011, էջ 305, 306- Արմենակ Մանուկ Ամրիկեանի յուշերէն:

լեռնաշխարհի մէջ դժուար է գայն թակարդի մէջ ձգել եւ ձերբակալել»<sup>259</sup>

Ռուբէն Տէր-Մինասեան իր յուշերուն մէջ կ'անդրադառնայ նաև մէկ այլ կռիւի մը մասին, որ տեղի կունենայ Նարեկայ վանքին մէջ, «Անգամ մը, Նարեկ գիւղին մէջ, այնուամենայնիւ Բշխան կ'իյնայ թակարդի մէջ: Գրիգոր Նարեկացիի վանքին մէջ կը պաշարուի զօրքերու եւ քիւրտերու կողմէ: Ամբողջ օրը տեղի կ'ունենայ կռիւ, բայց ֆետայիները ոչ մէկ զոհ չեն տար՝ այնքան ամուր էին անոնց դիրքերը:

Ամբողջ օրը կռուելէ եւ թշնամիներէն 10-15 հոգի սպաննելէ յետոյ, խումբը, օգտուելով գիշերուան մութէն, կը ձեռքէ պաշարման շղթան եւ կը բարձրանայ Լեռնապարի կատարները»<sup>260</sup>

Այսպէս Նարեկայ վանքն ալ Վարագավանքի եւ Բազմաթիւ մեր միւս վանքերու նման՝ իր մասնակցութիւնը բերած է հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան պատմութեան մէջ:

### 60. “Նարեկ”ը Կրթական Ձեռնարկ Վան Քաղաքի Մէջ

20րդ դարու սկիզբներուն Նարեկայ վանքի անմահական մշտնջենական պտուղը՝ ՆԱԲԵԿը Արեւմտեան Հայաստանի Վասպուրական նահանգի եւ ի մասնատրի Վան քաղաքի եկեղեցիներէն ու վարժարաններէն ներս կը գործածուէր, որպէս դասագիրք:

Աւետիս Յարութիւնեան անդրադառնալով կրթական գործը եւ դպրոցները մինչեւ 1908թ. Վանի նահանգի մէջ, կը նշէ, թէ Նարեկը կրթական կարեւոր մասնիկ մըն էր Վանի եկեղեցիներուն մէջ, «Վանեցի երեխայի ծնողը պատիւ է համարել իրեն եւ նրա ամենամեծ փափաքն է եղել նաեւ իրենց գաւակներին տեսնել եկեղեցում շապիկ հագած՝ շարականը փոխ ասելիս, Աւետարան, Նարեկ, Մաղմուս, կամ այլ գիրք «քաջ եւ վարժ» կարդալիս, շարական երգելիս կամ պատու-

րագին դպրութիւն անելիս, կարեւոր մի հանգամանք, որ չի ունեցել բիրթիւսցին, կարինցին կամ տրապիգոնցին»<sup>261</sup>

Նարեկը նաեւ կը դասաւանդուէր Վան քաղաքի դպրոցներուն մէջ: Հետաքրքրական է Փանոս Թերլեմեզեանի յուշերուն մէջ իր գրածը Նարեկ գիրքի դասաւանդութեան մասին, ուր անոր ընթերցման լրացնելը կը նկատուէր կարեւոր նախապայման վարժարանը աւարտելու:

Վան քաղաքի յայտնի գաւակներէն Փանոս Թերլեմեզեան, մեծ նկարիչ, Վանի մէջ 1885թ. հիմնուած Արմենական կուսակցութեան առաջին անդամներէն, 1915թ. Վանի հերոսամարտի դէմքերէն. իր “Կեանքի Յուշերս” գիրքին մէջ “Մարշիմոնի Այցը” խորագրին տակ կը գրէ, «Այդ ժամանակները մեր վարժատան աշակերտները փոխադրեցին Նորաշէնի դպրոցը, Քոլոզ վարժապետի մօտ, որ նոյնպէս զարեւրելի ծեծող էր:

Փոխադրուեցինք Նորաշէնի դպրոց նրա համար, որ աստղոց կրօնապետ Մարշիմոնը, իր հետեւորդներով, տեղաւորուէր Հանկոյսների մեր դպրոցում: Կասէին, որ Մարշիմոնին փեշով Մկոն (Խրիմեան) է հրաւիրել Վան, որ միասին որոշեն իրենց բռնելիք դիրքը բռնապետութեան հանդէպ եւ համագործակցեն:

Մարշիմոնը մէկ ամիս հիւր մնալուց յետոյ մեկնեց, եւ մենք նորից, վերադարձանք Հանկոյսների վարժատունը: Այդ վարժատան շրջանը աւարտում էր այն աշակերտը, որ Նարեկը վերջացրել էր: Ես Նարեկը վերջացնողներից մեկն էի, բայց բան չէի սովորած, թէ եւ հինգ տարի ժամանակ էի անցկացրած այդ դպրոցում»<sup>262</sup>

Այսպէս Նարեկայ վանքը գտնուելով Վասպուրականի մէջ, իր հոշակաւոր դէմքերէն Գրիգոր Նարեկացիի գլուխ գործոցը՝ ՆԱԲԵԿը եղած էր Վասպուրականի հայութեան հոգեկան դաստիարակութեան

259. Ռուբէն, Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները, Բ. հատոր, Գ. Հրատարկութիւն, Թեհրան, 1982, էջ 131:

260. Նոյնը, էջ 131:

261. Աւետիս Յարութիւնեան, Վան-Վասպուրականի Կրօնամշակութային Կեանքը Եւ Պետականութեան Ստեղծման Փորձը (1908-1918), էջ 13. քաղուած Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 10, էջ 43:

262. Փանոս Թերլեմեզեան, Կեանքիս Յուշերը, Թեքեան Մշակույթ. Միութ., Երևան, 2017, էջ 34:

կարևոր եմանաբար, ինչ որ Աւետիս Յարութիւնեանէն՝ մէջբերման մէջ յիշուած է, նոյն չէր պարագան Բիթլիսի, Կարինի կամ Տրապիզոն քաղաքներուն մէջ:

#### 61. ԱՂՕի Այցելութիւնը Նարեկայ Վանք 1909թ.

Անցեալ դարու սկիզբին Ցեղասպանութենէն առաջ, Նարեկայ վանք այցելողներէն էր արեւելահայ պատմաբան, տնտեսագէտ յայտնի ազգային գործիչ և հետազօտող Յովհաննէս Տէր Մարտիրոսեան, որ յայտնի է գրական ծածկանունով՝ Ա-ԴՕ:

Ան հանրածանօթ է իր ուսումնասիրութիւններով, որոնք հիմնականօրէն կը վերաբերին հայ ժողովուրդի սոցիալ-տնտեսական կեանքի և ազատագրական շարժումներու պատմութեան: ԱՂՕ-ի գործերէն են՝ Արեւմտեան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացութեան, բնակչութեան և բնակավայրերու վիճակագրութեան նուիրուած «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները» (1912), «Մեծ դէպքերը Վասպուրականում. 1914-1915թթ.» և Վանի 1915-ի ինքնապաշտպանութիւնը, բնակիչներու Արեւելեան Հայաստան գաղթի պատմութիւնը:

ԱՂՕ 1909թ. Յունիսի 21-էն մինչև Օգոստոսի 20-ը այցելած է Արեւմտեան Հայաստանի Վանի, Բիթլիսի (Բաղէշի) և Էրզրումի (Կարին) նահանգները և վիճակագրական տեղեկութիւններ հաւաքած է իր այցելած վայրերու հայութեան սոցիալական, տնտեսական և քաղաքական վիճակի մասին:

Իր այցելութիւնը Նարեկ գիւղ և Նարեկայ վանք սրբատեղին՝ համոզած է զինք, որ Նարեկ գիւղը կը ներկայանայ Գաւաշ գաւառի ամենայայտնի գիւղը, «Գաւաշի շրջանում հաշուում են 24 հայաբնակ գիւղեր՝ 1200 ընտանիքով և 7000 բնակչով: Կարճկանի շրջանում հաշուում են 27 հայաբնակ գիւղեր՝ 850 ընտանիքով և 6500 բնակչով: Գաւաշի շրջանում աչքի ընկնող գիւղերն են Նարեկը, Մոխրաբերդը, Փայիսները, Բելուն, Փշավանքը, Պախլանքը: Կարճկանի շրջանում աչքի ընկնող գիւղերն են Օրանքը, Եղեգիսը, Օղվանքը, Խնձորկենը, Սորբը, Խարձիթը, Գոմսը, Պաշվանքը և այլն: Այս երկու շրջաններն,

իրենց բուսականութեամբ, պտղատու ծառերով, անտառներով ու կլիմայով, Վանի լճի առազանի լաւագոյն շրջաններն են»<sup>263</sup>

Նարեկ գիւղը այցելողը բնականաբար պարտք կը համարէ մտնել նաև Հայոց մեծ սուրբի՝ Գրիգոր Նարեկացիի վանքը, նոյն գործին մէջ ան յիշած է, որ այցելած է նաև Նարեկայ վանքը, «Ես այցելեցի Վան, Մուշ, Էրզրում քաղաքները, մտայ այդ տեղերի առաջնորդարանները, որոնք ունէին իրենց թեմերի հայ ժողովրդի վիճակագրութիւններ: Այցելեցի Կտուց անապատի, Վարագի, Աղթամարի, Նարեկի, Ս. Յովհաննէսի, Ս. Կարապետի և Կարմիրուկի վանքերը, անցաւ Բայազետ...»<sup>264</sup>

ԱՂՕի այցելութիւնները ընդգրկելով Նարեկ գիւղն ու Նարեկայ վանքը եւս կարեւոր ցուցանիշ են, անոնց կարեւոր դերին հայ ժողովուրդի պատմութեան մէջ:

#### 62. Նարեկ Գիւղն ու Նարեկայ Վանքը Ցեղասպանութենէն Առաջ

Նարեկ գիւղը բնակչութեամբ Վասպուրականի Գեաւաշ կամ Գաւաշ գաւառի ամենաբազմամարդ գիւղն էր: Մեզի հասած է ԱՂՕի (Յովհաննէս Գեորգ Տէր-Մարտիրոսեանի 1867-1954) վիճակագիրի պատրաստած տեղեկագրական ցուցակը՝ այս գաւառի գիւղերու մասին: Ան իր ուղեւորութիւնը Արեւմտեան Հայաստան 1914-1915թ., հրատարած է Երևանի մէջ 1917թ.: Այդ գործէն կը մէջբերենք հետեւալ ցուցակը:

ԱՂՕի պատրաստած Գեաւաշ գաւառի 24 գիւղերու ցանկին մէջ, Նարեկը, ունէր 123 տուն 610 շունչով: Նարեկայ վանքը անցեալ դարու սկիզբին նիւթապէս լաւ վիճակի մէջ էր, և ունէր սեփական կալուածք վարելահողեր, անոնց բերած եկամուտը կը ծախսուէր վանքի և գիւղի դպրոցին վրայ: Նարեկայ վանքը գտնուելով Նարեկ գիւղին մէջ կը գործածուէր որպէս եկեղեցի, հետեւաբար տեղացիներու կողմէ լաւ պահպանուած էր, նման չէր հեռաւոր և անմարդաբնակ վայրերու մէջ գտնուող վանքերուն, որոնք կը գտնուէին գիւղերէ հեռու վայրերու մէջ:

263. ԱՂՕ Իմ Յիշողութիւնները, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան, 2015, էջ 247:

264. Նոյնը, էջ 131:

ՅՈՒՑԱԿ ԹԻՒ 6

Գեառաշ գաւառի գիւղերու ցանկը<sup>265</sup>

ԹԻՒ	ԳԻՒՂ	ՏՈՒՆ	ՇՈՒՆՉ
1	Աթանանց	65	372
2	Սպիտակ վանք	18	124
3	Յիլի	28	153
4	Քարաղաշտ	19	130
5	Պատականց	75	406
6	Տշող	50	330
7	Հիրիճ	41	225
8	Փշաւանց	60	310
9	Պախւանց	42	215
10	Հարբերդ	42	350
11	Բողոնիս	18	120
12	<b>Նարեկ</b>	<b>123</b>	<b>610</b>
13	Փայլաներ	100	520
14	Սարէ	17	105
15	Մոխրաբերդ	103	550
16	Նոր-գիւղ	87	413
17	Ընձակ	34	286
18	Բէլու	77	443
19	Շատուան	20	170
20	Թիմար	27	174
21	Յաղուն	18	134
22	Վառենց	31	176
23	Գանձակ	60	366
24	Նանիկանց	35	231
		1190	6913

265. Ա-ԴՕ (Յովհաննէս Տէր Մարտիրոսեան), Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914-1915 Թուականներին, Լոյս, Երևան, 1917, էջ 19:

Ըստ Համագասպ Ոսկեանի Ռշտունեաց գաւառի մէջ Նարեկայ վանքը երկրորդ հարուստ վանքն էր Աղթամարէն ետք, անոր կը պատկանէին քանի մը շրջակայ գիւղերը, «Նարեկայ վանքը առաջին հարուստ վանքն է Ռշտունեաց գաւառում: Աղթամարից յետոյ նա միայն ունի այնքան հարստութիւն կատարած, որքան չունեն մի տասնեակ վանքերը նոյն շրջանում»: (Շէրենց, Սրբավայրեր, էջ 126): Անոր թեմերն էին՝ Նարեկ, Փակիսներ, Վերին Սարեկ եւ Պախուանց գիւղերը (Բիւզանդիոն, 1903թ. 2031): Նարեկ գիւղին առջևը կար Գրիգորիկ անուն արտ մը, որուն համար կ'աւանդուի թէ Գր. Նարեկացին զայն վանքին կտակած ըլլայ»<sup>266</sup>

Եւ որովհետեւ Նարեկայ վանքը կը դասուէր հարուստ վանքերէն մէկը, ան ի վիճակի եղաւ հոգալ իր դպրոցի ծախսերը: Այդ դպրոցի մասին մէջբերենք հետեւեալը Նարեկի գիւղացիներէն Սմբատ Դաւթեանի յուշերէն, ան ծնած էր Նարեկ գիւղին մէջ 1905թ. «Մեր գիւղում եօթ դասարանով դպրոց կար, եկեղեցու բակում էր: Ես գնացի առաջին դասարան: Աղջիկներն առանձին էին, տղաներն՝ առանձին: Մովորում էինք հայերէն ու կրօն: Ուսուցիչները մեզ պատմում էին Գր. Նարեկացու մասին, մեզ դաստիարակում էին Քրիստոսի պատգամներով: Տօներին միւս գիւղերից զալիս էին վանքի դուռը, փող էին զգում, մատաղ մորթում, դազանը դնում, եփում էին, յետոյ բաժանում էին բոլորին»<sup>267</sup>

Այդ տարիներուն Նարեկ գիւղի՝ ինչպէս Վասպուրականի միւս գիւղերը կ'ենթարկուէին քիւրտերու յարձակումներուն, որոնց հիմնական նպատակն էր խլել հայոց ունեցուածքները: Տեղի ունեցած յարձակումներու մասին տեղեկութիւններ կը դրկուէին Պոլսոյ Հայոց պատրիարքարանին, յոյս ունենալով պատրիարքի ջանքերով Օսմանեան կառավարութիւնը միջամտել

266. Համագասպ Ոսկեան, էջ 215, 216:

267. Վերթինէ Սվազեան, Հայոց Ցեղասպանութիւն (Ականատէս Վերապրողների վկայութիւններ) ՀՀԳԱԱ Գիտութիւն հրատարակչ., Երևան 2011, էջ 137, Թիւ 34 Սմբատ Դաւիթի Դաւթեանի Վկայութիւնը (ծն. 1905թ., Վան, Նարեկ Գիւղ):

վերջ տարու քրտական այդ յարձակումներուն, մեջբերենք հետևե-  
նայր այդ դիմումներէն մէկուն մասին, «Աղթամարից Եզնիկ  
նպիսկոպոսի կողմից 1912ի սեպտեմբերի 19-ին պատրիարքա-  
րան ուղարկած Տեղեկագրում նկարագրում են Վասպուրակա-  
նում՝ Վանի գաւառի Գոմս, Նորդուս, Նարեկ, Հորեբերդ եւ այլ գիւ-  
ղերում քողերի կատարած հրդեհների, անբաժնութիւնների ու  
սպանութիւնների մասին»:<sup>268</sup>

Այսպէս էր կեանքը Նարեկ գիւղի եւ Նարեկայ վանքի մէջ,  
տակայն պատահեցաւ ցեղասպանութիւնը, եւ ամէն ինչ տակն ու  
վրայ եղաւ...:

### 63. Նարեկայ Վանքը Մշակութային Գործիչներու

#### Ուխտագնացութեան Վայր

Սիրողական թատերական խումբերէն գատ յայտնի դերա-  
սաններ Արեւելեան Հայաստանէն եւ Կովկասէն իրենց խումբե-  
րով այցելած են Վասպուրական եւ հանդէս եկած թատերական  
ձեռնարկներով: Վասպուրական այցելող հայ մշակութային  
գործիչները ի կողքին այլ կարեւոր սրբատեղերու անպայման  
կ'այցելէին Նարեկայ վանքը: Այսպէս, 1911թ. ամառը, նշանաւոր  
դերասան Յովհաննէս Զարիֆեան իր խումբին հետ առաջին  
անգամ ըլլալով այցելեց Արեւմտեան Հայաստան եւ բեմադրեց 14  
ներկայացում, Վանի, Աղթամարի, Շատախի եւ Հին Բայազետի  
մէջ. որոնցմէ էին «Արցունքի հովիտը», «Մարտոյ ճրագներ» դրա-  
մաները:

Յովհաննէս Զարիֆեան յայտնի թատերական գործիչ էր,  
ան ծնած էր 1879թ. Ալեքսանդրապոլի մէջ. կը նկատուի 20-րդ  
դարու հայ խոշորագոյն շեքսպիրեան դերասաններէն մէկը:  
Զարիֆեան դերասան ըլլալէ աւելի թատերական գործի կազմա-  
կերպիչ էր:

Յովհաննէս Զարիֆեան եւ իր խումբը առիթէն օգտուելով  
ազատ օրերուն կ'այցելէին Վարազ, Նարեկ, Աղթամար եւ այլ

վայրեր: Ան իր յուշերուն մէջ գրած է այս խորիմաստ միջադէպի  
մասին, «Աղթամարի վանքի ձիերը նստած՝ գնում էինք Նարեկ,  
երբ յանկարծ մեր ճանապարհը կտրեցին քրդական հագուստնե-  
րով ութ մարդ: Մենք կանգ առանք. նրանցից մէկը բռնաց. «Ո՞վ է  
ձեր խմբապետը»: Ես լուր էի... վախենում էի ասել իմ անունը. ըն-  
կերներս ինձ էին նայում:

-Ձեզանից ո՞ր մէկն է Զարիֆեանը,- որոտաց անձանօթը.

Թաքցնելն այլևս անկարելի է, մտածեցի ես, եւ գրեթէ  
ակամա, հագիւ լսելի ձայնով ասացի.-Ես եմ, ի՞նչ էք կամենում:  
Անձանօթը սկսեց իր ճառը. ընկերներս շրջապատեցին ինձ:

-Ի՞նչ իրաւունքով դուք եկել էք Վան եւ միայն վանեցիների  
համար ներկայացումներ կը տաք, ի՞նչ բարոյական իրաւունք  
ունէք մեզ գրկելու, անմասն թողնելու ձեր տուած ներկայացում-  
ներից. չէիք մտածում, որ այս ձորերի մէջ էլ մարդիկ են ապրում,  
որոնք նոյնպէս կարիք ունեն ձեր խրատական խաղերը տեսնելու  
եւ ճաշակելու ձեր արուեստը եւ այլն:

-Մենք, գիւղացիներս, պահանջում ենք, որ մեզ համար էլ  
ներկայացումներ տաք, -աւելացրեց նա: -Դրամ կ'ուզէք՝ պատիւ  
կը տանք»:<sup>269</sup>

Խօսողը Շատախի Գալուստն էր, որ եկած էր իր ընկերնե-  
րուն հետ, որպէս պատգամաւորներ գիւղացիներու կողմէ իրենց  
արդար բողոքը ներկայացնելու...:

Յովհաննէս Զարիֆեան շատ ազդուելով գիւղացիներու  
բողոք-խնդրանքէն, կը խոստանայ երթալ գիւղերը եւ ձրիաբար  
ներկայացումներ տալ: Նոյն ատեն անոնք կը հրաւիրեն բոլոր գիւ-  
ղացիներուն ներկայ գտնուելու Աղթամար կղզիին մէջ իրենց թա-  
տերախումբի կազմակերպած ներկայացումներուն:

Այս շատ իմաստալի պատահար էր, որմէ կարելի է  
հասկնալ, թէ գիւղերու հայութիւնը նմանապէս մեծ սէր ունէր հայ  
մշակոյթի հանդէպ...:

268. Վրէժ Վարդանեան, Աղթամարի Կայծղիկոսութեան Պատմութիւն, 2017, էջ 290:

#### 64. Նարեկայ Վանքի Տոնախմբությունները

Ոնչպես բոլոր վանքերը Նարեկայ վանքն ալ ունի իր տոնախմբություններու յատուկ օրերը: Խաչատուր Լեւոնեան յիշած է իր կարեւոր յօդուածին մէջ, գրուած 1903թ., երբ ան Ա. Գրիգոր Նարեկացիի մահուան 900 ամեակի առիթով Յուլիս ամսուն այցելած է Նարեկայ վանք եւ թուղթին յանձնած է շատ կարեւոր ուսումնասիրութիւն մը, Նարեկայ վանքի տոնախմբութեան մասին յիշած է, «Այս վանքին տօնն ըլլալով Վերափոխման, մօտակայ գիւղերէն բաւական ուխտատուներ կը խոնուին հոն...»:270

Հայ Առաքելական եկեղեցոյ հինգ տաղավար տօներէն չորրորդն է Վերափոխման տօնը, որ նուիրուած է Ս. Մարիամ Աստուածածինին. երբ Աստուածածնի մարմինը յետ մահու եւ թաղման փոխադրուեցաւ երկինք, դատարկ ձգելով անոր գերեզմանը: Յիշեցնենք, Ա. գլխուն մէջ անդրադարձանք Նարեկայ վանքի երկու եկեղեցիներուն, առաջինը Ս. Մանդուխտ եկեղեցին էր, ապա կառուցուեցաւ երկրորդ եկեղեցին, որ կոչուեցաւ Ս. Աստուածածին. հետեւաբար Նարեկայ վանքի տօնը կապուած է Ս. Աստուածածինի Վերափոխման հետ:

Ըստ Համագաւապ Ոսկեանի, Նարեկայ վանքի ուխտագնացութեան օրերն էին Վարդավառի եւ Վարագայ Ս. Խաչի տօները, «Իր ուխտի օրերն եղած են Վարդավառի եւ Վարագայ խաչի տօներն, երբ հոժ բազմութիւն մը կը խոնուէր հոն»:271

Վարդավառը՝ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան կամ Պայծառակերպութեան տօնն է, որ հինգ տաղաւար272 տօներէն մէկն է: Այդ օրն էր, երբ իր երեք աշակերտներու ներկայութեամբ՝

269. Աւետիս Յարութիւնեան, Վան-Վասպուրականի Կրօնամշակութային Կեանքը Եւ Պետականութեան Ստեղծման Փորձը (1908-1918), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչ., 2018, էջ 79:

270. Խաչատուր Լեւոնեան, էջ 79, 80:

271. Համագաւապ Ոսկեան, էջ 200. քաղուած Շերենց, Սրբավայրեր, էջ 127 եւ Մուրհանդակ, 1910, 446:

272. Տաղաւար կը կոչուին Հայ Եկեղեցոյ հինգ մեծ տօները:

Քրիստոսի դէմքը հրաշալի լուսաւորումով մը կը պայծառանայ եւ ան կ'այլակերպուի: Իսկ Վարագայ Ս. Խաչի տօնը, երբ զիշերով Ս. Խաչը կ'երեւի Հայաստանի Վարագ լեռան վրայ273:

Նարեկ գիւղի բնակիչներէն Սմբատ Դաւթեան իր յուշերուն մէջ Նարեկայ վանքի ուխտագնացութեան մասին յիշած է, «Մեր գիւղը Գրիգոր Նարեկացու գիւղն է եղել: Տօն օրերին ուխտատուները գալիս էին Նարեկ գիւղ ուխտի: Մեր գիւղը երկու հարիւր յիսուն տուն հայ կար, ոչ մի այլազգի չկար: Մեր հարեւան գիւղերը քրդական էին»:274

Նարեկայ վանքը մշտական կ'այցելէին հաւատացեալները Սուրբ Գրիգոր Նարեկացիի գերեզմանը տեսնելու եւ աղօթելու: Նարեկ գիւղի բնակիչներէն Արմենակ Մանուկ Ամրիկեան Գրիգոր Նարեկացիի գերեզմանը այցելողներու մասին գրած է իր յուշերուն մէջ, «Գրիգոր Նարեկացու շէնք կ'պած էր մեր տան պատին, վախենում ինք ձիւն զցինք նրա կտուրի վրայ, «մեղք ա» ասում ինք: Այդ ժամանակ ի նչ մարդ են եղած այդ սուրբ մարդիկ Նարեկ գիւղում: Ով որ մտնէր Գրիգոր Նարեկացու գերեզմանը տեսնելու կամ խաչահամբոյր տալու, պէտք էր դրան մօտից ընկնէր չոքերի վրայ, յետոյ մօտենար գերեզմանին. աջ կողմում Անանիայի գերեզմանն էր, իսկ ձախում Գրիգորի»:275

Գրիգոր Նարեկացիի յիշատակը կը նշուի Թարգմանչաց տօնին, «Կը տօնախմբուի ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ հետ, Հոկտ.ի երկրորդ Շաբաթ օրը: Իսկ Յայսմաւորքներու մէջ կը յիշատակուի Փետրուարի 27ին»:276 Այսպէս, Գրիգոր Նարեկացի

273. Վարագայ Ս. Խաչի պատմութեան մասին տես մեր այլ աշխատութիւնը, Վարագավանքը Պատմութեան Քառուղիներուն, Երեւան 2018, էջ 20-26:

274. Վերժինէ Սվազլեան, Հայոց Յեղասպանութիւն (Ականատես Վերապրողների վկայութիւններ), էջ 136, Թիւ 34 Սմբատ Դաւիթի Դաւթեանի վկայութիւնը (ծն. 1905թ., Վան, Նարեկ Գիւղ):

275. Յուշագրական Ժառանգութիւն, Հայկական Ճարտարապետութեան Ուսումնասիրող Հիմնադրամ, Գիրք ԺԴ., էջ 301- Արմենակ Մանուկ Ամրիկեանի յուշերէն:

276. Շնորհ Արքեպիսկոպոս Գալուստեան, Հայազգի Սուրբեր, 3-րդ հրատարակութիւն, Գանձասար Աստուածաբանական Կենտրոն, Երեւան 1997, էջ 116:

այն սուրբերեն է, որուն յիշատակը կը տօնուի Մեսրոպ Մաշտոցի, Մովսէս Խորենացիի եւ Թարգմանչաց միւս սուրբերու հետ:

Սուրբ Գրիգոր Նարեկացիի գերեզմանը նորոգութիւններու կարիք ունէր. ՀԲԸՄ Կեդրոնը 1914թ. աշնանը որոշած էր վերանորոգել Աղթամարի տաճարի փլատակ գանգակատունը եւ Գրիգոր Նարեկացիի գերեզմանը, սակայն այդ գործերը տեղի չունեցան պատերազմական գործողութիւններու պատճառով:<sup>277</sup>

### 65. Նարեկայ Վանքը Յեղասպանութեան Ժամանակ՝ Վանի Հերոսամարտի Օրերուն

Համաշխարհային քաղաքական լարուած վիճակը պայթեցուց 28 Յունիս 1914թ. Աւստրիական գահաժառանգի՝ Ֆրանց Ֆերտինանդի սպաննութիւնը Սարաեւոյի մէջ: Այդպիսով, Համաշխարհային Առաջին պատերազմը սկսաւ. եւ 21 Յուլիս 1914թ., Օսմանեան Կայսրութեան 18-45 տարեկան բոլոր տղամարդիկ բռնի զինուորագրուեցան. Հայ կենսունակ ուժերու 90% հաւաքուեցաւ եւ շրթայի տակ գտնուեցաւ. մօտ 300,000 հայ երիտասարդներ զինուորագրուեցան «Ամելէ թապուր»ներու մէջ, որոնք կը գտնուէին անզէն վիճակի մէջ: Ու վերջապէս 8 Հոկտ. 1914թ. Օսմանեան Կայսրութիւնը պատերազմ հռչակեց Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսաստանի դէմ, միանալով Գերմանեային եւ Ճափոնին:

Համաշխարհային Առաջին պատերազմի սկիզբին Օսմանեան կառավարութիւնը որպէս պատերազմական տուրք հայկական քաղաքներէն եւ գիւղերէն սնունդ, կենդանիներ եւ այլ կարեւոր իրեր բռնի հաւաքեց...: Նարեկ գիւղն ալ միւս բոլոր հայկական գիւղերու նման ունեցաւ իր մասնակցութիւնը. Նարեկ գիւղէն հաւաքուածի մասին մէջբերենք, «Իբրեւ պատերազմական տուրք՝ ոստիկանների բռնի ուժով Ոստանի կառավարութիւնը

Գեաւաշի 20 հայ գիւղերէն հաւաքել տուին հետեւեալ իրերը, ի հարկէ, բոլորովին ձրի: Նարեկէն՝ 130 չափ ցորեն, 65 չափ պլըրուր, 80 չափ գարի, 120 զոյգ զուլպայ, 24 լիտր իւղ, 55 ոչխար, 15 կով, 1100 խորձ խոտ, 915 կողով յարգ, 11 լիտր կանեփ, 15 հատ չուն, 37 զոյգ ջուալ, 16 եգ, 8 սայլ, 4 ձի եւ 40 զոյգ չարուխ»:<sup>278</sup> Իսկ Նարեկ գիւղի բնակչութեան թիւի մասին Մուրադ Խաչատրեան յիշած է, «Նարեկ ունէր 95 հայ տուն՝ 620 անձով, եւ 520 ոչխար, 470 ամէն տեսակի անասուն եւ 4800 չափ ցորեն, գարի եւ այլն»:<sup>279</sup>

1915թ. Ապրիլ ամսու սկիզբին Վասպուրականի մէջ դէպքերը զարգացան զինեալ ընդհարումներու: Ապրիլի 3-ին (Ապրիլ 16 նոր տոմարով) Վանայ Բշխանը (1883-1915) եւ իր երեք ընկերները Վանի կուսակալ Ճեւտեթի պահանջով կ'նուղուին Շատախ, հոն սկսած ընդհարումները կանգնեցնելու առաքելութեամբ. Հարձ գիւղին մէջ ընթրիքի ժամանակ թուրք զինուորները ներս կը մտնեն եւ կը սպաննեն Բշխանը եւ իր թիկնապահները:

Յաջորդ օրը Ապրիլի 4-ին (Ապրիլ 17 նոր տոմարով), առաւօտեան Վանի կուսակալ Ճեւտեթ իր մօտ կը հրաւիրէ Օսմանեան Խորհրդարանի անդամ Վանի ներկայացուցիչ Արշակ Վռամեանը (1870-1915), որ հասնելուն պէս կը ձերբակալուի եւ օրեր ետք կը նահատակուի...: Նոյն օրը Արամ Մանուկեան (1879-1919) զգուշանալու լուր ստանալով՝ չի ներկայանար Վանի թուրք կուսակալին: Այս բոլոր զարգացումները համոզեցին հայերուն, թէ թուրքերը որոշած էին մեծ ջարդեր կազմակերպել...:

Ապրիլի 7-ին (Ապրիլ 20) սկսաւ Վանի հերոսամարտը, ուր մօտաւորապէս 12,000 կանոնաւոր թուրք զօրք, նոյն չափով թուրք եւ քիւրտ զինուածներ 50 թնդանօթներով պաշարեցին Վան քաղաքի Այգեստանի եւ Քաղաքամէջի՝ իրարմէ 5 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող հայկական թաղամասերը, 27 օր անընդհատ

278. Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում – Հատոր 1, Վանի Նահանգ, Հայաստանի Ազգային Արխիւ, Երևան 2012, Փաստաթուղթ N 198- Վերապրած Մուրադ Խաչատրեանի Վկայութիւնը Գաւաշի գիւղախմբի հայկական գիւղերի կոտորածի մասին, էջ 319, 320:

279. Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, նոյնը, էջ 318:

277. Աւետիս Յարութիւնեան, նոյնը, էջ 125, քաղուած Ոսկեմատեան, հայկական բարեգործական ընդհանուր միութեան Արծաթեան Յոբելեան 1906-1931, հտ. Ա., էջ 116:

փորձեցին գրաւել զանոնք, սակայն հանդիպեցան հայոց մօտ 1500 մարտիկներու բուն դիմադրութեան. իսկ պաշարուած հայութիւնը՝ մօտաւորապէս 40,000 ժողովուրդ եւ տասնեակ հազարաւոր զաղթականներ էին:

Ապրիլ ամսու ճակատագրական դէպքերէն առաջ Նարեկ գիւղին մէջ կեանքը կը շարունակուէր հակառակ ռազմաճակատներուն վրայ տեղի ունեցող պատերազմական գործողութիւններուն՝ Թուրք-Օսմանեան եւ Ռուսական կայսերական բանակներու միջեւ: Նարեկի հայութիւնն ալ 1915թ. Մ. Զատիկը կը տօնէ: Նարեկայ վանքին մէջ՝ աղօթելով եւ Մ. Գրիգոր Նարեկացիի գերեզմանը այցելելով, «Մի քանի օրից յետոյ նորից սուրհանդակն եկաւ. «Ռուս եւ հայ զօրքեր առաջանում են դէպի մեր կողմեր մեզ փրկելու համար»: Մնացինք Նարեկ գիւղ: Հազար ինը հարիւր տասնհինգ թուի մարտի քսաներեքին՝ Մեծ գատկի օրը, բոլորս գնացինք Գրիգոր Նարեկացու եւ Անանիայի գերեզմանը տեսնելու»:<sup>280</sup>

Ապրիլ 24ի՝ նոյն օրը, երբ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք Պոլսոյ մէջ, սկսաւ հայ ղեկավարութեան եւ մտաւորականութեան ձեռքակալութիւնները, թուրք զինուորները եւ քիւրտերը յարձակեցան Փայխներ գիւղին վրայ, որ Նարեկ գիւղի արեւմուտքի հարեւան գիւղն էր:

Հայերը կը դիմադրեն ամբանալով գիւղի մօտիկ սարը. կոխը շարունակուեցաւ ամբողջ օրը, բայց դիմադրութիւնը անյոյս ըլլալով հայ կռուողները գիշերով ժողովուրդին հետ կը հեռանան դէպի Շատախ գաւառի հիւսիսը գտնուող Փէսանդաշտը: Մօտակայ միւս գիւղերուն վրայ ալ կը յարձակին թուրքերն ու քիւրտերը. մէկ օրուայ դիմադրութենէ ետք, Նոր-Գիւղ, Մոխրաբերդ, Նարեկ եւ միւս գիւղերու ժողովուրդը բաւական զոհեր տալով, կռուելով կը նահանջէ հարաւ արեւելք, ու կ'ապաստանի Փէսանդաշտ, ուր բազմահազար հայութեան հերոսական դիմադրութիւնը ղեկավար

280. Յուշագրական Ժառանգութիւն, նոյնը, էջ 328- Արմենակ Մանուկ Ամրիկեանի յուշերէն:

րեց՝ Լեւոն Շաղոյեան (1887-1974), մինչեւ Մայիս 23, երբ օգնութեան հասան հայ կամաւորական գունդերը:

Նարեկ գիւղի կոխներու ընթացքին՝ նահատակուեցաւ Նարեկ գիւղի դէմքերէն Աղբիւր Հարոն, որ յայտնի երկրագործ յեղափոխական էր. իր սպանութենէն ետք կռուողները հեռացան իրենց դիրքերէն:<sup>281</sup>

Այս կոխներուն մասին մէջբերենք վերապրած Հռիփսիմէ Իզնատիսեանի վկայութիւնը Գաւաշի Տշող գիւղի մղած դիմադրութեան մասին, «Երբ գիւղից (Տշող) մեր տղաներ պատասխանեցին, անոնք օր մը կռուելէ վերջ ժողուեցան գացին, իսկ միւս օրը միացած Խիզանի կողմի խումանին, թախամանից Հիւսէին աղայի ղեկավարութեամբ Նարեկ գիւղը պաշարեցին եւ ասոնց հետ կռուեցան մինչեւ երեկոյ: Երբ մթնեց, Նարեկ, Փշավանք, Պախվանց, Ախավանք գիւղացիներ քաշուեցան եկան մեր գիւղը Չաթոյեան Միհրանի եւ Նորգիւղի Աբրոյի ղեկավարութեամբ: Այս գիւղերուն ժողովուրդը իրենց ունեցած ուժերով քաշուեցաւ Հիրիճա սար, հոն կռուի բռնուեցանք, կռուողները կը կռուէին, եւ մենք ալ ողբուկոծով կ'երթայինք դէպի Շիտան: Արտոս սարից անցած պահուն վախից եւ ցուրտից մօտաւորապէս 30-40 հոգի մեռան, որոնց մէջն էր մեր գիւղի Միքայէլ քահանան: Շիտան հասնելուն պէս տեսանք, որ խարականցի Լեւոնը 3-400 զինուորներով դիրքեր պատրաստէր է եւ պատրաստ էր կռուիլ թիւք բանակին հետ: Մենք երբ գացինք, Լեւոնը իր զինուորներով եկաւ մեզ դիմաւորելու, շատ կանոնաւոր կերպով մեզ տարաւ եւ տեղաւորցուց Շիտանի գիւղերուն մէջ, իսկ իրենք՝ զինուորներն ալ Շիտանի 4 վտանգաւոր սեպուած կողմերը դիրք բռնեցին: Մի ամիս շարունակ կռուեցան առանց երբեք վիատելու: Իսկ երբ կամաւորները Ոստան մտան, այլ այն կողմերը մեզ համար ազատ վայր դարձաւ...»:<sup>282</sup>

281. Նոյնը, էջ 334:

282. Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում – Հատոր 1, Փաստաթուղթ N 216- Վերապրած Հռիփսիմէ Իզնատիսեանի Վկայութիւնը Գիւղացի Տշող գիւղի մղած դիմադրութեան մասին, էջ 348:

Նարեկ գիւղի երիտասարդներին շատերը զինուած էին, այդ պատճառով կրցան դիմադրել մինչեւ գիշեր. այդ կը վկայէ հարեւան գիւղէն Յովսէփ Աբրահամեանը իր յուշերուն մէջ, «Հարեւան Նարեկ գիւղի (Գրիգոր Նարեկացու մենաստան) երիտասարդներէն շատերը զինուած, կազմ ու պատրաստ եւ լարուած ուշադրութեամբ կը դիտէին նենգամիտ ու արիւնարբու քիւրտ խուժանի եւ թիւրք ժանդարմաներու ահագնադրոյող, հրճուագիին եւ համագարկային մօտակայ յառաջխաղացումն»:<sup>283</sup>

Նարեկ գիւղի կռիւի մասին, Նարեկի գիւղացի Սմբատ Դաւիթ Դաւթեան, որ ծնած էր Նարեկ 1905թ. (ցեղասպանութեան ժամանակ հազիւ տաս տարեկան)՝ իր վկայութիւններուն մէջ գրած է, «1915թ. թուրքերը սկսեցին յարձակուել: Գիւղերը մտան, եկան հասան մեր գիւղը, բարձրացան սարը: Մերոնք բարձրացան սարերը, կանայք, երեխաներս մնացինք գիւղում: Գնացինք մտանք եկեղեցին: Լաց, կոծ: Մէկ էլ շրջապատուեցինք թուրք զինուորներով: Եկան ժամի դարբազը<sup>284</sup> խփեցին, մտան ներս»:<sup>285</sup>

Կանայք եւ երեխաները կ'ապաստանին Նարեկայ վանք, թուրքերը կը մտնեն վանքը. Սմբատը հազիւ տաս տարեկան էր, կը պատմէ, «Հրաման կար՝ անգամ կրծքի տղայ երեխաներին մորթել: Մերս իմ ակնջները ծակեց, օղեր կախեց, աղջկայ շորեր հազգրեց: Իմ երկու քոյրերը արդէն մահացել էին: Մերս էր եւ մեր հարեւանը՝ իր տղայ երեխայով: Եկան ստուգեցին, հենց ստուգեցին, տեսան մօրս կողքին հարեւանի գրկին մի տղայ երեխայ, խանչալը խփին վզին, սպաննեցին: Հարեւանի կինը ընկաւ վրեն, սկսեց լալ: Մերս էլ վրան ընկաւ, ես ծուացի, բղաւեցի, քսանքսանիկնոց տղաներ սպաննեցին: Ինձ աղջկայ տեղ դրեցին: Աղջիկները հաւաքեցին տարան: Մայրերը սկսեցին ճուալ:

283. Լոյնը, Փաստաթուղթ N 197- Վերապրած Յովսէփ Աբրահամեանի Վկայութիւնը Գյավաշի գիւղախմբի հայկական գիւղերի կոտորածի մասին, էջ 313:

284. Ըսել կուզէ դարպասը, այսինքն կեդրոնական դուռը:

285. Վերժինէ Սվազլեան, Հայոց Յեղասպանութիւն (Ականատու Վերապրողների վկայութիւններ) էջ 137, Թիւ 34 Սմբատ Դաւիթի Դաւթեանի Վկայութիւնը (ծն. 1905թ., Վան, Նարեկ Գիւղ):

Դարպասի դուռը բաց էր մնացել: Տեսանք՝ մօտ քսան-երեսուն տղամարդ, քեռիս էլ՝ ոտքը կտրուած, դրանց մէջն էր, լցրին վանքի գոմը բոլորին, նավթ լցրին ու վառեցին: Մերս դարդից մեռաւ: Մենք մնացինք անտէր: Մէկ էլ լուր էկաւ՝ Անդրանիկ Զորավարը գալիս ա: Անդրանիկը եկաւ՝ սպիտակ ձիու վրայ նստած, ժամի հայաթը: Պապս տասը հատ ոչխար եւ մի կով նուիրեց Անդրանիկին»:<sup>286</sup>

Այս վկայութենէն յստակ է, որ թուրքերը վանքի գոմին մէջ հայ տղամարդոց հաւաքելով բոլորին կ'այրեն...:

Թուրքերն ու քիւրտերը Նարեկ գիւղը կ'աւերեն եւ կ'այրեն, «Ապրիլ ամսու կեսերն էին: Վանի կռիւները շարունակուում էին: Ամէն օր գալիս էին մանրամասն տեղեկութիւններ մեր շուրջը կատարուող իրադարձութիւնների մասին: Մեր գիւղացուց երիտասարդ մասը նախապէս քաշուել էր լեռը, մնացեալ չափահասները տակաւին մնում էին գիւղում: Երբ Նարեկը աւերելուց ու այրելուց վերջ քրդերը դէպի մեր գիւղը յառաջացան...»:<sup>287</sup>

Վանի հերոսամարտը կը շարունակուէր...: Մայիսի սկիզբին Վանայ լիճի մէջ առագաստանաւեր նկատուեցան, թուրքերը կը հեռանային Վանէն դէպի Ռստան: Ռուսական զօրքը հայ կամուտներու հետ Թիմար գաւառ հասած՝ արագընթաց կ'առաջանային դէպի Վան:

Մայիս 4 (Մայիս 17)-ին Վանի մէջ կոռուող հայերը կը գրաւեն Վանի քաղաքապետարանը, կը խորտակեն Վանի բանտը, նահանգային ոստիկանատունը եւ բոլոր պետական կեդրոնները: Յաջորդ օրը Հայ կամաւորական գունդերը Դրոյի, Քեռիի եւ Համազասպի ղեկավարութեամբ մտան Վան. ժողովուրդը հրճուանքով ու ոգեւորութեամբ դիմաւորեց Հայ կամաւորներուն:

286. Վերժինէ Սվազլեան, Հայոց Յեղասպանութիւն, նոյնը, էջ 137:

287. Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում – Հատոր 1, Վանի Նահանգ, Հայաստանի Ազգային Արխիւ, Երևան 2012, Փաստաթուղթ N 103- Վերապրած Գյոզալ Միքայելեանի Վկայութիւնը Հայոց Զորի Հիրճ գիւղի կոտորածի մասին, էջ 172:

Մայիս 7 (Մայիս 20)-ին, Արամ Մանուկեան՝ Վանի հերոսամարտի ոգին ու դեկավարը պաշտօնապես նշանակուեցաւ Վանի նահանգապետ:

#### 66. Նարեկայ Վանքը Վանի Հայկական Իշխանութեան Ժամանակ

Վանի ազատագրումէն օրեր ետք Զօր. Անդրանիկի կամաւորական խումբը հասաւ հրկիզուած Վարագավանքը, ուր լանակեցաւ: Յաջորդ օրը Վարագավանքի կիսաքանդ եւ այրուած պարիսպներու առջև Արամ Մանուկեանը եւ Անդրանիկը իրար հանդիպեցան եւ գրկախառնուեցան, ապա միասնաբար կամաւորական բանակի հետ իջան Վան քաղաք: Անդրանիկ դիտումնաւոր ընտրած էր Վարագավանքի՝ իր սիրելի վայրը հանգստանալու եւ հանդիպելու Արամ Մանուկեանին:

Վանի Հայկական իշխանութիւնը անցաւ հայրենաշինութեան աշխատանքին, ստեղծուեցան տնտեսական, կրթական, առողջապահական, ոստիկանական, դատական եւ վարչական մարմիններ: Նորաստեղծ հայկական կառավարութիւնը անցած էր տրնաջան աշխատանքի, բայց առանց օգնութեան անկարելի էր դարձանել աւերուած գիւղերը եւ օգնել տասնեակ հազարաւոր գիւղացիներուն, որոնք ապաստանած էին Վան քաղաքի մէջ. սակայն պատմական իրադարձութիւնները զարգացան ոչ ի շահ հայութեան:

Երուանդ Կիրեղեան, որ Վանի հերոսամարտին մասնակցողներէն էր՝ Հայոց Զորի Քերծ գիւղէն, իր խումբով միացած էր Համազասպի կամաւորական խումբին. իր յուշերուն մէջ կ'անդրադառնայ Նարեկայ վանքին այդ պատմական օրերուն, «Մենք 1915ի մայիս 29-ին հասանք Նարեկա վանքը: Մեր հարիւրակը տարան Նոր գիւղը՝ Հաջի Մուրադի գիւղը: Յաւօք սրտի, Հաջի Մուրադը գիւղը չէր: Մէկ շաբաթ յաղթանակի տօնն էր: Մի առաւօտ տեսանք, որ սարից տեսնուեցին բազմութիւն կ'իջնի ցած: Մարդ դրկեցինք, գնաց-եկաւ, պատմեց, որ Լեւոն փաշեն բոլոր տարագիրներին բաց է թողել, որ

երթան իրենց տուները»:<sup>288</sup> Այդ տարագիրներու մէջ կային նաեւ Նարեկ գիւղի գիւղացիները, որոնք Ապրիլեան օրերուն ստիպուեցան լքելու իրենց գիւղը, ինչպէս անդրադարձանք:

Հայ ժողովուրդի ուրախութիւնը երկար չտեւեց. Յուլիսի 23-ին Ռուսաստանը դիմեց անբացատրելի նահանջի: Ռուսական բանակը ժամանակաւորապէս հեռացաւ հայկական տարածքներէն, արեւմտահայ ժողովուրդին մատնելով ճակատագրական սեւ օրերու. «Պատմական իրողութիւնը այն է, որ 1915 Յուլիս 23-ին, ռուսական բանակը, առանց ենթակայ ըլլալու թրքական մեծ յարձակողականին, նահանջեց Տարօնի ճակատէն, ուր 200,000 մօտ հայեր լքուեցան թշնամիին ձեռքը եւ տեսարան եղեռնի մը գոհերը եղան»:<sup>289</sup>

Այսպէս, Վանի Հայկական իշխանութիւնը տեւեց մինչեւ 1915թ. Յուլիս 31, հազիւ 71 օր (նոր տոմարով՝ 20 Մայիսէն մինչեւ Յուլիս 31), Վասպուրականի հայութիւնը գաղթեց դէպի Իգդիր եւ Արարատեան դաշտ: Պատմութեան մէջ այս կոչուեցաւ Առաջին Նահանջը. Նարեկի գիւղացիութիւնն ալ ստիպուեցաւ անգամ մը եւս հեռանալ իր գիւղէն ու վանքէն:

#### 67. Նարեկ Գիւղն ու Նարեկայ Վանքը 1916թ.

Առաջին համաշխարհային պատերազմը կը շարունակուէր. ռուսական բանակը յաղթանակներ ունեցաւ 1916թ. Արեւմտեան Հայաստանի մէջ. հայութեան մօտ նոր յոյսեր յառաջացան. սակայն հայութեան վիճակը շատ միախառնակեց չէր, մէջբերենք այս սրտաճմբիկ տողերը Կարօ Մասունիէն, «1916ի ռուսական յաղթանակը մեզ կը փոխադրէր մեր արիւնտուած հայրենիքը: Այն ինչ որ կը բաղձայինք ու կ'երազէինք 1914-ի պատերազմի առաջին օրերուն, տեղի ունեցաւ միայն 1916-ի ձմեռուան եւ գարնան ամիսներուն: Մենք տէր էինք մեր պահանջած Հայաստանին, սակայն

288. Երուանդ Կիրեղեան, Իմ Յուշերու Ճանապարհով, Արարատ ռազմավարակազմակերպական կենտրոն, Երեւան, 2009, էջ 155:

289. Գաբրիէլ Լուզեան, Հայաստան եւ Հայ Դատը (Հայ եւ Ռուս Յարաբ.), 181, 182:

հայ ժողովուրդի մեծ մասը կոտորուած ու տեղահանուած էր անասպատի հովերուն ցրուելու համար»<sup>290</sup>

Ռուսական բանակի յաղթանակը օգնեց, ու գաղթական հայութեան մեծ մասը վերադարձաւ իր պապենական օճախներ՝ Վասպուրական, Տարօն եւ այլ տարածքներ, որոնք ազատագրուեցան ռուսական բանակի յառաջացումով. այդպէս նահատակուած Նարեկայ վանքն ալ կրկին անգամ տեսաւ իր զուակներուն, որոնք սակայն սոված եւ ընկճուած էին, ու դարձած էին իրենց աւերուած եւ հրկիզուած տուները՝ ութ ամիս ետք (1915 Յուլիսէն մինչեւ 1916 Ապրիլը):

Ուշագրաւ է մեջբերել Ղուկաս Տէր Ղազարեանէն, այդ օրերուն Վասպուրականի մէջ կատարուած հրաշքի մասին, որ մեծապէս օգնեց հայութեան բեկորներուն, «Հոս յիշել արժան է առաջին նահանջի տարուայ հրաշքը, որ Վանի երկիր պատահեցաւ. կարծես թէ երկնքից մանանայ թափեցաւ՝ այդ սոված ժողովուրդը կերակրելու. քանզի Վանի լեռնային երկիրը, որ նախնիքներէն մէկը չէր կրնար յիշել, թէ այդ լեռնային երկիրը ձմեռ ատեն ձիւն չիջնէ եւ սովորաբար 4 ամիս (դեկտեմբերից ապրիլ) այդ երկիրը ձիւնը կը հիւրընկալէ, սակայն այդ տարին ձիւնը երբեք չէկաւ. որովհետեւ այդ բոլոր գաւառների ցորեններ ստանց քաղելու եւ առանց հաւաքելու կը մնար, Վան վերադարձող մօտ 30000 շինական ժողովուրդը այդ ցորենները քաղեց ձմեռ ատեն. թէ՛ ինքը նրանով ապրեցաւ եւ թէ գարնան համար սերմնացու պատրաստեց»<sup>291</sup>

Միւս գիւղացիներուն նման Նարեկի գիւղացիներն ալ՝ վերադարձան իրենց աւերուած եւ այրուած գիւղը, ու սկսան վերակառուցման աշխատանքները. մեջբերենք Նարեկ գիւղի բնակիչներէն Սմբատ Դաւիթի Դաւթեանի յուշերէն, «1916թ. հրաման եղաւ, որ ամէն մարդ իր գիւղը գնաւ: 1915 թ. ցորենը չէինք

հաւաքել, նորից էր բուսնել: Սկսեցինք հաւաքել ցորենը: Տները վառուած էին, պատերն էին մնացել: Սկսեցին տների կտուրները ծածկել»<sup>292</sup>

#### 68. Նարեկ Գիւղէն Յեղասպանութենէն Փրկուածները

Քաղաքական զարգացումները 1917թ., ռուսական Մարտ 1ի յեղափոխութիւնը եւ ապա ամիսներ ետք Հոկտեմբերի Պոլշեիկեան յեղափոխութիւնը հիմնականօրէն փոխեցին ռազմաքաղաքական զարգացումները՝ ոչ ի նպաստ հայ ժողովուրդին. Ռուսաստանը դուրս եկաւ Առաջին Համաշխարհային պատերազմէն եւ մեզի հետաքրքրող տարածքաշրջանը ձգուեցաւ իր դաժան ճակատագրին...:

Արեւմտեան Հայաստանի հայրենաշինութիւնը կէս մնաց ու չչարունակուեցաւ, ամբողջ Արեւմտեան Հայաստանի հայութիւնը ստիպուեցաւ հեռանալ իր պապենական հողերէն, մեծ մասը դէպի Արեւելեան Հայաստան եւ զգալի մաս մըն ալ դէպի Պարսկաստան: Նարեկ գիւղի բնակիչներէն Սմբատ Դաւիթի Դաւթեանը ծնած 1905, իր յուշերուն մէջ կը գրէ, «Էս անգամ էլ հարայ եղաւ, որ քոչէք, որ գնանք դէպի Արեւելեան Հայաստան: Եկանք, հասանք Բերկրիի կամուրջը, որն արդէն սարքել էին: Եկանք Բզդի»<sup>293</sup>

62-րդ բաժինին մէջ յիշեցինք թէ Նարեկ գիւղը բնակչութեամբ Վասպուրականի Գեաւաշ կամ Գաւաշ գաւառի ամենամարդաշատ գիւղն էր. եւ Յուցակ թիւ 6ի մէջ, ցոյց տուինք ԱԴՕի (Յովհաննէս Գեորգ Տէր-Մարտիրոսեանի) 1917թ., վիճակագրիի պատարաստած տեղեկագրական ցուցակը այս գաւառի գիւղերու մասին: Գաւաշ գաւառի ընդհանուր 24 գիւղերը ունէին 1190 տուն հայութիւն 6913 շունչ, իսկ միայն Նարեկ գիւղին մէջ կար 123 տուն՝ 610 շունչով: Այսինքն Նարեկ գիւղը իր բազմամարդութեամբ ունէր ամբողջ Գաւաշ գաւառի 24 հայկական գիւղերու 9% բնակչութիւնը:

<sup>290</sup> Կարօ Սասունի, Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի Ընթացքին, էջ 108:

<sup>291</sup> Ղուկաս Տէր Ղազարեան (Տէր Ղուկաս), Շատախցի Երեցը, Նայիրի, Երևան, 2011, էջ 16:

<sup>292</sup> Վերջինէ Սվազլեան, Հայոց Յեղասպանութիւն (Ականատես Վերապրողների վկայութիւններ), էջ 137, Թիւ 34 Սմբատ Դաւիթի Դաւթեանի վկայութիւնը (ծն. 1905թ., Վան, Նարեկ Գիւղ):

<sup>293</sup> Նոյնը, էջ 137:

Այս բազմամարդ գիւղի հայութենէն՝ Միջագետքի Հայ գաղթա-  
կանական Կոմիտէի տեղեկագրին համաձայն՝ Գաւաշ գաւառի Նարեկ  
գիւղէն Ցեղասպանութենէն փրկուած էին՝ 29 գաղթական, Միջագետք  
(Իրաք) հասած են՝ 11 այր, 11 կին, 5 մանչ եւ 2 աղջիկ:<sup>294</sup>

Հաւանաբար ուրիշներ ալ փրկուած են ու հասած Արեւելեան  
Հայաստան: Նմանապէս հաւանական է, որ որոշ թիւ մըն ալ գիւղի  
բնակիչներէն ստիպուած կրօնափոխ եղած են ու մնացած գիւղին մէջ, եւ  
այսօր իրենց սերունդը կ'ապրի որպէս քրտացածներ, գուցէ եւ նոյն  
Նարեկ գիւղին մէջ, որ այժմ Եմիշլիք կը կոչուի...:

### 69. Նարեկայ վանքը Եւ Սեւրի Ու Լոզանի Դաշնագիրները

Առաջին Համաշխարհային Պատերազմէն ետք, պարտուած  
Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագիր մը ստորագրուեցաւ Սեւրի մէջ,  
1920 Օգոստոս 10ին: Համաձայն այս դաշնագրի Յօդ. 89ին, «Թուրքիա եւ  
Հայաստան, ինչպէս նաեւ միւս պայմանադիր բարձր կողմերը կը հաւա-  
նին Ամերիկայի նախագահին իրաւարարութեան յանձնել Էրզումի,  
Տրապիզոնի, Վանի եւ Պիթիսի նահանգներուն մէջ Թուրքիոյ եւ Հայաս-  
տանի սահմանին որոշման խնդիրը եւ ընդունիլ նախագահի որոշումով  
Հայաստանի ծով իջնելուն եւ վերոյիշեալ սահմանին յարակից բոլոր  
օտանեան հողերուն զինուորապէս չեզոքացման մասին պատրաստուած  
բոլոր տրամադրութիւնները»:<sup>295</sup>

Սեւրի դաշնագրի համաձայն՝ Ամերիկայի նախագահի որոշումը  
յայտարարուեցաւ 1920, Նոյեմբերի 22ին: Հայաստանի եւ Թուրքիոյ մէջէն  
սահմանները որոշուեցան, եւ համաձայն որուն մեր ուսումնասիրու-  
թեան առնչութեամբ՝ Նարեկայ վանքի տարածքը պիտի մնար Հայաս-  
տանի սահմաններէն ներս: Սակայն մէկէ աւելի քաղաքական պատճառ-  
ներով Սեւրի դաշնագրի որոշումները չգործադրուեցան. եւ աւելին՝ երեք  
տարի ետք ստորագրուեցաւ նոր դաշնագիր մը, որով Սեւրի դաշնագիրը

մոռացութեան տրուեցաւ: Վստահաբար եթէ այն գործադրուէր, հայ ժողո-  
վուրդը շուտով պիտի վերականգնէր խոնարհուած Նարեկայ վանքը:

Սակայն Սեւրի դաշնագիրի փոխարէն 24 Յուլիս 1923ին, ստո-  
րագրուեցաւ Լոզանի դաշնագիրը, որուն մէջ Հայոց մասին որեւէ յիշատա-  
կութիւն չկար: Թուրքիոյ կառավարութիւնը այս նոր դաշնագիրի 42-րդ  
յօդուածի 3-րդ մասով, կը խոստանար, որ «Թուրքական կառավարութիւ-  
նը պարտաւորուած է լիակատար պահպանութեան տակ առնել եկեղեցի-  
ները, սինագոգները, գերեզմաններն ու նշեալ փոքրամասնութիւնների այլ  
կրօնական հաստատութիւնները»:<sup>296</sup>

Յօդուածին մէջ նշուած՝ «լիակատար պահպանութիւն»ը, իր մէջ  
կ'ընդգրկէր ոչ միայն եկեղեցիները չքանդել, չկործանել, այլ անոնց  
ամրացնելն ու նորոգումը: Հետեւաբար որեւէ նման քայլ մը ապագային,  
եթէ տեղի ունենայ Թուրքիոյ կողմէ «բարի կամքի դրսեւորում» չէ, այլ  
միջագային պարտաւորութիւններու գործադրումը, ինչ որ մինչեւ օրս  
տեղի չունեցաւ...:

Այսպէս Նարեկայ վանքը ձգուեցաւ իր տխուր ճակատագրին:  
Քիւրտերը բնակութիւն հաստատեցին Նարեկ գիւղին մէջ եւ քրտացուցին  
գայն. Նարեկայ վանքի քարերը օգտագործուեցան իրենց բնակարանները  
կառուցելու...:

### 70. Քրտական Եմիշլիք Գիւղը Նարեկայ Վանքի Վայրին Մէջ

Թրքական իշխանութիւնները բաւարարուած չէն Նարեկայ  
վանքի ակերմամբ, այլ անոնք արտօնած են քրտական գիւղի մը հիմնա-  
դրութիւնը Հայոց համար սրբազան այդ վայրին վրայ:

Նարեկայ վանքէն մնացած կառոյցները վերջնականապէս կոր-  
ծանուեցան, վանքի մարմինի մնացորդները բզիկ-բզիկ եղան եւ անոր  
սուրբ քարերը գործածուեցան նորակառոյց քրտական գիւղի տնակնե-  
րուն մէջ: Պատկեր թիւ 8ի մէջ շատ յստակ կարելի է տեսնել վանքի քա-  
րերու չարաչար օգտագործումը:

294. Սեղա Տաճատ Օհանեան, Իրաքի Հայ Համայնքը 20-րդ Դարուն, Երեւան 2016, ՀՀ  
ԳԱԱ-Պատմութեան Ինստիտուտ, էջ 60:

295. Գարբիէլ Լազեան, Հայաստան եւ Հայ Դատը (Հայ եւ Ռուս Յարաբերութիւններու  
Շուքին Տակ), էջ 211:

296. Կարապետ Իզմիրլեան, Հայ Ժողովուրդի Քաղաքական Ճակատագիրը  
Անցեալին եւ Ներկայիս, էջ 254:

## ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 8



Նարեկայ Վանքի Քարերու Ճակատագիրը

Այսպես քրտական Եմիշլիք Yemişlik գիւղը կանգնած է այսօր երբեմնի հայկական Նարեկ գիւղի վայրին մէջ: Թրքական իշխանութիւնները 1951թ. Վանի նահանգապետի որոշմամբ գիւղը վերանուանեց Եմիշլիք, թէեւ մինչեւ օրս տեղւոյն քուրտ բնակչութեան կողմէ կ'օգտագործուի հին հայկական "Նարեկ" անունը:

1970-ական թուականներուն մզկիթ մը կառուցուեցաւ Նարեկայ վանքի վայրին վրայ. երբեմնի Նարեկայ վանքի գմբէթներու փոխարէն այժմ կը բարձրանայ Եմիշլիկ վերանուանուած քրտական գիւղի մզկիթի ճերմակ մինարէն: Պատկեր թիւ 9ի մէջ կ'երեւի Նարեկայ վանքի վայրին մէջ կառուցուած քրտական գիւղը:

Գրեթէ բոլոր նախկին հայկական գիւղերուն մէջ, ուր կը կանգնէին հայկական վանքեր կամ եկեղեցիներ, հետագային անոնց փոխարէն կառուցուեցան մզկիթներ. ինչ որ կատարուեցաւ Նարեկայ վանքին՝ կատարուեցաւ նաեւ Վարազավանքին: Այդ համատարած քաղաքականութիւն է, հողը զայթած ժողովուրդը կը քանդէր նախկին գիւղի տիրոջ ժողովուրդի սրբավայրը, եւ անոր փոխարէն կը կանգնեցնէր իր

սրբավայրը...: Այդ բացայայտ գործադրուած քաղաքականութիւն էր բուն հողատիրոջ կողմէ կառուցուածները քանդելու, բնաջնջելու, հետքերը կորսնցնելու, որպէսզի որեւէ նիւթական փաստեր չմնան այդ կատարուած բռնագրաւումը բացայայտելու...:

Վերջին տասնամեակին զբոսաշրջիկներէն նիւթական օգուտ քաղելու եւ քաղաքական տարբեր նպատակներով թրքական պետութեան կողմէ եղան բազմաթիւ յայտարարութիւններ. 2008թ. Զաքարեայ Միլտանօղլու ճարտարապետը յայտարարեց, թէ թրքական կառավարութիւնը որոշած է վերակառուցել Նարեկայ վանքը եւ ուրիշ կիսակործան եկեղեցիներ ու վանքեր Թուրքիոյ արեւելեան տարածքներուն մէջ:

2010թ. Սեպտեմբերին Զաքարեայ Միլտանօղլու յայտարարեց ցանկ մը 90 հայկական եկեղեցիներու եւ վանքերու Վանայ լիճի տարածքին՝ ներառեալ Նարեկայ վանքը, որոնց մասին թրքական կառավարութիւնը որոշած էր պահպանել եւ վերակառուցել:


Պէտք է արձանագրել, որ մինչեւ օրս յայտարարուած նման որեւէ աշխատանքներ տեղի չունեցան:

2010թ. Փետրուարին Աղթամարի Ս. Խաչ եկեղեցայ նորոգութիւններէն ետք, Վանի նահանգի փոխ նահանգապետ Խալիլ Պէրք յայտարարեց, թէ Վանի քաղաքապետարանը որոշած է վերականգնել Վարազավանքը, ի հարկէ զարկ տալու համար զբոսաշրջիկներու աշխուժացման, որոնց մեծ մասը հայեր են. եւ երկու տարի ետք, համաձայն 2014ի լուրերուն, Վանի նահանգապետարանը պատրաստած է Վարազավանքի վերակառուցման նախագիծը, իսկ Թուրքիոյ մշակոյթի եւ զբոսաշրջութեան նախարարութիւնը հաստատած է վերակառուցման ծախսերուն յատկացումը պիտճէն...<sup>297</sup> Մինչեւ օրս այդ տեղի չունեցաւ. այնպէս որ նման յայտարարութիւններ՝ տեղի կ'ունենան քաղաքական տարբեր նպատակներով, բայց չեն գործադրուիր:

297. Պետրոս Ս. Թովմասեան, Վարազավանքը Պատմութեան Քառույթներուն, էջ 158:

## ՊԱՏԿԵՐ ԹԻՒ 9

Նարեկայ վանքի վայրին կառուցուած քրտական  
Գիւղը իր Մզկիթով



## 71. Յեղասպանութենէն Ետք Հայոց Առաջին Այցելութիւնը Նարեկայ Վանք

Յեղասպանութենէն ետք հայոց առաջին այցելութիւնը Վասպուրական՝ տեղի ունեցաւ 1991ի աշնանը, երբ խումբ մը հայաստանաբնակ վասպուրականցիներ այցելեցին իրենց պապերու օրրանը՝ Վասպուրականը: Այդ 31 անձէ բաղկացած խումբին մեջ կային Հայաստանի Հանրապետութեան Վասպուրականցիներու հայրենակցական միութեան ղեկավարներ՝ ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեան եւ բանաստեղծ-գրականագետ Լեւոն Միրիջանեան, որոնք որպէս ուխտագնացներ եղան Արեւմտեան Հայաստանի մեջ:

Մեջբերենք Հայ ճարտարապետութեան պատմաբան Վարազդատ Յարութիւնեանի գրածներէն Նարեկայ վանքին մասին, «Մոխրաբլուրից ուղիղ հարաւ, 5-6 կմ հեռաւորութեամբ Նարեկ գիւղն է, իր նշանաւոր Նարեկավանքով, ուր ապրել եւ ստեղծագործել է վասպուրականցիների մէկ այլ հանձար՝ «Մատեան ողբերգութեան» հեղինակ՝ Գրիգոր Նարեկացին (951-1003թթ.): Քերթողահօր վանահայրութեան օրօք (որը մահուանից յետոյ թաղուել է հէնց այստեղ, Ս. Աստուածածին եկեղեցուն կից մատուռում), բազմապատկուեց Նարեկավանքի հոգևոր-մշակութային համբարը: Նարեկավանքը, որ հիմնադրուել էր 10-րդ դարի կէսին, Բիւզանդիայից այստեղ փոխադրուած հայ հոգևորականների կողմից, տեղադրուած էր գիւղի բարձրադիր մասում: Պարիսպներով շրջապատուած վանքային համալիրի կազմում էին մտնում Ս. Սանդուխտ եւ Ս. Աստուածածին եկեղեցիները, գաւիթը, զանգակատունը, մատուռ-դամբարանը, բնակելի եւ տնտեսական շէնքերը:

Մեզ յայտնի տեղեկութեան համաձայն Նարեկավանքը վաղուց գտնուում է յիշվին աւերակ վիճակում:

Ցաւալի է, որ արեւմտեան Հայաստանի ճարտարապետական շատ արժեքաւոր յուշարձանների ու յուշարձանախմբերի թում մենք կորցրինք նաեւ Նարեկավանքը: Հայկական քաղաքա-

կրթութեան հետքերը վերացնելու թուրքական իշխանութիւնների ու թակասութեան կողմից տարիների ընթացքում տարուող հակամարդկային, յանցագործ քաղաքականութեան հետեւանք է դա:

Քայց սերունդների սրտերում անմար մնաց այս կողմի վանքերում իրենց աստուածահաճոյ ծառայութիւնը մատուցած քաղում կրօնաւորների, առաջին հերթին Գրիգոր Նարեկացու լուսաճաճանչ յիշատակը:

Բարձրաբարոյ կրօնաւորին, խորիմաստ աստուածաբան-փիլիսոփային եւ հանճարեղ քերթողին երեւի կը սազեր ուրիշին վերագրուած իր այս տողերը.

«Ես, որ եկել եմ ինձ արարողի,

ինձ ուղարկողի կողմից եւ ահա,

գնում եմ հեռու, գնում եմ հեռու,

Փայլելով պայծառ արփիանման ճաճանչումներով

ու ծիրանակիտ տեսքով վառվուն»:

Յիրաւի դարերի խորքից եկող Նարեկացու քնարը ձայն արձակեց հեռուները, մեր ժամանակներում արդարեւ համաշխարհային ճանաչում ստացաւ ու դեռ պիտի շարունակի ճանաչուել, քանզի նա արժանի է տեղ գրաւել մարդկութեան մեծերի փայլուն համաստեղութեան մէջ»:<sup>298</sup>

Այս այցելութեան յաջորդեցին եւ մինչեւ օրս կը յաջորդեն այցելութիւնները, որոնցմէ կարելոք էր Հայաստանի Հանրապետութեան ճարտարապետութիւնն Ուսումնասիրող Կեդրոնի կողմէ կատարուած այցելութիւնները, որոնք պարզ այցելութիւններէ աւելին կատարեցին կարելոք գիտական աշխատանքներ ի մասնաւորի Գրիգոր Նարեկացիի ճգնարանի մասին, որոնց մասին անդրադարձանք:

## 72. Նարեկայ Վանքի Ձեռագիրները

Գիրքը հայ ժողովուրդի պատմութեան մէջ հինէն ի վեր ունեցած է իր մշակութային մեծ արժէքը: Հին ժամանակներէն ձեռագիր-

<sup>298</sup> Վարազդատ Յարութիւնեան, Նախնեաց Ոսնահետքերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 1995, էջ 44, 45:

ները նկատուած են, որպէս մշակութային թանկարժէք հարստութիւններ, սրբութիւններ...:

Նարեկայ վանքին մեզի հասած է առաջին ձեռագիրը 1069թ., օրինակուած Աւետարան մը, որ Յովհաննէս գրիչը արտագրած է Անանիա Նարեկացիէն Գրիգոր Նարեկացիին անցած հին ձեռագիրէ մը, որուն մասին նշուած է՝ թէ գայն գրած է Մեսրոպ Մաշտոցը: Նարեկայ վանքին մէջ գրուած այս ձեռագիրը ծնունդն էր մեր պատմութեան ալեկոծուած պատմաշրջանի մը: Բագրատունեաց եւ Արծրունեաց հարստութիւնները դարձած էին անցեալ տարածքաշրջանը կ'ենթարկուէր սելջուկներու աւերիչ արշաւանքներուն...:

Վասպուրականը եղած է հայ ձեռագրական մշակոյթի ամենախոշոր եւ հարուստ նահանգներէն մէկը: Արեւմտեան Հայաստանի ամենակարեւոր գրչագրերը՝ կը գտնուէին Վասպուրականի մէջ: Վասպուրականի ձեռագիրներու ընդօրինակման նշանաւոր վայրերն էին Վանայ լիճի երեք կղզիներու՝ Աղթամար, Կտուց եւ Լիմի մէջ հիմնադրուած վանքերը: Նաեւ հոչակաւոր էին Վարագի եւ Մեծօփա վանքերը: Այդ ձեռագիրները մեծ մասամբ Աւետարաններ, Ժամագիրքեր, ճաշոցներ եւ Յայսմաւորքներ էին: Վասպուրականի բոլոր վանքերուն եւ եկեղեցիներուն մէջ չկար եկեղեցի կամ գիւղ, ուր 10-30 կտոր ձեռագիրներ չգտնուէին, նոյնիսկ անհասներու քով իրենց տուններուն մէջ փաթաթուած որպէս սրբութիւն կը պահպանուէին:

Նարեկայ վանքն ալ դարեր շարունակ հանդիսացած է հայ գրչութեան կարելոք կեդրոն մը, ուր զարգացաւ հայ գրչութեան, մանրանկարչութեան արուեստը: Նարեկայ վանքին մէջ ալ՝ տեղի ունեցաւ ձեռագիրներու ընդօրինակութիւններ, որոնք մեծ մասամբ Աւետարաններ, Նարեկներ եւ Քարոզգիրքեր էին:

37րդ բաժինին մէջ անդրադարձանք, թէ Նարեկայ վանքին մէջ ձեռագիրներու ընդօրինակութիւնը ծաղկեցաւ 15րդ դարուն. անդրադարձանք Բզիտ կրօնաւորի կողմէ գրուած 1420թ., որ Ծերուն ծաղկողի դպրոցին պատկանող մանրանկարիչներու մէջ ամենէն ինքնատիպն ու շնորհալին է: Կը գտնուի

Հ.Հ. Մատենադարանի մեջ. N 4826 ձեռագիրը: Եղած են դարեր, երբ ի հետևանք երկրի քաղաքական վիճակին, լուրջինը տիրած է Նարեկայ վանքի գործունեության մասին:

